ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

# ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

*ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

# ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

*ФИЛОСОФИЯ, ПСИХОЛОГИЯ*

# JOURNAL OF YEREVAN UNIVERSITY

*PHILOSOPHY, PSYCHOLOGY*

**№ 2(50)**
**2026**

«Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал «Вестник Ереванского университета. Философия, Психология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала «Вестник Ереванского университета».
Three issues of "Journal of Yerevan University. Philosophy, Psychology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009.

Խմբագրական խորհուրդ.
Редакционная коллегия:
Editorial Board:

Գլխավոր խմբագիր՝
Главный редактор:
Editor-in-chief:
Հարությունյան Էդվարդ *(փ.գ.դ., պրոֆ., edvardharutyunyan@ysu.am)*
Арутюнян Эдуард *(д.флс.н., проф.)*
Harutyunyan Eduard *(Sc. D. in Philosophy, Professor)*
Ավանեսյան Հրանտ *(հ.գ.դ., պրոֆ., avanesyanh@ysu.am)*
Аванесян Грант *(д.псих.н., проф.)*
Avanesyan Hrant *(Sc. D. in Psychology, Professor)*
Բաղրամյան Մարիա *(փ.գ.դ., պրոֆ., Իռլանդիա, maria.baghramian@ucd.ie)*
Баграмян Мария *(д.флс.н., проф., Ирландия)*
Baghramyan Maria *( Sc. D. in Philosophy, Professor, Ireland)*
Բարսեղյան Հակոբ *(փ.գ.դ., Կանադա, hakob.barseghyan@utoronto.ca)*
Барсегян Акоп *(д.флс.,н., Канада)*
Barseghyan Hakob *(Sc. D. in Philosophy, Canada)*
Գոսսերիես Աքսել *(փ.գ.դ., պրոֆ., Բելգիա, axel.gosseries@uclouvain.be)*
Госсериес Аксель *(д.флс.н., проф., Бельгия)*
Gosseries Axel *(Sc. D. in Philosophy, Professor, Belgium)*
Զաքարյան Սեյրան *(փ.գ.դ., պրոֆ., szakaryan@ysu.am)*
Закарян Сейран *(д.флс.н., проф.)*
Zakaryan Seyran *(Sc. D. in Philosophy, Professor)*
Ժեմոյտել-Պյոտրովսկա Մագդալենա *(հ.գ.դ., պրոֆ., Լեհաստան, m.zemojtel-piotrowska@uksw.edu.pl)*
Жемойтель–Петровска Магдалена *(д.псих.н., проф., Польша)*
Żemojtel-Piotrowska Magdalena *( Sc. D. in Psychology, Professor, Poland)*
Լուբովսկի Դմիտրի *(հ.գ.դ., պրոֆ., Ռուսաստան, lubovsky@yandex.ru)*
Лубовский Дмитрий *(д.псих.н., проф., Россия)*
Lubovski Dmitri *(Sc. D. in Psychology, Professor, Russia)*
Խաչատրյան Նարինե *(հ.գ.թ., դոց., n_khachatryan@ysu.am)*
Хачатрян Нарине *(к.псих.н., доц.)*
Khachatryan Narine *(PhD in Psychology, Associate Professor)*
Կոշկարյան Մարիաննա *(փ.գ.դ., պրոֆ., ԱՄՆ, markosh@uga.edu)*
Кошкарян Марианна *(д.флс.н., проф., США)*
Koshkaryan Marianna *(Sc. D. in Philosophy, Professor, USA)*
Շահվերդյան Գայանե *(հ.գ.դ., պրոֆ., gayaneshahverdyan@ysu.am)*
Шавердян Гаянэ *(д.псих.н., проф.)*
Shaverdyan Gayane *(Sc. D. in Psychology, Professor)*
Պետրոսյան Սիլվա *(պատ. քարտուղար, փ.գ.թ., դոցենտ, silva.petrosyan@ysu.am)*
Петросян Сильва *(отв. секретарь, к.флс.н., доц.)*
Petrosyan Silva *(Executive Secretary, PhD, Associate Professor)*

**© Բանբեր Երևանի համալսարանի ❋ Вестник Ереванского университета ❋ Journal of Yerevan University**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ❋ СОДЕРЖАНИЕ ❋ CONTENTS

## ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ
## ФИЛОСОФИЯ
## PHILOSOPHY

***Գագիկ Սողոմոնյան*** – Անդրհումանիստական մարդու սոցիոմշակութային ուրվանկարը........ 5
***Гагик Согомонян*** – Социокультурный эскиз трансгуманистического человека
***Gagik Soghomonyan*** – Sociocultural Profile of the Transhumanist Person

***Արման Ղարագուլյան*** – «Անվակոսի էֆեկտը» հայաստանյան ինստիտուցիոնալ զարգացման սոցիոմշակութային համատեքստում........ 19
***Арман Карагулян*** – «Эффект колеи» в социокультурном контексте институционального развития Армении
***Arman Gharagulyan*** – “Path Dependence” in the Socio-Cultural Context of Armenian Institutional Development

***Լալա Սիմոնյան*** – Գեղագիտական զգացմունքների ձևավորման տեսական մոդելը և դրա դրսևորումները դեռահասության շրջանում........ 34
***Лала Симонян*** – Теоретическая модель формирования эстетических чувств и её проявления в подростковом возрасте
***Lala Simonyan*** – The Theoretical Model of Aesthetic Feeling Formation and Its Manifestations in Adolescence

***Դավիթ Աքելյան*** – Ֆալիբիլիզմի զարգացումը Չարլզ Պիրսի փիլիսոփայությունում........ 47
***Давид Акелян*** – Развитие фаллибилизма в философии Чарльза Пирса
***Davit Akelyan*** – The Development of Fallibilism in the Philosophy of Charles Peirce

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
## ПСИХОЛОГИЯ
## PSYCHOLOGY

***Գայանե Շավերդյան, Անահիտ Միքայելյան*** – Ժամանակային հեռանկարի և հիվանդության նկատմամբ վերաբերմունքի փոխկապակցվածությունը քաղցկեղ ունեցող անձանց օրինակով........ 62
***Гаяне Шавердян, Анаит Микаелян*** – Взаимосвязь временной перспективы и отношения к болезни на примере лиц с онкологическими заболеваниями
***Gayane Shaverdyan, Anahit Mikayelyan*** – The Interrelationship Between Time Perspective and Attitude Toward Illness in Individuals with Cancer

***Նելլի Հարոյան, Մարի Մելիքյան*** – Պերմենթալիզացիան և մտավոր վիճակների անթափանցելիության հիմնախնդիրը........ 71

***Нелли Ароян, Мари Меликян*** – Гиперментализация и проблема непрозрачности ментальных состояний
***Nelli Haroyan, Mari Melikyan*** – Hypermentalizing and the Problem of the Opacity of Mental States

***Վարդուհի Պապոյան, Ալինա Գալստյան*** – Ուսանողների հոգեբանական անվտանգության մոտիվացիան և հոգեբանական որոշիչները՝ կախված ծննդյան հերթականությունից (ռուս.)................................ 84
***Вардуи Папоян, Алина Галстян*** – Мотивационные и психологические детерминанты психологической безопасности студентов в зависимости от порядка рождения
***Varduhi Papoyan, Alina Galstyan*** – Motivational and Psychological Determinants of Students' Psychological Safety Depending on Birth Order (in Rus.)

***Սահակ Հովհաննիսյան*** – Կուտակային սթրեսի գնահատման համալիր մեթոդաբանությունը և հաղթահարման ուղիները հետպատերազմյան Հայաստանում........................................................................ 95
***Саак Оганесян*** – Комплексная методология оценки кумулятивного стресса и пути преодоления в послевоенной Армении
***Sahak Hovhannisyan*** – Comprehensive Methodology for Assessing Cumulative Stress and Ways of Overcoming in Post-war Armenia

***Աիդա Վարդանյան*** – Արտակարգ պայմաններ ենթադրող գործունեությունում հուզական այրման համախտանիշի զարգացման միտումների և անձի շեշտվածության միջև փոխկապակցվածությունը (շտապօգնության բժիշկների, փրկարարների և զինվորական սակրավորների օրինակով) ........................................................................ 108
***Аида Варданян*** – Взаимосвязь тенденций развития синдрома эмоционального выгорания и акцентуации личности в деятельности, осуществляемой в чрезвычайных условиях (на примере врачей скорой помощи, спасателей и военных сапёров)
***Aida Vardanyan*** – The Relationship Between Tendencies in the Development of Emotional Burnout Syndrome and Personality Accentuation in Emergency-Related Activities (a Case Study of Emergency Physicians, Rescuers and Military Sappers)

***Սոնա Մանուսյան, Անի Պողոսյան, Անի Գասպարյան, Նարինե Խաչատրյան*** – Ինչո՞ւ (չ)ներգրավվել. Հայաստանում քաղաքացիական ազդեցության ընկալվող սահմանները և մասնակցության արգելակները... 120
***Сона Манусян, Ани Погосян, Ани Гаспарян, Нарине Хачатрян*** – Почему (не) вовлекаться: воспринимаемые границы гражданского влияния и барьеры участия в Армении
***Sona Manusyan, Ani Poghosyan, Ani Gasparyan, Narine Khachatryan*** – Why (Not) Engage: Perceived Limits of Civic Agency and Barriers to Participation in Armenia

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 5-18
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.005

# ԱՆԴՐՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՒՐՎԱՆԿԱՐԸ

ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

Ժամանակակից քաղաքակրթությունը հայտնվել է գոյության ավանդական սահմանների վերաձևավորման սահմանագծում, քանի որ փոխելով իր շրջակա միջավայրը՝ վերափոխում է նաև ինքն իրեն՝ հայտնվելով գոյաբանական մի շարք սպառնալիքների առջև: Բավական է նկատել, որ կենսաբժշկական ձեռքբերումները հիմնովին խաթարել են բանականության այն մոդելը, որով Ի.Կանտի ժամանակներից մարդը սահմանվում էր որպես վերջավոր և ինքնագիտակից գոյություն: Նրա «ո՞վ է մարդը» հարցադրման փոխարեն այսօր հավանաբար պետք է պատասխանել այն հարցին, թե ով է «հետմարդը»: Անդրհումանիստական մարդու գոյաբանական հորիզոնը ենթադրում է ոչ միայն կենսաբանական սահմանների հաղթահարում, այլև մարդկային ինքնության արմատական վերիմաստավորում: «Մարդու մահվան» գաղափարը վերածվում է ոչ թե վերջնական կորստի, այլ նոր մեկնակետի, գոյության այն հնարավորության, որտեղ աշխարհի հետ իր հարաբերություններում մարդն այլևս մենակ չէ: Հետմարդու խնդիրը առաջադրում է շատ կարևոր մի հարց. նոր գոյաբանական հորիզոնի շեմին մենք կանգնած ենք էկզիստենցիալ ավարտի՞, թե՞ անավարտ հնարավորության առջև: Քննարկելով մարդու անդրհումանիստական ապագայի մտահոգիչ կողմերը և ներկայացնելով մարդուն կատարելագործելու նպատակով նրան սահմանազանցելու բժշկակենսաբանական ու տեխնոլոգիական միջամտությունների անկանխատեսելի ռիսկերն ու սոցիալական և էթիկական հետևանքները՝ հեղինակը եզրահանգում է, որ մարդու կատարելագործման մասին անդրհումանիստական նախագծերը հղի են բազմաթիվ անկանխատեսելի մարտահրավերներով: Ուստի առանց համապատասխան վերահսկողության արդար և հասանելի ինստիտուցիոնալ մեխանիզմների ապահովման, առանց այդ նախագծե-

* **Գագիկ Սողոմոնյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ
**Гагик Согомонян** – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ
**Gagik Soghomonyan** – Candidate of Philosophy, Associate Professor at the YSU Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics
Էլ. փոստ՝ gagiksoghomonyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0000-0002-1408-6082

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 15.05.2026
Գրախոսվել է՝ 29.05.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

րի համակողմանի իրավական, բարոյական և հատկապես էկզիստենցիալ տեսանկյունների ուսումնասիրության՝ տեխնոլոգիական հնարավոր սխալները կարող են հանգեցնել սոցիալական անհավասարության խորացման, կեցության և ինքնության էկզիստենցիալ հագեցվածության անդառնալի կորուստների։

**Բանալի բառեր** – *հումանիզմի ճգնաժամ, տեխնոլոգիական աշխարհայացք, «հետմարդ», «գերմարդ», տրանսհումանիզմ, հետհումանիզմ, արհեստական ինտելեկտ, թվային անմահություն, մարմին, էվոլյուցիա, ռիսկ*

Այսօր, ավելի քան երբևէ, զգացվում է Նոր ժամանակի «վախճանի» ահազանգը։ Հումանիզմի ճգնաժամը անմիջականորեն կապվում է սուբյեկտի ընկալման ճգնաժամի հետ։ Դեկոնստրուկցիայի (Ժ. Դերիդա) ոլորտում են հայտնվում ոչ միայն Աստված, հեղինակը, ընթերցողը և այլն, այլև մարդը։ Տեխնոլոգիական նոր դարաշրջանում ձևավորվում է մարդու նոր տիպ՝ հետմարդը, որին պայմանականորեն կարելի է անվանել «տեխնոլոգիական» մարդ։ Մերաբ Մամարդաշվիլիի կարծիքով՝ առկա գիտելիքների շրջանակներում մարդուն չի կարելի ամբողջությամբ սահմանել։ Մարդն «անավարտ հնարավորություն» է, այնպիսի էակ, որն անընդհատ ձգտում է դուրս գալ սեփական սահմաններից[1]։ Նրա կարծիքով՝ «մարդու մասին յուրաքանչյուր սահմանում, որը ներառում է նրա էությունը կամ այն բանական միջոցներով ամբողջությամբ վերարտադրելու որևէ փորձ, պարզապես ամրապնդում է նրա մասին առկա գիտելիքը՝ դրանով սահմանափակելով այն, թե ինչ կարող է մարդը դեռևս դառնալ»[2]։ Մարդը երբեք ամբողջությամբ չի տիրապետում իրեն և չի սահմանափակվում իր «ներկայով»։ Տեխնոլոգիական հեղափոխության ծավալմանը զուգընթաց՝ առաջանում է էկզիստենցիալ նոր հարցադրում. «Որտե՞ղ է ավարտվում մարդը, և որտե՞ղ է սկսվում տեխնոլոգիան»։ Անդրհումանիզմը, քննարկելով հետմարդու հիմնախնդիրը, կարևորում է ընդհանրապես մարդու ինքնության և սահմանների վերաիմաստավորման անհրաժեշտությունը։ Մարդն այլևս դիտարկվում է ոչ թե որպես «կայուն էություն, այլ որպես հարաշարժ գործընթաց» (Ռ. Բրեյդոտի), մի գործընթաց, որտեղ տեխնոլոգիան, էթիկան ու մշակույթը փոխկապակցված են։ Մարդու՝ անավարտ հնարավորություն լինելու հանգամանքը փիլիսոփայական այն ելակետն է, որից պետք է սկսել «հետմարդու» խնդրի քննարկումը ոչ թե տեխնոլոգիական, այլ մարդաբանական և էկզիստենցիալ հարթություններում։ Հետմարդու գաղափարը ժամանակակից փիլիսոփայության մեջ ներկայացվում է երկու հիմնական ուղղությամբ՝ անդրհումանիզմի և հետհումանիզմի։ Առաջինը, պահպանելով հումանիստական արժեքները և հաղթահարելով մարդու կենսաբանա-

[1] Տե՛ս **Мамардашвили М.**, Проблема человека в философии // О человеческом в человеке, М., 1991, էջ 14-15։

[2] **Мамардашвили М.**, Как я понимаю философию М., Прогресс, 1990, с. 217.

կան սահմանափակումները, ձգտում է տեխնոլոգիական միջոցներով կատարելագործել նրան: Երկրորդը քննադատում է հենց հումանիզմի հիմքերը՝ մերժելով մարդու բացառիկությունը և վերաիմաստավորելով նրան որպես բազմակի, հարաբերական և գոյության ոչ կենտրոնական ձև:

Անդրհումանիզմը բանականության վրա հիմնված աշխարհայացք է, որը, գնահատելով գիտության ձեռքբերումներն ու հեռանկարները, դիտարկում է նորագույն տեխնոլոգիաների միջոցով մարդու արմատական փոփոխության հնարավորությունն ու ցանկալիությունը, տեխնոլոգիական միջամտություններով (գենետիկական ինժեներիա, նեյրո-ինտերֆեյսներ և արհեստական ինտելեկտ) նրա ֆիզիկական և ճանաչողական կարողությունների լավարկումը: Այն, ըստ էության, «տեխնիկական առաջընթացի կրոնական բնույթի պաշտամունք է» (Քրիստիան Արո): «Անդրհումանիզմը վերազանցում է բոլոր տեսակի կենսաբանական սահմանափակումներն ինչպես անհատի՝ հզորանալու և անմահ դառնալու հնարավորության, այնպես էլ հասարակության՝ կատարյալ կամ գրեթե կատարյալ դառնալու հակվածության առումով»[3]: Մարմինը փոխակերպվում է վերարտադրելի, վերամշակելի և վերահսկելի մի երևույթի՝ դառնալով մեխանիկական անսահմանության փորձադաշտ: Մարդը դառնում է «սեփական էվոլյուցիայի գործակալը» (Ն. Բոստրոմ): Անդրհումանիզմի գերագույն նպատակը մարդկային գոյության վերջավոր լինելու իրողությունը հաղթահարելու և գոյության հետմարդկային (հետօրգանական) ձևին հասնելու անհրաժեշտության գիտակցումն է[4]: Վաղ շրջանի անդրհումանիստները, ապավինելով նորագույն տեխնոլոգիաների միջոցով մարդկային բնույթի փոխակերպման հնարավորությանը, շեշտադրում էին այն միտքը, որ տեխնոլոգիաները կկարողանան վերացնել ծերությունը, ցավը և մահը: Այսօրվա անդրհումանիստները պնդում են, որ բնական ընտրությունը, որը 30-50 հազար տարվա ընթացքում կառավարել է մարդու զարգացումը, այժմ անցնում է նոր՝ կենսաբանական, սոցիալական և ինտելեկտուալ փուլ: Նորագույն տեխնոլոգիաները կարող են ազդել ոչ միայն մարդու գենետիկական կազմի և մարմնի, այլև նրա նյարդային համակարգի վրա, ինչը կարող է հանգեցնել մարդկային բնույթի արմատական վերափոխմանը՝ սկզբում ստեղծելով անդրմարդ, ապա՝ հետմարդ: «Անդրհումանիզմն այսօր տարբեր մշակութային, քաղաքական, փիլիսոփայական կամ թվային շարժումների կարգախոս է, որը խթանում է մարդկային կենսաբանության սահմանազանցման տեխնոֆուտուրիստական տեսլականները»[5]: Անդրհումանիստները կարծում են, որ անկատար լինելով

---

[3] **Արո Քրիստիան**, Տրանսհումանիզմ, Փիլիսոփայական դիտարկումներ: Թարգմանությունների ժողովածու (թարգմ. **Վ. Ա. Միրզոյան**), Եր. , «Մեկնարկ», 2025, էջ 360:

[4] Տե՛ս **Bostrom N. A**, History of Transhumanist Thought // Journal of Evolution and Technology. 2005. Vol. 14. No. 1. P. 1–25. – URL: https://nickbostrom.com/papers/history.pdf

[5] **Ranisch, Sorgner.** Introducing Post- and Transhumanism // Ranisch R., Sorgner S.L. (Eds.) Post- and Transhumanism: An Introduction. – Frankfurt am Main: Peter Lang, 2015. P. 12.

հանդերձ՝ մարդը էվոլյուցիոն գործընթացի պսակն է, և նա կարող է ու պարտավոր է միջամտել կենսաբանականին: Նման հավակնությունները հիմնավորվում են այն իմացաբանական համոզմամբ, որ հասարակությունը էվոլյուցիայի ընթացքում ձեռք է բերում բարելավված հատկանիշներ: Այս առումով անդրհումանիզմը շարունակում է գիտական գիտելիքի աստիճանական զարգացման վերաբերյալ Կ. Պոպերի գաղափարները՝ ընդունելով, որ «ամեոբայից մինչև Էյնշտեյն ընդամենը մեկ քայլ է»[6]: Անդրհումանիստները կարևորում են գլխուղեղի և համակարգչային ցանցերի միջև փոխազդեցությունը: Փաստորեն, նրանք ներկայացնում են թվային անմահության գաղափարը՝ համոզված լինելով, որ հնարավոր է գիտակցությունը, որը դիտարկվում է որպես տեղեկատվական կոդ, կարելի է ներբեռնել տարբեր կրիչների վրա: Անդրհումանիստական մարդու համար ինքնությունը դադարում է կապված լինել կոնկրետ մարմնի կամ կենսաբանական հիմքի հետ: Դա, բնականաբար, վերացնում է մահվան վախը, վերացնում է նաև կյանքի արժեքը, քանի որ կյանքն առանց մահվան վերածվում է սոսկ անվերջ գործառույթի: Սոցիալական տեսանկյունից անդրհումանիզմը կարող է հանգեցնել աննախադեպ փոխակերպումների: Հասարակությունը կարող է բաժանվել «թարմացվածների» («տեխնոլոգիական ազնվականություն») և «բնականների»: Վերջիններս կդիտարկվեն ոչ այլ կերպ, քան որպես էվոլյուցիոն հետամնացներ կամ «թանգարանային կենդանի նմուշներ»:

Հետմարդու տեսության ապագա քննարկումները կանխորոշող առավել խորքային միտումներից մեկը Յուվալ Նոյ Հարարիի ձևակերպած «տվյալապաշտության» (Dataism) գաղափարախոսությունն է, որը մարդուն դիտարկում է ոչ թե որպես ինքնաբավ արժեք, այլ որպես տվյալների մշակման «հնացած ալգորիթմ»[7], ուստի մարդն այլևս ինքնին նպատակային էակ չէ, նա պարզապես ալգորիթմների համաշխարհային ցանցի էմերգենտ[8] բաղադրիչ է, սոսկ տվյալների հոսքերը մշակող և փոխանցող օղակ: Եվ ըստ այդմ, աշխարհին այլևս հասկանալու և մեկնաբանելու հիմնական միջոցը ոչ թե փորձի անուղակի կամ մարմնավորված եղանակներն են, այլ վերլուծական-տրամաբանական օրինաչափությունների հայտնաբերումը: Սա էկզիստենցիալ լրջագույն վտանգ է, քանզի մարդու «ներքին» աշխարհը իր անհատական հուզականությամբ և կամային հորիզոնով դառնում է ոչ առաջնային, այլ ընդամենը հավելյալ: Աքսիոլոգիական տեսանկյունից Dataism-ը կտրուկ փոխում է արժեքների

---

[6] **Поппер К.**, Логика и рост научного знания. М.: Прогресс, 1983, с. 544.

[7] Տե՛ս **Յուվալ Նոյ Հարարի,** Homo Deus. Ապագայի համառոտ պատմություն / Թարգմ. Լիանա Զաքարյան, Եր., «Newmag», 2020:

[8] **Էմերգենտությունը** (անգլ. *emergent* — «ծագող, անսպասելիորեն հայտնվող») համակարգերի տեսությունում նշանակում է, որ տվյալ համակարգը որոշ հատկություններ ունի, որոնք առանձին-առանձին ներկառուցված չեն դրա բաղադրիչների մեջ. այսինքն՝ համակարգի հատկությունները չեն հավասարվում նրա բաղադրիչների հատկությունների պարզ գումարին և ամբողջությամբ չեն կարող դրանցով սահմանվել:

դասավորությունը: Գոյաբանական առաջնայնությունը վերագրվում է ոչ թե մարդուն, այլ տեղեկատվական համակարգին: Արժեքային այս վերադասավորումների հետևանքով անհատական ազատությունը ստորադասվում է «տվյալային արդյունավետությանը»: Dataism-ի հնարավոր աշխարհը էկզիստենցիալ լուրջ վտանգ է պարունակում, քանի որ այստեղ մարդկային փորձի որակական եզակիությունը գոյաբանական հաշվառումից դուրս է մղվում: Dataism-ի ներուժը երկակի է. այն միաժամանակ արտահայտում է մարդկության տեխնոլոգիական էվոլյուցիայի ներքին տրամաբանությունը և բացահայտում է մի էկզիստենցիալ կործանարար անջրպետ, որտեղ մարդը կարող է կորցնել իր տեղը ոչ թե քաղաքական բռնապետության, այլ տվյալային ռացիոնալության գերակշռության պատճառով: Այսպիսով, անդրհումանիստական մարդու սոցիոմշակութային դիմանկարը «իդեալական սպառողի և կատարյալ գործիքի» համադրություն է, որտեղ մարդկային «ոգին» զոհաբերվում է հանուն տեխնոլոգիական հզորության: Ֆ. Գիրենոկի համոզմամբ՝ մտքի թվայնացումը և դրա միաձուլումը թվային միջավայրին նշանակում են մարդու պարզունակացում: «Ըստ թվային փիլիսոփայության՝ մարդը ոչ թե օրգանական մարմին է, սուբյեկտիվություն, այլ հաշվիչ մեքենա, տվյալների շտեմարան: Այդտեղ գտնվող մարդն այլևս մարդ չէ, այլ թվային աշխարհի սոսկական բացատ»[9]: Մարդը՝ որպես սեփական ներկա վիճակը հաղթահարելու մշտական ձգտում, որպես մարդաբանական ամբողջություն և որպես անավարտ հնարավորություն, սկզբունքորեն չի կարող վերարտադրվել ո՛չ տեխնիկական, ո՛չ էլ տեխնոլոգիական գործիքներով: Ուստի մարդկանց և կենդանիների գենետիկական կողին միջամտությունը կարող է մահացու ազդեցություն ունենալ ինչպես շրջակա միջավայրի, այնպես էլ մարդկության վրա: «Հետմարդկային աշխարհը մեր այսօրվա աշխարհի համեմատ շատ ավելի աստիճանակարգված և մրցակցային կլինի, հետևաբար՝ լի սոցիալական հակամարտություններով: Այն մի աշխարհ կլինի, որտեղ կանհետանա համամարդկային ցանկացած գաղափար, քանի որ մենք կխառնենք մարդկային գեները այնքան շատ տեսակների գեների հետ, որ այլևս հստակ չենք հասկանա, թե ինչ է մարդը»[10]:

Զարգացնելով Մ. Մերլո-Պոնտիի, Մ. Ֆուկոյի, Ժ. Դերիդայի, Ժ. Դելյոզի, Ֆ. Գվատարիի և այլոց ստեղծագործական ժառանգությունը՝ անդրհումանիզմը վերապահելի է համարում մարդու՝ որպես էվոլյուցիայի գագաթնակետի գաղափարը և ձգտում է հասկանալ, թե ինչ է մարդը, և որն է ժամանակակից աշխարհում մարդու կարգավիճակը: Անդրհումանիստները կարծում են, որ մարդու էվոլյուցիան դեռևս ավարտված չէ և կարող է շարունակվել ապագայում: Էվոլյուցիոն զարգացումը, նրանց համոզմամբ, պետք է հանգեցնի հետմարդու

[9] **Гиренок Ф.И.**, Основные принципы дигитальной философии // Философия хозяйства. 2018. № 6, с. 137.

[10] **Фукуяма Ф.**, Наше постчеловеческое будущее: Последствия биотехнологической революции. М., АСТ, 2004, с. 218.

ձևավորմանը, երբ տեխնոլոգիաների ակտիվ օգտագործման շնորհիվ հնարավոր կլինի կատարելագործել մարդու ֆիզիոլոգիական, մտավոր և ստեղծագործական կարողությունները՝ ընդհուպ մոտենալով ֆիզիկական անմահության հասնելու անօտարելի իրավունքի իրացմանը: Մեքենայականի, կենդանու և մարդկայինի ընկալման սահմանները ջնջվում են: Մարդու մարմինը կորցնում է իր կայուն կարգավիճակը: Այն վերածվում է կենսաինժեներական, թվային և տեղեկատվական հարթակների միջերեսի (ինտերֆեյս): Մարդն այլևս ոչ թե կենտրոն է, այլ «անկայունության և հարցադրումների առարկա» (Մ. Ֆուկո): Հումանիստական հարացույցում մարդը և նրա բարի արարքները դիտարկվում են որպես բարձրագույն արժեքներ: Հետհումանիստական հարացույցում մարդը Երկրի վրա ապրող գոյավոր տարբեր տեսակներից (բույսեր, կենդանիներ, մեքենաներ և այլն) սոսկ մեկն է, ուստի դրանց դերը պատմության և էվոլյուցիայի մեջ նույնքան կարևոր է և բոլորովին ոչ պակաս, քան մարդկության դերը: Այսինքն՝ բնությունն ու մշակույթը ոչ միայն հակադիր չեն, այլև միմյանց վրա անընդհատ փոխազդելով՝ դառնում են մեկ ամբողջություն: Ահա թե ինչու էվոլյուցիոն ուղին վաղ թե ուշ պետք է հանգեցնի հետմարդու ի հայտ գալուն, որը, ըստ ամենայնի, կլինի մարդու և մեքենայի միաձուլման արդյունք՝ կիբորգ: «Մենք բոլորս կիբորգներ ենք,- նկատում է Դ. Հերեվեյը,- մշակույթի և տեխնիկայի խառնուրդ»[11]: Ուստի պատահական չէ, որ սուբյեկտն այստեղ ընկալվում է որպես տարբեր վիրտուալությունների պատրանքային մարմնական հոսքերի ամբողջություն: Այս առնչությամբ Ժան Բոդրիյարը իրավացիորեն նկատում է, որ լիովին տեխնոլոգիայից կախված դառնալով՝ չենք կարողանա ճշգրիտ պատասխանել՝ մենք մարդ ենք, թե մեքենա, տղամարդ ենք, թե կին[12]: Ռ. Բրեյդոտին իր «Հետմարդը» գրքում գրում է. «Հետհումանիստական հեռանկարը հիմնված է հումանիզմի պատմական անկման գիտակցման վրա, բայց ոչ հուսահատության, այլ վերակառուցման տրամաբանությամբ» [13]: Նա քննադատում է հումանիզմը, Հոլոքոստը և Գուլագը՝ դրանք համարելով հումանիստական մանիֆեստի ծայրահեղ կետերը: Ուստի դրանք ոչ թե հումանիզմի սխալներից են, այլ դրա ծայրահեղ հետևանքներն են: Պատմական փաստերը վկայում են, որ Լուսավորականության վրա հիմնված ռացիոնալիստական հումանիզմը ստեղծել է նույնքան սարսափելիություններ, որքան մշակութային մեծ արժեքներ[14]: «Հետհումանիստական հեռանկարը,- նկատում է Ռ. Բրեյդոտին,- հիմնված է հումանիզմի պատմական անկման ենթադրության վրա, բայց այն ավելին է, քան պարզապես Մարդու ճգնաժամը սգալը: Այն այլընտրանքներ է փնտրում՝ առանց թաղվելու կորցրած ինքնության հանդեպ

[11] **Haraway D.**, A Cyborg Manifesto 1985, p. 80–85.

[12] Տե՛ս **Бодрийяр Ж.**, Прозрачность зла М., «Добросвет», 2000, էջ 38-39:

[13] **Braidotti R.**, The Posthuman. Polity Press, 2013, p. 41.

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 16–17:

կարոտախտի կամ մարդու ճգնաժամի հռետորաբանության մեջ[15]»: Նա, սթափ քննադատելով արևմտյան հումանիզմի՝ իբրև «մարդասիրության» և «առաքինության» հիմք ներկայացվող ազատական քաղաքացիական նախագիծը, պնդում է, որ այդ հումանիստական աշխարհայացքի պատմական իրագործումը՝ կապված ռացիոնալիզմի և վերացական «մարդկային արժեքների» պաշտամունքի հետ, ոչ միայն չկանխեց դաժանությունները և բռնաճնշումները, այլև դարձավ հենց դրանց անարգել դրսևորման համապատմական հարթակը: Հոլոքոստը և Գուլագը ոչ թե հումանիզմի ձախողման վկայություններ են, այլ դրա ներքին տրամաբանության վերջնական, ավարտուն դրսևորումները: Ռ. Բրեյդոտին իրականում շատ գործնական հարցադրում է ներկայացնում. «Ի՞նչ է նշանակում լինել բարոյական մարդ մի աշխարհում, որտեղ տեխնոլոգիան և բնությունը հավասարվել են մեզ»: Նա նկատում է, որ դարեր շարունակ մենք «Մարդ» ասելով պատկերացրել ենք մի շատ կոնկրետ սոցիոմշակութային կերպար՝ եվրոպացի, սպիտակամորթ, գրագետ և բանական տղամարդուն: Սա համարվել է «չափանիշ», իսկ մնացած բոլորը (կանայք, այլ մշակույթների մարդիկ, կենդանիները) համարվել են «երկրորդական»: Եթե մենք ունենք մեկ «իդեալական» չափանիշ, ապա բոլոր նրանք, ովքեր դրանից տարբերվում են, ինքնաբերաբար դառնում են «թերարժեք»: Ինչն էլ թույլ է տվել պատմության ընթացքում արդարացնել ստրկությունը, գաղութացումը և նույնիսկ ցեղասպանությունները, որովհետև զոհերը պարզապես «չեն տեղավորվել» այդ նեղ բանական չափանիշի մեջ: Այսպիսով, պետք է դադարել մարդուն համարել բնության տիրակալը, ըստ էության՝ կենտրոնը: Եվ քանի որ ես այլևս «կենտրոնը» չեմ, ապա իմ պատասխանատվությունը մեծանում է: Հին հումանիզմն ասում էր՝ «Մարդն ամեն ինչի չափանիշն է»: Բրեյդոտին ասում է. «Մարդը կապված է ամեն ինչի հետ»: Ուստի առանց լուրջ վերաիմաստավորումների արդի աշխարհում արդեն անարդյունավետ է շարունակել հումանիստական մարդակենտրոն մտածողությունը: Նա, մերժելով «մարդու ճգնաժամի ու անկման» մասին ողբերգական պատմություններով լի հուզական հռետորաբանությունը, առաջարկում է կառուցողական նոր հեռանկար. ստեղծել նոր սուբյեկտայնություն՝ առանց մարդակենտրոն գերակայության: Այսպիսով, Բրեյդոտին ձևակերպում է «հետմարդու» մասին իր աշխարհայացքի կարևոր հիմնասյուներից մեկը. անցումը հումանիզմից հետհումանիստական պատասխանատվության նոր կարգին, որտեղ ույալ, եվրոպացի, սպիտակ, ռացիոնալ մարդն այլևս միակ չափանիշը չէ, սակայն կեցության համակարգում ճանաչելով կենդանիների, մեքենաների, բնական համակարգերի համամասնակցությունը՝ պատասխանատու է հարաբերությունների նոր ձևերի համար: Այս տեսլականը ակներև աղերսներ ունի Միշել Ֆուկոյի դիտարկումների

[15] Նույն տեղում:

հետ: Նա իր «Բառերն ու բաները» գրքում նկատում է. «Մարդը՝ որպես ճանաչման առարկա, հայտնվում է միայն XVIII դարավերջին և նույնքան պատահականությամբ էլ կարող է անհետանալ, ինչպես ծովեզրի ավազին գծված մի պատկեր»[16]: Բրեյդոտիի հետհումանիստական սուբյեկտը հենց այդ «ավազի վրա գծված» մարդու այլ շփումների և կենսաբանական-մշակութային ներազդեցությունների հիմքով վերակազմված նոր ձևն է: Մարդը անհատական կառույցների բազմակողմանի հյուսվածք է, յուրահատուկ տեխնո-էկո-սոցիալական հանգույց: Ուստի պետք չէ փորձել նրան նորից «տիեզերքի կենտրոն» դարձնել, այլ ընդունել, որ ցանկացած կյանք, նույնիսկ եթե այն չունի անձնագիր կամ իրավունքներ (ինչպես ասենք Ագամբենի «Homo sacer-ը»[17]), ինքնին արժեքավոր է: Իր «Ամբողջությունն ու անսահմանը. էսսե արտաքինի մասին»[18] գրքում Լևինասը վերաիմաստավորում է սուբյեկտի սահմանը՝ դա տեղակայելով մյուսի առջև պատասխանատվության մեջ: Բարոյականությունը, ըստ նրա, սկսվում է այն պահից, երբ դու նայում ես դիմացինի դեմքին և զգում, որ պատասխանատու ես նրա համար: «Իսկ ինչո՞ւ ենք պատասխանատու միայն մարդկանց համար»,- հարցնում է Բրեյդոտին: Դիմացինի հայացքի առջև այս մետաֆիզիկական պատասխանատվությունը տարածելով մարդկայինից դուրս հարաբերությունների վրա՝ Բրեյդոտին ներկայացնում է նոր ձևակերպում. եթե մենք վնասում ենք շրջակա միջավայրը, մենք դավաճանում ենք այդ պատասխանատվությանը: Ուստի «Հետմարդը» պատասխանատու է ոչ միայն այլ մարդկանց, այլև ոչմարդկային էակների, տեխնոլոգիական ու էկոլոգիական հարթակների հանդեպ: Այս համատեքստում նա մերժում է ինչպես մարդակենտրոնությունը, այնպես էլ դրա չեղարկումը:

Այսպիսով, եթե անդրհումանիզմը մարմինը դիտարկում է որպես բարելավման, «օպտիմալացման» ենթակա «հումք», ապա հետհումանիզմը՝ որպես վերաիմաստավորման ենթակա դիսկուրսիվ և տեխնածին սուբյեկտայնության դաշտ: Հետհումանիստական գաղափարաբանությունը, հիմնվելով ֆենոմենոլոգիական և դեկոնստրուկտիվիստական սկզբունքների վրա, առաջադրում է մարդկային մարմնի և ես-ի մասին դասական մարդաբանության էկզիստենցիալ վերաիմաստավորման անհրաժեշտությունը: Սրանով, նկատում է Ռ. Բրեյդոտին. «Հետմարդը ոչ թե սահմանազանցում է բարոյականությունը, այլ կանգնում է պատասխանատվության այլ հորիզոնի առջև»[19]:

[16] **Ֆուկո Մ.**, Բառերն ու բաները (թարգմ.՝ Ա. Մինասյան), Եր., ԵՊՀ, 2019, էջ 348:

[17] Homo sacer-ը (լատիներենից թարգմանաբար՝ «սուրբ մարդ» կամ «անիծված մարդ») հռոմեական իրավունքի կերպար է. անձ, որին արգելվում էր սպանել, բայց որին կրոնական որևէ ծեսի ժամանակ չէր կարելի զոհաբերել: Օրինակ՝ փախստականը կամ համակենտրոնացման ճամբարի բանտարկյալը: Նա ողջ է որպես կենսաբանական էակ, բայց որպես «մարդ»՝ նա օրենքի համար ոչինչ է:

[18] Տե՛ս **Левинас Э.**, Избранное: Тотальность и Бесконечное М., Центр гуманитарных инициатив, 2024:

[19] Նույն տեղում, էջ 163: Տե՛ս նաև՝ **Haraway D.**, նշվ. աշխ., էջ 80–85:

Հետազոտվող խնդրակարգի շրջանակներում հարկ է անդրադառնալ նաև դասական փիլիսոփայական մարդաբանության կատեգորիալ ապարատը սահմանազանցող «Գերմարդ» և «Հետմարդ» հասկացությունների համեմատական վերլուծությանը: Եվ այսու, ո՞րն է «Հետմարդու» սահմաններից դեպի «Գերմարդու» տրանսցենդենցիայի էկզիստենցիալ բովանդակությունը: «Հետմարդ» և «Գերմարդ» հասկացությունները ժամանակային և իմաստային տարբեր դաշտերի ծնունդ են. առաջինը 21-րդ դարի տեխնո-հումանիստական դիսկուրսի արդյունք է, երկրորդը՝ 19-րդ դարի էթիկա-մետաֆիզիկական հեդաշրջման հետևանք: Սակայն երկուսն էլ ծնվում են նույն հարցից. ո՞վ է մարդը, և ի՞նչ է լինելու նրա գոյաբանական ճակատագիրը: Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» ստեղծագործության մեջ «Գերմարդը» ներկայացվում է որպես մարդու ներքին աճի, գոյաբանական վերափոխման և արժեքների արմատական վերաիմաստավորման խորհրդանիշ: «Մարդը մի պարան է, ձգված կենդանու և Գերմարդու միջև»[20] ձևակերպմամբ Նիցշեն ոչ թե առաջարկում է կենսաբանական կամ տեխնիկական զարգացում, այլ էկզիստենցիալ անցում, որտեղ մարդը՝ որպես հին բարոյականության և մեղապարտության կրող, պետք է ինքն իրեն հաղթահարի: Մինչդեռ, «հետմարդու պայմանը,– գրում է Բրեյդոտին,– մեզ մղում է վերաիմաստավորելու մարդուն ոչ թե որպես ամեն ինչի չափանիշ, այլ որպես մարմնավորված, փոխկապակցված սուբյեկտ[21]»: Այս դրույթում մարդն այլևս չի դիտվում որպես ճանաչողության անդրանցական հիմք, այլ համարվում է գոյության համադրված հանգույց, որտեղ տեխնոլոգիականը, կենդանականը և մշակութայինը կորցնում են իրենց հիերարխիկ սահմանազատումը: Բնականաբար, այստեղ կարևորվում է այն էկզիստենցիալ սահմանի հարցը, որից անդին դրվում է ոչ թե մարդու ապամարդկայնացման, այլ նրա հաղթահարման խնդիրը: Նիցշեի «Գերմարդը» իր էությամբ հակադրվում է թե՛ հումանիստական մարդակենտրոնությանը, թե՛ հետհումանիստական մարմնական դիսոլյուցիային[22] (լուծարմանը): Եթե «Հետմարդը» մարմնի և տեխնոլոգիայի համաձուլման մեջ կորցնում է «ես»-ի սահմանները, ապա «Գերմարդը» այդ նույն սահմանը հաղթահարում է կամքի և արժեքների ստեղծմամբ: Այստեղ հաղթահարումը նշանակում է ոչ թե կենսաբանական

[20] **Նիցշե Ֆ.,** Այսպես խոսեց Զրադաշտը (թարգմ. Ս. Հովսեփյան), Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 19:

[21] **Braidotti R.**, նշվ. աշխ., էջ 29:

[22] **Դիսոլյուցիա** (ֆրանս. *dissolution*, լատ. *dissolutio*՝ *dis* — բաժանվել, *solvere* — լուծել) – գոյաբանական ամբողջականության կամ ինքնության *լուծում, քայքայում կամ փլուզում*, որի ընթացքում ձևավորվում են գոյության նոր, փոխառնչական ձևեր: Հետհումանիստական և հետկառուցվածքաբանական դիսկուրսներում այն նշանակում է տեխնոլոգիական, կենսաբանական ու մշակութային փոխառնչությունների մեջ սուբյեկտի էության և սահմանների լուծում: Ռ. Բրեյդոտին այն օգտագործում է «հումանիստական սուբյեկտի լուծարում» իմաստով՝ շեշտելով ոչ թե ինքնության վերացումը, այլ բազմազան փոխկապակցվածությունների ցանցում նրա վերաձևավորումը, վերաիմաստավորումը:

փոփոխություն, այլ հոգեբանական, բարոյական և գեղագիտական վերածնունդ: Այս իմաստով, ըստ Նիցշեի, մարդու հաղթահարումը մետաֆիզիկական է (գեղագիտական տրանսցենդենցիա), իսկ ըստ Բրեյդոտիի՝ մատերիալիստական (տեխնոլոգիական անցում), սակայն երկուսի հիմքում էլ ընկած է նույն մղումը՝ մարդու սահմանազանցումը: Երկու մոտեցումներն էլ՝ որպես նույն հարցին տարբեր պատասխաններ, ակնհայտորեն փոխկապակցված են. ինչպե՞ս հաղթահարել մարդուն՝ առանց վերացնելու նրա գոյաբանական արժանապատվությունը: Եթե Ֆուկոյի ծովեզրի ավազին գծված մարդու անհետացող պատկերը ներկայացնում է մարդու պատմական ավարտը, ապա ըստ Նիցշեի և Բրեյդոտիի՝ «անավարտ հնարավորության» իրացման սպասումով գործ ունենք ոչ թե ավարտի, այլ նոր սկզբի հետ: Նիցշեի «Գերմարդուն» կարելի է դիտարկել որպես հետմարդու մետաֆիզիկական նախահայեցություն, որտեղ մարդն այլևս չի մնում այնպիսին, ինչպիսին եղել է, այլ վերածվում է այն բանի, ինչ կարող է լինել: Այսպիսով, Նիցշեի «Գերմարդը» վերելք է ինքնահաղթահարման միջոցով, Ռ. Բրեյդոտիի հետմարդը՝ տեխնո-սինթեզի միջոցով ինքն իրենից դուրս տարրալուծում: «Գերմարդու» էթիկան ստեղծագործական է՝ ինքնարարման և պատասխանատվության հիմքով: Հետմարդու աշխարհում պատասխանատվությունը դառնում է բաշխված ալգորիթմների, արհեստական ինտելեկտի ցանցերի միջև: «Գերմարդու» մարմինն ուժի և կամքի տարածման դաշտ է, իսկ «հետմարդունը»՝ փոխարինելի և մոդուլյար նյութ: Այս երկուսի սահմանագիծը գոյաբանական է. «Գերմարդը» ուղղահայաց հաղթահարում է, «հետմարդը»՝ հորիզոնական տարածում: «Գերմարդը» դառնալու, մետաֆիզիկական ռիսկի և ինքնաստեղծման սուբյեկտ է, «հետմարդը»՝ կառավարման և ալգորիթմական օպտիմալացման արդյունք: «Գերմարդը» ձգտում է իմաստի, մինչդեռ «հետմարդը»՝ արդյունավետության: Եթե Նիցշեի «Գերմարդը» խորհրդանշում էր մարդու հնարավորության հայտաբերումը, ապա «հետմարդը» խորհրդանշում է այդ հնարավորության անվախճան ավարտը: Առաջինն էկզիստենցիալ իմաստով ստեղծագործական հեղափոխություն է, երկրորդը՝ զուտ տեխնոլոգիական փոխակերպում: Ըստ էության, անդրհումանիստական մտածողությունը տեխնո-մարմնական փոփոխության մեջ ուրվագծում է այն նույն հորիզոնը, որ Նիցշեն նկարագրում էր ինքնարարման կամքի և ստեղծարար ազատության տրանսցենդենցիաներով. երկուսն էլ հանգում են միևնույն խնդրին՝ մարդու սահմանների վերացման մեջ գտնել գոյաբանական նոր սկիզբ:

Այսպիսով, անդրհումանիստական մարդու մասին գաղափարը մի կողմից ներկայացնում է տեխնոլոգիական ու ճանաչողական նոր հնարավորություններ, մյուս կողմից՝ էկզիստենցիալ լուրջ մարտահրավերներ, որոնք կարող են հանգեցնել մարդու էության խորը, գուցե նաև անդառնալի փոփոխությունների կամ նույնիսկ վախճանի: «Մարդը դրամատիզմի և ապրումների կարիք ու-

նի,- նկատում է Է. Ֆրոմը,- և, եթե իր ձեռքբերումների բարձրակետում բավարարվածություն չի գտնում, ապա ինքն իր համար կործանման դրամա է ստեղծում»[23]: Մարդուն մտահոգող որևէ բան իր ապագա ուրախության կամ դժբախտության գաղտնի սկիզբն է, որովհետև ապագան ոչ միայն կարող է լինել պատասխանատվություն ենթադրող նախագիծ, այլև ընդհանուր պատրանք կամ համախոհների ընդհանուր հալյուցինացիա[24]: Այս առումով հիմա դժվար է ասել, թե մարդակենտրոն գոյաբանության մայրամուտն ավետող «առցանց մարդու» նորակազմությանը ինչ ճակատագիր է սպասվում: Ըստ այդմ, ապագան կախված է մեր ընտրությունից՝ ինչպե՞ս պահպանել էկզիստենցիալ ներուժն ու ազատությունը՝ չկորցնելով մարդ լինելու իմաստը: Մարդու էությունը ենթակա է տեխնիկայի քողարկված էությանը, իսկ դա ոչ այլ ինչ է, քան մարդկային քաղաքակրթության համար դեռևս չգիտակցված, սակայն իրական վտանգ: Ընդ որում, ոչ թե մեքենաների, տեխնիկական սարքերի և ապարատների առկայությունն է վտանգում մարդկանց գոյությունը, այլ այն, որ մարդը տեխնիկայի ձեռքում կարող է դառնալ գործիք, կցորդ, տեխնիկային աղընթեր գոյություն: Արտաքին արդյունավետության շնորհիվ՝ տեխնիկայի գերակայությունը նվազագույնի է հասցնում աշխարհընկալման և, առաջին հերթին, մետաֆիզիկականը հասկանալու մնացած բոլոր հնարավորությունները: «Նման դիրքորոշման վտանգն այն է, որ կեցությունը, մոռանալով իր էությունը, երես է թեքում դրանից: Վտանգն այս դեռևս չիմաստավորված շրջադարձն է»[25]: Կեցության էության մոռացմանը և «փակ գիտակցության» առաջացմանը նպաստող այս թաքնված և չիմաստավորված շրջադարձը դժվար է նկատել և գիտակցել, քանի որ տեխնոլոգիաների հետևանքները թույլ չեն տալիս իրականությունն ընկալել կարծիքների և հասկացությունների մակարդակում, այլ խեղաթյուրում են անընդհատ և անգիտակցաբար ընկալվող հարաբերություններն ու մոդելները (Ժ. Բոդրիյար): Սա չգիտակցվող այնպիսի շրջադարձ է, երբ մարդը՝ որպես կեցության առջև բացազատ, մտածող էություն, հայտնվում է տեխնիկայի էության հիմնարար պարտադրանքի տակ: Առաջանում է փակ գիտակցության ֆենոմենը, ի հայտ է գալիս բանախոհությունից հրաժարման իրական վտանգ, հաշվողական մտածողությունը դառնում է մտածողության միակ հասանելի, ուստիև կիրառելի տեսակը: «Զգայուն, սրտակից մարդուն հակադրվում է մտազարը: Երկատված մարդ, որի միտքն անջատվել է զգացմունքից»[26]: Մի՞թե «հետմարդն» ազդարարում է էկզիստենցիալ մարդու վախճանը, մի՞թե մարդու մահախոսականը հետմարդն է գրելու:

Բոլոր ողջախոհ մարդկանց համար ակնհայտ է, որ եթե մարդը՝ որպես կենսասոցիալական տեսակ, ցանկանում է Երկիր մոլորակի վրա իր գոյության

---

[23] **Фромм Э.**, Анатомия человеческой деструктивности. М., «Республика», 1994, с. 26:

[24] Տե՛ս **Braidotti R.**, նշվ. աշխ., էջ 185:

[25] **Хайдеггер М.**, Время и бытие: Статьи и выступления. М., «Республика», 1993, с. 255.

[26] **Гиренок Ф. И.**, Патология русского ума. Картография дословности. М., Аграф, 1998, с. 96.

ժամկետը երկարաձգել, ապա պետք է հրաժարվի բացարձակ էվոլյուցիոնիզմի մտասևեռումից ու սահմանափակելով լինելությունը՝ հանուն բնականի (մարդու հոգևոր-մարմնական ամբողջականություն) ու արհեստականի (վիրտուալ իրականություն, արհեստական ինտելեկտ) համազարգացման (կոէվոլյուցիայի) ու համագործակցության, գիտակցական ջանքեր գործադրի հօգուտ էկզիստենցիալ կեցության ամբողջականության պահպանման՝ երբեք չմոռանալով, որ «առանց տրանսցենդենցիայի էկզիստենցիան դառնում է ամուլ և անսեր դիվային ինքնակամություն»[27]: Մարդու կատարելագործման մասին անդրհումանիստական նախագիծը հղի է բազմաթիվ անկանխատեսելի ռիսկերով և վտանգներով: Ուստի առանց համապատասխան վերահսկողության արդար և հասանելի ինստիտուցիոնալ մեխանիզմների ապահովման, առանց տեխնո-էթիկական կրթության զարգացման և, որ ամենակարևորն է, առանց այդ նախագծերի խորը և համակողմանի իրավական, բարոյական և, հատկապես, էկզիստենցիալ տեսանկյունների ուսումնասիրության, մետաֆիզիկական հարցերի անտեսումը և տեխնոլոգիական հնարավոր սխալները կարող են հանգեցնել խտրական վերաբերմունքի և սոցիալական անհավասարության խորացման, էկոլոգիական հավասարակշռության խախտման, կեցության և ինքնության էկզիստենցիալ հագեցվածության անդառնալի կորուստների: Ի վերջո, առանց ամենամարդկային հատկանիշի՝ էմպատիայի պահպանման, ցանկացած մարդաբանական բարելավում դատապարտված է վերածվելու նոր տեսակի դիստոպիայի, ըստ էության, էկզիստենցիալ մարդու՝ որպես ցեղային տեսակի վախճանին:

**ГАГИК СОГОМОНЯН – *Социокультурный эскиз трансгуманистического человека*. –** Сегодня человечество оказалось на грани пересмотра классических границ существования. Изменяя окружающую среду, человек трансформирует и самого себя, сталкиваясь с угрозой цивилизационного саморазрушения. Биомедицинские достижения подрывают ту модель разума, согласно которой со времен И. Канта человек определялся как конечное и самосознающее существо. Его вопрос «Что есть человек?» сегодня превращается в новый экзистенциальный вопрос: «Что есть постчеловек?». Онтологический горизонт трансгуманистического человека предполагает не только преодоление биологических границ, но и радикальное переосмысление человеческой идентичности. Идея «смерти человека» превращается не в окончательную утрату, а в новую точку отсчета — возможность существования, где в своих отношениях с миром человек больше не одинок. Проблема постчеловека ставит важнейший вопрос: стоим ли мы на пороге экзистенциального конца или перед лицом незавершенной возможности? Обсуждая тревожные аспекты трансгуманистического будущего и представляя непредсказуемые риски, а также социальные и этические последствия биомедицинских и технологических вмешательств, автор приходит к выводу, что проекты по «совершенствованию» человека полны вызовов и опасностей. Следовательно, без справедливых институциональных механизмов контроля и всестороннего изучения правовых, моральных и экзистенциальных аспектов, технологические ошибки могут привести к углублению социального неравенства и безвозвратной утрате экзистенциальной полноты бытия и идентичности.

---

[27] **Jaspers K.,** Vernunft und Existenz. Groningen, 1935, p□ 48.

**Ключевые слова:** *кризис гуманизма, технологическое мировоззрение, «постчеловек», «сверхчеловек», трансгуманизм, постгуманизм, искусственный интеллект, цифровое бессмертие, тело, эволюция, риск*

**GAGIK SOGHOMONYAN** – ***Sociocultural Profile of the Transhumanist Person.*** – Today, humanity finds itself at a boundary line where the classical limits of existence are being reshaped. By altering the environment, humans also transform themselves, facing the threat of civilizational self-destruction. Biomedical achievements disrupt the model of reason by which, since the time of I. Kant, the human being was defined as a finite and self-conscious entity. His question, "What is a human?" is evolving today into a new existential inquiry: "What is a post-human?"
The ontological horizon of the transhumanist person implies not only the overcoming of biological boundaries but also a radical reimagining of human identity. The concept of the "death of man" is transformed not into a final loss, but into a new starting point—a possibility of existence where the human is no longer alone in their relationship with the world. The issue of the post-human raises a crucial question: at the threshold of this new ontological horizon, do we face an existential end or an unfinished possibility?
Discussing the concerning aspects of a transhumanist future and presenting the unpredictable risks, as well as the social and ethical consequences of biomedical and technological interventions, the author concludes that projects for human enhancement are fraught with numerous challenges and dangers. Therefore, without ensuring fair and accessible institutional oversight, and without a comprehensive study of the legal, moral, and especially existential perspectives of these projects, potential technological errors could lead to the deepening of social inequality and the irreversible loss of the existential richness of being and identity.

**Key words**: *crisis of humanism, technological worldview, «posthuman», «overman», transhumanism, posthumanism, artificial intelligence, digital immortality, body, evolution, risk*

Գրականության ցանկ / References

**Արո Քրիստիան**, Տրանսհումանիզմ, Փիլիսոփայական դիտարկումներ: Թարգմանությունների ժողովածու (թարգմ□՝ Վ□Ա□ Միրզոյան), Եր□, Մեկնարկ, 2025 [Aro K‘ristian, Transhumanizm, P‘ilisop‘ayakan ditarkumner: T‘argmanut‘yunneri žołovacu (t‘argm.՝ V. A. Mirzoyan), Er., Meknark, 2025]:

**Յուվալ Նոյ Հարարի,** Homo Deus. Ապագայի համառոտ պատմություն (Թարգմ.՝ Լիանա Զաքարյան), Եր., Newmag, 2020 [Yuval Noy Harari, *Homo Deus. Apagayi hamarot patmut‘yun* (t‘argm.՝ Liana Zak‘aryan), Newmag, Er., 2020]:

**Նիցշե Ֆ□,** Այսպես խոսեց Զրադաշտը (թարգմ.՝ Ս. Հովսեփյան), Եր., ԵՊՀ հրատ., 2012 [Nic‘še F., *Ayspes xosec Zradasht□* (t‘argm.՝ S. Hovsep‘yan), Er., EPH hrat., 2012]:

**Ֆուկո Մ.,** Բառերն ու բաները (թարգմ.՝ Ա. Մինասյան), Եր., ԵՊՀ հր., 2019 [Fuko M., *Bar̈ern u banerə* (t‘argm.՝ A. Minasyan), Er., EPH, 2019]:

**Agamben Giorgio,** Homo Sacer: Sovereign Power and Bare Life. Stanford: Stanford University Press, 1998.

**Bostrom N. A**, History of Transhumanist Thought // Journal of Evolution and Technology. 2005. Vol. 14. No. 1. P. 1–25. – URL: https://nickbostrom.com/papers/history.pdf

**Braidotti R.**, The Posthuman. Cambridge, UK, Polity Press, 2013.

**Haraway D.**, *A Cyborg Manifesto*, 1985.

**Jaspers K.**, Vernunft und Existenz. Groningen, 1935.

**Ranisch, Sorgner** Introducing Post- and Transhumanism // Ranisch R., Sorgner S.L. (Eds.) Post- and Transhumanism: An Introduction. – Frankfurt am Main: Peter Lang, 2015.

**Бодрийяр Ж.,** Прозрачность зла, М., “Добросвет”, 2000 [Bodriyyar ZH., Prozrachnost' zla, M., “Dobrosvet”, 2000].

**Гиренок Ф.И.,** Основные принципы дигитальной философии // Философия хозяйства. 2018. № 6 [Girenok F.I., Osnovnyye printsipy digital'noy filosofii // Filosofiya khozyaystva. 2018. № 6].

**Гиренок, Ф. И.**, Патология русского ума. Картография дословности. М., Аграф, 1998 [Girenok, F. I., Patologiya russkogo uma. Kartografiya doslovnosti. M., Agraf, 1998].

**Левинас Э.**, Избранное: Тотальность и Бесконечное, М., Центр гуманитарных инициатив, 2024 [Levinas E., Izbrannoye: Total'nost' i Beskonechnoye, M., Tsentr gumanitarnykh initsiativ, 2024].

**Мамардашвили М.**, Как я понимаю философию, М., Прогресс, 1990 [Mamardashvili M., Kak ya ponimayu filosofiyu, M., Progress, 1990].

**Мамардашвили М.**, Проблема человека в философии / О человеческом в человеке, М., 1991 [Mamardashvili M., Problema cheloveka v filosofii / O chelovecheskom v cheloveke, M., 1991].

**Поппер К.**, Логика и рост научного знания, М.: Прогресс, 1983 [Popper K., Logika i rost nauchnogo znaniya, M.: Progress, 1983].

**Фромм Э.,** Анатомия человеческой деструктивности, М., Республика, 1994 [Fromm E., Anatomiya chelovecheskoy destruktivnosti, M., Respublika, 1994].

**Фукуяма Ф.,** Наше постчеловеческое будущее: Последствия биотехнологической революции, М.: АСТ, 2004 [Fukuyama F., Nashe postchelovecheskoye budushcheye: Posledstviya biotekhnologicheskoy revolyutsii, M.: AST, 2004].

**Хайдеггер М.**, Время и бытие: Статьи и выступления М., Республика, 1993 [Hajdegger M., Vremâ i bytie: Stat′i i vystupleniâ M., Respublika, 1993].

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 19-33
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.019

# «ԱՆՎԱԿՈՍԻ ԷՖԵԿՏԸ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՐՄԱՆ ՂԱՐԱԳՈՒԼՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային տարածքում սկսվեց ինստիտուցիոնալ փոխակերպումների աննախադեպ մի ալիք, ինչը հիմնված էր այն կանխավարկածի վրա, թե ազատական-ժողովրդավարական կառուցակարգերն ինքնաբերաբար կխթանեն կյանքի սոցիոմշակութային հիմունքների արդիականացումը: Սակայն տասնամյակներ տևած «անցումը» վեր հանեց կառուցվածքային մի շարք անհամաչափություններ: Մասնավորապես, ձևայնացված ինստիտուտների ներդրմանը զուգահեռ՝ հասարակական կյանքի հիմքում ընկած «մշակութային կոդերը» մնացին խնամակալական հիմունքներով գործառող անցյալին շաղկապված: Հայաստանն այս երևույթի ցայտուն օրինակ է, որտեղ հարատև **«անվակոսի էֆեկտը»** (path dependence) ստեղծել է ինստիտուցիոնալ «կողպման» վիճակ՝ բարեփոխումները դարձնելով ավելի շատ դեկորատիվ:
Հոդվածում հիմնավորվում է, որ զարգացման իներցիայի հաղթահարումը պահանջում է ինստիտուցիոնալ ճարտարակերտման արմատական ձև, որն ուղղված կլինի հասարակության էկզիստենցիալ հիմքերին: Այս համատեքստում վերլուծվում է «Իրական Հայաստանի» հայեցակարգը՝ որպես տրավմատիկ հիշողության ապակառուցման և ինքնության պրագմատիկ վերադասավորման փորձ: Միաժամանակ, քննվում են այն խնդիրները, որոնք հայեցակարգը դարձնում են էկզիստենցիալ առումով խոցելի: Հեղինակը փաստում է, որ **գոյաբանական անվտանգության** հին հենարանների փլուզումը և **պատասխանատվության զգերեռումը** կարող են առաջացնել հանրային դիմադրություն և խնամակալական հիմունքներով գործառող անցյալին վերադառնալու ցանկություն: Եզրակացության մեջ շեշտվում է, որ «անվակոսի» հաղթահարումն առավել իրատեսական է դառնում պատմական տրավմաները պետականակերտման ռեսուրսի վերածելու և քաղաքացիական այնպիսի սուբյեկտայնություն ձևավորելու միջոցով, որտեղ պետությունն իրապես ընկալվում է որպես անհատի անվտանգության և ինքնաիրացման միակ իրական միջավայրը:

[*] **Արման Ղարագուլյան** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ
**Арман Карагулян –** кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ
**Arman Gharagulyan** – Candidate of Philosophy, Associate Professor at the YSU Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics
Էլ. փոստ՝ arman_gharagulyan@ysu.am Orchid ID: https://orcid.org/0009-0006-9606-4018

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 14.04.2026
Գրախոսվել է՝ 26.04.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

**Բանալի բառեր** - *անվակոսի էֆեկտ, հետխորհրդային փոխակերպում, մշակութային կոդ, Իրական Հայաստան, ձեռքբերովի անօգնականություն, ինստիտուցիոնալ ճարտարակերտում*

Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային հանրությունների առջև ծառացած գերակա մարտահրավերը արդիականացման նոր մոդելի ընտրությունն էր: Որպես զարգացման թիրախային նմուշ ընդունվեց արևմտյան ազատականությանն ու ժողովրդավարությանը բնորոշ տնտեսական և քաղաքական ինստիտուտների ներմուծումը: Նման ընտրության հիմքում ընկած էր այն կանխավարկածը, որ տնտեսական հարաբերությունների ազատականացումը և արևմտյան ֆինանսական ու իրավական կառուցակարգերը (մեխանիզմները) ինքնաբերաբար կհանգեցնեն հասարակության սոցիալական կառուցվածքի և մշակութային դաշտի վերափոխմանը:

Սակայն, ինչպես փաստեց անցած տասնամյակների փորձը, իրավական հիմքերի ստեղծումը դեռևս չի երաշխավորում ժողովրդավարական արժեքների արմատավորում, առավել ևս, որ բարեփոխումների իրականացման ընթացքում հաճախ հաշվի առնվեցին միայն գործընթացների ընդհանուր որակական կողմերը՝ անտեսելով կոնկրետ երկրների սոցիոմշակութային և էթնոմշակութային զարգացման առանձնահատկությունները: Արդյունքում՝ շուկայական ու ժողովրդավարական «ինստիտուտների ներմուծումը» բախվեց օբյեկտիվ սոցիալ-պատմական ավանդույթների դիմադրությանը, ինչը թույլ չտվեց հետխորհրդային երկրներում հաստատել լիարժեք գործառող ժողովրդավարական կարգեր: Հայաստանի պարագայում սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոխակերպումների ձախողման պատճառներից մեկն էլ այն էր, որ ժողովրդավարությունը այդպես էլ չվերածվեց **«մշակութային կոդի»**:

Սույն հետազոտության մեջ «մշակութային կոդը» դիտարկվում է ոչ թե որպես էթնիկական ավանդույթների պարզ հանրագումար, այլ որպես սոցիալական ենթատեքստ, որն իմաստավորում է հանրույթի սոցիալական պրակտիկաները և քաղաքական վարքագծի մոդելները: Այս առումով կարելի է ասել, որ մշակութային կոդը հասարակության «կոլեկտիվ անգիտակցականի» մեջ արմատավորված իմաստային կառուցվածքների և վարքագծային մոդելների այն ամբողջությունն է, որն էլ հենց կանխորոշում է տվյալ հանրույթի արձագանքը արտաքին և ներքին ազդակներին: Սա յուրօրինակ «իմաստային մատրիցա» է, որը սահմանում է, թե ինչն է տվյալ հասարակության համար ընկալվում որպես «արդար», «լեգիտիմ» կամ «անվտանգ»: Ինստիտուցիոնալ առումով մշակութային կոդը հասարակության կողմից պատմականորեն յուրացված «բազային ենթադրությունների» այն համակարգն է, որը կանխորոշում է նոր ինստիտուտների կենսունակությունը կամ դրանց օտարումը[1]:

---

[1] Տե՛ս Schein E., Organizational Culture and Leadership, 4th ed., San Francisco, Jossey-Bass, 2010, էջ 69:

Հայաստանի պարագայում այս կողերի դիմադրողականության պատճառն այն է, որ ժողովրդավարության ձևական կառույցները մնում են ավելի շատ որպես արտաքին ձևավորում, մինչդեռ ներքին սոցիալական կյանքը շարունակում է վերարտադրվել բոլորովին այլ տրամաբանությամբ: Հայաստանն այժմ գտնվում է մի վիճակում, որտեղ ձևական մակարդակում գործում են ժողովրդավարական կանոնները, սակայն ոչ ձևական գործելակերպը (որոշումների կայացման նեղ շրջանակ, անձնավորված իշխանություն, հովանավորչություն) մնում է անփոփոխ: Ժողովրդավարությունը, օրինակ, ենթադրում է ինստիտուցիոնալ վստահություն, մինչդեռ հայաստանյան իրականությունում վստահությունը շարունակում է մնալ անձնավորված. մարդիկ վստահում են կոնկրետ անձին, այլ ոչ թե օրենքին կամ ինստիտուտին: Սա ստեղծում է «շքամուտքային ժողովրդավարության» վտանգ, որտեղ հասկացութային ապարատը եվրոպական է, սակայն վարքագծային մոդելները՝ խորհրդային:

Ի դեպ, հարևան հետխորհրդային երկրներում վիճակը նույնն է: Վրաստանում, օրինակ, 2000-ականների սկզբին իրականացվեցին մի շարք արմատական փոխակերպումներ («Վարդերի հեղափոխություն»), ներմուծվեցին արևմտյան ինստիտուտներ, որի ընթացքում «շոկային» մեթոդներով փոխվեցին ձևական կանոնները մի շարք հիմնարար ոլորտներում (ոստիկանության բարեփոխում, պետական ծառայությունների թվայնացում և այլն): Սակայն երկրում առկա սոցիոմշակութային կոդերը (կլանային մտածողություն, իշխանության սրբազանացում) համակարգը աստիճանաբար վերադարձրին հիբրիդային վիճակի: Վրացական փորձը ցույց տվեց, որ նույնիսկ ավելի արդյունավետ ներմուծված ինստիտուտը կարող է «օտարվել», եթե այն չի վերափոխում մշակութային ներքին շերտերը:

Ադրբեջանի պարագայում երկիրը հայտնվեց «ռեսուրսային անեծքի» ծիրում, քանի որ զարգացման և համակարգային կայունության երաշխիք ընտրվեց ռենտայի (նավթի, գազի օգտագործում) սկզբունքը: Ինչպես նմանատիպ շատ այլ տնտեսություններում, այստեղ ևս տեղի ունեցավ ինստիտուտների լիակատար «կլանում» ռենտայի կողմից: Ադրբեջանում քաղաքացիական հասարակության հետաճը ոչ թե պատահականության, այլ պետական ռազմավարության արդյունք է, որտեղ սոցիալական բարեկեցությունը փոխանակվել է ազատությունների և իրավունքների սահմանափակման հետ:

Ինչո՞ւ են տեղի ունենում ինստիտուցիոնալ նման ձախողումները: Պատասխանը պետք է փնտրել ոչ թե օրենքների ձևակերպումներում, այլ դրանց և հասարակության ներքին կառուցվածքի միջև առկա խզման մեջ: Հասարակական գիտությունների մեջ այս երևույթը նկարագրվում է որպես **«անվակոսի**

**էֆեկտ»**[2] (ռուսերեն՝ *эффект колеи*, անգլերեն՝ *path dependence*), ինչը հնարավորություն է տալիս ախտորոշելու զարգացման հետագծի կախվածությունը նախկինում կատարված ընտրություններից և ձևավորված սովորույթներից:

«Անվակոսի էֆեկտը» մի իրավիճակ է, երբ երկիրը շարժվում է զարգացման որոշակի հետագծով, ցանկանում է անցնել զարգացման ավելի բարձր մակարդակի, սակայն չի կարողանում, քանի որ անցյալի որոշումներն ու ձևավորված մշակույթը պահում են նրան հին ուղու վրա[3]: Անվակոսի էֆեկտը սովորաբար սկսվում է պատմական որևէ փուլում թույլ տրված «ինստիտուցիոնալ սխալից», որից հետո սխալ ընտրված ինստիտուտները աստիճանաբար ամրապնդվում են և ձևավորում իրենց բնույթին համապատասխան մշակութային (արժեքներ և վարքի նորմատիվ համակարգ) հիմունքներ: Ստեղծվում է յուրահատուկ փակ շրջան. մշակույթը հովանավորում է անարդյունավետ ինստիտուտներ, որոնք, իրենց հերթին, արգելակում են մշակույթի արդիականացումը:

Այս երևույթի էությունը հասկանալու համար գիտական գրականության մեջ հաճախ օգտագործվում է ժամանակակից համակարգչային ստեղնաշարերի QWERTY տառաշարի օրինակը: Այս դասավորությունը ստեղծվել է գրամեքենաների դարաշրջանում՝ որոշակի տեխնիկական խնդիր լուծելու համար. այն ժամանակների գրամեքենաների մեխանիզմները խափանվում էին տառերի արագ հավաքման դեպքում, ուստի ամենահաճախ հանդիպող տառերն իրարից հեռացվեցին՝ տեքստի հավաքումը արհեստականորեն դանդաղեցնելու նպատակով: Թեև այդ տեխնիկական խնդիրը վաղուց այլևս գոյություն չունի, և կան շատ ավելի արդյունավետ դասավորություններ, բայց աշխարհը շարունակում է օգտագործել QWERTY դասավորությունը: Սա տեղի է ունենում վերաուսուցման նոր համակարգին անցնելու կամ վերաուսուցման հսկայական ծախսերի և սովորույթի ուժի պատճառով, ինչը հանգեցնում է համակարգային «կողպման» (lock-in) վիճակի[4]:

Համանման մի բան է տեղի ունենում նաև հասարակական կյանքում. երբ հասարակությունը մտնում է զարգացման որոշակի «ակոսի» մեջ (օրինակ՝ անձնավորված իշխանություն կամ ռենտային տնտեսություն), մասնակիցները հարմարվում են այդ կանոններին, քանի որ ակոսից դուրս գալը պահանջում է հսկայական ջանքեր և ռիսկեր, որոնք հասարակությունը հաճախ պատրաստ չէ ստանձնել:

Ի տարբերություն տեխնիկական ստանդարտների՝ սոցիալական անվակոսը պահվում է շատ ավելի խորքային՝ **մշակութային կոդերի** միջոցով: Ինչպես փաստում է Դ. Նորթը, ինստիտուտները բաղկացած են ձևայնացված կանոններից (օրենքներ) և ոչ ձևայնացված սահմանափակումներից (սովորույթներ,

---

[2] Տե՛ս **Mahoney J.**, Path Dependence in Historical Sociology, 2000:

[3] Տե՛ս **Аузан А.**, Культурные коды экономики, М.:АСТ, 2025, էջ 98:

[4] Տե՛ս **David P.**, Clio and the Economics of QWERTY, 1985:

վարքագծային նորմեր)[5]: Փոխակերպումների ձախողումների հիմնական պատճառն այն է, որ ձևայնացված կանոնները կարող են փոխվել մեկ օրում, մինչդեռ ոչ ձևայնացված ինստիտուտները փոփոխվում են չափազանց դանդաղ: Երբ ներմուծված «առաջադեմ» օրենքը բախվում է դարերով ամրապնդված մշակութային կոդի դիմադրությանը, վերջինս սկսում է «խմբագրել» օրենքը՝ այն վերածելով նմանակման կամ դեկորի: Մշակութային չափումների մեթոդաբանության[6] տեսանկյունից Հայաստանի պարագայում մշակութային դիմադրությունը վերարտադրվում է մի քանի առանցքային չափումներում:

**Իշխանությունից մեծ հեռավորություն**: Սա ձևավորում է մի միջավայր, որտեղ հասարակությունը հակված է հիերարխիկ կառավարմանը և իշխանության սրբազանացմանը: Նման պայմաններում վստահությունը մնում է անձնավորված, քանի որ մարդիկ վստահում են կոնկրետ անհատին կամ «առաջնորդին», այլ ոչ թե անդեմ ինստիտուտներին (դատարան, օրենք): Սա ստեղծում է մի ակոս, որտեղ ժողովրդավարական ձևայնացված կառույցները կլանվում են անձնավորված իշխանության կողմից:

**Անորոշությունից խուսափում**: Սա հասարակությանը ստիպում է կառչել անցյալում «ստուգված» ձևերից և հեռու մնալ ռիսկային նորարարություններից: Անորոշությունից խուսափող պահպանողական մշակույթները նորարարության փոխարեն նախընտրում են կայունությունը (նույնիսկ ոչ արդյունավետ), ինչը դժվարացնում է ցանկացած ինստիտուցիոնալ շրջադարձ:

**Կարճաժամկետ կողմնորոշում**: Անվակոսից դուրս գալը պահանջում է պլանավորման երկար հորիզոն (առնվազն 20-25 տարի): Սակայն տրավմատիկ անցյալ և գոյատևման մշտական խնդիրներ ունեցող հասարակությունները, որպես կանոն, նախընտրում են «կարճ հորիզոններ»՝ համարելով, որ «այստեղ ու հիմա» անվտանգությունն ու բարեկեցությունը ավելի կարևոր գործոններ են, քան ապագայի ռազմավարական զարգացման անորոշ հեռանկարը:

Ի դեպ, Հայաստանի պարագայում «անվակոսի էֆեկտը» ոչ միայն պայմանավորված է խորհրդային անցյալից ժառանգված մշակութային կոդերով, այլև ամրապնդվում ու խորանում է պատմական տրավմատիկ հիշողության գործոնով: Ինչպես նշում է Ա. Աթանեսյանը, ազգի տրավմատիկ պատմությունն ուղղակիորեն ձևավորում է նրա ապագան՝ անկախ այն բանից՝ մարդիկ գիտակցաբա՞ր են ընտրում այդ իրադարձությունները հիշելը, թե՞ ոչ[7]: Այս համատեքստում տրավմատիկ հիշողությունը հանդես է գալիս որպես անվակոսը

---

[5] Տե՛ս **North D.**, Institutions, institutional change and economic performance, Cambridge University Press, 1990, էջ 3-4:

[6] Տե՛ս **Hofstede G.**, Culture's Consequences: Comparing Values, Behaviors, Institutions and Organizations Across Nations, 2nd ed., Thousand Oaks, 2001, էջ 79, 145:

[7] Տե՛ս **Atanesyan A.**, Traumatic past and the politics of memory: what should be and should not be the Armenian approach?// Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 2024, N2, էջ 15:

«կողպող» գործոն: Եթե ազգը չի կարողանում իր տրավմատիկ անցյալը ծառայեցնել գործառական և պրագմատիկ նպատակներին, ապա դատապարտված է վերարտադրելու նույն սպառնալիքներն ու սխալները: Ըստ Աթանեսյանի՝ տրավմատիկ իրադարձությունների հիշողությունը պետք է ծառայի անհրաժեշտ քաղաքականության և գործողությունների խթանմանը, մինչդեռ Հայաստանում գերիշխող՝ «Հիշել՝ երբեք չմոռանալու համար» հիշողության մոդելը հաճախ չի տալիս գործնական պատասխաններ, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկվեն ապագայում նմանատիպ աղետներից խուսափելու համար[8]:

**«Իրական Հայաստան». ինստիտուցիոնալ ճարտարակերտումը որպես «անվակոսի» հաղթահարման հայեցակարգ**

Հայաստանի նախկին փորձերը՝ դուրս գալու հետխորհրդային անվակոսից, հիմնականում ձախողվել են երկու պատճառով. դրանք եղել են կա՛մ չափազանց արտաքին (ներմուծվել է զարգացման արևմտյան մոդել՝ չստեղծելով այդ մոդելին համապատասխան մշակութային հիմքեր), կա՛մ չափազանց մասնակի (տրվել են տեխնոկրատական լուծումներ՝ չանելով համապատասխան քաղաքական վերափոխումներ): Այս տեսական և պատմական համատեքստում ուշագրավ նշանակություն է ստանում ՀՀ կառավարության կողմից ներկայումս շրջանառվող **«Իրական Հայաստանի»** գաղափարախոսությունը[9]: Եթե նախորդ տասնամյակների բարեփոխումները թիրախավորում էին զուտ ֆորմալ ինստիտուտների ներմուծումը, ապա այս հայեցակարգը կարելի է բնորոշել որպես **ինստիտուցիոնալ ճարտարակերտման** արմատական փորձ, որն ուղղված է հենց վերը նկարագրված «անվակոսի» սոցիոմշակութային և էկզիստենցիալ հիմքերի վերափոխմանը: «Իրական Հայաստանի» ներկայացված հայեցակարգը հասարակության վերափոխման նախորդ փորձերից տարբերվում է այն բանով, որ հասարակությանը առաջարկվում է նոր ինքնություն, որն էլ պետք է դառնա ապագա ինստիտուտների մշակութային հիմքը:

«Իրական Հայաստանի» հայեցակարգի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մի քանի հիմնական ուղղություններ, որոնցով փորձ է արվում «կոտրել» Հայաստանի սոցիոմշակութային հետագիծը:

1. **Հաղակցում առկա իրականությանը**: Հայկական սոցիոմշակութային համակարգում առկա է հիմնարար երկփեղկվածություն մետաֆիզիկական հայրենիքի և իրավական պետության միջև: Այս երկընտրանքը հանդես է գալիս որպես «անվակոսի էֆեկտի» առանցքային տարր, որտեղ հասարակությունը,

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 22:

[9] https://www.primeminister.am/hy/statements-and-messages/item/2025/02/19/Nikol-Pashinyan-Speech

կառչած մնալով հայրենիքի հուզական-խորհրդանշական ընկալմանը, դիմադրում է պետության՝ որպես ռացիոնալ-տարածքային կազմակերպության կայացմանը: Պատմականորեն Հայաստանում պետությունը ստորադասվել է հայրենիքին՝ հաճախ դիտարկվելով սոսկ որպես գործիք պատմական արդարությանը հասնելու համար: Նման գործիքային ընկալումը թույլ չի տվել պետական ինստիտուտներին ձևավորվել որպես ինքնաբավ և սուվերեն արժեքներ:

«Իրական Հայաստանի» նախագիծը կարելի է բնորոշել որպես այս երկընտրանքի հաղթահարման ճիգ՝ միտված հայրենիքի խորհրդանշական բովանդակության և պետական իրավական սահմանների նույնացմանը: Հայրենիքը սահմանելով կոնկրետ տարածքային շրջանակում՝ փորձ է արվում կոտրել «զոհի» կամ «կորսված հայրենիքի» հոգեբանական ցիկլը: Այս համատեքստում հայեցակարգն առաջարկում է անցում քաղաքացիության նոր մոդելի: Եթե նախկինում խոսքն ավելի շատ «**ազգային քաղաքացու»** մասին էր, ում կապը հայրենիքի հետ կրում է էկզիստենցիալ-պասիվ բնույթ (լինելություն հողի ու ջրի վրա) և չի ենթադրում պայմանագրային ջանք կամ պատասխանատվություն, ապա նոր հայեցակարգում մենք գործ ունենք **«պետական քաղաքացու»** հետ, ով հանդես է գալիս որպես պատասխանատու սոցիալական գործորդ, և ում լոյալությունը հիմնված է իրավական պարտաճանաչության, հարկերի վճարման և ինստիտուցիոնալ վստահության վրա:

Կարևոր է նաև նշել, որ եթե ինստիտուցիոնալ մակարդակում մենք դեռևս կրում ենք խորհրդային «անվակոսի» ազդեցությունը, ապա արժեքային-ընկալումային հարթությունում հասարակությունը շարունակում է դեգերել **«վիրտուալ տափաստաններում»**[10]: Սա մի վիճակ է, որտեղ հստակ սահմանների և իրավական պատասխանատվության բացակայությունը փոխարինվում է պատմական անուրջներով: «Պատմական Հայաստանը», իր լղոզված սահմաններով և անցյալի ու ապագայի միջև դեգերող ինքնությամբ, վերածվել է մի վիրտուալ տիրույթի, որտեղ մարդը զրկված է «այստեղ» և «հիմա» լինելու հնարավորությունից: Հետևաբար, «Իրական Հայաստանին» անցումը ոչ միայն ինստիտուցիոնալ բարեփոխում է, այլև էկզիստենցիալ ճիգ՝ դուրս գալու այդ անհատակ տափաստանից և հաստատվելու իրավական ու տարածքային կոնկրետության մեջ:

2. **Գոյատևումից դեպի ինքնաարտահայտում**: «Իրական Հայաստանի» նախագծում առանցքային նշանակություն է տրվում անձնական բարեկեցությանը՝ որպես պետականության գոյաբանական հիմքի: Ծրագրի 4-րդ և 5-րդ կետերը («Մարդը բարձրագույն արժեք է» և «Պետությունը՝ որպես բարեկեցության գործիք») ուղղակիորեն թիրախավորում են անհատի երջանկության և նյութական ապահովության խնդիրը: Ավանդաբար, հայկական մշակութային

[10] Տե՛ս **Հարությունյան Է□**, Ընկալման էկզիստենցիալ համատեքստի ապականումը□ մարդը «վիրտուալ տափաստաններում» // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2025, № 3:

կողում արմատավորված է եղել «որտեղ հաց, այնտեղ կաց» պանդխտական փիլիսոփայությունը, որի պայմաններում հայրենիքն ընկալվել է որպես «սրբազան մասունք» կամ լոկ որպես «հուզական-հոգևոր ապրում»[11], իսկ ռեալ կեցությունը և բարեկեցությունը փնտրվել են այդ տարածքից դուրս (արտագնա աշխատանք, արտագաղթ): Մինչդեռ «Իրական Հայաստանի» նախագիծն առաջարկում է այս ճեղքվածքը հաղթահարելու նոր բանաձև՝ «այստեղ պետություն, այստեղ հաց», ինչը ենթադրում է, որ ինստիտուցիոնալ այս նոր հետագիծը փորձում է պետական սահմանը, աշխատանքը և բարեկեցությունը դիտարկել որպես միմյանց փոխլրացնող մեկ միասնական շղթա, որտեղ բարեկեցության շեշտադրումը փորձ է՝ միայն ֆիզիկական գոյատևման խնդիրների վրա սևեռված հասարակությանը փոխակերպել ինքնաբավ ու ինքնաարտահայտվող հասարակության: Մի գոյաբանական կարգ, որտեղ պետությունը ոչ թե «թանգարան» կամ «տեսիլք» է, այլ մարդու կյանքի որակը սպասարկող արդյունավետ գործիք: Սա այն անհրաժեշտ «արժեքային շեղումն» է, որը թույլ կտա դուրս գալ դարավոր անվակոսից և ձևավորել պետականակենտրոն մտածողություն, որտեղ բարեկեցությունը սուվերենության ամրապնդման հիմնական միջոց է:

3. **Խնամառությունից դեպի քաղաքացիական սուբյեկտայնություն:** Խորհրդային ավանդական «ակոսում» բարեկեցության ակնկալիքը տասնամյակներ շարունակ կապվել է «վերևից» եկող պետական նպաստի, հարուստ բարերարի կամ իշխանավորի շնորհի հետ, ինչն անհատին հետևողականորեն պահել է պասիվ օբյեկտի կարգավիճակում: Սակայն այս տևական սպասողականությունը ոչ թե պարզապես քաղաքական սովորույթ է, այլ արդյունք է սոցիալականացման այն յուրահատուկ մեխանիզմների, որոնք ձևավորվել են խորհրդային տոտալ վերահսկողության և առկա իրականության ու գործող գաղափարախոսության միջև առկա «երկակի ճշմարտության» պայմաններում[12]: Այդ միջավայրում անձնական ջանքի և ստացված արդյունքի միջև համամասնական կապի բացակայությունը, զուգակցվելով համընդհանուր հասարակական վերահսկողության հետ, հանգեցրել է մի վիճակի, որը սոցիալ-հոգեբանական և մշակութային տեսանկյունից բնորոշվում է որպես ձեռքբերովի անօգնականության համախտանիշ[13]: Սա յուրօրինակ «հարմարվողականության մշակույթ» է, որտեղ մարդը, բազմիցս բախվելով սեփական գործողությունների անարդյունավետությանը, աստիճանաբար դադարում է իրականությունը փոփոխելու փորձերից՝ կյանքի կառավարումը վերապահելով իրենից դուրս գտնվող ուժերին[14]:

---

[11] Տե՛ս **Հարությունյան Է**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր, 2004, էջ 54:

[12] Տե՛ս **Ղարագուլյան Ա.,** Ձեռքբերովի անօգնականությունը որպես հետխորհրդային իրականության սոցիոմշակութային ախտանիշ // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2016, № 1, էջ 51:

[13] Տե՛ս **Seligman M.,** Helplessness: On Depression, Development, and Death, W.H. Freeman, 1975:

[14] Տե՛ս **Langer E.,** The Psychology of Control, 1983:

Այս համատեքստում «Իրական Հայաստանի»՝ անհատական պատասխանատվության թեզը («ապագան կախված է մեկ մարդուց») դիտարկվում է որպես խորհրդային մշակույթի ամենակայուն տարրից՝ պասիվ սպասողականության և խնամառական հետազծից դուրս գալու արմատական փորձ: Այն ենթադրում է անցում քաղաքացու օբյեկտային վիճակից, որտեղ նա սոսկ պետական հոգածության սպառող էր, դեպի գործուն սուբյեկտայնություն, որն ունակ է կոտրելու ձեռքբերովի անօգնականության վրա խարսխված արժեքային համակարգը: Այսպիսով, «Իրական Հայաստանը» հանդես է գալիս որպես ինստիտուցիոնալ ինժեներիայի արմատական ճիգ՝ միտված պասիվության պատնեշի քանդմանը և քաղաքացու սոցիալական ինքնավարության վերականգնմանը: Այս վերափոխումն իր հերթին ակնկալում է գիտակցված հրաժարում այն «ապաստարանից», որտեղ պետական հոգածությունը տասնամյակներ շարունակ փոխհատուցել է անհատական ինքնադրսևորման սահմանափակությունները՝ դրանով իսկ վերարտադրելով անօգնականության և օբյեկտային կեցության փակ շրջափուլը:

**«Իրական Հայաստանի» քննադատական հեռանկարը և էկզիստենցիալ ռիսկերը**

Թեև «Իրական Հայաստանի» նախագիծն առաջարկում է «անվակուսից» դուրս գալու գործնական ճանապարհային քարտեզ, բայց այն զերծ չէ նաև թերություններից թե՛ փիլիսոփայական և թե՛ սոցիոմշակութային մակարդակներում:

***«Վիրտուալ տափաստաններից» դեպի իրականության անորոշությունը***

Հայաստանյան փոխակերպումների պարադոքսը հասկանալու համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ դրանց մշակութային-իմաստաբանական և էկզիստենցիալ շերտերին, քանի որ ցանկացած արմատական ինստիտուցիոնալ բարեփոխում նախևառաջ ներխուժում է հանրույթի **գոյաբանական անվտանգության** տիրույթ[15]: «Իրական Հայաստանի» հայեցակարգը հավակնում է վերականգնելու հասարակության խաթարված էկզիստենցիալ հենարանները՝ միտված լինելով մարդուն «վիրտուալ տափաստանների» նոմադիզմից վերադարձնել դեպի իրավական իրականության հաստատուն տիրույթ: Սակայն այս նախագիծը բախվում է մի հիմնարար հակասության. այն հավակնում է հաստատելու գոյաբանական նոր հենարաններ այնպիսի պայմաններում, երբ հին հուզական ապաստարաններն արդեն փլուզված են, իսկ նորի անվտանգային երաշխիքները դեռևս չեն ներքնայնացվել: Ներկա փուլում

---

[15] Տե՛ս **Giddens A.,** Modernity and Self-Identity: Self and Society in the Late Modern Age. Stanford University Press. 1991:

«Իրական Հայաստանը», զուրկ լինելով համարժեք ինստիտուցիոնալ և անվտանգային ամրապնդումից, հասարակությանը չի ընձեռում գոյաբանական անվտանգության նոր երաշխիքներ՝ միաժամանակ խլելով նախկինում գործող թեկուզ վիրտուալ, սակայն հուզականորեն հարազատ էկզիստենցիալ հենարանները։

Վերոնշյալ միտումները նոր, էկզիստենցիալ շերտ են ստանում Լեռնային Ղարաբաղի կորստյան համատեքստում, ինչը հայ հասարակության համար ոչ միայն տարածքային կամ քաղաքական աղետ է, այլև սոցիալական հիշողության համակարգային փլուզում, քանի որ կործանվել է այն սիմվոլիկ ենթաշերտը՝ յուրօրինակ «իմաստային մատրիցան», որի վրա խարսխված էր Երրորդ Հանրապետության ողջ ինքնութենական դիսկուրսը։ Ստեղծված իրավիճակում, երբ անցյալի իմաստային կառույցներն այլևս գոյություն չունեն, իսկ ապագան ներկայանում է որպես անորոշ ու հակասական մի տիրույթ, հանրությունը հայտնվում է յուրօրինակ «իմաստային վակուումի» մեջ։ Նման իրավիճակներում իրականությունը հաճախ միտում ունի փոխարինվելու կեղծանմանակներով։ Ինչպես Բոդրիյարի նկարագրած Դիսնեյլենդը պատրանք է ստեղծում, թե դրանից դուրս գտնվող աշխարհը դեռևս իրական է[16], այնպես էլ «Իրական Հայաստանը» ռիսկ ունի վերածվելու մի հիպերռեալության։ Այս դեպքում պետականության արտաքին նշանները և իրավական ձևակերպումները կարող են ծառայել որպես վարագույր՝ քողարկելու օբյեկտիվ բովանդակության և անվտանգային երաշխիքների բացակայությունը։ Նման պայմաններում հուզական օտարումը դառնում է իրականության ընկալման անխուսափելի ուղեկիցը, քանի որ պրագմատիկ-ռացիոնալիստական հողակցման փորձը հիմնարար կերպով բախվում է հայկական մշակութային կոդին, որը դարեր շարունակ սնվել է մետաֆիզիկական ու սրբազանացված հայրենիքի ընկալումներով։

Մշակութային այս անհամապատասխանությունն առավել ցավոտ է դրսևորվում տնական լարվածության պայմաններում. իրական անվտանգային սպառնալիքները, միահյուսվելով հիբրիդային տեղեկատվական պատերազմների ազդեցությանը, հանրությանը պահում են տագնապի մշտական հորձանուտում՝ օբյեկտիվորեն արգելափակելով երկարաժամկետ պլանավորման ցանկացած ռացիոնալ հորիզոն և սահմանափակելով հասարակության հայացքը զուտ ընթացիկ գոյապահպանման նեղ շրջանակով։ Այսպիսով, հրաժարվելով «Պատմական Հայաստանի» հուզական հենարանից, քաղաքացին առերեսվում է իրականության անորոշությանը. առանց իր ավանդական էկզիստենցիալ կողմնորոշիչների (պատմական արդարություն, Հայ Դատ, մետաֆիզիկական հայրենիք) անհատի ինքնությունը ձեռք է բերում «հոսուն»

---

[16] Տե՛ս **Бодрияр Ж.**, Симулякр и симуляции, М□, 2015, էջ 20:

բնույթ[17]: Այս անցումը բարդանում է այն բանով, որ «Իրական Հայաստանի» առաջարկած նոր կողմնորոշիչները (քաղաքացիություն, սահմանների անձեռնմխելիություն, իրավական պարտք) կրում են առավելապես ռացիոնալ-գործիքային բնույթ և դեռևս զուրկ են այն էկզիստենցիալ խորությունից ու սիմվոլիկ հագեցվածությունից, որոնք անհրաժեշտ են հին «մետապատումներին» փոխարինելու համար: Սա իր հերթին խարխլում է ինստիտուցիոնալ վստահության հիմքերը, քանի որ մարդիկ, իրենց ոտքերի տակ չունենալով ամուր հող, բնազդաբար դադարում են վստահել անդեմ կառույցներին և սկսում են փնտրել կա՛մ հերթական «փրկչին», կա՛մ ավելի ամուր կառչել անցյալի կերպարներից: Քանի դեռ «Պատմական Հայաստանը» մնում է միակ հուզական ապաստարանը, իսկ իրական պետականությունը չի ընկալվում որպես անհատի ինքնաիրացման սեփական միջավայր, պլանավորման հորիզոնը շարունակելու է մնալ կարճաժամկետ, իսկ վստահությունը՝ անձնավորված: Այս երկփեղկվածությունը, ի վերջո, թույլ չի տալիս ձևավորել այնպիսի ռացիոնալ սոցիալական պայմանագիր, որտեղ պետությունը կընկալվի որպես կանխատեսելի, սուբյեկտային և էկզիստենցիալ առումով հուսալի իրականություն:

### *Սպառողականությունը որպես «կեցության փոշիացում»*

Պրագմատիկ հողակցումը, որն անհրաժեշտ է «անվակոսից» դուրս գալու համար, ունի իր «ստվերային» կողմը: Պետականության հիմքում բարեկեցության առաջնահերթության սահմանումը կարող է հանգեցնել քաղաքացիական սուբյեկտայնության վերաիմաստավորման՝ ստեղծելով նախադրյալներ սպառողական վարքագծային մոդելների գերակայության համար: Սոցիոլոգիական տեսանկյունից սա դիտարկվում է որպես հնարավոր տեղաշարժ «արժեքային-կողմնորոշված» քաղաքացիությունից դեպի գործիքային ռացիոնալության վրա հիմնված մոդել, որտեղ անհատի կապը պետության հետ միջնորդավորվում է նյութական ակնկալիքներով: Եթե հարկերը վճարելն ու «լավ ապրելը» հանգեցնում են այնպիսի կենցաղավարության, որտեղ պետությունն ընկալվում է զուտ որպես սպառման օբյեկտ, ապա վերանում է մարդու էկզիստենցիալ կապն իր երկրի հետ:

Սա այն վտանգավոր եզրագիծն է, որից հետո կեցության մեջ մշակութամարդաբանական իմաստով «արմատավորված չլինելու հանգամանքը ծնում է անհետացող իրականության սոցիալ-հոգեբանական պարադոքսալ զգացողություն»[18]: Այլ կերպ ասած՝ առանց արժեքային նոր վերաիմաստավորման

---

[17] **Бауман З.**, Текучая современность, Питер, 2008:

[18] **Սողոմոնյան Գ.**, Սպառողական հոգեկերտվածք. էկզիստենցիալ նկատառումներ // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2025, № 3, էջ 24:
https://doi.org/10.46991/BYSU□E/2025□16□3□018

«Իրական Հայաստանը» կարող է վերածվել սոցիալական նոր կեղծանմանակի, որտեղ պետականության գաղափարը լիովին կլանվում է սպառողականության կողմից։

Հետևաբար, անցումը դեպի «Իրական Հայաստան» պետք է լինի ոչ թե պարզունակ սպառողականության հաստատում, այլ մշակութամարդաբանական նոր արմատավորվածության փնտրտուք, որտեղ բարեկեցությունը ոչ թե վերջնանպատակ է, այլ միջոց՝ մարդուն իր էկզիստենցիալ ամբողջականությանը վերադարձնելու։ Այսպիսով, «անվակոսից» դուրս գալու ճանապարհին հայ հասարակությունը բախվում է մի նոր մարտահրավերի. ինչպե՞ս կառուցել ռացիոնալ պետություն՝ առանց կորցնելու այն հոգևոր-մշակութային առանցքը, որը պետությունը «գործիքից» վերածում է «արժեքի»։

***Սուբյեկտայնության պարտադրում. պետության կողմից նախաձեռնված ինքնության փոխակերպման պարադոքսները***

«Իրական Հայաստանի» հայեցակարգի առանցքային հակասությունը թաքնված է դրա իրացման մեթոդաբանության և հասարակության արժեքային իրականության բախման մեջ։ Ռ. Ինգլհարթի արժեքային սանդղակով[19] Հայաստանը շարունակում է մնալ «գոյապահպանման արժեքների» տիրույթում, որտեղ անվտանգության և նյութական կայունության պահանջն անհամեմատ ավելի բարձր է, քան քաղաքացիական մասնակցության կամ ինքնաարտահայտման ձգտումը։ Նման միջավայրում ցանկացած ժողովրդավարական սուբյեկտայնություն ընկալվում է որպես «էլիտար շռայլություն», որը հասանելի չէ էկզիստենցիալ վախի և անորոշության մեջ գտնվող մարդուն։

Այստեղ ի հայտ է գալիս «պարտադրված սուբյեկտայնության պարադոքսը». պետությունը փորձում է ձևավորել պատասխանատու սոցիալական գործորդ, սակայն այդ գործընթացը նախաձեռնում և իրականացնում է «վերևից»՝ հիերարխիկ և հրահանգային մեթոդներով։ Ստացվում է մի իրավիճակ, երբ քաղաքացուն, ըստ էության, կարգադրվում է լինել ազատ և սուբյեկտային։ Սակայն, երբ ազատությունը տրվում է որպես հրաման, այն հասարակության կողմից ընկալվում է որպես **պատասխանատվության գերբեռնում**։ Էկզիստենցիալ տագնապի և ձեռքբերովի անօգնականության մեջ գտնվող անհատի համար սեփական ճակատագրի և պետության ապագայի ամբողջական պատասխանատվությունը ստանձնելու պահանջը ոչ թե հզորացնող գործոն է, այլ հոգեբանական ծանր բեռ։

Քանի դեռ քաղաքացին գտնվում է գոյապահպանման արժեքների տիրույթում, նա բնազդաբար փնտրում է պատերնալիստական պաշտպանություն։ Երբ իշխանությունը նրանից պահանջում է սուբյեկտայնություն («ապագան

[19] Տե՛ս **Inglehart R., & Welzel C.**, Modernization, Cultural Change, and Democracy: The Human Development Sequence. Cambridge University Press, 2005, https://doi.org/10.1017/CBO9780511790881

կախված է քեզնից»), դա հասարակության կողմից կարող է ընկալվել ոչ թե որպես ազատագրում, այլ որպես պետության կողմից հոգածության մերժում կամ պատասխանատվության բեռի անարդարացի տեղափոխում անհատի վրա։

Արդյունքում՝ «վերևից» պարտադրված սուբյեկտայնությունը ոչ թե քանդում է պատերնալիզմի ինստիտուցիոնալ «անվակոսը», այլ վերարտադրում է այն. քաղաքացին սկսում է խաղալ «սուբյեկտի» դերը պարզապես այն պատճառով, որ դա վերնախավի նոր պահանջն է՝ դրանով իսկ մնալով նույն պասիվ օբյեկտի կարգավիճակում։ Սա ստեղծում է սուբյեկտայնության կեղծանմանակ, որտեղ ֆորմալ վարքագիծը փոխվում է, բայց ներքին արժեքային կոդը (վստահություն միայն «ուժեղ ձեռքին») մնում է անփոփոխ։

Այսպիսով, «անվակոսից» դուրս գալու հայաստանյան փորձը կրկին բախվում է դասական մի մարտահրավերի. ինստիտուցիոնալ փոփոխությունները չեն կարող լինել լոկ վերնախավային կամ զուտ տեխնիկական։ «Իրական Հայաստանի» հաջողությունը կախված է այն բանից, թե որքանով կհաջողվի կրթության և բարեկեցության միջոցով ձևավորել ինստիտուտների նկատմամբ մշակութային պահանջարկ՝ դրանով իսկ հաղթահարելով տասնամյակներով արմատավորված ձեռքբերովի անօգնականությունը։ Հակառակ պարագայում, եթե «Իրական Հայաստանի» գաղափարները հանրության կողմից չանհատականացվեն որպես քաղաքացու պատասխանատվության և ինքնաիրացման տարածք, ապա նույնիսկ ամենառացիոնալ նախագիծը կկլանվի մշակութային իներցիայի կողմից՝ վերածվելով հերթական ինստիտուցիոնալ կեղծանմանակի։

Ի վերջո, «անվակոսի էֆեկտը» հասարակության համար ոչ թե պատմական դատավճիռ է, այլ սոցիալ-ինստիտուցիոնալ ախտորոշում[20]։ Այն մատնանշում է այն առանցքային կետերը, որտեղ անցյալի իներցիան խոչընդոտում է ապագայի զարգացումը։ Դուրս գալ «ակոսից» չի նշանակում ջնջել անցյալը, այլ նշանակում է գիտակցել դրա սահմանափակումները և պատմական տրավմաները վերածել պետականակերտման ռեսուրսի։

Հետևաբար, ելքը ոչ թե պատմությունից հրաժարվելն է, այլ պատմական տրավմաները մարդկային կապիտալի վերածելն ու սոցիալական նոր պայմանագրի կնքումը, որտեղ անհատի սուբյեկտիվ բարեկեցությունն ու ինքնաիրացումը պետության լեգիտիմության առանցքային չափանիշներն են։ Այս ճանապարհին հիմնական մարտահրավերը մնում է նույնը. արդյո՞ք մեզ կհաջողվի ձևավորել այնպիսի քաղաքացիական սուբյեկտայնություն, որտեղ պետությունը կընկալվի ոչ թե որպես արտաքին բեռ կամ սպառման օբյեկտ, այլ որպես անհատի ինքնաիրացման և անվտանգության միակ իրական երաշխավոր։

---

[20] Տե՛ս **Аузан А.А.**, Культурные коды экономики, М.:АСТ, 2025, էջ 7։

Միայն այն դեպքում, երբ քաղաքացին իր բարեկեցությունն ու անվտանգությունը սկսի պայմանավորել ոչ թե պատմական իներցիայով պայմանավորված սկզբունքներով (խնամառություն, պանդխտություն, ոչ ֆորմալ կապեր), այլ պետական ֆորմալ ինստիտուտներով, «ակոսը» կդադարի գործել որպես արգելակ և կվերածվի զարգացման հենարանի:

**АРМАН КАРАГУЛЯН** – ***«Эффект колеи» в социокультурном контексте институционального развития Армении.*** – Распад Советского Союза привел к беспрецедентной волне институциональных преобразований на постсоветском пространстве, основанных на презумпции того, что либерально-демократические механизмы автоматически будут способствовать социокультурной модернизации. Однако растянувшийся на десятилетия «переход» выявил глубокую структурную асимметрию: параллельно с внедрением формальных институтов «культурные коды» и социальная память, лежащие в основе общественной жизни, остались неразрывно связанными с патерналистским прошлым. Армения является ярким примером этого явления, где устойчивый **«эффект колеи» (path dependence)** создал состояние институциональной «блокировки», зачастую превращая демократические реформы в декоративные.

В статье обосновывается, что преодоление инерции развития требует радикальной формы **институциональной инженерии**, направленной на экзистенциальные основы общества. В этом контексте анализируется концепция «Реальной Армении» как попытка деконструкции травматической памяти и прагматической перестройки идентичности. Одновременно выявляются проблемы, которые делают данную концепцию уязвимой в экзистенциальном плане. Автор утверждает, что крах старых опор **онтологической безопасности** и **перегрузка ответственностью** могут вызвать общественное сопротивление и откат к пассивному патернализму. В заключении подчеркивается, что преодоление «колеи» становится наиболее реалистичным через превращение исторических травм в ресурс государственного строительства и формирование такой гражданской субъектности, при которой государство действительно воспринимается как единственная реальная среда безопасности и самореализации личности.

**Ключевые слова:** *эффект колеи, постсоветская трансформация, культурный код, Реальная Армения, выученная беспомощность, институциональная инженерия*

**ARMAN GHARAGULYAN** – ***"Path Dependence" in the Socio-Cultural Context of Armenian Institutional Development.*** – The collapse of the Soviet Union triggered an unprecedented wave of institutional transformations across the post-Soviet space, predicated on the assumption that liberal-democratic frameworks would automatically catalyze socio-cultural modernization. However, the decades-long "transition" has revealed a profound structural asymmetry: while formal institutions were successfully adopted, the "cultural codes" and social memory underlying public life remained tethered to a paternalistic past. Armenia provides a stark illustration of this phenomenon, where persistent **path dependence** has induced a state of institutional "lock-in," often rendering democratic reforms merely decorative.

The article argues that transcending this developmental inertia necessitates a radical form of **institutional engineering** targeting the society's existential foundations. In this framework, the "Real Armenia" concept is analyzed as an attempt to deconstruct traumatic memory and pragmatically reconfigure national identity. Concurrently, the study identifies the challenges that leave this concept existentially vulnerable. The author posits that the erosion of traditional pillars of **ontological security** and the resulting **responsibility overload** can provoke public resistance and a retreat into passive paternalism. The conclusion suggests that overcoming "path dependence" is

most viable by converting historical traumas into state-building resources and fostering a civic agency where the state is perceived as the definitive environment for individual security and self-actualization.

**Key words:** *path dependence, post-Soviet transformation, cultural code, Real Armenia, learned helplessness, institutional engineering*

**Գրականության ցանկ / References**

Հարությունյան Է., Ընկալման էկզիստենցիալ համատեքստի ապականումը. մարդը «վիրտուալ տափաստաններում» // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2025, № 3 [Harutʻyunyan Ē., Ěnkalman ekzistencial hamateksti apakanumə. mardə «virtual tapastannerum» // Banber Ērevani hamalsarani. Pʻilisopʻayutʻyun, Hogebanutʻyun, 2025, № 3]:

Հարությունյան Է., Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., 2004, էջ 54 [Harutʻyunyan Ē., Azgayin inkʻnutʻyun yev kyankʻi mšakuytʻ, Er., 2004, ēj 54]:

Ղարագուլյան Ա., Ձեռքբերովի անօգնականությունը որպես հետխորհրդային իրականության սոցիոմշակութային ախտանիշ // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2016, № 1, էջ 51 [Ġaragulyan A., Dzeřkʻberovi anōgnakannutʻyunə orpes hetxorhrdayin irakanutʻyan sociomšakutʻayin axtaniš // Banber Ērevani hamalsarani. Pʻilisopʻayutʻyun, Hogebanutʻyun, 2016, № 1, ēj 51]:

Սողոմոնյան Գ., Սպառողական հոգեկերտվածք. էկզիստենցիալ նկատառումներ // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2025, № 3, էջ 24 [Soġomonyan G., Spaṙoġakan hogekertvacʻkʻ. ekzistencial nkataṙumner // Banber Ērevani hamalsarani. Pʻilisopʻayutʻyun, Hogebanutʻyun, 2025, № 3, ēj 24]:

Бодрияр Ж., Симулякр и симуляции, М., 2015, с. 20 [Bodriyar ZH., Simulyakr i simulyatsii, M., 2015, ēj 20].

Бауман З., Текучая современность. Питер, 2008 [Bauman Z., Tekuchaya sovremennost', Piter, 2008].

Аузан А.А., Культурные коды экономики. М.:АСТ, 2025, էջ 7 [Auzan A.A., Kul'turnyye kody ekonomiki, M.:AST, 2025, ēj 7].

Schein E., Organizational Culture and Leadership, 4th ed., San Francisco, Jossey-Bass, 2010, p. 69.

Mahoney J., Path Dependence in Historical Sociology, 2000.

David P., Clio and the Economics of QWERTY, 1985.

North D., Institutions, institutional change and economic performance. Cambridge University Press, 1990, pp. 3-4.

Hofstede G., Culture's Consequences: Comparing Values, Behaviors, Institutions and Organizations Across Nations, 2nd ed., Thousand Oaks, 2001, pp. 79, 145.

Atanesyan A., Traumatic past and the politics of memory: what should be and should not be the Armenian approach? // Journal of Sociology: Bulletin of Yerevan University, 2024, № 2, p. 15.

Seligman M., Helplessness: On Depression, Development, and Death, W.H. Freeman, 1975.

Langer E., The Psychology of Control, 1983.

Giddens A., Modernity and Self-Identity: Self and Society in the Late Modern Age. Stanford University Press. 1991.

Inglehart R., & Welzel C., Modernization, Cultural Change, and Democracy: The Human Development Sequence. Cambridge University Press, 2005.

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 34-46
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.034

# ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԼԱԼԱ ՍԻՄՈՆՅԱՆ*

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան*

Գեղագիտական զգացմունքների ձևավորման խնդիրը ժամանակակից մանկավարժության և արվեստի հոգեբանության կարևոր ուղղություններից է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի արժեքային համակարգի, հուզական մշակույթի և աշխարհընկալման զարգացման հետ: Հատկապես դեռահասության շրջանում, երբ ակտիվորեն ձևավորվում են ինքնագիտակցությունը, հուզական փորձը և գեղագիտական վերաբերմունքը իրականության նկատմամբ, գեղագիտական զգացմունքների կառուցվածքի և ձևավորման մեխանիզմների տեսական հիմնավորումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն:

Հոդվածում ներկայացվում է գեղագիտական զգացմունքների ձևավորման տեսական մոդելը, որը բացահայտում է դրանց հիմնական բաղադրիչները, կառուցվածքային ամբողջականությունը, միմյանց հետ փոխհարաբերությունները և զարգացման տրամաբանությունը դեռահասության շրջանում: Առաջարկվող մոդելը հնարավորություն է տալիս համակարգված մեկնաբանելու գեղագիտական փորձի առաջացման և գիտակցման գործընթացը՝ ընդգծելով ընկալման, հուզական արձագանքի, գեղագիտական գնահատման և գեղագիտական պահանջմունքի ձևավորման հաջորդականությունը: Այս գործընթացում առանցքային դեր է խաղում երաժշտական ռիթմի և հնչյունային կառուցվածքի ազդեցությունը մարդու ֆիզիոլոգիական և հոգեկան համակարգերի սինխրոնիզացիայի վրա: Մոդելը հաշվի է առնում ինչպես բազային հույզերի արթնացումը, այնպես էլ բարդ, «զտված» գեղագիտական ապրումների ձևավորումը, ինչը հիմնարար նշանակություն ունի դեռահասի ներաշխարհի հարստացման և նրա գեղագիտական ճաշակի ինքնատիպության դրսևորման համար:

---

* **Լալա Սիմոնյան** – Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի ասպիրանտ
**Лала Симонян** – аспирант кафедры педагогики Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна
**Lala Simonyan** – PhD Student at the Chair of Pedagogy of Khachatur Abovyan Armenian State Pedagogical University
Էլ. փոստ՝ simonyanlala-phd24@aspu.am ORCID ID:https://orcid.org/0009-0007-2742-1648

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 17.02.2026
Գրախոսվել է՝ 02.03.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

**Բանալի բառեր** – *գեղագիտական զգացմունք, հույզեր, դեռահաս, մոդել, արվեստ, ընկալում, գիտակցված գնահատում, պահանջմունք*

Այսօր մեր հասարակության մեջ և ամբողջ աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների, ԶԼՄ-ների և մի շարք այլ աղբյուրների արտադրանք հանդիսացող գեղագիտական կամ հակագեղագիտական երևույթները միանշանակ կարիք ունեն անձի, հատկապես դեռահասության տարիքում գտնվող անհատի կողմից խորը վերլուծության, արժեքային համակարգի միջով անցկացնելու և դրանց համապատասխան գնահատական տալու: Տարբեր ազգերի մշակութային բազմազանության տեղայնացումը մեր հասարակության մեջ խեղաթյուրել է մեր պատմական, մշակութային, արժեքային համակարգը, որն էլ իր հերթին մեծ վնաս է հասցնում մեր ազգային ինքնությանը, դրա պահպանման գործին: Այս առումով, կարծում ենք, ճիշտ չէ գեղագիտական զգացմունքները համարել անշահախնդիր հաճույք կամ առաջնային զգացողություն և սահմանափակվել դրանով: Յուրաքանչյուր գեղագիտական և հակագեղագիտական երևույթի խորքային ընկալումն ու վերլուծությունը նպաստում են դրանցից առաջացած գեղագիտական զգացմունքի իմաստավորմանը:

Դեռահասության տարիքային շրջանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս տարիքում նրանց մեջ զգայական ոլորտը ավելի գերիշխող է, քան մյուս հոգեկան գործընթացները, ինչը նշանակում է, որ նրանց հետ տարվող ցանկացած աշխատանք, հատկապես ուսումնական գործընթացը, հարկավոր է կազմակերպել՝ կարևորելով նրանց զգացմունքները, ապրումները և հաշվի նստելով նրանց հետ[1]:

Գեղագիտական զգացմունքը բարդ համալիր գործընթաց է, որը ձևավորվում է որոշակի փուլերի հաջորդական զարգացումից[2]: Որպես մոդելի ստեղծման հիմք ենք ընդունել այն տեսաբանների հետազոտությունները (Լ. Ս. Վիգոտսկի, Ս. Լ. Ռուբինշտեյն, Ա. Ն. Լեոնտև, Բ. Տ. Լիխաչով, Յու. Բորև և այլք), որոնք գեղագիտական զգացմունքների ձևավորման գործում կարևորում են անձի կոգնիտիվ, հուզական, գնահատողական հոգեկան բաղադրիչների միասնությունը: Մոդելի նպատակը գեղագիտական զգացմունքների ձևավորման գործընթացի առավել կարգավորված կազմակերպումն է, որը կհանգեցնի համապատասխան վերջնարդյունքի ապահովմանը:

Գեղագիտական զգացմունքների ձևավորման տեսական մոդելը բաղկացած է չորս գլխավոր բաժիններից, որոնց միասնականության գործոնից է կախված դրանց համալիր զարգացումը.

Ճանաչողական → հուզա-հաղորդակցական → գնահատողական → պահանջմունքային-կիրառական:

---

[1] Տե՛ս В мире подростка / под ред. А.А.Бодалева. – М.: Просвещение? 1980, էջ 16-28:

[2] Տե՛ս **Юлдашев, Л. Г.** Эстетическое чувство и произведение искусства / Л. Г. Юлдашев. М.: Мысль, 1969, էջ 152:

**Ճանաչողական** բաժինը վերաբերում է անձի՝ իր առջև հայտնված գեղագիտական և հակագեղագիտական երևույթների գիտակցական վերաբերմունքին կամ ճանաչմանը: Շատ կարևոր է, որ ցանկացած գեղագիտական երևույթի վերաբերյալ դեռահասն ունենա իր գիտակցված կարծիքը, թե ինչու է այս կամ այն օբյեկտը գեղեցիկ կամ տգեղ: Կարևոր է, որ նա կարողանա առողջ դատողություններ անել և հասկանալ տվյալ երևույթի դրական կամ բացասական կողմերը, հետևանքները, արժեքային առանձնահատկությունները և այլն:

Հաջորդ բաժինը **հուզա-հաղորդակցականն** է: Անհատի հոգեկան համակարգում հուզական դաշտը մեծ տեղ է զբաղեցնում և թողնում է հսկայական ազդեցություն մնացած բոլոր գործընթացների կազմակերպման գործում: Հատկապես պատանեկության շրջանում անհատի հոգեկանում առաջնային տեղ են զբաղեցնում զգայական աշխարհը, բուռն և փոփոխվող հույզերն ու զգացմունքները: Սա մեզ պարտավորեցնում է հատուկ ուշադրությամբ և զգուշությամբ մոտենալ նրանց հուզական ոլորտին, քանի որ զգացմունքների փոփոխականությունը, երբեմն պոռթկուն և հուզառատ իրավիճակները կարող են խաթարել նրանց հանգիստ մթնոլորտը, բերել անսպասելի վարքային դրսևորումների և խանգարել նրանց՝ սեփական զգացմունքներն արտահայտելիս: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որ այս գործընթացում դեռահասի մեջ ստեղծվի վստահություն, և նա կարողանա ճիշտ բառերով և գիտակցորեն արտահայտել իր հույզերն ու զգացմունքները:

Մյուսը **գնահատողական** բաժինն է, որը ենթադրում է գեղագիտական երևույթների վերաբերյալ դեռահասի կողմից առողջ գնահատական տալու ունակությունը: Ցանկացած գեղագիտական երևույթ անձի կողմից պետք է որոշակի չափով գնահատվի, որպեսզի պարզ դառնա տվյալ առարկայի որակը անհատի համար, ինչպես նաև գեղագիտական դատողություններ կատարելու մակարդակը:

Եվ վերջին բաժինը գեղագիտական գործունեությունն է, **պահանջմունքային-կիրառական** փուլը, որը ենթադրում է ստեղծված գեղագիտական պատկերացումների հիման վրա մոտիվացիայի առաջացման, գեղագիտական փորձի ամրապնդման և ստեղծագործելու պահանջմունք:

Յուրաքանչյուր բաժին իր հերթին բաղկացած է որոշակի հաջորդական փուլերից, որոնք ապահովում են տվյալ բաժնի կանոնակարգված զարգացումը: Ճանաչողական բաժնում տեղ են գտել հետևյալ կարևոր գործընթացները՝ *գեղագիտական հարաբերություն, գեղագիտական ընկալում և գեղագիտական դատողություն:*

Գեղագիտական հարաբերությունը դրսևորվում է անձի գեղագիտական գիտակցության և գեղագիտական գործունեության միջոցով: Գեղագիտական գիտակցությունը բացատրվում է որպես որոշակի գեղագիտական արժեքների կրում, որը ներառում է գեղագիտական ընկալումը, գեղագիտական զգացմուն-

քը, գեղագիտական ճաշակը, գեղագիտական փորձը, գեղագիտական դատողությունը և գեղագիտական իդեալը: Իսկ գեղագիտական գործունեությունն այն գործընթացն է, երբ անձի գեղագիտական պատկերացումները կիրառվում են կյանքում, այսինքն՝ գործնական բնույթ են կրում:

Հետաքրքիր հարց է, թե կյանքում որոնք են գեղագիտական օբյեկտները: Ի՞նչ հատկանիշներ պետք է ունենա առարկան, որպեսզի մեր կողմից ընկալվի որպես գեղագիտական արժեք կամ համարվի գեղարվեստական ստեղծագործություն: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գեղագիտական վերաբերմունքը և դրա հետևանքով առաջացած գեղագիտական զգացմունքները սուբյեկտիվ գործընթացներ են: Այն ամենը, ինչ մեզ համար բարձր գեղագիտական արժեքների կրող է, մյուսների համար կարող է արժեք չունենալ: Այս գործընթացի պարզաբանման համար կա տեսակետ, որ եթե անձի մեջ տվյալ երևույթն առաջ է բերում բարձր գեղագիտական արժեքի զգացողություն, հոգևոր հանգստություն, հոգեկան լիության զգացում, ապա այն տվյալ մարդու համար գեղագիտական օբյեկտ է, լինի գեղեցիկ թե տգեղ[3]:

Իրականում, որպեսզի անհատի և գեղագիտական օբյեկտի միջև տեղի ունենա գեղագիտական հարաբերություն, անհրաժեշտ են որոշակի պայմաններ. նախ՝ տվյալ օբյեկտը պետք է օժտված լինի համապատասխան գեղագիտական որակներով, ունենա այնպիսի հատկանիշներ, որոնք տարբեր ժամանակաշրջաններում գեղագիտական բարձր ճաշակ ունեցող մարդկանց ստիպել են զգալ և կարևորել այն: Մյուս կարևոր գործոնը, իհարկե, կախված է արդեն տվյալ օբյեկտն ընկալող անձից, նրա ունեցած բարձր արժեքներից, գեղագիտական գնահատական տալու կարողությունից: Հաջորդ պայմանը կախված է գեղագիտական օբյեկտի նկատմամբ գեղագիտական սույեկտի վերաբերմունքից և մոտեցումից: Եթե անձը տրամադրված չէ խորապես ընկալելու դիտվող երևույթի գեղագիտական կողմերը, նրան կարող են շեղել մի շարք հանգամանքներ: Այս ամենի հետ մեկտեղ՝ կա մեկ այլ կարևոր պայման, որը առնչվում է գեղագիտական օբյեկտի և այն ընկալող սուբյեկտի համապատասխանությանը: Ինչպես արդեն նշվեց, յուրաքանչյուրս մեր հոգեկան աշխարհում ունի մեզ շրջապատող իրերի ընկալման որոշակի մակարդակ, հայեցողություն: Եթե գեղագիտական որևէ առարկա ուրիշների համար բարձր գեղագիտական արժեք ունի, կարող է մեր կողմից նույն կերպ չընկալվել: Գեղագիտական օբյեկտը պետք է հոգեհարազատ լինի այն ընկալող սուբյեկտին, այսինքն՝ լինի իր՝ սուբյեկտի գեղագիտական առարկան[4]:

Այժմ դիտարկենք գեղագիտական ընկալման գործընթացը, որը պետք է ըմբռնվի ոչ թե գեղագիտական առարկայի շահի տեսանկյունից, այլ տեղ տա այն զգացմունքային աշխարհին, որը ներդրված է տվյալ առարկայի մեջ: Կարելի է ասել, որ գեղագիտական ընկալումը գեղագիտական հարաբերության

[3] Տե՛ս **Бычков В. В.** Эстетика: учебник. М.: КНОРУС, 2012, էջ 92:

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 114-119:

առաջնային պայմանն է, նախնական փուլը, որից կախված են մյուս բոլոր գեղագիտական բաղադրիչները: Սա մի գործընթաց է, որի միջոցով անհատը զգում և ապրում է գեղագիտական օբյեկտները իր ներքին հայեցողության, ինտուիցիայի և գեղագիտական փորձի հիման վրա: Այս առումով կարող ենք ասել, որ գեղագիտական ցանկացած օբյեկտի գեղագիտական որակները տարբեր և բազմազան են, քանի որ դրանց ընկալման և ապրման գործընթացը կախված է գեղագիտական սուբյեկտի՝ այդ որակները զգալու մակարդակից: Տարբերվում են գեղագիտական ընկալման չորս բաժիններ կամ փուլեր:

1. Սկզբնական փուլը սուբյեկտի նախնական գիտակցական վերաբերմունքն է այն օբյեկտի նկատմամբ, որի որակները նա պատրաստվում է ընկալել:

2. Հաջորդ աստիճանի ժամանակ գեղագիտական առարկային հանդիպելիս անհատի հոգեկանում առաջանում է առաջնային հաճույք կամ հուզական վիճակ, որի հանդեպ նա սկսում է ուշադրություն ցուցաբերել:

3. Երրորդ բաժնում տեղի է ունենում այն գլխավոր զգացումը, երբ անձը կտրվում է իր հոգսերից, խնդիրներից՝ փորձելով եռանդուն կերպով խորասուզվել գեղագիտական օբյեկտի թաքնված արժեքների մեջ:

4. Վերջին փուլն ամենազարգացածն ու ամենաբարդն է այն զգալու առումով: Այս փուլը հենց կատարսիսի գործընթացն է, երբ անհատը մի պահ կորցնում է իրեն իրական աշխարհում՝ գտնելով տիեզերքի հետ իր կապը և ամբողջանալով նրա հետ:

Այս չորս աստիճանների զգացումը չունի կոնկրետ ժամանակային չափման սանդղակ, յուրաքանչյուրը դրանք զգում է յուրովի՝ որպես ամբողջական գեղագիտական զգացմունք: Վերջին մակարդակին հասնելու համար անհրաժեշտ է անհատի հետ տանել գեղագիտական օբյեկտը զգալու ինտենսիվ աշխատանք: Ոմանք կարող են բավարարվել՝ հասնելով երկրորդ կամ երրորդ մակարդակներին, այդպես էլ չզգալով այն հոգևոր վերելքը, որը թաքնված է գեղագիտական օբյեկտի ներսում:

Դեռահասի գեղագիտական զգացմունքների ձևավորման գործընթացի ճանաչողական բաժնում կարևոր է նաև գեղագիտական դատողություններ կատարելու ունակությունը: Ինչպես արդեն նշեցինք, դեռահասի կողմից որևէ երևույթի վերաբերյալ դատողություն անելու գործընթացը պետք է լինի որոշակի հիմքերի վրա կառուցված, այսինքն՝ գիտակցված: Չի կարելի ուղղակի ասել՝ այս առարկան լավն է կամ գեղեցիկ է՝ առանց համապատասխան հիմքերի: Հարկավոր է դեռահասի մեջ գեղագիտական հարաբերությունների և գեղագիտական ընկալման գործընթացների կարգավորումից հետո զարգացնել նաև գեղագիտական առողջ դատողություններ: Եթե ցանկանում ենք, որ նա ըմբռնի և հասկանա գեղագիտական օբյեկտի կարևոր հատկությունը կամ արժեքը, մենք պետք է նրա մեջ սերմանենք դրանք գտնելու ուղիներ:

Այսպիսով, մոդելի հուզա-հաղորդակցական բաժինը չափազանց պատասխանատու և կարևոր գործընթաց է դեռահասի համար: Այն ներառում է հետևյալ կարևոր փուլերը՝ հուզական արձագանք, հուզական ապրումակցում և զգացմունքների կամ հույզերի իմաստավորում:

Առաջինը՝ հուզական ռեակցիան, երևույթի անմիջական կամ նախնական ընկալման գործընթացն է, երբ անհատը սկսում է ակտիվություն ցուցաբերել իր առջև գտնվող օբյեկտի նկատմամբ: Ի՞նչ ձևով ենք հասկանում, որ այս գործընթացը տեղի է ունեցել: Նախ, անձը հետաքրքրվում է երևույթով, որը նրա վրա թողնում է որոշակի տպավորություն: Եթե օբյեկտը հուզում է անհատին, և նրա մեջ առաջանում են որոշակի զգացմունքներ, օրգանիզմում տեղի են ունենում որոշակի ֆիզիոլոգիական փոփոխություններ, որոնք դրսևորվում են նաև անհատի վարքի մեջ: Այս գործընթացները կախված են հուզական արձագանքի ուժգնությունից. որքան ինտենսիվ են, այնքան ավելի վառ են արտահայտվում:

Դեռահասության տարիքն այն փուլն է, երբ անձի մեջ սկսվում են սեփական ես-ի ակտիվ ձևավորումը, ինքնագիտակցության զարգացումը և սեփական առանձնահատկությունների ընկալումը: Այս ամենը կապված է նաև դեռահասի հուզական դաշտի ակտիվ ձևավորման և դրսևորման հետ: Ցանկացած երևույթ, ազդելով անհատի վրա, որոշակիորեն ընկալվում է իր ես-ի հետ համեմատության, նրա նախասիրությունների և հետաքրքրությունների տեսանկյունից: Եթե երևույթը հակասում է անձի ես-ի սկզբունքներին, ապա առաջանում են հակառակ գործընթացներ՝ վանում, զզվանք և այլն[5]: Այս գործընթացը մշակվել է հոգեբան Լ. Ֆեստինգերի կողմից. այն ստացել է հույզերի «կոգնիտիվ դիսոնանսի» տեսություն անվանումը: Ըստ տեսության՝ եթե անհատի կարիքները բավարարվում են, և մտադրությունները համապատասխանում են իրականությանը, ըստ վերջնական ցուցանիշների՝ անձի ներսում ստեղծվում է ներդաշնակ վիճակ, իսկ եթե սպասելիքները չեն արդարանում, առաջ է գալիս դիսոնանս վիճակ[6]:

Հաջորդ կարևոր փուլը հուզական ապրումակցումն է: Այս գործընթացը ներառում է ինչպես սեփական զգացմունքների գիտակցումը, այնպես էլ այլ անձանց զգացմունքների ճանաչումն ու ապրումը: Գոյություն ունեն հուզական ապրումակցման զարգացման երեք մակարդակներ՝ ցածր, միջին և բարձր[7]: Ինչպես նշում է հոգեբան Վ. Գոուլմանը, հուզական բարձր ինտելեկտով օժտված անձինք ունենում են ավելի կայուն հարաբերություններ շրջապատում,

---

[5] Տե՛ս **Изард К.Э.** Психология эмоций Пер. с англ. СПб., 1999, էջ 31:

[6] Տե՛ս **Цыбулевская А В** Эмотивный арготический лексикон. Диссертация на соискание учёной степени кандидата филологических наук, Ставрополь, 2005:

[7] Տե՛ս Опросник методики «Шкала эмоционального отклика» А. Меграбяна и Н. Эпштейна, 2000, https://psychologos.ru/articles/view/oprosnik-metodiki-shkala-emocionalnogo-otklika-a.-megrabyana-i-n.-epshteyna

ինքնավստահ են և սոցիումում հեշտությամբ գտնում են իրենց տեղը: Իսկ այն մարդիկ, որոնք ունեն հուզական էմպատիայի ցածր մակարդակ, հաճախակի տրվելով անկառավարելի զգացմունքային ապրումներին, դառնում են ավելի փոփոխական, բռնկվող և նյարդային, ինչպես նաև դժվարանում են շրջապատի հետ հարաբերություններ հաստատել[8]:

Հուզական արձագանքման գործընթացի վերջին կարևոր արարը զգացմունքների իմաստավորման փուլն է, երբ անհատը կարողանում է գիտակցել և վերլուծել, թե ինչու է տվյալ պահին ապրում այդ զգացմունքը[9]: Եթե որևէ երևույթ մարդու մեջ առաջացրել է որոշակի կենսաբանական վիճակ՝ արագ սրտխփոց կամ դեմքի կարմրություն, մենք երբեք չենք իմանա նրա հուզական վիճակը, մինչև չստանանք անձի կողմից իր վիճակի ճիշտ գնահատումը[10]: Լ. Վիգոտսկին նշում է. «Ինչպես հայտնի է, մեր գիտակցության ինտելեկտուալ կողմի անջատումը դրա աֆեկտիվ, կամային կողմից ողջ ավանդական հոգեբանության հիմնական և արմատական արատներից մեկն է: Մտածողությունն այդ դեպքում անխուսափելիորեն վերածվում է ինքն իրեն մտածող մտքերի ինքնավար հոսքի, այն կտրվում է կենդանի կյանքի ողջ լիարժեքությունից...»[11]: Այսպիսով, եթե մեր գիտակցությունը սերտ փոխազդեցության մեջ չլինի մեր հուզական դաշտի հետ, այն կլինի չափազանց դատարկ, և հակառակը: Ըստ Դ. Գոուլմանի՝ եթե մենք չենք գիտակցում սեփական զգացմունքները, դրանց առաջացման պատճառը, մենք չենք կարող վերահսկել և կառավարել դրանց ազդեցությունը մեզ վրա[12]: Եթե դեռահասը չի կարողանում բացատրել իր ներքին հուզական վիճակը, այն կարող է հանգեցնել մի շարք հոգեբանական խնդիրների, բացասական վարքային դրսևորումների, սխալ և իր իրական կարիքներին անհամապատասխան որոշումների կայացման, ինքն իրեն և ուրիշներին չհասկանալու խնդիրների, ինքնամեկուսացման և այլն: Այս ամենը հատկապես կարևոր է հենց այս շրջանում, երբ զգացմունքների տեղատարափը, դրանց բարձր ինտենսիվությունը կարող են թույլ չտալ պատանուն ճանաչել իրական զգացմունքները և կառավարել դրանք: Հարկավոր է գիտակցել, որ յուրաքանչյուր զգացմունք և հույզ կարևոր է և անպայման պետք է համապատասխան արտահայտում գտնի: Եթե մեզ թվում է, թե բարկությունը կամ վախը բացասական զգացմունքներ են, պետք չէ դրանք ճնշել, այլ պետք է գիտակցել,

---

8 Տե՛ս **Тимербаевна Л. А.** Эмоциональный интеллект Московский городской педагогический университет, Москва (Россия), 2016, էջ 275, file:///C:/Users/user/Downloads/emotsionalnyy-intellekt.pdf

9 Տե՛ս **Мария Л.** Эмоциональный отклик: что это, виды, методы измерения и практическое применение, https://edprodpo.com/blog/psychology/emotsionalnyy-otklik/

10 Տե՛ս **Изард К.Э.** Психология эмоций Пер. с англ. СПб., 1999, էջ 32-34:

11 **Выготский Л.С.** Собр. соч.: В 6 т. Т. 2. М.: Педагогика, 1982. с. 21

12 Տե՛ս **Гоулман Д, Бояцис Р., Макки Э.** Эмоциональное лидерство. Искусство управления людьми на основе эмоционального интеллекта. М, Альпина Бизнес Букс, 2005, էջ 266—269:

որ դրանք մեր օրգանիզմի բնական արձագանքն են և պաշտպանական մեխանիզմ են որևէ տհաճ երևույթի առերեսվելիս: Գիտակցելով այս զգացմունքների բուն դրդապատճառը՝ կարելի է կառավարել դրանց ինտենսիվության մակարդակը և հետագա քայլեր մշակել[13]: Կարիք է առաջանում դեռահասի մեջ զարգացնելու ոչ միայն զգացմունքների ճանաչման, այլև դրանք բառերով ճիշտ արտահայտելու փորձը՝ հուզական բառապաշարը[14]:

Առանձնացվում են հույզերի վերբալ արտահայտման երկու կարևոր խնդիրներ: Առաջինն այն է (օնոմասիոլոգիա), երբ անհատը չի կարողանում խոսքերով արտահայտել իր զգացածը, քանի որ չգիտի, թե ինչ բառերով դրանք նկարագրի (սա ավելի հաճախ ի հայտ է գալիս մանկության տարիքում): Մյուս խնդիրը (սեմասիոլոգիա), երբ անհատը գիտի որոշակի բառեր, օրինակ՝ ցնծություն, շփոթվածություն, երջանկություն և այլն, սակայն չգիտի դրանք ճիշտ և տեղին կիրառելու նրբերանգները[15]:

Հույզերն ունեն հաղորդակցական մեծ գործառույթ: Նույնիսկ լռության ժամանակ դրանք հաղորդակցվում են մարդու մարմնի, միմիկաների կամ ժեստերի միջոցով[16]: Հույզերի հաղորդակցական ուժի միջոցով է, որ մենք կարողանում ենք ընկալել և ապրումակցել այլ անձանց հուզական վիճակներին: Եվ հենց հաղորդակցական գործառույթի միջոցով են կարողանում արվեստագետները փոխանցել իրենց զգացմունքները գեղարվեստական ստեղծագործության միջոցով, որոնք իրենց համապատասխան արտահայտությունն են գտնում դրանք ընկալողի հոգում:

Դեռահասների գեղագիտական զգացմունքների ձևավորման տեսական մոդելի հաջորդ բաժինը գնահատողականն է: Ցանկացած երևույթ անհատի կողմից ստանում է համապատասխան գնահատական՝ անկախ իր գեղագիտական կամ հակագեղագիտական լինելուց: Այս փուլում խոսքը հենց գեղագիտական գնահատականի մասին է: «Ցանկացած էսթետիկական ընկալում, էսթետիկական ապրում, էսթետիկական դատողություն յուրահատուկ գնահատական է…»[17], - նշում է անվանի հոգեբան Մ.Ս. Կագանը: Ինչպես նաև նշում է հետևյալը. «Էսթետիկականի կարգավիճակը աքսիոլոգիական է, ինչը նշանակում է՝ գեղեցիկը, վեհը և այլն արժեքներ են, իսկ դրանց ընկալումը՝ մարդկային գիտակցության գնահատող գործունեության ձև»[18]:

Ինչպես արդեն պարզ դարձավ, տեսաբանների մի մասը որևէ երևույթի հանդեպ գեղագիտական գնատական տալու երևույթը կապում է առաջնային

[13] Տե՛ս **Константинов М. А.** Колесо эмоций Плутчика: как подружиться со своими чувствами, https://www.b17.ru/article/koleso_emotion_konst/

[14] Տե՛ս **Андреева И. Н.** Эмоциональный интеллект: исследования феномена. Вопросы психологии. 2006. № 3, https://elib.psu.by/bitstream/123456789/32473/1/78-87.pdf

[15] Տե՛ս **Цыбулевская А. В.** նշվ. աշխ., էջ 26:

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 39-40:

[17] **Каган М. С.** Лекции по марксистско-ленинской эстетике. ЛГУ, 1971, с. 87

[18] Նույն տեղում, էջ 89:

հաճույքի հետ, որը չունի բացատրություն: Այս մասին Տ. Վ. Կուզնեցովան գրում է. «Տվյալ առարկան պարզապես դուր է գալիս կամ դուր չի գալիս: Եվ այս փաստն ընդունվում է որպես անվիճելի, առանց որևէ վերլուծության կամ հիմնավորման: Աշխարհի նկատմամբ մարդու նման վերաբերմունքը, երևի թե, հենց պետք է անվանել էսթետիկ»[19]: Նույն կերպ է բնութագրում Ի. Կանտը գեղագիտական ճաշակը. «Դա առարկայի կամ դրա ներկայացման եղանակի մասին դատելու կարողությունն է՝ ամեն տեսակ հետաքրքրությունից զուրկ հաճույքի կամ տհաճության հիման վրա»[20]: Ըստ Կանտի՝ մենք առարկայի գեղագիտական հատկությունները գնահատում ենք մեր սուբյեկտիվ գեղագիտական դատողությունների առաջնորդությամբ, որոնք հիմնվում են անձի ճանաչողական գործընթացների՝ երևակայության ու բանականության համապատասխանության և ներդաշնակության վրա: Սակայն Կանտը պնդում է նաև, որ գեղագիտական գնահատման գործընթացը որքան էլ հիմնված է մեր սուբյեկտիվ կարողությունների վրա, գոյություն ունի համընդհանուր զգայական հիմք, որը նույնն է բոլորի համար: Այսինքն՝ այն, ինչը մենք դատում ենք որպես գեղեցիկ կամ տգեղ, համարում ենք, որ պետք է համընդհանուր ճանաչվի բոլորի կողմից[21]:

Տեսաբաններից շատերն էլ, ինչպես տեսանք, գեղագիտական գնահատականներ տալու գործընթացը կապում են անհատի կոգնիտիվ կարողությունների հետ, երբ առարկային մարդու կողմից գնահատական է տրվում՝ հենվելով սեփական դատողությունների, նախասիրությունների, ճաշակի, մտածելակերպի և այլ գործընթացների վրա: Տվյալ երկու տեսական մոտեցումները համապատասխանաբար անվանվում են առաջնային և երկրորդային գեղագիտական գնահատականներ: Առաջինի դեպքում դրանք արտահայտվում են ավելի պարզ կապակցություններով, ինչպես՝ «առարկան ինձ դուր է գալիս» կամ «առարկան տգեղ է»: Երկրորդ պարագայում, հիմնվելով սեփական ճանաչողական գործընթացների վրա, անհատի կողմից գեղագիտական առարկան խորը վերլուծության է ենթարկվում, որի շնորհիվ տրվում են այնպիսի համարժեք արտահայտություններ, ինչպիսիք են՝ ցնցող, ոգևորող, ձանձրացնող, աններդաշնակ և այլն[22]:

Այսպես, գեղագիտական գնահատականը գեղագիտական զգացմունքի գիտակցված և ճշգրիտ ձևակերպված արտահայտումն է, որը հիմնված է անձի՝ զգայական հիմքով գեղագիտական դատողություններ կատարելու վրա: Մեր

---

[19] **Кузнецова Т. В.** «Эстетическое» как универсальная категория эстетики // Эстетика как образ жизни. М., 2013. с. 193.

[20] **Кант И.** Критика способности суждения / **И. Кант.** – Соч., в 6-ти т. – Т. 5. М., 1966, с. 212.

[21] Տե՛ս Immanuel Kant: 1724-1804 The Critique of Judgment was originally published in Prussia in 1790, էջ 59-60:

[22] Տե՛ս **Малевинский С. О., Ахмадзаи С. А.** Эстетические оценки и их языковое выражение, “Культурная жизнь Юга России”, № 3 (70), 2018, էջ 129, file:///C:/Users/user/Downloads/esteticheskie-otsenki-i-ih-yazykovoe-vyrazhenie.pdf

կողմից որևէ առարկայի վերաբերյալ գեղագիտական գնահատական տալու գործընթացը ընդգրկում է ոչ թե առարկայի հատկանիշների, այլև գեղագիտական զգացմունքի արտահայտումը[23]: Ճշգրիտ գնահատական տալու համար անհատը պետք է ունենա լավ զարգացած գեղագիտական ճաշակ, որը մեծապես հիմնված է աշխարհում գործող օբյեկտիվ գործոնների վրա, ուստի գեղագիտական գնահատականը լիովին սուբյեկտիվ չէ: Այն մեծապես կախված է նաև մշակութային այն առանձնահատկություններից, որոնցում գտնվում է անհատը[24]:

Գեղագիտական գնահատականներ տալու գործընթացը դեռահասության տարիքում արդեն իսկ դառնում է բավականին գիտակցված, քանի որ, ինչպես արդեն գիտենք, տարիքային այս փուլում անձի կոգնիտիվ համակարգում ակտիվանում են վերլուծելու, համադրելու, համեմատելու և այլ կարևոր գործընթացներ, որոնք մեծ դեր ունեն տարբեր երևույթները, մարդկային փոխհարաբերությունները դեռահասի կողմից գնահատելու և ճշգրիտ բացատրելու հարցում:

Ի վերջո, գեղագիտական զգացմունքների ձևավորման մոդելի այս բաժինների ճշգրիտ կարգավորումն ու կազմակերպումն ապահովում են անհատի գեղագիտական պահանջմունքի ձևավորման և դրան հետևող գործնական քայլերի իրականացումը:

Այսպիսով, գեղագիտական զգացմունքների ձևավորման տեսական մոդելի գծապատկերն ունի հետևյալ տեսքը.




---

23 Տե՛ս **Воеводин А. П.** Эстетическая оценка. Ученые записки Таврического национального университета им. В. И. Вернадского, Серия «Философия. Культурология. Политология. Социология». Том 23 (62). 2010. № 2, էջ 32-33, file:///C:/Users/user/Downloads/esteticheskaya-otsenka.pdf

24 Տե՛ս նույն տեղը, էջ 33-34:

Ուսուցման գործընթացում մոդելի իրագործման համար անհրաժեշտ է որոշակի մանկավարժական պայմանների ապահովում: Դրանք են՝

- գեղագիտական միջավայրի ապահովում,
- ուսուցչի կողմից բարենպաստ և վստահելի հարաբերությունների ապահովում,
- ցանկացած երևույթի կամ գեղարվեստական ստեղծագործության մանրամասն վերլուծություն, գեղարվեստական կերպարի բացատրություն,
- համաշխարհային օբյեկտիվ գեղագիտական արժեքներին ծանոթացում,
- ազատություն արտահայտվելիս և զգացմունքներ դրսևորելիս,
- հուզական և գեղագիտական փորձի հարստացում,
- հուզական բառապաշարի ընդլայնում,
- ստեղծագործականության խթանում:

Քննարկված տեսական դրույթների հիման վրա գեղագիտական զգացմունքը դիտարկվում է որպես բազմաբաղադրիչ ամբողջական հոգեբանական կազմավորում, որը ձևավորվում է ճանաչողական, հուզական և արժեքա-գնահատողական գործընթացների փոխազդեցության արդյունքում: Մշակված տեսական մոդելը ցույց է տալիս, որ գեղագիտական զգացմունքի ձևավորման հիմքում ընկած են գեղարվեստական երևույթի ընկալումը և իմաստավորումը, որոնք ընդգրկում են գեղագիտական դատողության և գեղագիտական հարաբերության ձևավորումը: Հուզական բաղադրիչը, ներառյալ հուզական ինտելեկտի դրսևորումները, ապահովում է անձի ներգրավվածությունը գեղարվեստական բովանդակության մեջ և պայմանավորում է գեղագիտական ապրումների խորությունը: Այս գործընթացը իր ավարտուն արտահայտությունն է ստանում գեղագիտական գնահատականի ձևավորմամբ, որը գեղագիտական փորձի գիտակցված, ռացիոնալացված դրսևորում է և նպաստում է գեղագիտական պահանջմունքի առաջացմանը:

**ЛАЛА СИМОНЯН** – ***Теоретическая модель формирования эстетических чувств и её проявления в подростковом возрасте.*** – Проблема формирования эстетических чувств является одним из важнейших направлений современной педагогики и психологии искусства, так как она непосредственно связана с развитием ценностной системы личности, ее эмоциональной культуры и мировосприятия. Особенно в подростковом возрасте, когда активно формируются самосознание, эмоциональный опыт и эстетическое отношение к действительности, теоретическое обоснование структуры и механизмов формирования эстетических чувств приобретает особую значимость.

В статье представлена теоретическая модель формирования эстетических чувств, раскрывающая их основные компоненты, структурную целостность, взаимосвязи друг с другом и логику развития в подростковом периоде. Предложенная модель позволяет систематизированно интерпретировать процесс возникновения и осознания эстетического опыта, подчеркивая последовательность восприятия, эмоционального отклика, эстетической оценки и формирования эстетической потребности. В этом процессе ключевую роль играет влияние музыкального ритма и звуковой структуры на

синхронизацию физиологических и психических систем человека. Модель учитывает как пробуждение базовых эмоций, так и формирование сложных, «утонченных» эстетических переживаний, что имеет фундаментальное значение для обогащения внутреннего мира подростка и проявления оригинальности его эстетического вкуса.

**Ключевые слова:** *эстетическое чувство, эмоции, подросток, модель, искусство, восприятие, осознанная оценка, потребность*

**LALA SIMONYAN** – ***The Theoretical Model of Aesthetic Feeling Formation and Its Manifestations in Adolescence.*** – The problem of forming aesthetic feelings is one of the pivotal directions of modern pedagogy and art psychology, as it is directly linked to the development of an individual's value system, emotional culture, and world perception. Especially during adolescence, a period when self-awareness, emotional experience, and an aesthetic attitude toward reality are actively being shaped, the theoretical substantiation of the structure and mechanisms of aesthetic feelings acquires particular significance.

The article presents a theoretical model for the formation of aesthetic feelings, revealing their core components, structural integrity, mutual interrelationships, and developmental logic during adolescence. The proposed model allows for a systematic interpretation of the process of emergence and realization of aesthetic experience, emphasizing the sequence of perception, emotional response, aesthetic evaluation, and the formation of aesthetic needs. Within this process, the influence of musical rhythm and sonic structure on the synchronization of human physiological and psychological systems plays a pivotal role. The model accounts for both the arousal of basic emotions and the formation of complex, "refined" aesthetic experiences, which are fundamental for enriching the adolescent's inner world and manifesting the originality of their aesthetic taste.

**Key words:** *aesthetic feeling, emotions, adolescent, model, art, perception, conscious evaluation, need*

**References**

Andreeva I.N. Emotsionalnyy intellekt: issledovaniya fenomena. Voprosy psikhologii. 2006. № 3 (in Russian) https://elib.psu.by/bitstream/123456789/32473/1/78-87.pdf

Bodaleva. A.A. V mire podrostka. M.: Prosveshcheniye, 1980. – pp. 16—28. (in Russian)

Bychkov V.V. Estetika: uchebnik. M.: KNORUS, 2012. — p. 92 (in Russian)

Daniel Goleman, R. Boyatzis, Annie McKee. Emotsionalnoye liderstvo. Iskusstvo upravleniya lyudmi na osnove emotsionalnogo intellekta. M, Alpina Biznes Buks, 2005. pp. 266—269 (in Russian)

Dragunova T.V. Podrostok. – M.: Pedagogika, 1976. – 260 p. (in Russian)

Izard C.E. Psikhologiya emotsiy, per. s angl. SPb., 1999. pp. 31, 32-34 (in Russian)

Kagan M. S. Lektsii po marksistsko-leninskoy estetike. LGU, 1971. p. 87 (in Russian)

Kant I. Kritika sposobnosti suzhdeniya / I. Kant. – Soch., v 6-ti t. – T. 5. M., 1966. - p. 212 (in Russian)

Kant Immanuel: 1724-1804 The Critique of Judgment was originally published in Prussia in 1790, p. 59-60

Konstantinov M. A. Koleso emotsiy Plutchika: kak podruzhit'sya so svoimi chuvstvami. Article. (in Russian) https://www.b17.ru/article/koleso_emotion_konst/

Kuznetsova T.V. «Esteticheskoye» kak universalnaya kategoriya estetiki // Estetika kak obraz zhizni. M., 2013. p. 193 (in Russian)

Malevinskiy S.O., Akhmadzai S.A. - Esteticheskie otsenki i ikh yazykovoe vyrazhenie, “Kulturnaya zhizn Yuga Rossii” № 3 (70), 2018. p. 129 (in Russian)

Mariya L. Emotsionalnyy otklik: chto eto, vidy, metody izmereniya i prakticheskoye primeneniye. Article. (in Russian) https://edprodpo.com/blog/psychology/emotsionalnyy-otklik/

Oprosnik metodiki «Shkala emotsionalnogo otklika» A. Megrabyana i N. Epshteyna, 2000 g. (in Russian) https://psychologos.ru/articles/view/oprosnik-metodiki-shkala-emocionalnogo-otklika-a.-megrabyana-i-n.-epshteyna

Timerbayeva L. A. Emotsionalnyy intellekt, Moskovskiy gorodskoy pedagogicheskiy universitet, Moskva (Rossiya), 2016 g. p. 275 (in Russian)

Tsybulevskaya Anna Vasilyevna EMOTIVNYY ARGOTICHESKIY LEKSIKON. Dissertatsiya na soiskaniye uchonoy stepeni kandidata filologicheskikh nauk, Stavropol – 2005, pp. 26, 31, 39-40 (in Russian)

Voevodin A.P. Esteticheskaya otsenka. Uchenye zapiski Tavricheskogo natsionalnogo universiteta im. V.I. Vernadskogo, Seriya «Filosofiya. Kulturologiya. Politologiya. Sotsiologiya». Tom 23 (62). 2010. № 2. pp. 32-33 (in Russian)

Vygotskiy L.S. Sobr. soch.: V 6 t. T. 2. M.: Pedagogika, 1982. p. 21 (in Russian)

Yuldashev, L. G. Esteticheskoye chuvstvo i proizvedeniye iskusstva / L. G. Yuldashev. – M. : Mysl, 1969. p. 152 (in Russian)

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 47-61
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.047

# ՖԱԼԻԲԻԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՉԱՐԼԶ ՊԻՐՍԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԴԱՎԻԹ ԱՔԵԼՅԱՆ*

*Երևանի պետական համալսարան*

Հոդվածում քննարկվում են Չարլզ Պիրսի փիլիսոփայության մեջ ֆալիբիլիստական հայեցակարգի և իմացաբանական դիրքորոշման հիմքում ընկած պատճառները, փաստարկները, նախորդ իմացաբանական դիրքորոշումների քննադատության փորձերը և ֆալիբիլիզմի զարգացման միտումները: Պիրսյան ֆալիբիլիզմն առաջին հերթին սուբյեկտի ճանաչողական կարողությունների և ճանաչողության մեթոդի սահմանափակումների ընդունման և հաղթահարման փորձերի արդյունք է, որն առավելապես դրսևորվում է փիլիսոփայի՝ դեկարտյան դոգմատիկ-ֆունդամենտալիստական հայացքների և մեթոդաբանական սկեպտիցիզմի քննադատությունում: Կարելի է ենթադրել, որ պիրսյան ֆալիբիլիզմի ձևավորման և զարգացման հիմքում ընկած են (1) կամավոր և համընդհանուր կասկածի մեթոդից հրաժարումը, (2) ճանաչողության մեջ բավարար պատճառ ունեցող չափավոր կասկածի պահանջի ընդունումը և (3) գիտելիքների ու համոզմունքների հիմքում բացարձակ իմացական հիմքերի որոնման պահանջից հրաժարումը: Թեև Պիրսի փիլիսոփայության մեջ այս տեսակ իմացաբանական դիրքորոշումը հանգեցնում է ողջ իմացության և ճանաչողական կարողությունների սխալականության ընդունմանը (ֆալիբիլիզմին), այն ճանաչողությունը ու հատկապես գիտական ճանաչողությունը վերաձևակերպում է միջսուբյեկտային դինամիկ գործընթացի, որն ունակ է մեղմելու սուբյեկտիվի առկայությունը և ապահովելու գիտելիքների աճը՝ թույլ չտալով որևէ գիտելիքի կամ համոզմունքի կարծրացում իմացության մեջ: Հեղինակի կարծիքով՝ Պիրսի ֆալիբիլիզմը ոչ խիստ, չափավոր իմացաբանական դիրքորոշում է, որը թույլ է տալիս խուսափել դոգմատիզմի, ֆունդամենտալիզմի, ինֆալիբիլիզմի և ծայրահեղ սկեպտիցիզմի՝ գիտելիքի նկատմամբ մաքսիմալիստական պահանջներից և հայեցակարգային սահմանափակություններից:

**Բանալի բառեր –** *Չարլզ Պիրս, ֆալիբիլիզմ, դոգմատիզմ, ֆունդամենտալիզմ, գիտելիքի սխալականություն, գիտելիքի հիմնավորում, սուբյեկտիվի հաղթահարում, ինտելեկտուալ համեստություն*

* **Դավիթ Աքելյան** – ԵՊՀ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասպիրանտ
**Давид Акелян** – аспирант кафедры истории, теории философии и логики ЕГУ
**Davit Akelyan** – PhD Student at the YSU Chair of History and Theory of Philosophy and Logic
Էլ. փոստ՝ davit.aqelyan@ysu.am  ORCID ID:https://https://orcid.org/0000-0002-1408-6082

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 14.11.2025
Գրախոսվել է՝ 15.01.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

Ֆալիբիլիզմը առաջին անգամ սահմանվել և հայեցակարգային նշանակություն է ստացել ամերիկյան պրագմատիզմի ականավոր ներկայացուցիչ Չարլզ Սանդերս Պիրսի (1839-1914 թթ.) աշխատանքներում: Այն ներկայացնում է Պիրսի իմացաբանական և գիտաբանական հիմնական դիրքորոշումներից մեկը, ըստ որի՝ ճանաչողության գործընթացում սխալի հնարավորությունն անխուսափելի է, կամ, այլ կերպ ասած, *«գիտելիքները մշտապես լողում են շարունակական անորոշության մեջ և երբեք բացարձակ չեն»*[1]: Ֆալիբիլիզմի հիմնական հայեցակարգային դրույթների ձևակերպման փորձերը նախևառաջ դրսևորվել են փիլիսոփայի իմացաբանության կենտրոնական հարցերից մեկի՝ համոզմունքների և կասկածի փոխհարաբերման հիմնախնդրի համատեքստում, որը վերջինիս հետաքրքրության շրջանակում հայտնվել է առավելապես Ռենե Դեկարտի մեթոդաբանական սկեպտիցիզմի և ֆունդամենտալիզմի ուսումնասիրման արդյունքում: Միևնույն ժամանակ, Պիրսի ֆալիբիլիստական իմացաբանությունը և դիրքորոշումը ձևավորվել են ֆալիբիլիզմի անմիջական հակադիր հայեցակարգի՝ ինֆալիբիլիզմի համակարգային քննադատությունից, ըստ որի՝ գիտելիքը պետք է հիմնված լինի բացարձակ ճշմարիտ և հիմնավոր (անսխալական) հիմքերի վրա, և մարդկային իմացությունում գոյութուն ունեն (կարող են գոյություն ունենալ) անսխալական և բացարձակ ճշմարիտ գիտելիքներ: Սա կարելի է արձանարգել՝ ուսումնասիրելով հեղինակի մի շարք հոդվածներ և աշխատություններ, որտեղ ընդգծված քննադատական մոտեցում է ցուցաբերվում կարտեզիանիզմի[2] և դրանում ֆունդամենտալիզմի ու ապրիորիզմի գրեթե բոլոր դրսևորումների նկատմամբ: Ընդհանուր առմամբ, մասնագիտական գրականությունում Պիրսի ֆալիբիլիզմը հաճախ բնորոշվում է *«որպես ինտելեկտուալ հարձակում ֆունդամենտալիզմի և դոգմատիզմի վրա, որը պահանջում է պատրաստակամություն ընդունելու հնարավորությունն այն մասին, որ մարդը կարող է սխալված լինել»*[3]: Մեր իմացությունում սխալների առկայությունը և ճանաչողությունում սխալի ու ռացիոնալ կասկածի մշտական հնարավորությունը (սխալականությունը) առաջին հերթին պայմանավորված են մարդկային ճանաչողական կարողությունների և ճանաչողության մեթոդի սահմանափակումներով: Ճանաչողական կարողությունների սահմանափակումը դրսևորվում է մի շարք դեպքերում

---

[1] **Peirce C. S.**, Philosophical Writings of Peirce, Dover Publications, New York, 1955, 356 p.

[2] «Կարտեզիանիզմը» (լատ. Cartesius՝ Դեկարտի լատինացված անվանումից) ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտի (1596-1650 թթ.) և հետագայում նրա փիլիսոփայության հետևորդների կողմից մշակված իմացաբանական, գիտաբանական, մեթոդաբանական և մետաֆիզիկական ուսմունքների և հայեցակարգերի ամբողջությունն է: Տե՛ս **Hatfield, G.**, " René Descartes" // The Stanford Encyclopedia of Philosophy, Stanford University, Edward N. Zalta & Uri Nodelman (eds.), Summer 2024 edition, https://plato.stanford.edu/archives/sum2024/entries/descartes/ (մուտք՝ 01.09.2025):

[3] **Pojman L. P.**, What can We Know? An introduction to the Theory of Knowledge, Belmont: Wadsworth, 2001, p. 344:

մարդկային բանականության անկարողությամբ, ինչպես, օրինակ, հետազոտվող օբյեկտը բոլոր հնարավոր կողմերից ուսումնասիրելու և քննելու կամ դրա վերաբերյալ անսխալական ինտուիցիա ունենալու անհնարինությունը: Ճանաչողության մեթոդի սահմանափակումը վերաբերում է այն հնարավոր ճանաչողական բարդություններին և սխալներին, որոնք կարող են ի հայտ գալ անմիջական (անմիջական հայեցողությամբ, զգայություններով) և միջնորդավորված (բանականության, արտաքին սարքերի, գործիքների միջոցով) ճանաչողություն իրականացնելու ընթացքում[4]: Մասնավորապես, Պիրսն իր ֆալիբլիստական տեսակետը հիմնավորելիս մեծ ուշադրություն է դարձնում գիտելիքների և տեղեկատվության ստացման աղբյուրների (անմիջական և միջնորդավորված) խնդրահարույց կողմերին և փաստում, որ դրանց սահմանափակումների ու խնդիրների վերհանումը անհրաժեշտաբար հանգեցնում է այն եզրակացության, որ մենք որևէ հարցի ու երևույթի վերաբերյալ երբեք չենք կարող հասնել համընդհանուր, բացարձակ և անսխալական համոզմունքների և գիտելիքների:

Զգայությունները և բանականությունը ձևավորում են խնդրո առարկայի վերաբերյալ ընկալում, որը ճանաչողական կարողությունների և մեթոդի խնդրահարույց բնույթի պատճառով միշտ սխալական է: Ըստ Պիրսի՝ *«Ցանկացած բան, որը ճանաչելի է, ընկալման դարպասների միջոցով մուտք է գործում տրամաբանական մտածողություն և այնտեղից հեռանում է նպատակային գործողության դարպասով»*[5]: Հետևաբար, եթե ճանաչողության համար այդքան անհրաժեշտ մուտքային տեղեկատվությունը բախվում է ընկալման սահմանափակությունների, ապա մեր մտքում հայտնված, վերլուծված և որպես եզրակացություն բխեցված ցանկացած գաղափար ենթակա է հավանական սխալի: Ընկալման սխալականության պրոբլեմը տարածվում է նաև գիտական մեթոդի վրա: Թեև հիմնավորվածության որոշակի մակարդակ ունեցող համոզմունքների ու գիտելիքների ձևավորման լավագույն և ամենաապահով տարբերակը գիտական մեթոդն է, սակայն, ըստ Պիրսի, սա նույնպես զերծ չէ սխալներից: Ցանկացած մեթոդ, որը կընտրվի ուսումնասիրության համար, չի կարող ապահովել բացարձակ որոշակի և անսխալական եզրակացություն: Եվ մենք ունակ չենք դուրս գալու տրված մեթոդի սահմաններից, որպեսզի համոզվենք՝ արդյո՞ք մենք հասել ենք վերջնական ճշմարտության, թե՞ ոչ[6]: Խոսելով գիտական ճանաչողության դեդուկտիվ, ինդուկտիվ և աբդուկտիվ մեթոդներից՝ Պիրսը դրանք համարում է ընդհանուր առմամբ վստահելի, սակայն

[4] Ավելին տե՛ս **Chysogonus O.**, Peirce’s fallibilism: A thematic analysis and the revisitation of the origins of fallibilism, AMAMIHE: Journal of Applied Philosophy, ISSN: 1597 – 0779, Vol. 19, No. 4, 2021, էջ 20:

[5] **Pierce C.S.**, Collected Papers, ed. C. Hartshorne, P. Weiss, and A. Burks, Harvard University Press, Volumes 1-8, Cambridge, 1931-1958, (CP. V 5, p. 212, 1897).

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 159:

խնդրահարույց և սխալական մեթոդներ: Աբդուկցիան նախորդում է դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդներին: Նրա սահմանմամբ՝ *«սա բացատրական վարկածների ձևավորման գործընթաց է, ըստ էության, միակ տրամաբանական գործընթացը, որը թույլ է տալիս մտահղացնել նոր գաղափարներ (հասկացություններ, տեսություններ)»*[7]: Ֆրանկֆուրտը նկատում է, որ Պիրսի աբդուկցիան ոչ այնքան վարկածների ստեղծման, որքան վարկածների գնահատման ու մրցակցող վարկածների միջև ընտրություն կատարելու գործընթաց է[8]: Դեդուկցիան և ինդուկցիան գործի են դրվում եզրահանգումների կամ տեսության գնահատման ավելի ուշ փուլում: Մասնավորապես դեդուկցիան օգնում է աբդուկցիայի միջոցով ձևավորված բացատրական հիպոթեզներից աճանցել փորձարկելի հետևանքներ, իսկ ինդուկցիան օգնում է հիպոթեզների վերաբերյալ մտահանգելու որոշակի եզրակացությունների, որտեղ վերջիններիս հավաստիության աստիճանը կախված է դիտման ընթացքում հաստատված մասնավոր դեպքերի քանակից: Թեև աբդուկցիան, դեդուկցիան և ինդուկցիան թույլ են տալիս հղացնել նոր գաղափարներ, գնահատել դրանք և հետագա քննության համար թողնել դրանցից ամենահիմնավորը, ստացված եզրակացությունները միշտ կլինեն սխալական և հիպոթետիկ: Պատճառն այն է, որ մեր բոլոր մտքերն ու դատողությունները ձեռք են բերվում մտահանգումների և եզրակացությունների միջոցով: Պիրսի գնահատմամբ՝ և՛ մեր մտահանգումների նախադրյալներն (մեկնարկային գիտելիքները) են սխալական, և՛ ինքնին մեթոդները, որոնցով բխեցնում ենք եզրակացություններ, քանի որ մենք երբեք չենք կարող դուրս գալ տվյալ մեթոդի շրջանակից՝ հասկանալու համար՝ արդյոք հասել ենք որևէ որոշակիության, թե ոչ: Առավելագույնը, որին ունակ են այս մեթոդները, հետևյալն է. *«Դեդուկցիան բացատրում է, ինդուկցիան գնահատում է. սա և վերջ»*[9]: Նման վերլուծության արդյունքում փիլիսոփան եզրակացնում է. *«Բանականության միջոցով երբեք հնարավոր չէ հասնել բացարձակ որոշակիության, բացարձակ ճշգրտության և բացարձակ համընդհանրության: Մենք չենք կարող լիովին վստահ լինել, որ մեր եզրակացությունները նույնիսկ մոտավորապես ճիշտ են»*[10]:

Թեև ֆալիբիլիստական հայեցակարգի օգտին բերվող փաստարկները Պիրսը կառուցում է ամուր և իմացաբանորեն համոզիչ մի շարք դրույթների վրա, այնուամենայնիվ պիրսյան ֆալիբիլիզմն ամենևին էլ զերծ չէ քննադատությունից: Առաջին խնդիրը, որին բախվում է Պիրսի ֆալիբիլիզմը, *գիտելիքի հիմնավորման և դեմարկացիայի* խնդիրն է: Այն ենթադրում է, որ գոյություն ունի գիտելիքի հիմնավորման որոշակի մակարդակ, որը չի ապահովում լիարժեք

[7] Նույն տեղում, էջ 172:

[8] Ավելին տե՛ս **Frankfurt H.**, Peirce's Notion of Abduction // Journal of Philosophy, 55, 1958, էջ 593–596:

[9] Նույն տեղում, էջ 475:

[10] **Peirce C. S.**, Philosophical Writings of Peirce, Dover Publications, p. 56.

հիմնավորվածություն, սակայն որը, այնուամենայնիվ, բավարար է արձանագրելու համար, որ մենք ունենք գիտելիք։ Հարցին, թե արդյոք «S-ը ճշմարիտ է», հնարավոր է պատասխանել մի շարք հիմնավորումներ առաջարկելով այնպես, որ դրանք կնպաստեն S-ի և վերջինիս ճշմարտության արժեքի վերաբերյալ մեր իմացության մակարդակին այնքան, որ այն ի վերջո կարող ենք համարել շատ հավանական ճշմարիտ լինելու համար։ Սակայն այն գաղափարը, թե գոյություն ունի գիտելիքի հիմնավորման որևէ հստակ մակարդակ, որտեղ մեր ճանաչողական վիճակը փոխվում է «չիմացությունից» դեպի «իմացություն», կարծես թե անիրատեսական է այնպիսի համակարգի համատեքստում, որը պահանջում է միայն սխալական, ոչ լիարժեք հիմնավորվածության մակարդակ[11]։ Եթե գիտելիքը լավագույն դեպքում կարող է լինել հավանական ու ենթակա սխալի, ապա ո՞րն է իմացության և չիմացության միջև տարբերությունը։ Ո՞ր պահին կարող ենք հստակ արձանագրել, որ ինչ-որ բան գիտենք։ Եթե մենք ոչ մի բանում չենք կարող լիովին վստահ լինել, ապա ինչպե՞ս կարող ենք ընդհանրապես խոսել որևէ բանի վերաբերյալ գիտելիք ունենալ մասին։ Նույնիսկ եթե հնարավոր լինի գիտելիքի համար ապահովել հիմնավորվածության հստակ և խիստ մակարդակ, ապա հստակ չէ, թե ինչու հիմնավորվածության հենց այդ մակարդակն է պետք հիմք ընդունել։ Պայմանականորեն, եթե գիտելիքի 90% հիմնավորման մակարդակը բավարար է համարվում տվյալ իմացությունը գիտելիք համարելու և այն ոչ գիտելիքից տարանջատելու համար, ապա ինչո՞ւ 89%-ը բավարար չէ։ Պիրսն իր աշխատանքներում չի հստակեցնում գիտելիքների հիմնավորման այն անհրաժեշտ և բավարար մակարդակը, որը թույլ կտա արձանագրել գիտելիքի առկայությունը, փոխարենը նա բավարարվում է գիտելիքի համար հիմնավորման որոշակի հավանական մակարդակ պահանջելով, որը չի հակասի գիտելիքի սխալական բնույթի վերաբերյալ ֆալիբիլիստական պատկերացումներին։

Մեկ այլ խնդիր, որը հստակորեն հասցեագրված չէ Պիրսի իմացաբանությունում և այդ կերպ մի շարք հակասությունների պատճառ է դառնում, ֆալիբիլիզմի կիրառման տիրույթի խնդիրն է։ Պիրսը ընդունում է մաթեմատիկական աքսիոմները, տրամաբանության սկզբունքները, պատճառականությունը որպես համընդհանուր օրենքներ, որոնք գոյություն ունեն և իմացվում են ապրիորի։ Սակայն նա միևնույն ժամանակ պնդում է, որ գոյություն ունի որոշակի «դրական պատմական ապացույց», որը ցույց է տալիս, որ բնածին (ապրիորի) ճշմարտությունները երբեք հանդես չեն գալիս իրենց մաքուր և ինքնին իմացաբանական արժեքով, այլ խառնված են սխալների հետ, և հետևաբար չունեն իմացաբանորեն որևէ արտոնյալ դիրք մյուս գիտելիքների նկատմամբ[12]։ Պիրսը համոզված է, որ ապրիորի ճշմարտությունը չի կարող հավակնել անսխալական գիտելիքի, քանի որ մենք այն ճանաչում ենք ապրիորի, այսինքն՝ դրանք

[11] Տե՛ս **Chysogonus O.**, նշվ. աշխ. , էջ 26-27։

[12] Տե՛ս **Pierce C.S.**, Collected Papers, ed. C. Hartshorne, P. Weiss, and A. Burks, էջ 143։

ճանաչելի և ընկալելի են բացառապես ապրիորիզմի դիրքերից և շրջանակում ու ստուգելի չեն որևէ այլ եղանակով, ինչն էլ ստիպում է եզրակացնել, որ ապրիորի ճշմարտությունների անսխալականության վերաբերյալ պնդումը հնարավոր չէ որոշակիացնել ու արձանագրել անսխալականորեն՝ առանց դուրս գալու ապրիորիզմի տիրույթից[13]: Թեև Պիրսը գնահատում է զգայությունների կամ, այլ կերպ ասած, անմիջական փորձի ու հայեցողության դերը ճանաչողության օբյեկտի վերաբերյալ ընկալման ձևավորման և որոշակի հավանականություն ունեցող սխալական իմացության ձեռքբերման գործում, մեկ այլ դեպքում նա բացառում է սխալականության վերագրումը անմիջական փորձի նկատմամբ՝ պնդելով, որ «անմիջական փորձը չի կարող լինել ո՛չ անորոշ և ո՛չ էլ որոշակի. այն ոչինչ չի հաստատում, այլ պարզապես գոյություն ունի»[14]: Պիրսն այս առնչությամբ խոսում է նաև մոլորությունների, պատրանքների, երազների մասին, որոնք գոյություն ունեն յուրաքանչյուրի անմիջական փորձում, սակայն իմացաբանորեն արժեքավոր չեն: Հակասությունն առաջանում է, երբ Պիրսը անմիջական փորձին մի կողմից հաղորդում է իրականության վերաբերյալ ընկալում ձևավորող հիմնական գործոնի դեր, մյուս կողմից այդ փորձին զրկում իմացաբանական որոշակիությունից և առկա գիտելիքների իմացաբանական արժեքի վրա շոշափելի ազդեցություն ունենալու հնարավորությունից: Խնդիրն է՛լ ավելի սուր բնույթ է ստանում, երբ Պիրսը փորձում է որոշակիացնել ֆալիբիլիզմի կիրառման տիրույթը: Այն կարելի է ձևակերպել հետևյալ հարցադրումներով՝ արդյո՞ք մեր բոլոր գիտելիքները սխալական են, կամ՝ արդյո՞ք բոլոր փաստական (էմպիրիկ), տեսական (մտահայեցողական) և մաթեմատիկական (ֆորմալ-տրամաբանական) գիտելիքները և համոզմունքները սխալական են: Պիրսը հստակ արձանագրում է, որ *«փաստերի վերաբերյալ հարցերում մարդիկ չեն կարող հասնել բացարձակ որոշակիության (անսխալականության)»*[15]: Այս պնդումը նա հիմնավորում է մի շարք փաստարկներով: Դրանցից կարելի է առանձնացնել այն, որ փորձն անմիջական հայեցողության արդյունք է, որը ձևավորվում է արտաքին աշխարհից մուտքային տեղեկատվության ստացման, ընկալման և դրա հիմնա վրա մտքի ընդհանրացումների միջոցով: Քանի որ մեր ճանաչողական կարողությունները և մեթոդները սահմանափակ ու սխալական են, հետևաբար շղթայական այս գործընթացի յուրաքանչյուր հատված ենթակա է սխալի և անորոշության: Միևնույն ժամանակ, էմպիրիկ գիտելիքը բնույթով սխալական է, քանի որ այն կախված է դիտումից, փորձից և ինդուկտիվ դատողությունից, որոնք բոլորն էլ հակված են սխալների և վերանայման՝ նոր փորձի և տվյալների ի հայտ գալուն զուգընթաց: Սակայն մաթեմատիկայի և ֆորմալ-տրամաբանական ճշմարտությունների վերաբերյալ Պիրսի պնդումներն ու փաստարկներն այդքան էլ

[13] Տե՛ս **Chysogonus O.**, նշվ. աշխ. , էջ 25:

[14] **Pierce C.S.,** Collected Papers, ed. C. Hartshorne, P. Weiss, and A. Burks, p. 143.

[15] Նույն տեղում, էջ 13-14:

հստակ չեն և երբեմն նույնիսկ՝ հակասական: Պիրսը մաթեմատիկան և տրամաբանությունը սահմանում է որպես գիտություններ, որոնք ապահովում են անհրաժեշտ եզրահանգումներ: Ֆորմալ-տրամաբանական եզրահանգումները անհրաժեշտ են, քանի որ դրանք անխուսափելիորեն բխում են ինքնին անհրաժեշտ նախադրյալներից (աքսիոմներից): Սակայն, ըստ Պիրսի, մաթեմատիկան շատ բան չի ասում մեզ ճշմարտության և իրականության վերաբերյալ: Դրանք հիպոթետիկ պնդումներ են, քանի որ ի հայտ են գալիս իրականության որոշակի խնդիրների և երևույթների ընդհանրացման ու իդեալականացման արդյունքում[16]: Մնացյալ ոչ մաթեմատիկական գիտելիքները անհրաժեշտ չեն, քանի որ դրանք վերաբերում են իրական, ոչ մոդելավորված և իդեալականացված աշխարհին: Այսկերպ փիլիսոփան արձանագրում է, որ մաթեմատիկական ճշմարտությունները անհրաժեշտ և աքսիոմատիկ բնույթի են, սակայն դրանք իրական կյանքում կամ վերջինիս վրա պրոյեկտելիս հիպոթետիկ-իդեալիզացված բնույթից վերածվում են իրական-էմպիրիկ դատողությունների և, հետևաբար, այլևս չեն կարող լինել անհրաժեշտ կամ տեսականորեն անսխալական: Պիրսն իր աշխատանքներում միաժամանակ և՛ կողմ է արտահայտվում մաթեմատիկական պնդումների անհրաժեշտ և անսխալական բնույթի օգտին, և՛ մերժում է այդտեսակ գաղափարը: Ահա այսպես է Պիրսը սկսում խորհել իր ֆալիբիլիստական հայեցակարգի վերաբերյալ. *«Ֆալիբիլիզմի ուսմունքը լիովին սխալ կըմբռնվեր, եթե ենթադրեինք, որ այն նշանակում է՝ երկու անգամ երկուսը հավանաբար ճշգրտորեն չորս չէ... Այն (ֆալիբիլիզմը) պարզապես ասում է, որ մարդիկ չեն կարող փաստերի վերաբերյալ ձեռք բերել բացարձակ որոշակիությամբ համոզմունքներ»*[17]: Այնուհետև խորհրդածությունների ընթացքում Պիրսը պաշտպանում է իր նախորդ մտքին հակասող մեկ այլ պնդում. *«Այդ ո՞վ կարող է վստահ լինել, որ ես հիպնոս չեմ կիրառում, և երբ դուք դուրս գաք հիպնոսի ազդեցությունից, չեք տեսնի, որ «երկու անգամ երկուսը հավասար է չորսի» պնդումը պարզապես ձեր մտքի խեղաթյուրված գաղափարն է»*[18]: Որոշ տեսաբաններ Պիրսի այս անհետևողականությունը մեկնաբանում են որպես պիրսյան ֆալիբիլիզմի շրջանակում ինֆալիբիլիզմի օգտին խոսող փաստարկ՝ նշելով. *«Թեև սա հակասում է Պիրսի ֆալիբիլիզմին, այնուամենայնիվ պիրսյան ֆալիբիլիզմի ներքին հակասականությունը լուծելու միակ տարբերակը ընդունելն է, որ որոշ համոզմունքներ սխալական են, իսկ մի մասը՝ անսխալական»*[19]: Մյուսների կարծիքով՝ չկա որևէ հակասություն այն բանում, որ մենք կարող ենք ունենալ մաթեմատիկական կեղծ համոզմունքներ, որոնք միևնույն ժամանակ անհրաժեշտաբար լինեն ճշմարիտ[20]:

---

[16] Տե՛ս նույն տեղը, էջ 558:

[17] Նույն տեղում, էջ 149:

[18] Նույն տեղում, էջ 558:

[19] **Chysogonus O.**, նշվ. աշխ. , էջ 29:

[20] Ավելին տե՛ս **Haack S.**, Fallibilism and Necessity // Synthese, vol. 41, № 1, 1979, էջ 37-63:

Թեև պետք է արձանագրել, որ Պիրսի մի շարք դրույթների միջև կան հակասություններ, որոնք խնդրահարույց են դարձնում ֆալիբիլիզմի օգտին բերվող տարբեր փաստարկների համադրումը հօգուտ հայեցակարգի, այնուամենայնիվ դժվար չէ նկատել, որ Պիրսի ֆալիբիլիզմի հայեցակարգից հնարավոր է բխեցնել ստեղծված հակասության լուծումը: Ընդունելով հանդերձ, որ մաթեմատիկական որոշ պնդումներ անհրաժեշտաբար ճշմարիտ են օբյեկտիվ իմաստով, այսինքն՝ երբ դրանք դիտարկվում են ապրիորիզմի և ֆորմալ-տրամաբանական մակարդակում որպես ինքնին և զուտ աբստրակտ գաղափարներ, նա միևնույն ժամանակ արձանագրում է, որ մաթեմատիկական դատողությունների նկատմամբ մեր սուբյեկտիվ ընկալումը կարող է լինել խիստ սահմանափակ և սխալական: Համանմանությամբ կարելի է պատկերացնել սարքային հարաբերականության խնդիրը: Մեր առջև գտնվող աստղադիտակը կարող է բացարձակապես ճշգրիտ և սարքին լինել, սակայն դիտման ճշգրտությունը կախված է մի շարք գործոններից՝ սարքի նախագծման հիմքում հաշվարկների (այդ թվում՝ նաև մաթեմատիկական) ճշգրտությունից, սարքի սարքին վիճակում գտնվելուց, սարքը կիրառողի հմտություններից և կարողականությունից, փորձի և դիտման վրա անմիջականորեն կամ միջնորդավորված կերպով ազդող գործոններից, փորձի ձևավորման չափանիշներից, դիտման արդյունքում ստացված արդյունքների բնույթից և դրանց մշակման և, վերջապես, արդյունքների վերլուծման ու ընկալման ճշգրտությունից: Գործողությունների այս շղթան լի է բազմաթիվ դրվագներով, որոնցից յուրաքանչյուրում սխալի ու անճշգրտության հնարավորությունն անխուսափելի և անօտարելի է: Արդյունքում, որքան էլ կիրառվող սարքը լինի ճշգրիտ և բխի մաթեմատիկական անհրաժեշտությունից՝ սարքի գործադրման արդյունքում ստացված ցանկացած գիտելիք ի վերջո սխալական է: Այսպիսով, Փիրսը պնդում է, որ եթե անգամ մաթեմատիկական դրույթները «տեսականորեն անհրաժեշտ և անսխալական» են, դրանք գործնականում անխուսափելիորեն սխալական են, քանի որ մարդկային (սուբյեկտիվ) գործոնը այն դարձնում է սխալական, և մարդիկ կարող են սխալվել նույնիսկ ամենախիստ մաթեմատիկական ապացույցներում: Սա չի նշանակում, որ Պիրսը հակված է մաթեմատիկական ինֆալիբիլիզմին, այլ ավելի շուտ սկզբունքային չի համարում մաթեմատիկական դրույթների իմացաբանական արժեքի խնդիրը, քանի որ դրանց կիրառումն ու ընկալումն իրական կյանքում ի վերջո հանգեցնում են սխալական (ոչ անհրաժեշտաբար սխալ) համոզմունքների և գիտելիքների ձևավորմանը: Մասնագիտական գրականությունում կան մաթեմատիկայի նկատմամբ պիրսյան ֆալիբիլիզմի կիրառման վերաբերյալ այլ մեկնաբանություններ ևս: Օրինակ՝ Էլիզաբեթ Քուքը համարում է, որ ընդունել մաթեմատիկական անսխալականության հնարավորությունը նշանակում է ընդունել լիովին հետևողական և անհակասական համակարգի հնարավորությունը: Եթե Պիրսն ըն-

դուներ լիարժեք իմաստով անհակասական և ամբողջական գիտական համակարգի կամ տեսության գոյությունը, ապա նա պարտավոր կլիներ նաև ընդունել այդ համակարգի անսխալականությունը, սակայն ոչ այն իմաստով, ինչին Պիրսն իրականում անդրադառնում է իր ֆալիբիլիզմի հայեցակարգում: Չափազանց պարզ համակարգը, ինչպես, օրինակ, սիլլոգիզմն է, կարող է մեզ տալ անսխալական գիտելիք: Բայց այս ընդունումը իրական վտանգ չէ Պիրսի համընդհանուր ֆալիբիլիզմի համար, քանի որ մաթեմատիկական ճշմարտությունը մեզ չի տալիս անսխալական ճշմարտություն գոյություն ունեցողի վերաբերյալ: Այն, Պիրսի ըմբռնմամբ, լավագույն դեպքում ապահովում է հիպոթետիկ ճշմարտություն մեր իմացությունում[21]: Քանի որ մաթեմատիկան մարդկային և մարդկանց կողմից ուսումնասիրվող ու կիրառվող գիտություն է, մշտապես առկա է մաթեմատիկական համակարգերում չհայտնաբերված անհամապատասխանությունների և սխալների հնարավորությունը[22]: Ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել, որ Պիրսը սխալականությունը կապում է ճանաչողությունում անհատի ընկալումների կամ, այլ կերպ ասած, ճանաչման գործընթացում սուբյեկտի առկայության հետ: Հետևաբար, սուբյեկտիվի հաղթահարումը կարող է դառնալ իմացաբանորեն և գիտաբանորեն այնպիսի նախընտրելի ուղի, որը թույլ կտա ընթանալ սխալների նույնականացման, հաղթահարման, հավանական սխալականությունն իմացաբանորեն ավելի կառավարելի դարձնելու և մեր գիտելիքների հիմնավորվածության, հավանականության ու ճշմարտացիության մակարդակը բարձրացնող կառուցողական ճանապարհով:

Պիրսի իմացաբանության մյուս կարևոր հիմնախնդիրը վերաբերում է համոզմունքների և կասկածի փոխհարաբերմանը: Քննադատելով Դեկարտի իմացաբանական հայացքները և հատկապես կասկածի մեթոդը՝ Պիրսն այն համարում է նախ անհնարին, ապա անիմաստ: Դեկարտի կասկածի մեթոդն ընդհանուր առմամբ պրագմատիկ փիլիսոփան քննադատում է երկու հիմնական ուղղությամբ՝ (1) կասկածը չի կարող լինել կամավոր կերպով, և (2) կասկածի համար հարկավոր է շատ հստակ և կոնկրետ պատճառ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ հակափաստարկներով.

1. Կասկածի մեթոդն անհնար է, և դրա փոխարեն մենք պետք է սկսենք այն համոզմունքներից, որոնք իրականում ունենք:

2. Դեկարտի իմացաբանությունը անթույլատրելի ինդիվիդուալիստական է, և մենք պետք է իմացաբանության համար հիմք ընդունենք համայնքը (գիտական) և կոլեկտիվ ջանքերի արդյունքում ձևավորված փորձն ու գիտելիքները:

---

[21] Ավելին տե՛ս **Cooke E.**, Peirce, Fallibilism, and the Science of Mathematics, Philosophia Mathematica, 11(2), 2003, էջ 166-169:

[22] Տե՛ս նույն տեղը, էջ 170-171:

3. Դեկարտի իմացաբանական-մեթոդաբանական ընթացակարգը հիմնված է փաստարկների մեկ շղթայի վրա: Սակայն ավելի գիտական իմացաբանությունը կնախընտրի փաստարկների բազմակարծությունը և բազմազանությունը:

4. Իրական կասկածը պետք է հիմնված լինի որոշակի կոնկրետ պատճառի հիման վրա, այլ ոչ թե տեղի ունենա կամավոր:

5. Դեկարտը, ի վերջո, ապավինում և հիմնվում է անբացատրելի փաստերի վրա, ինչպես, օրինակ, Աստծո գաղափարը, ինչը անթույլատրելի է[23]:

Ըստ Պիրսի՝ հնարավոր չէ կասկածից մեկնարկել, ինչպես Դեկարտի կասկածի մեթոդն է ստիպում անել: Փիլիսոփայությունը պետք է մեկնարկի այն բոլոր կանխադրույթներից և համոզմունքներից, որոնք մենք ունենք հետազոտության պահին: Տեղին չեն բոլոր համոզմունքները վերացնելու փորձերը, քանի որ կան համոզմունքներ, որոնք հնարավոր չէ հերքել միայն կասկածի միջոցով: Միևնույն ժամանակ, ամեն ինչի նկատմամբ կասկածը հենց սկզբից կլինի ինքնախաբեություն, քանի որ կասկածը չի կարող լինել ինքնաբերաբար, այլ պետք է բխի որոշակի կոնկրետ պատճառներից և շարժառիթից[24]: *«Ոչ ոք, ով հետևում է դեկարտյան մեթոդին, երբեք գոհ չի լինի, քանի դեռ վերջնականապես չի վերականգնել բոլոր այն համոզմունքները, որոնցից սկզբնապես հրաժարվել էր»*[25]: Գիտությունը կոլեկտիվ զբաղմունք է ու չի կարելի այն հանգեցնել անհատին և նրա գիտակցությանը: Պիրսն այն կարծիքին է, որ մեր համոզմունքներից յուրաքանչյուրը կարող է սխալ լինել, ու թեև մենք գիտելիք ունենք, չենք կարող վստահ լինել, թե մեր համոզմունքներից որոնք են իսկապես գիտելիք, և որոնք՝ սխալ կամ անհիմն համոզմունքներ[26]: Նա չի հավատում, որ որևէ անկասկածելի բան կմնա Դեկարտի քննադատական մեթոդը կիրառելուց հետո: Ակնհայտորեն, Պիրսի մտահոգությունը այնպիսի ճանաչողության հնարավորության ստեղծումն է, որը մի կողմից հենված չի լինի բացարձակ իմացաբանական հիմքերի վրա, մյուս կողմից կավելացնի մեր գիտելիքները՝ առանց դրա բազիսի կազմաքանդման անհրաժեշտության: Այլ կերպ ասած՝ Պիրսը Դեկարտի փիլիսոփայության քննադատությամբ փորձում է մերժել ֆունդամենտալիզմի, դոգմատիզմի և ծայրահեղ սկեպտիցիզմի չարդարացված մաքսիմալիստական դիրքորոշումները և փոխարենը առաջարկել դրանց ծայրահեղությունները հավասարակշռող մոտեցում: Պիրսի չափավոր իմացաբանական դիրքորոշումը նկատելի է նաև Հաքի հետևյալ տողերում. *«Պիրսը*

---

[23] Տե՛ս **Peirce C. S.,** Some consequences of four incapacities // The Journal of Speculative Philosophy, vol. 2, № 3, 1868, էջ 140–157:

[24] Տե՛ս նույն տեղը, էջ 140:

[25] Նույն տեղում, էջ 141:

[26] Տե՛ս **Haack S.,** Descartes, Peirce and the cognitive community // The Monist, vol. 65, № 2, 1982, էջ 166:

*մերժում է Դեկարտի չափազանց լավատեսությունը, քանի որ վերջինս չի գիտակցում անկասկածելի համոզմունքների անհնարին լինելը: Սակայն, միևնույն ժամանակ, նա մերժում է նաև Դեկարտի հոռետեսությունը, քանի որ Դեկարտի կասկածի մեթոդը և փաստարկների շղթան հիմք են նախապատրաստում ծայրահեղ սկեպտիցիզմի համար: Իսկ սա անթույլատրելի է, քանի որ, ըստ Պիրսի, մեր բոլոր համոզմունքները (թեև սխալական են) չեն կարող լինել սխալ»*[27]:

Պիրսի իմացաբանությունում ֆալիբիլիզմի զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ կարելի է մի քանի կարևոր արձանագրումներ կատարել: Նախևառաջ, պետք է փաստել, որ թեև Պիրսը մնում է պրագմատիկական փիլիսոփայության գաղափարական ազդեցության շրջանակում, այնուամենայնիվ պրագմատիկական ճշմարտության վերաբերյալ վերջինիս հայացքները տարբերվում են ամերիկյան պրագմատիզմի մյուս ներկայացուցիչների հայացքներից: Հակառակվելով Ջեյմսի՝ *«Ճշմարիտը ընդամենը նպատակահարմարն է մեր մտածողության մեջ»* պրագմատիկական մաքսիմին՝ Պիրսը ճշմարտությունը չի հանգեցնում ինքնին նպատակահարմարությանը, այլ գիտելիքների՝ սխալները մշտապես մաքրելու և բարելավելու գործընթացին, որը լավագույնս կարող է իրականացնել գիտական համայնքը՝ ապահովելով ճշմարտության համար անհրաժեշտ օբյեկտիվության չափանիշը:

Հաջորդ արձանագրումը վերաբերում է «պայմանական ելակետերի» վերաբերյալ Ջոն Դյուիի և Պիրսի մոտեցումների տարբերությանը: Դյուին համամիտ է Պիրսին այն հարցում, որ մեր բոլոր համոզմունքներն ու գիտելիքները սխալական և կասկածելի են, սակայն պետք է ընդունել որոշակի պայմանական ելակետեր մեր ուսումնասիրությունը ինչ-որ տեղից մեկնարկելու համար, քանի որ գիտելիքը երբեք էլ ներկայում գոյություն չունի առնվազն ավարտուն, ձևավորված և վերջավոր տեսքով[28]: Հակառակ Դյուիի՝ խորհրդածությունների հիմքում պայմանական ելակետերի ընդունմանը, Պիրսն իր աշխատանքներում չի ընդգծում պայմանական հիմքերի կարևորումը մեր դատողությունների կառուցարկման հիմքում, այլ հստակ արձանագրում է, որ ուսումնասիրելիս պետք է ելնել եղած գիտելիքներից ու համոզմունքներից, որքան էլ դրանք սխալական են: Այսպիսի մոտեցումը տրամաբանական է, քանի որ Պիրսը կարծում է, որ յուրաքանչյուր համոզմունք ձևավորվում է նախորդող համոզմունքների հետ նոր ու անհամատեղելի իրողություններ բացահայտելու (կասկածը խթանող գործոններ), դրանց նկատմամբ քննադատական վերաբերմունք դրսևորելու (կասկած) և հակասությունները վերացնելով ավելի հիմնավոր համոզմունք ստանալու միջոցով: Հետևաբար, մեր ունեցած համոզմունքները

---

[27] Նույն տեղում, էջ 172:

[28] Ավելին տե՛ս **Brown M.**, Science and experience: a Deweyan Pragmatist Philosophy of Science, UC San Diego, 2009, էջ 23:

և գիտելիքները արդեն իսկ ձևավորվել են որոշակի քննության արդյունքում, ու թեև դրանք սխալական են, չեն կարող լինել զուտ պայմանական։

Մյուս արձանագրումը վերաբերում է Պիրսի իմացաբանությունում «կասկած» և «սխալականություն» հասկացությունների կողքին վերջինիս կողմից արժեքային և էթիկական բնույթի հարցադրումների և հասկացությունների ուսումնասիրմանը։ Պիրսը, կասկածի և սխալականության հետ, կարևորում է նաև ճանաչողությունում «հույսի» գաղափարը, որին վերաբերվում է որպես որոշակի իմացաբանական արժեքի և որին վերագրում է ճանաչողությունում էական գործոնի դեր։ Այն ցանկություն և ձգտում է հավաստի ու ճշմարիտ արդյունքին հասնելու վերաբերյալ և «հույս» այն հնարավորության հանդեպ, որ մեր ունեցածը գիտելիք է, և այն հնարավոր է ձեռք բերել[29]։ Թեև մեր մեկնարկային համոզմունքներն ու գիտելիքները սխալական են, և սխալականությունը չի հեռանալու ոչ մի տեղ նույնիսկ մեր հետագա ավելի փաստարկված և հավաստի համոզմունքներ ու գիտելիքներ ձեռք բերելու դեպքում, հույսը իմաստավորում է ճանաչողության ողջ գործընթացը և ապահովում է մարդկային բնական մղումն առ ավելի հավաստի իմացություն՝ հուսալով, որ մեր ամեն հաջորդ համոզմունք և գիտելիք կլինեն ավելի հավաստի, քան այս պահին եղածը։ Հույսի առկայությունը ճանաչողությունում պետք է վերածվի նոր բան իմանալու ցանկության։ Պիրսը կարծում է, որ *«սովորելու համար պետք է ցանկանալ սովորել, և այդ ցանկության մեջ չպետք է բավարարվել նրանով, ինչին արդեն հակված ենք մտածելու։ Այստեղից բխում է հետևյալ մաքսիմը. մի խոչընդոտիր հետազոտության (ճանաչողության) ընթացքը»*[30]։ Այս առնչությամբ Պիրսը կարևորում է ինտելեկտուալ համեստության և եղած գիտելիքների նկատմամբ չափավոր կասկածի հնարավորության դերը։ Ինչպես արձանագրում է Պիրսը, եթե չպահպանվի ինտելեկտուալ համեստությունը, եղած իմացությունը կարող է արմատանալ այնքան, որ այն կսկսի խոչընդոտել ու արգելափակել նոր գաղափարների և գիտելիքների ձեռքբերումը. *«Ոչինչ այնքան չի հակադրվում ... փիլիսոփայությանը, որքան ինֆալիբիլիզմը՝ անկախ այն բանից՝ այն զարդարված է կրոնական հանդերձանքո՞վ, թե՞ ներկայանում է իր նոր՝ «գիտական» քողարկմամբ»*[31]։

Չորրորդ արձանագրումը կապված է գիտելիքներ ձեռք բերելու գործընթացում համայնքի դերի կարևորման հետ։ Դեկարտի իմացաբանության քննադատության շրջանակում Պիրսն արձանագրում է, որ Դեկարտի իմացաբանությունը ինդիվիդուալիստական է, որից էլ բխում են Դեկարտի համակարգի մնացյալ խնդիրները։ Գիտելիքի ստացումը համայնքային և մարդկանց համատեղ գործընթաց է։ Այն միավորում է մարդկանց, որոնց կյանքը առաջնորդվում

---

[29] Տե՛ս **Pierce C.S**, Collected Papers, ed. C. Hartshorne, P. Weiss, and A. Burks, V. 1, էջ 150; V. 2., էջ 654-655։

[30] **Peirce C. S.**, Philosophical Writings of Peirce, Dover Publications, p. 55.

[31] Նույն տեղում, էջ 8։

է ճշմարտությունը գտնելու ցանկությամբ, որոնց կյանքը շարժվում է «իրերի խորքը ներթափանցելու մղումով»[32]: Գիտական համայնքի յուրաքանչյուր ներկայացուցիչ, ինչպես նաև գիտական համայնքն ինքնին սխալական են իրենց ճանաչողական կարողություններում և հետազոտական գործընթացներում, սակայն հավանական սխալի մշտական ներկայության գիտակցումը, սովորելու ու ճանաչելու դրական ձգտումը, ինչպես նաև գիտական համայնքի ներկայացուցիչների կողմից յուրաքանչյուր արդյունքի նկատմամբ առողջ քննական վերաբերմունքը (հիմնավորված և չափավոր կասկածի կիրառումը) թույլ են տալիս համայնքին արձանագրել տվյալ պահի համար որոշակի բազային իմացություն հետագա կշռադատությունների ու եզրահանգումների համար: *«Մեկ ժամանակաշրջանի գիտական համայնքի սխալները ուղղվում են մեկ այլ ժամանակաշրջան ներկայացնող գիտական համայնքի կատարելագործված հմտությունների և իմացության միջոցով»*[33]: Այսպիսի մոտեցման դեպքում, ըստ Պիրսի, ոչ միայն մեր գիտելիքներն են աճում, այլև ժամանակի ընթացքում աճում են դրանց հիմնավորվածության մակարդակը և վավերականությունը, քանի որ համայնքը անընդհատ ստուգում է առկա գիտելիքները՝ դրանցում սխալների նույնականացման և սխալներից մաքրելու նպատակով:

Վերլուծության արդյունքում կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Պիրսի ֆալիբիլիզմի հիմքում ընկած է սուբյեկտի ճանաչողական կարողությունների և ճանաչողության մեթոդի սահմանափակումները: Սահմանափակումները մեղմելու և որոշակիորեն կառավարելի դարձնելու համար Պիրսն ընդգծում է գիտական ճանաչողությունում գիտական համայնքի դերն ու ակտիվ գործունեությունը: Այսպիսի մոտեցումը Պիրսի ֆալիբիլիզմը համատեղելի է դարձնում օբյեկտիվության գաղափարի հետ:

2. Պիրսյան ֆալիբիլիզմը ոչ միայն ընդունում է գիտելիքի սխալական և ժամանակավոր բնույթը, այլև ժամանակավորությունը (փոփոխման ենթակա լինելը) դիտարկում է որպես դրական միտում, գիտական հետազոտությունը խթանող շարժիչ ուժ, որը խրախուսում է քննական ու չափավոր սկեպտիկական մոտեցումը ողջ իմացության նկատմամբ, գիտելիքների և համոզմունքների շարունակական քննումն ու վերանայումը, որի արդյունքում գիտելիքը քարացած և անփոփոխ արդյունքից վերածվում է դինամիկ գործընթացի:

3. Բավարար պատճառ ունեցող չափավոր (իրական) կասկածի պիրսյան պահանջը բխում է Դեկարտի դոգմատիկ-ֆունդամենտալիստական հայացքների և մեթոդաբանական սկեպտիցիզմի քննադատությունից: Այն կարևորում է մտքի ու քննության ելակետում եղած իրական համոզմունքների ու գիտելիքների ընդունումը կամ, այլ կերպ ասած, հետազոտության հիմքում սպեկուլյա-

---

[32] Նույն տեղում, էջ 44:

[33] Chysogonus O., նշվ. աշխ. , էջ 32:

տիվ և հիմնավորումներից զուրկ ելակետային դատողությունների բացառումը: Կարելի է արձանագրել, որ պիրսյան ֆալիբիլիզմի ձևավորման և զարգացման հիմքում ընկած են (1) բավարար պատճառ ունեցող չափավոր կասկածի պահանջի ընդունումը և (2) գիտելիքների ու համոզմունքների հիմքում բացարձակ իմացաբանական հիմքերի որոնման պահանջից հրաժարումը:

4. Պիրսի ֆալիբիլիստական իմացաբանությունը նաև ներառում է որոշակի էթիկական և արժեքային բաղադրիչներ: Ճշմարտությանը, ինչպես նաև որոշակի հիմնավոր գիտելիքներին հասնելու ներքին մղումը և հույսը հնարավոր են դարձնում ու երաշխավորում են ճանաչողության հնարավորությունն ընդհանրապես, իսկ ինտելեկտուալ համեստության պահանջը նպատակ ունի ապահովելու մտքերի սահունությունը՝ թույլ չտալով որևէ գիտելիքի կամ համոզմունքի կարծրացում մեր իմացությունում:

5. Պիրսի ֆալիբիլիզմը ոչ խիստ, չափավոր իմացաբանական դիրքորոշում է, որը, անկախ հիմնավորվածության աստիճանից, մեր բոլոր համոզմունքները և գիտելիքները համարում է սխալական, ժամանակավոր, ինչպես նաև սովորելու, բարելավման գործընթացում՝ ենթակա վերանայման ու փոփոխման: Այսպիսի մոտեցումը թույլ է տալիս Պիրսին խուսափել դոգմատիզմի, ֆունդամենտալիզմի, ինֆալիբիլիզմի և ծայրահեղ սկեպտիցիզմի սահմանափակություններից: Միևնույն ժամանակ, ֆալիբիլիզմի շրջանակում Պիրսը չի կարողանում լուծել գիտելիքի հիմնավորման և դեմարկացիայի խնդիրները: Ֆալիբիլիստական իմացաբանության դիրքերից այս խնդիրների հնարավոր լուծումների հետագա քննությունը կնպաստի հայեցակարգի զարգացման և վերաիմաստավորման ժամանակակից փորձերին:

**ДАВИД АКЕЛЯН – *Развитие фаллибилизма в философии Чарльза Пирса.*–** В статье рассматриваются причины, аргументы, критика предшествующих эпистемологических позиций и тенденции развития фаллибилизма в философии Чарльза Пирса. Пирсовский фаллибилизм является, прежде всего, результатом признания и попытки преодоления ограничений познавательных способностей субъекта и метода познания, что наиболее отчетливо проявляется в его критике картезианских догматико-фундаменталистских взглядов и методологического скептицизма. Можно предположить, что в основе формирования и развития фаллибилизма Пирса лежат: (1) отказ от метода всеобщего и произвольного сомнения, (2) принятие требования умеренного сомнения, основанного на достаточных причинах, и (3) отказ от поиска абсолютных эпистемологических оснований для знания и убеждений. Хотя подобная эпистемологическая позиция приводит к признанию ошибочности всех знаний и когнитивных способностей (фаллибилизму), она переосмысляет познание, а особенно научное познание, как коллективный и межсубъективный динамический процесс, способный смягчать субъективный фактор и обеспечивать рост знаний, не допуская закостенения убеждений и знаний в структуре познания. По мнению автора, фаллибилизм Пирса представляет собой умеренную эпистемологическую позицию, которая позволяет избежать догматизма, фундаментализма, инфаллибилизма и крайних форм скептицизма с их максималистскими требованиями и концептуальными ограничениями по отношению к знанию.

**Ключевые слова:** *Чарльз Пирс, фаллибилизм, догматизм, фундаментализм, ошибочность знания, обоснование знания, преодоление субъективного, интеллектуальная скромность*

**DAVIT AKELYAN** – ***The Development of Fallibilism in the Philosophy of Charles Peirce.***– The article examines the reasons, arguments, critiques of earlier epistemological positions, and the developmental tendencies of fallibilism in the philosophy of Charles Peirce. Peircean fallibilism is primarily the result of recognizing and attempting to overcome the limitations of the subject's cognitive capacities and the methods of inquiry, which is most evident in Peirce's critique of Cartesian dogmatic-fundamentalist views and methodological skepticism. It can be argued that the formation and development of Peirce's fallibilism rest on three key principles: (1) the rejection of the method of universal and arbitrary doubt, (2) the acceptance of the requirement of moderate doubt grounded in sufficient reason, and (3) the renunciation of the demand for absolute epistemological foundations of knowledge and belief. Although this epistemological stance leads to the recognition of the fallibility of all knowledge and cognitive capacities, it reconceptualizes inquiry, and particularly scientific inquiry, as a communal and intersubjective dynamic process that can mitigate subjectivity and foster the growth of knowledge, while preventing the ossification of beliefs and knowledge within cognition. According to the author, Peirce's fallibilism is a moderate epistemological position that avoids dogmatism, fundamentalism, infallibilism, and radical skepticism, thereby rejecting maximalist demands and conceptual limitations placed upon knowledge.

**Key words:** *Charles Peirce, fallibilism, dogmatism, fundamentalism, fallibility of knowledge, justification of knowledge, overcoming subjectivity, intellectual humility*

**References**

Brown M., Science and experience: a Deweyan Pragmatist Philosophy of Science, UC San Diego, 2009.

Chysogonus O., Peirce's fallibilism: A thematic analysis and the revisitation of the origins of fallibilism, AMAMIHE: Journal of Applied Philosophy, ISSN: 1597 – 0779, Vol. 19, No. 4, 2021, pp. 18-35.

Cooke E., Peirce, Fallibilism, and the Science of Mathematics, Philosophia Mathematica, 11(2), 2003, pp. 158–175.

Frankfurt H., Peirce's Notion of Abduction // Journal of Philosophy, 55, 1958, pp. 593–596.

Haack S., Descartes, Peirce and the cognitive community // The Monist, vol. 65, no. 2, 1982, pp. 156–181.

Haack S., Fallibilism and Necessity // Synthese, vol. 41, no. 1, 1979, pp. 37-63.

Hatfield G., René Descartes // The Stanford Encyclopedia of Philosophy, Stanford University, Edward N. Zalta & Uri Nodelman (eds.), Summer 2024 edition, https://plato.stanford.edu/archives/sum2024/entries/descartes/ (Accessed: 01.09.2025).

Peirce C. S., Collected Papers, ed. C. Hartshorne, P. Weiss, and A. Burks, Harvard University Press, Volumes 1-8, Cambridge, 1931-1958.

Peirce C. S., Philosophical Writings of Peirce, Dover Publications, New York, 1955.

Peirce C. S., Some consequences of four incapacities // The Journal of Speculative Philosophy, vol. 2, no. 3, 1868, pp. 140–157.

Pojman L. P., What can We Know? An introduction to the Theory of Knowledge, Belmont: Wadsworth, 2001.

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 62-70
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.062

# ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂՑԿԵՂ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՕՐԻՆԱԿՈՎ

ԳԱՅԱՆԵ ՇԱՎԵՐԴՅԱՆ*, ԱՆԱՀԻՏ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**
*Երևանի պետական համալսարան*

Քաղցկեղային հիվանդություններն արդի բժշկության և հոգեբանության կարևորագույն խնդիրներից են՝ պայմանավորված դրանց լայն տարածվածությամբ, ծանր ընթացքով, սրընթաց զարգացմամբ և մարդու կյանքի տարբեր ոլորտների վրա ունեցած բազմակողմանի ազդեցությամբ: Քաղցկեղի ախտորոշումը հաճախ ուղեկցվում է ուժեղ հոգեբանական լարվածությամբ, տագնապով, անորոշությամբ և ապագայի վերաբերյալ պատկերացումների փոփոխությամբ: Այս համատեքստում առանձնահատուկ կարևորություն են ձեռք բերում հիվանդության նկատմամբ վերաբերմունքի և ժամանակային հեռանկարի ուսումնասիրությունները, քանի որ դրանք անմիջականորեն կապված են հիվանդի հուզական վիճակի, հոգեբանական հարմարման, կյանքի որակի և կյանքի իմաստավորման գործընթացների հետ:
Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են քաղցկեղ ունեցող անձանց ժամանակային հեռանկարի առանձնահատկությունները, հիվանդության նկատմամբ վերաբերմունքի ձևերը և դրանց միջև առկա փոխկապակցվածությունները: Բացի այդ, ուշադրություն է դարձվել նաև սեռային տարբերությունների բացահայտմանը և դրանց հոգեբանական առանձնահատկությունների վերլուծությանը: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ քաղցկեղ ունեցող անձանց շրջանում առկա է փոխկապակցվածություն ժամանակային հեռանկարի առանձնահատկությունների և հիվանդության նկատմամբ վերաբերմունքի ձևերի միջև: Միաժամանակ բացահայտվել են սեռային տարբերություններ ինչպես ժամանակային հեռանկարի, այնպես էլ հիվանդության նկատմամբ վերաբերմունքի ձևերում: Մանա-

* **Գայանե Շավերդյան –** հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ
**Гаяне Шавердян –** доктор психологических наук, профессор, заведующая кафедрой социальной и клинической психологии ЕГУ
**Gayane Shaverdyan**– Professor, Dr. of Psychology, Head of the YSU Chair of Social and Clinical Psychology
Էլ. փոստ՝ gayaneshahverdyan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0000-0002-9078-9740
** **Անահիտ Միքայելյան –** ԵՊՀ սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի դասախոս
**Анаит Микаелян** – преподаватель кафедры социальной и клинической психологии ЕГУ
**Anahit Mikayelyan** – Lecturer at the YSU Chair of Social and Clinical Psychology
Էլ. փոստ՝ anahitmikayelyan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0009-0006-9253-2646

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.05.2026
Գրախոսվել է՝ 31.05.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

վորապես, տղամարդկանց շրջանում ավելի քիչ էր արտահայտված ապագայի կողմնորոշումը, ինչպես նաև առավել նկատելի էին հիվանդության նկատմամբ տագնապային և պարանոյալ վերաբերմունքի միտումները: Կանանց շրջանում, ընդհակառակը, ավելի արտահայտված էին ապագայի կողմնորոշումը, սոցիալական ակտիվությունը և էրգոպաթիկ վերաբերմունքը:

**Բանալի բառեր** – *քաղցկեղային հիվանդություն ունեցող անձ, ժամանակային հեռանկար, հիվանդության նկատմամբ վերաբերմունք*

Քաղցկեղը դիտարկվում է որպես բազմամակարդակ երևույթ՝ ներառելով ֆիզիկական, հուզական, կոգնիտիվ և իմաստային մակարդակները: Այն, լինելով բարձր մահացության և հոգեբանական զգալի ազդեցություն ունեցող հիվանդություն, ձևավորում է բազմազան պատկերացումներ, որոնք պայմանավորված են սոցիալական, մշակութային և անհատական գործոններով: Հիվանդության անձնական իմաստավորումը պայմանավորում է պաշտպանական մեխանիզմների և հաղթահարման ռազմավարությունների ընտրությունը[1]: Ընդ որում, հիվանդության նկատմամբ սուբյեկտիվ փորձառությունները կարող են և՛ նպաստել ադապտացիային ու հոգեբանական վերականգնմանը, և՛ բարդացնել հիվանդության ընթացքը, ուստի հիվանդի վերաբերմունքի ուսումնասիրությունն ունի կլինիկական և հոգեբանական կարևոր նշանակություն[2]: Հիվանդության մասին պատկերացումները, որպես սուբյեկտիվ փորձառություն, կարող են նպաստել անհատի ինքնակարգավորմանը[3]: Բացահայտված է նաև, որ քաղցկեղի ախտորոշումից հետո հիվանդները հաճախ ապրում են ինտենսիվ հույզեր՝ վախ, անհանգստություն, զայրույթ, որոնց ինտենսիվությունը պայմանավորված է բժշկական և սոցիալ-ժողովրդագրական գործոններով[4]: Հետազոտողները նաև առաջարկում են հիվանդության ընկալման մոդել, համաձայն որի՝ ձևավորվող կոգնիտիվ և հուզական արձագանքները կարող են ազդել բուժման գործընթացի, հիվանդության ընթացքի և հոգեբանական ադապտացիայի վրա[5]:

---

[1] Տե՛ս **Shtrahova, A. V., & Arslanbekova, E. V.** (2011). Motivational component of the internal picture of the disease as a factor of adherence to therapy in patients with somatic diseases with a vital threat. Bulletin of the South Ural State University, Series “Psychology”, 29(246), 76–82:

[2] Տե՛ս **Козлова, Н. В., & Андросова, Т. В.** (2010). Социально-психологическое сопровождение онкологических больных. Вестник Томского государственного университета, (335), 142–147:

[3] Տե՛ս **Харьковский, А. Н.** (2015). Представления детей о болезни и их опосредующая роль в терапевтической работе с болеющими детьми. Национальный психологический журнал, 3(19), 105–116. https://doi.org/10.11621/npj.2015.0300

[4] Տե՛ս **Вагайцева, М. В., Чулкова, В. А., Карпова, Э. Б., & Леоненкова, С. А.** (2015). Психологические исследования в онкологии. Психология. Психофизиология, 8(3), 28–35:

[5] Տե՛ս **Ashley, L., Marti, J., Jones, H., Velikova, G., & Wright, P.** (2015). Illness perceptions within 6 months of cancer diagnosis are an independent prospective predictor of health-related quality of life 15 months post-diagnosis. Psycho-Oncology, 24, 1463–1470. https://doi.org/10.1002/pon.3812

Հիվանդության նկատմամբ վերաբերմունքը ներառում է կոգնիտիվ, հուզական և մոտիվացիոն-վարքային բաղադրիչներ: Ընդ որում, կոգնիտիվ բաղադրիչը ընդգրկում է հիվանդության մասին պատկերացումները, հուզականը՝ զգացմունքային արձագանքները, իսկ մոտիվացիոն-վարքայինը՝ ադապտացիոն և հաղթահարման ռազմավարությունները[6]: Այս բաղադրիչների ֆունկցիոնալությունը անհնար է ուսումնասիրել առանց հաշվի առնելու ժամանակային հեռանկարի առանձնահատկությունները[7], քանի որ քաղցկեղային հիվանդությունը կարող է դիտարկվել ճգնաժամային իրավիճակի տեսանկյունից, իսկ վերջինս ուղեկցվում է անորոշությամբ, ժամանակի ընկալման խախտմամբ:

Ժամանակային հեռանկարի առավել մշակված հայեցակարգը պատկանում է ամերիկացի հայտնի հոգեբան Զիմբարդոյին, համաձայն որի՝ ժամանակային հեռանկարը կարելի է հասկանալ որպես ոչ գիտակցված գործընթաց, որով մենք բաշխում ենք մեր ապրած փորձառությունները անցյալի, ներկայի կամ ապագայի ժամանակային կատեգորիաների մեջ[8]: Հաջորդական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այլ գործոններին զուգահեռ՝ ժամանակային հեռանկարը նշանակալի ազդեցություն ունի առողջությանը նպաստող[9] և նույնիսկ կանխարգելիչ վարքի ձևավորման վրա[10]:

Այսպիսով, հիվանդությունը ձևավորում է առանձնահատուկ հոգեբանական փորձառությունների համակարգ, որն ազդում է անձի հուզական, իմաստային և ժամանակի ընկալման վրա: Ուստի անհրաժեշտաբար հարց է ծագում՝ արդյո՞ք առկա է փոխկապակցվածություն ժամանակային հեռանկարի և հիվանդության այդպիսի վերաբերմունքի միջև, և հնարավո՞ր է բացահայտել այդ կապի գենդերային բնութագրերը, եթե դրանք առկա են:

Հետազոտությունն իրականացվել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն»-ի դեղորայքային ուռուցքաբանության բաժանմունքում, որին մասնակցել են 40–60 տարեկան 70 բուժառու՝ 35 կին և 35 տղամարդ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

---

[6] Տե՛ս **Семиглазова, Т. Ю., Ткаченко, Г. А., & Чулкова, В. А.** (2016). Психологические аспекты лечения онкологических больных. Злокачественные опухоли, (Спецвыпуск 1), 54–58. https://doi.org/10.18027/2224–5057–2016–4s1-54–58

[7] Տե՛ս **Харьковский, А. Н.** (2015). 105–116:

[8] Տե՛ս **Zimbardo, P. G., & Boyd, J. N.** (1999). Putting time in perspective: A valid, reliable individual-differences metric. Journal of Personality and Social Psychology, 77(6), 1271–1288:

[9] Տե՛ս **Anagnostopoulos, F., & Griva, F.** (2012). Exploring time perspective in Greek young adults: Validation of the Zimbardo Time Perspective Inventory and relationships with mental health indicators. Social Indicators Research, 106, 41–59. https://doi.org/10.1007/s11205-011-9792-y

[10] Տե՛ս **Wagner, C. V., Semmler, C., Power, E., & Good, A.** (2010). What matters when deciding whether to participate in colorectal cancer screening? The moderating role of time perspective. Journal of Applied Biobehavioral Research, 15(1), 20–30:

- Զիմբարդոյի ժամանակային հեռանկարի հարցարան։
- «Անավարտ նախադասություններ» պրոյեկտիվ մեթոդ (Սաքս և Լևի)։
- «ЛОБИ» (հիվանդության նկատմամբ վերաբերմունքի հարցարան)։

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները ենթարկվել են մաթեմատիկական-վիճակագրական վերլուծության, որի հիման վրա իրականացվել է արդյունքների մեկնաբանումը։ Ստացված տվյալները ներկայացված են ստորև։

*Աղյուսակ 1*

**Ժամանակային հեռանկարի կառուցվածքային առանձնահատկությունները ըստ սեռի**

| Չափանիշ | Տղամարդ (Միջին ± Ստ.շեղում) | Կին (Միջին ± Ստ.շեղում)) |
|---|---|---|
| Անցյալ բացասական | 3.80 ± 0.20 | 3.86 ± 0.20 |
| Անցյալ դրական | 3.70 ± 0.30 | 3.78 ± 0.30 |
| Ներկա ֆատալիստական | 4.00 ± 0.10 | 3.78 ± 0.20 |
| Ներկա հեդոնիստական | 3.90 ± 0.10 | 3.67 ± 0.40 |
| Ապագա կողմնորոշում | 3.30 ± 0.30 | 4.00 ± 0.20 |

Համաձայն աղյուսակ 1-ի տվյալների՝ տղամարդ հետազոտվողների շրջանում առավել արտահայտված են ներկա հեդոնիստական և ներկա ֆատալիստական ժամանակային կողմնորոշումները։ Ստացված արդյունքները վկայում են, որ նրանք հիմնականում կենտրոնացած են ներկա պահի վրա՝ առաջնահերթություն տալով անմիջական հաճույքներին և ընթացիկ փորձառություններին, միաժամանակ խուսափելով երկարաժամկետ պլանավորումից և մեծ ջանք պահանջող գործողություններից։ Այս միտումը թույլ է տալիս ենթադրել, որ տղամարդ հետազոտվողների շրջանում ապագայի պլանավորման դերը նվազեցված է, և ապագան հաճախ ընկալվում է որպես անորոշ կամ ոչ լիարժեք վերահսկելի ոլորտ։

Հակառակը, կին հետազոտվողների շրջանում գերակշռում են ապագայի կողմնորոշումը և անցյալ բացասական ժամանակային հեռանկարը։ Արդյունքները ցույց են տալիս, որ նրանք առավելապես առաջնորդվում են նպատակային մտածողությամբ, կարևորում են պատասխանատվությունը և սեփական գործողությունների հետևանքների կանխատեսումը։ Կանայք հակված են ներդնելու ջանքեր և ժամանակ՝ ապագա նպատակներին հասնելու համար, ինչպես նաև դրսևորում են առողջությանը նպաստող վարքագիծ։ Միևնույն ժամանակ, նրանց վարքագծային և որոշումների կայացման գործընթացներում զգալի դեր ունեն անցյալի փորձառությունները, հատկապես նախկին բացասական փորձերը, որոնք նպաստում են զգուշավորության, նոր իրավիճակների նկատմամբ վերապահ վերաբերմունքի և որոշ դեպքերում՝ անհանգստության դրսևորմանը։

Ստացված արդյունքները բացատրվում են այն բանով, որ տղամարդ հետազոտվողները առավել ալեքսիտիմիկ են և միտված չեն ապագայում գործողությունների պլանավորմանը: Համեմատական վերլուծության արդյունքները փաստում են, որ քաղցկեղային հիվանդություն ունեցող տղամարդ հետազոտվողների շրջանում ապագայի կողմնորոշումը համեմատաբար թույլ է արտահայտված, քան կին հետազոտվողների շրջանում: Վերջիններիս ավելի բնորոշ են նպատակաուղղվածությունը, պլանավորման նկատմամբ պատասխանատու մոտեցումը և սեփական ապագայի կառուցման ակտիվ դիրքորոշումը: Նրանք պատրաստ են հաղթահարելու դժվարությունները և անհրաժեշտության դեպքում կատարելու զիջումներ՝ երկարաժամկետ նպատակների իրականացման համար:

***Աղյուսակ 2***

**Քաղցկեղային հիվանդություն ունեցող անձանց հիվանդության նկատմամբ վերաբերմունքի տիպերի բաշխումը (%) ըստ սեռի**

| Հիվանդության նկատմամբ վերաբերմունքի տիպերը | Տղամարդիկ (%) | Կանայք (%) |
|---|---|---|
| Պարանոյալ | 37% | - |
| Տագնապային | 34% | - |
| Ներդաշնակ | 29% | - |
| Էրգոպաթիկ | - | 54% |
| Էյֆորիկ | - | 29% |
| Անոզոգնոստիկ | - | 20% |

Համաձայն Բեխտերևի ինստիտուտի անձնային հարցարանի՝ հիվանդության նկատմամբ վերաբերմունքը պարզելուն ուղղված մեթոդիկայի (ЛОБИ) արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ տղամարդ հետազոտվողների շրջանում ավելի հաճախ հանդիպում էին պարանոյալ (37%) և տագնապային (34%) վերաբերմունքները հիվանդության նկատմամբ: Պարանոյալ վերաբերմունք ունեցող հետազոտվողները հակված էին հիվանդությունը դիտարկելու որպես արտաքին չարամիտ ազդեցության արդյունք, անվստահություն էին ցուցաբերում դեղերի, բուժման ընթացակարգերի և բժշկական անձնակազմի նկատմամբ՝ բուժման բարդությունները վերագրելով բժիշկների անփութությանը կամ չարամտությանը: Տագնապային վերաբերմունքը դրսևորվում էր հիվանդության ընթացքի, հնարավոր բարդությունների և բուժման արդյունավետության վերաբերյալ մշտական անհանգստությամբ, ինչպես նաև բուժման նոր մեթոդների և մասնագիտական կարծիքների ակտիվ որոնմամբ: Միևնույն ժամանակ, տղամարդ հետազոտվողների 29%-ի մոտ արձանագրվեց ներդաշնակ վերաբերմունք հիվանդության նկատմամբ, որը բնութագրվում էր սեփական վիճակի համեմատաբար սթափ գնահատմամբ, բուժման գործընթացին աջակցելու պատրաստակամությամբ և շրջապատին չծանրաբեռնելու ձգտմամբ:

Կին հետազոտվողների շրջանում առավել արտահայտված էր էրգոպաթիկ վերաբերմունքը (54%), որը բնութագրվում էր «հիվանդությունից փախուստ աշխատանքով» դիրքորոշմամբ: Նույնիսկ ծանր հիվանդության պայմաններում նրանք փորձում էին պահպանել ակտիվությունը, շարունակել աշխատանքը և կենտրոնանալ բուժման գործընթացի վրա: Բացի այդ, կին հետազոտվողների 29%-ի մոտ նկատվեց էյֆորիկ վերաբերմունք, որն արտահայտվում էր անհիմն լավատեսությամբ, հիվանդության թերագնահատմամբ և բուժման նկատմամբ անլուրջ վերաբերմունքով, իսկ 20%-ի մոտ արձանագրվեց անոզոգնոստիկ վերաբերմունք, որը դրսևորվում էր հիվանդության և դրա հետևանքների ժխտմամբ ու բուժումից հրաժարվելու միտումով:

Այսպիսով, տղամարդ և կին հետազոտվողների շրջանում հիվանդության նկատմամբ վերաբերմունքի ձևերը զգալիորեն տարբերվում էին, ինչը վկայում է հիվանդության հոգեբանական ընկալման և հաղթահարման ռազմավարությունների սեռային առանձնահատկությունների մասին: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ արձանագրված տարբերությունները կարող են պայմանավորվել կնոջ սոցիալական դերի ծանրաբեռնվածությամբ, կարող են նաև ունենալ սոցիալ-մշակութային բացատրություն, որոնք էլ ազդում են հիվանդության նկատմամբ վերաբերմունքի ձևավորման վրա: Ընդ որում, տղամարդ հետազոտվողների պարանոյալ վերաբերմունքը կարող է բացատրվել այն բանով, որ բարձր տագնապայնության պայմաններում տղամարդիկ հակված են ռացիոնալացման, որն ընդունում է միստիկ մտածության յուրահատուկ ձև:

Նախորդիվ ստացված արդյունքների մեկնաբանությունը հանգեցրեց այն եզրակացության, որ անհրաժեշտ է դրանց ստուգում և հաստատում պրոյեկտիվ մեթոդի կիրառմամբ, որի նպատակով ընտրվեց «Անավարտ նախադասություններ» մեթոդիկան: Համաձայն ստացված արդյունքների՝ տղամարդ հետազոտվողների 80%-ը սեփական հաջողություններն ու անհաջողությունները կապում էր ճակատագրի կամ արտաքին ուժերի հետ, և միայն 20%-ն էր պատասխանատվությունը վերագրում սեփական գործողություններին: 90%-ի հիմնական մտահոգությունները կապված էին հիվանդության և ֆիզիկական վիճակի հետ: 80%-ը խուսափում էր ապագայի մասին խոսելուց, իսկ պատասխաններում հաճախ հանդիպում էին «ինչ լինելու է, կլինի» տիպի արտահայտություններ: Տղամարդկանց մեծ մասը չէր արտահայտում մեղքի զգացում կամ ափսոսանք անցյալի գործողությունների վերաբերյալ: Մինչդեռ կին հետազոտվողների 80%-ը, հակառակը, պատասխանատվությունը վերագրում էր սեփական գործողություններին և կարևորում պայքարելու անհրաժեշտությունը: Նրանց հիմնական մտահոգությունները կապված էին ապաքինման, նախկին կենսակերպին վերադառնալու և ընտանիքի հետ լիարժեք կյան-

քի պահպանման հետ: 80%-ը ապագայի վերաբերյալ ուներ դրական պատկերացումներ, թեև առկա էին նաև հարազատներին ցավ պատճառելու, կանացիության կամ ինքնուրույնության կորստի հետ կապված վախեր:

*Աղյուսակ 3*

**Ժամանակային հեռանկարի և հիվանդության նկատմամբ վերաբերմունքի փոխկապակցվածությունը քաղցկեղային հիվանդություն ունեցող անձանց շրջանում ըստ սեռի**

| Սեռ | Փոփոխականների հարաբերություն | Կոռելյացիա (r, p) |
|---|---|---|
| Տղամարդիկ | Ժամանակային հեռանկար – պարանոյալ վերաբերմունք | r = 0.30, p < 0.01 ** |
| Կանայք | Ժամանակային հեռանկար – էրգոպաթիկ վերաբերմունք | r = 0.30, p < 0.01 ** |

Ստացված տվյալների վիճակագրական վերլուծությունից պարզվեց, որ թե՛ տղամարդ, թե՛ կին հետազոտվողների շրջանում առկա է կոռելյացիոն կապ ժամանակային հեռանկարի և հիվանդության նկատմամբ վերաբերմունքի միջև, ինչպես նաև վեր է հանվել գենդերային առանձնահատկությունն այդ կապերի միջև: Ինչպես տեսնում ենք, տղամարդ հետազոտվողների մոտ արձանագրվել է դրական կոռելյացիոն կապ (r=0.3, p<0.01), ինչը վկայում է, որ որքան քիչ է միտվածությունները դեպի ապագա, այնքան ավելի մեծ է հիվանդության նկատմամբ պարանոյալ վերաբերմունքի միտվածությունը: Տղամարդկանց շրջանում առավել հաճախ դիտարկվում էր պարանոյալ վերաբերմունք, որն ուղեկցվում էր բուժման գործընթացի և բժշկական անձնակազմի նկատմամբ անվստահությամբ: Նրանց շրջանում գերակշռում էր ներկայի կողմնորոշումը, իսկ ապագայի վերաբերյալ պատկերացումները հաճախ անորոշ և բացասական բնույթի էին:

Կին հետազոտվողների շրջանում արձանագրվեց դրական կոռելյացիոն կապ (r=0.3, p<0.01), ինչը վկայում է հակադարձ փոխկապվածության մասին: Կանանց շրջանում որքան արտահայտված է էրգոպաթիկ վերաբերմունքի միտվածությունը, այդքան բարձր է ապագայի կողմնորոշումը: Ապագայի նրանց պատկերացումները հիմնականում դրական էին և կապված էին ապաքինման, ընտանիքի և ինքնուրույնության պահպանման հետ:

Այսպիսով, հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ քաղցկեղային հիվանդություն ունեցող անձանց շրջանում առկա են արտահայտված սեռային տարբերություններ ժամանակային հեռանկարի և հիվանդության նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև դրանց փոխկապակցվածության մակարդակում: Որպես հետագա հետազոտությունների վարկած կարելի է առաջադրել այն ենթադրությունը, որ ժամանակային հեռանկարի փոփոխությանը և հիվանդության ընթացքի փուլային առանձնահատկություններին զուգահեռ՝

փոփոխության է ենթարկվում նաև հիվանդության նկատմամբ վերաբերմունքը:

**ГАЯНЕ ШАВЕРДЯН, АНАИТ МИКАЕЛЯН** – ***Взаимосвязь временной перспективы и отношения к болезни на примере лиц с онкологическими заболеваниями.*** – Онкологические заболевания являются одной из важнейших проблем современной медицины и психологии, что обусловлено их широкой распространённостью, тяжёлым течением, стремительным развитием и многогранным влиянием на различные сферы жизни человека. Диагноз рака часто сопровождается сильным психологическим напряжением, тревогой, неопределённостью и изменением представлений о будущем. В данном контексте особую значимость приобретают исследования отношения к заболеванию и временной перспективы, поскольку они непосредственно связаны с эмоциональным состоянием пациента, психологической адаптацией, качеством жизни и процессами осмысления жизни.

В рамках данного исследования были изучены особенности временной перспективы у лиц с онкологическими заболеваниями, формы отношения к болезни, а также существующие взаимосвязи между ними. Кроме того, внимание было уделено выявлению гендерных различий и анализу их психологических особенностей. Результаты анализа показали, что у лиц с онкологическими заболеваниями существует взаимосвязь между особенностями временной перспективы и формами отношения к болезни. Одновременно были выявлены гендерные различия как во временной перспективе, так и в формах отношения к заболеванию. В частности, у мужчин была менее выражена ориентация на будущее, а также более заметны тревожные и параноидальные тенденции отношения к болезни. У женщин, напротив, более выраженными оказались ориентация на будущее, социальная активность и эргопатическое отношение к заболеванию.

**Ключевые слова:** *человек с онкологическим заболеванием, временная перспектива, отношение к болезни*

**GAYANE SHAVERDYAN, ANAHIT MIKAYELYAN** – ***The Interrelationship Between Time Perspective and Attitude Toward Illness in Individuals with Cancer.*** – Cancer diseases are among the most significant problems in modern medicine and psychology due to their widespread prevalence, severe course, rapid progression, and multifaceted impact on various spheres of human life. A cancer diagnosis is often accompanied by intense psychological stress, anxiety, uncertainty, and changes in perceptions about the future. In this context, the study of attitudes toward illness and time perspective becomes particularly important, as these factors are directly related to the patient's emotional state, psychological adjustment, quality of life, and processes of meaning-making.

Within the framework of this study, the characteristics of time perspective in individuals with cancer, the forms of attitudes toward illness, and the interrelations between them were examined. In addition, attention was paid to identifying gender differences and analyzing their psychological characteristics. The results of the analysis revealed that there is a relationship between the characteristics of time perspective and the forms of attitudes toward illness among individuals with cancer. At the same time, gender differences were identified both in time perspective and in attitudes toward illness. In particular, men demonstrated a lower level of future orientation and more pronounced anxious and paranoid tendencies in their attitudes toward illness. Women, in contrast, showed stronger future orientation, social activity, and ergopathic attitudes toward illness.

**Key words:** *person with cancer, time perspective, attitude toward illness*

**Գրականության ցանկ / References**


Вагайцева, М. В., Чулкова, В. А., Карпова, Э. Б., & Леоненкова, С. А. (2015). Психологические исследования в онкологии. Психология. Психофизиология, 8(3), 28–35. / Vagaytseva, M. V., Chulkova, V. A., Karpova, E. B., & Leonenkova, S. A. (2015). Psikhologicheskie issledovaniya v onkologii. Psikhologiya. Psikhofiziologiya, 8(3), 28–35.

Козлова, Н. В., & Андросова, Т. В. (2010). Социально-психологическое сопровождение онкологических больных. Вестник Томского государственного университета, (335), 142–147. / Kozlova, N. V., & Androsova, T. V. (2010). Sotsialno-psikhologicheskoe soprovozhdenie onkologicheskikh bolnykh. Vestnik Tomskogo gosudarstvennogo universiteta, (335), 142–147.

Семиглазова, Т. Ю., Ткаченко, Г. А., & Чулкова, В. А. (2016). Психологические аспекты лечения онкологических больных. Злокачественные опухоли, (Спецвыпуск 1), 54–58. https://doi.org/10.18027/2224–5057–2016–4s1-54–58 / Semiglazova, T. Yu., Tkachenko, G. A., & Chulkova, V. A. (2016). Psikhologicheskie aspekty lecheniya onkologicheskikh bolnykh. Zlokachestvennye opukholi, (Spetsvypusk 1), 54–58. https://doi.org/10.18027/2224-5057-2016-4s1-54-58

Харьковский, А. Н. (2015). Представления детей о болезни и их опосредующая роль в терапевтической работе с болеющими детьми. Национальный психологический журнал, 3(19), 105–116. https://doi.org/10.11621/npj.2015.0300 / Kharkovskiy, A. N. (2015). Predstavleniya detey o bolezni i ikh oposreduyushchaya rol v terapevticheskoy rabote s boleyushchimi det'mi. Natsionalnyy psikhologicheskiy zhurnal, 3(19), 105–116. https://doi.org/10.11621/npj.2015.0300

Anagnostopoulos, F., & Griva, F. (2012). Exploring time perspective in Greek young adults: Validation of the Zimbardo Time Perspective Inventory and relationships with mental health indicators. Social Indicators Research, 106, 41–59. https://doi.org/10.1007/s11205-011-9792-y

Ashley, L., Marti, J., Jones, H., Velikova, G., & Wright, P. (2015). Illness perceptions within 6 months of cancer diagnosis are an independent prospective predictor of health-related quality of life 15 months post-diagnosis. Psycho-Oncology, 24, 1463–1470. https://doi.org/10.1002/pon.3812

Shtrahova, A. V., & Arslanbekova, E. V. (2011). Motivational component of the internal picture of the disease as a factor of adherence to therapy in patients with somatic diseases with a vital threat. Bulletin of the South Ural State University, Series “Psychology”, 29(246), 76–82.

Wagner, C. V., Semmler, C., Power, E., & Good, A. (2010). What matters when deciding whether to participate in colorectal cancer screening? The moderating role of time perspective. Journal of Applied Biobehavioral Research, 15(1), 20–30.

Zimbardo, P. G., & Boyd, J. N. (1999). Putting time in perspective: A valid, reliable individual-differences metric. Journal of Personality and Social Psychology, 77(6), 1271–1288.

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 71-83
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.071

# ՊԵՐՄԵՆԹԱԼԻԶԱՑԻԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՆԹԱՓԱՆՑԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

ՆԵԼԼԻ ՀԱՐՈՅԱՆ*, ՄԱՐԻ ՄԵԼԻՔՅԱՆ**
*Երևանի պետական համալսարան*

Մենթալիզացիան՝ սեփական և այլոց վարքը ներքին մտավոր վիճակների՝ մտքերի, զգացմունքների և մտադրությունների տեսանկյունից հասկանալու և մեկնաբանելու կարողությունը, ժամանակակից կլինիկական հոգեբանության հիմնարար հասկացություններից է։ Սույն հոդվածում հիպերմենթալիզացիան դիտարկվում է որպես հոգեկանի ինֆանտիլ կազմակերպվածության դրսևորում և մենթալիզացիայի խաթարման յուրահատուկ ձև։ Ցույց է տրվում, որ հիպոմենթալիզացիան և հիպերմենթալիզացիան հակադիր բևեռներ չեն, այլ նույն կառուցվածքային ձախողման՝ այլ անձի մտավոր իրականության անթափանցելիությունը հանդուրժելու անկարողության երկու տարբեր և թվացյալ հակընդդեմ արտահայտություններ։ Տեսական վերլուծությունը հիմնվում է մենթալիզացիայի տեսության, հոգեվերլուծության և ֆենոմենոլոգիական հոգեախտաբանության մի շարք դասական և ժամանակակից մոտեցումների համադրման վրա։ Ցույց է տրվում, որ հիպերմենթալիզացիան կառուցվածքայնորեն կապված է նախամենթալիզացիոն ռեժիմների, մոգական և պարանոյալ մտածողության, ինչպես նաև անորոշությունը հանդուրժելու անկարողության հետ։ Հոդվածի շրջանակներում ընդգծվում է, որ հասուն մենթալիզացիայի հիմնական առանձնահատկությունը ոչ թե այլոց մտքերի նկատմամբ առավել վստահ և մանրամասն իմացությունն է, այլ «չիմացության դիրքը» պահպանելու և այլ անձի ներաշխարհի մասնակի անհասանելիությունը հանդուրժելու կարողությունը։ Արդյունքում հիպերմենթալիզացիան սահմանվում է որպես ոչ ճկուն, իրականությունից մասնակիորեն անջատված և կեղծ վստահությամբ ուղեկցվող մենթալիզացիայի ձև, որը վերարտադրում է հոգեկանի վաղ, ինֆանտիլ կազմակերպվածության առանձնահատկությունները։

* **Նելլի Հարոյան** – ԵՊՀ սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի դոցենտ
**Нелли Ароян** – доцент кафедры социальной и клинической психологии ЕГУ
**Nelli Haroyan** – Associate Professor at the YSU Chair of Social and Clinical Psychology
Էլ. փոստ՝ nelharoyan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0009-0008-6542-6594
** **Մարի Մելիքյան** – ԵՊՀ սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի մագիստրանտ
**Мари Меликян** – магистрант кафедры социальной и клинической психологии ЕГУ
**Mari Melikyan** – Master's student at the YSU Chair of Social and Clinical Psychology
Էլ. փոստ՝ mari.meliqyan1@edu.ysu.am ORCID ID: https://orcid.org/0009-0008-6363-375X

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.05.2026
Գրախոսվել է՝ 02.06.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

**Բանալի բառեր** – *հիպերմենթալիզացիա, մենթալիզացիա, հոգեբանական ինֆանտիլիզմ, ձնացման ռեժիմ, մտավոր վիճակների անթափանցելիություն, ռեֆլեկտիվ ֆունկցիա, մոգական մտածողություն, պարանոյալ մտածողություն*

Ժամանակակից կլինիկական հոգեբանության մեջ մենթալիզացիայի հասկացությունը կենտրոնական նշանակություն ունի՝ որպես թե՛ հոգեկան զարգացման, թե՛ հոգեթերապևտիկ աշխատանքի հիմնարար մեխանիզմ: Մենթալիզացիայի հասկացությունը թեև իր արմատներով կապված է հոգեվերլուծական մտածողության և զարգացման հոգեբանության հետ, իր ժամանակակից կլինիկական ձևակերպումը ստացել է Պ. Ֆոնագիի, Է. Բեյթմենի և նրանց գործընկերների աշխատանքներում: Այն սահմանվում է որպես մտավոր գործունեություն, որի միջոցով մարդը կարողանում է հասկանալ և մեկնաբանել սեփական և այլոց վարքը՝ այն դիտարկելով ներքին մտավոր վիճակների՝ մտքերի, զգացմունքների, ցանկությունների և մտադրությունների տեսանկյունից[1]: Մենթալիզացիայի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այն ուղղված է թե՛ սեփական, թե՛ այլոց ներաշխարհին և ենթադրում է գիտակցում, որ վարքը պայմանավորված է ներքին հոգեկան գործընթացներով, որոնք միշտ չէ, որ անմիջապես տեսանելի կամ ակնհայտ են: Է. Բեյթմենի և Պ. Ֆոնագիի աշխատանքներում այն դիտարկվում է որպես հոգեկան զարգացման կարևորագույն ձեռքբերում, որի խաթարումը կապված է անձնային խանգարումների և հոգեկան կազմակերպվածության մի շարք ախտաբանական ձևերի հետ[2]:

Ֆոնագին և Լյույտենը մենթալիզացիան նկարագրում են ոչ թե որպես մեկ միասնական ունակություն, այլ որպես մի քանի հարաբերականորեն անկախ չափումների փոխազդեցություն: Նրանք առանձնացնում են չորս հիմնական բևեռներ[3]: Առաջինը ավտոմատ և վերահսկվող մենթալիզացիայի տարբերակումն է. ավտոմատ մենթալիզացիան արագ է, հիմնականում ոչ գիտակցված և քիչ ջանք պահանջող, մինչդեռ վերահսկվող մենթալիզացիան դանդաղ, գիտակցված և ռեֆլեկտիվ գործընթաց է: Երկրորդ բևեռը վերաբերում է սեփական և այլոց մտավոր վիճակների ուղղվածությանը: Երրորդը տարբերակում է ճանաչողական և աֆեկտիվ մենթալիզացիան, իսկ չորրորդը՝ ներքին և արտաքին հատկանիշների վրա հիմնվող մենթալիզացիան: Վերջին դեպքում ներքին ուղղվածությունը հենվում է մտքերի և զգացմունքների անմիջական ընկալման վրա, իսկ արտաքինը՝ վարքի, դեմքի արտահայտությունների և այլ տեսանելի նշանների վրա:

---

[1] Տե՛ս **Allen J. G.**, **Fonagy P., Bateman A.,** Mentalizing in Clinical Practice. Washington DC, American Psychiatric Publishing, 2008, էջ 3-29:

[2] Տե՛ս **Bateman A.**, **Fonagy P.,** Mentalization-Based Treatment for Personality Disorders: A Practical Guide. Oxford, Oxford University Press, 2016, էջ 3-17:

[3] Տե՛ս **Fonagy P.**, **Luyten P.,** A developmental, mentalization-based approach to the understanding and treatment of borderline personality disorder // Development and Psychopathology, 2009, Vol. 21, No. 4, էջ 1355-1381:

Մենթալիզացիայի տեսության կարևորագույն զարգացման դրույթներից մեկն այն է, որ հասուն, ռեֆլեկտիվ մենթալիզացիան երեխայի մոտ չի ձևավորվում միանգամից: Այն աստիճանաբար զարգանում է վաղ մանկության ընթացքում, և մինչ դրա կայացումը երեխան իրականությունն ապրում է ավելի վաղ, նախամենթալիզացիոն ռեժիմների միջոցով: Ֆոնագին, Գ. Գերգեյը, Է. Ջուրիստը և Մ. Թարգեթը առանձնացնում են երեք նման ռեժիմ՝ հոգեկան համարժեքության (psychic equivalence), թելեոլոգիական (teleological mode) և ձևացման (pretend mode) ռեժիմները[4]: Նորմատիվ զարգացման ընթացքում այս ռեժիմները աստիճանաբար ինտեգրվում են՝ մոտավորապես երկուսից հինգ տարեկան հասակում, իսկ մտքի տեսության հիմնական կարողությունը՝ միաժամանակ բազմակի իրականություններ ընկալելու ունակությունը, ձևավորվում է մոտ չորսից հինգ տարեկանում:

Հոգեկան համարժեքության ռեժիմում ներքին վիճակները նույնացվում են արտաքին իրականության հետ: Երեխայի համար միտքը պարզապես իրականության ներկայացում չէ, այլ ինքնին իրականություն. եթե նա մտածում է, որ պահարանում հրեշ կա, ապա այդ հրեշը նրա համար իրական է: Թելեոլոգիական ռեժիմում մտավոր վիճակները ճանաչվում են միայն այն դեպքում, երբ արտահայտվում են կոնկրետ, դիտելի գործողություններով. օրինակ՝ սերն ու հոգատարությունը ընկալվում են որպես իրական միայն այն ժամանակ, երբ դրսևորվում են վարքային մակարդակում: Ձևացման ռեժիմում, ընդհակառակը, ներքին աշխարհը կտրվում է արտաքին իրականությունից. երեխան կարող է խաղալ երևակայական աշխարհում, բայց այդ աշխարհը չի առնչվում իրականությանը: Հասուն մենթալիզացիան ձևավորվում է այն ժամանակ, երբ ներքինի և արտաքինի այս երկու ծայրահեղ հարաբերությունները ինտեգրվում են մեկ ճկուն համակարգի մեջ, որտեղ միտքը ընկալվում է որպես իրականության ներկայացում՝ ո՛չ դրան նույնական, ո՛չ էլ դրանից ամբողջությամբ անջատված:

Կարևոր է, որ այս նախամենթալիզացիոն ռեժիմները ոչ միայն զարգացման վաղ փուլեր են, այլ նաև հոգեկանի կառուցվածքային կազմակերպման ավելի պարզունակ ձևեր, որոնք կարող են պահպանվել հասուն տարիքում, հատկապես այն դեպքերում, երբ երեխայի զարգացման միջավայրը ներառել է անտեսում, տրավմատիկ կամ այլ անբարենպաստ փորձառություններ[5]: Այսպիսով, դրանք ինֆանտիլ են ոչ միայն ժամանակագրական, այլն կառուցվածքային իմաստով: Հասուն տարիքում դրանք վերարտադրվում են այն իրավիճակնե-

[4] Տե՛ս **Fonagy P., Gergely G., Jurist E., Target M.,** Affect Regulation, Mentalization, and the Development of the Self. New York, Other Press, 2002, էջ 257-291:

[5] Տե՛ս **Ensink K., Normandin L., Target M., Fonagy P.** et al., Mentalization in children and mothers in the context of trauma // British Journal of Developmental Psychology, 2015, Vol. 33, No. 2, էջ 203-217:

րում, երբ ռեֆլեկտիվ մենթալիզացիան բավարար չափով կայացած չէ կամ ժամանակավորապես փլուզվում է սթրեսի և կապվածության համակարգի ակտիվացման պայմաններում:

Նշենք նաև, որ հոգեկան զարգացման ուսումնասիրությունը ենթադրում է ոչ միայն դրա նորմատիվ ընթացքի, այլև դրա խաթարման ձևերի ըմբռնում, և մենք հենց այդ համատեքստում ենք դիտարկում ինֆանտիլիզմի հասկացությունը: Ինֆանտիլիզմ ասելով այստեղ նկատի չունենք տարիքային անհասություն կամ ինտելեկտուալ թերզարգացում: Հոգեբանական ինֆանտիլիզմը դիտարկվում է որպես հոգեկանի կառուցվածքային կազմակերպվածություն, որի դեպքում, չնայած ժամանակագրական հասունությանը, պահպանվում են հոգեկան ֆունկցիոնալության վաղ, ոչ հասուն ձևերը: Այս իմաստով ինֆանտիլ կազմակերպվածությունը պարզապես «մանկական» վարք չէ, այլ հոգեկան կառուցվածք, որտեղ զարգացման որոշ հիմնարար ձեռքբերումներ՝ աֆեկտների կարգավորումը, անորոշության հանդուրժումը, սեփական և այլոց ներաշխարհի ճկուն ու տարբերակված ներկայացումը, ամբողջությամբ չեն ինտեգրվել անձի հոգեկան կազմակերպվածության մեջ:

Մենթալիզացիայի տեսության շրջանակում ոչ հասուն հոգեկան կազմակերպվածությունը սովորաբար կապվում է մենթալիզացիայի դեֆիցիտի՝ հիպոմենթալիզացիայի (hypomentalizing) հետ: Ենթադրվում է, որ նման կազմակերպվածություն ունեցող անձը դժվարությամբ է ճանաչում վարքի հետևում ընկած մտավոր վիճակները, սահմանափակ կերպով է ընկալում սեփական և այլոց ներաշխարհը և հակված է գործելու առավել կոնկրետ ու առարկայական ձևերով: Այսպիսով, ինֆանտիլիզմը հաճախ նույնացվում է մտավոր վիճակների ընկալման անբավարարության հետ:

Սակայն մենթալիզացիայի խաթարման մեկ այլ ձև՝ հիպերմենթալիզացիան (hypermentalizing), այս պատկերում ավելի բարդ դիրք է զբաղեցնում: Բեյթմենի և Ֆոնագիի սահմանմամբ՝ հիպերմենթալիզացիան այլոց մտավոր վիճակների վերաբերյալ չափազանց բարդ և վստահ մեկնաբանություններ կառուցելու միտում է՝ առանց բավարար իրական հիմքի: Այն դրսևորվում է երկար, չափազանց մանրամասն և հաճախ իրականությունից մասնակիորեն կտրված մեկնաբանություններով, որոնք ուղեկցվում են այլոց մտքերի ու մտադրությունների վերաբերյալ ոչ ճկուն համոզվածությամբ[6]:

Առաջին հայացքից հիպերմենթալիզացիան կարող է ընկալվել որպես հիպոմենթալիզացիայի հակադիր բևեռ՝ ոչ թե մենթալիզացիայի պակաս, այլ դրա ավելցուկ: Սակայն այս պատկերացումը խնդրահարույց է դառնում, երբ այն համադրվում է հասուն մենթալիզացիայի ժամանակակից սահմանումների

---

[6] Տե՛ս **Fonagy P.**, **Luyten P.**, **Allison E.**, **Campbell C.**, Reconciling psychoanalytic ideas with attachment theory // Handbook of Attachment (eds. J. Cassidy, P. R. Shaver), 3rd ed., New York, Guilford Press, 2016, էջ 780-804:

հետ: Ինչպես նշում են Պ. Լյույտենը և գործընկերները, հասուն մենթալիզացիան ենթադրում է «չիմացության դիրք» (not-knowing stance), այսինքն՝ մտավոր վիճակների սկզբունքային անթափանցելիության ընդունում, ինչպես նաև զգուշավոր և հետաքրքրասեր վերաբերմունք սեփական և այլոց ներաշխարհի նկատմամբ[7]: Հասուն մենթալիզացիան բնութագրվում է ոչ թե վստահությամբ, այլ ճկունությամբ և այն գիտակցմամբ, որ մտավոր վիճակները իրականության ներկայացումներ են, ոչ թե դրա ուղղակի պատճեններ:

Առանցքային դրույթն այն է, որ հիպերմենթալիզացիան հիպոմենթալիզացիայի հակադիր բևեռը չէ, այլ նույն կառուցվածքային խորքային ձախողման այլ դրսևորումը: Երկու երևույթներն էլ արտահայտում են մեկ ընդհանուր անկարողություն՝ դիմանալու այն փաստին, որ այլ անձի մտավոր իրականությունը երբեք ամբողջությամբ հասանելի չէ: Հիպոմենթալիզացիայի դեպքում այդ անթափանցելիությունը փլուզվում է դեպի կոնկրետ իրողություն, իսկ հիպերմենթալիզացիայի դեպքում՝ դեպի երևակայությամբ հագեցած կեղծ վստահություն: Սակայն երկու դեպքում էլ բացակայում է հասուն հոգեկանի այն կարողությունը, որը թույլ է տալիս պահպանել անորոշությունը և մտավոր վիճակները պահել որպես ենթադրություններ, ոչ թե որպես անհերքելի փաստեր:

Բեյթմենն ու Ֆոնագին հիպերմենթալիզացիան դասում են ձևացման ռեժիմի շրջանակին: Նրանք նշում են, որ դա հենց ձևացման ռեժիմի այն տարբերակն է, որն ամենահեշտն է շփոթել իսկական մենթալիզացիայի հետ: Այս դեպքում անձը կենտրոնանում է այլ մարդկանց մտքերի և զգացմունքների վրա, սակայն դրանց մեկնաբանությունը կառուցվում է հիմնականում երևակայական վերագրումների, ոչ թե իրականության հետ ճկուն հարաբերության հիման վրա[8]: Այս դասակարգումը կարևոր տեսական նշանակություն ունի, քանի որ հիպերմենթալիզացիան այդպիսով արդեն իսկ ներկայացվում է որպես զարգացմամբ վաղ, նախամենթալիզացիոն կազմակերպվածության ձև, այսինքն՝ որպես հոգեկանի ինֆանտիլ կառուցվածքի վերարտադրություն հասուն տարիքում:

Ձևացման ռեժիմում մտքերն ու զգացմունքները մասամբ անջատվում են իրականությունից. անձը կարող է երկար և մանրամասն խոսել մտավոր վիճակների մասին, սակայն այդ խոսքը հաճախ թույլ կապ ունի իրական փորձառության հետ[9]: Հոգեթերապևտիկ գործընթացում դա կարող է արտահայտվել ներքին աշխարհի մասին երկար քննարկումներով, որոնք, չնայած իրենց ինտելեկտուալ հարստությանը, չեն բերում իրական հոգեկան փոփոխություն:

---

[7] Տե՛ս **Luyten P.**, **Campbell C., Allison E., Fonagy P.,** The Mentalizing Approach to Psychopathology: State of the Art and Future Directions // Annual Review of Clinical Psychology, 2020, Vol. 16, էջ 297-325:

[8] Տե՛ս **Duschinsky R.**, Foster Mentalizing and Epistemic Trust: The Work of Peter Fonagy and Colleagues at the Anna Freud Centre. Oxford, Oxford University Press, 2024, գլուխ «Forms of non-mentalizing»:

[9] Տե՛ս **Bateman A.**, **Fonagy P.,** Mentalization-Based Treatment // Kaplan and Sadock's Comprehensive Textbook of Psychiatry, 2017:

Նման իրավիճակներում հաճախ պահպանվում է ներքին դատարկության զգացումը, քանի որ ձևավորվող մտավոր կառույցները չունեն հուզական և իրական բավարար հիմնավորում: Արտաքնապես այս ամենը կարող է տպավորություն ստեղծել, թե անձը խորապես հասկանում է ներաշխարհը, մինչդեռ իրականում գործ ունենք իրականությունից մասնակիորեն անջատված կառուցվածքի հետ:

Բեյթմենն ու Ֆոնագին ձևացման ռեժիմի շրջանակում նկարագրում են նաև կեղծ մենթալիզացիայի (pseudomentalizing) ձևերը: Դրանց բնորոշ է այն, որ չի ընդունվում դիմացինի մտավոր աշխարհի անթափանցելիությունը, իսկ այլոց մտքերի և զգացմունքների մասին վերագրումները ներկայացվում են չափազանց վստահ, բարդ և համատեքստից դուրս ձևով[10]: Ս. Կարտերուդի նկարագրությամբ՝ կեղծ մենթալիզացիան արտահայտվում է ուրիշների մտավոր վիճակների չափազանցված վերլուծությամբ՝ առանց նրանց նկատմամբ իրական հետաքրքրության: Այդ խոսքը հաճախ ռումինատիվ է, չափազանց մանրամասն և կառուցվածքով մոտ է ինտելեկտուալիզացիային ու ռացիոնալիզացիային[11]: Այս հատկանիշները հակասում են հասուն մենթալիզացիայի հիմնական առանձնահատկություններին՝ ճկունությանը, համեստությանը և մտավոր վիճակների անթափանցելիության ընդունմանը: Հետևաբար, հիպերմենթալիզացիան կարելի է դիտարկել որպես մենթալիզացիայի կառուցվածքային ձախողում, որը վերարտադրում է հոգեկանի վաղ, ինֆանտիլ կազմակերպվածության առանձնահատկությունները:

Երկրորդ կարևոր դրույթը վերաբերում է հոգեկան համարժեքության (psychic equivalence) ռեժիմին և այն հարցին, թե ինչպես է մտքերը պարզապես «մտքեր» պահելու անկարողությունը հանգեցնում միաժամանակ թե՛ կոնկրետ, թե՛ երևակայությամբ հագեցած մտածողության ձևավորմանը: Հոգեկան համարժեքության ռեժիմը սովորաբար կապվում է կոնկրետ և առարկայական մտածողության հետ՝ այն բանի, ինչը մենթալիզացիայի տեսության շրջանակում նկարագրվում է որպես հիպոմենթալիզացիայի դասական ձև: Սակայն ավելի մանրամասն դիտարկումը ցույց է տալիս, որ նույն կառուցվածքը կարող է ծնել նաև մոգական և պարանոյալ մտածողություն: Երբ մտավոր ներքին բովանդակությունը զգացվում է որպես անմիջական իրականություն, այն ձեռք է բերում արտաքին իրադարձությունների ուժ: Դեմքի չեզոք արտահայտությունը կարող է ընկալվել որպես մերժման անվիճելի ապացույց, պատահական հայացքը՝ որպես թաքնված թշնամանքի նշան: Այս դեպքում անձը ոչ թե պարզապես ենթադրում է, այլ իր մտավոր վերագրումները ապրում է որպես փաս-

---

[10] Տե՛ս **Bateman A.**, **Fonagy P.,** Mentalization-Based Treatment for Personality Disorders, 2016, էջ 178-179:

[11] Տե՛ս **Karterud S.**, Mentalization-Based Group Therapy (MBT-G): A Theoretical, Clinical, and Research Manual. Oxford, Oxford University Press, 2015, էջ 24-30:

տեր: Արդյունքում ձևավորվում է կեղծ վստահության վիճակ, որն արտաքնապես կարող է թվալ որպես խորը սոցիալական ըմբռնում, սակայն կառուցվածքայնորեն նույնքան ոչ ռեֆլեկտիվ է, որքան կոնկրետ, առարկայական մտածողությունը:

Հիպերմենթալիզացնող անձը երկար, բարդ և մանրամասն մեկնաբանություններ է կառուցում այլոց մտքերի մասին ոչ թե այն պատճառով, որ ավելի ճշգրիտ է ընկալում նրանց ներաշխարհը, այլ որովհետև ի վիճակի չէ այդ վերագրումները պահել որպես վարկածներ: Դրանք նրա համար դառնում են անմիջական իրականություն՝ այնպես, ինչպես հոգեկան համարժեքության ռեժիմում գտնվող երեխայի համար պահարանի հրեշն է իրական:

Մոգական մտածողության հետ այս կապը հնարավորություն է տալիս դիմելու դասական հոգեվերլուծական ավանդույթին և, մասնավորապես, Զ. Ֆրոյդի «մտքի ամենազորության» (omnipotence of thought) հասկացությանը: «Տոտեմ և տաբու» աշխատության մեջ Ֆրոյդը մոգական մտածողությունը նկարագրում է որպես հոգեկան գործընթացների գերագնահատում, որի դեպքում մտքի կառուցվածքային առանձնահատկությունները վերագրվում են արտաքին աշխարհին[12]: Նա այս կառուցվածքը կապում է երեխաների, օբսեսիվ նևրոզ ունեցողների և մոգական մտածողության տարբեր ձևերի հետ՝ բոլոր դեպքերում ցույց տալով, որ անձը սեփական մտավոր բովանդակությունը ընկալում է որպես արտաքին աշխարհի մասին փաստացի գիտելիք[13]: Այս նկարագրությունը էականորեն համընկնում է հիպերմենթալիզացիայի ժամանակակից նկարագրությանը: Երկու դեպքում էլ առկա են չափազանց մանրամասն մտավոր վերագրումներ, որոնք ուղեկցվում են ոչ ճկուն վստահությամբ և թույլ կապ ունեն իրականության հետ: Այս իմաստով հիպերմենթալիզացիան կարելի է դիտարկել որպես «մտքի ամենազորության» ֆրոյդյան գաղափարի ժամանակակից կլինիկական ձևակերպում:

Պարանոյալ մտածողության հետ կապը լրացուցիչ ամրապնդում է այս պատկերացումը: Ֆոնագին և գործընկերները նշում են, որ հիպերմենթալիզացիան հաճախ ուղեկցվում է այլոց մտավոր վիճակների վերաբերյալ ոչ ճկուն համոզվածությամբ: Պարանոյալ մտածողության մեջ այս համոզվածությունը ստանում է հետապնդող բովանդակություն. անձը մյուսներին վերագրում է թաքնված թշնամանք, չար մտադրություններ կամ դավադրություններ՝ կառուցելով բարդ, սակայն փաստերից մասնակիորեն կտրված մեկնաբանություններ: Հատկանշական է նաև, որ զարգացման հոգեբանության հետազոտությունները ցույց են տալիս, որ մտքի տեսության «գերակտիվությունը»

---

[12] Տե՛ս **Freud S.**, Totem and Taboo // The Standard Edition of the Complete Psychological Works of Sigmund Freud, Vol. 13, London, Hogarth Press, 1913/1955, գլուխ III, «Animism, Magic and the Omnipotence of Thoughts», էջ 75-99:

[13] Տե՛ս **Freud S.,** Notes upon a Case of Obsessional Neurosis // The Standard Edition of the Complete Psychological Works of Sigmund Freud, Vol. 10, London, Hogarth Press, 1909/1955, էջ 233-237:

մանկության շրջանում կապված է հատկապես պարանոյալ բնույթի ապրումների հետ: Այսպես կոչված «հիպեր» մտքի տեսությունը (hyper-theory of mind) մանկության ընթացքում կանխատեսում է հետապնդման և կասկածամտության փորձառություններ[14]: Այս դիտարկումները վկայում են, որ մտավոր վիճակների գերվերագրումը զարգացմամբ վաղ ծագում ունի և կառուցվածքայնորեն ինֆանտիլ բնույթ է կրում:

Ժամանակակից կլինիկական հոգեբանության մեջ անորոշությունը հանդուրժելու անկարողությունը դիտարկվում է որպես տրանսդիագնոստիկ խոցելիություն, որը դրսևորվում է անորոշ իրավիճակների նկատմամբ հուզական, ճանաչողական և վարքային բացասական արձագանքներով[15]: Այն կապված է տագնապային, դեպրեսիվ և փսիխոտիկ սպեկտրի տարբեր խանգարումների հետ: Այս համատեքստում հիպերմենթալիզացիան կարելի է հասկանալ որպես անորոշությանը դիմանալու անկարողության յուրահատուկ ճանաչողական-մենթալիզացիոն ձև, որտեղ չիմացությունը փոխարինվում է կեղծ, բայց սուբյեկտիվորեն համոզիչ իմացությամբ:

Այս կառուցվածքին առավել մոտ հոգեվերլուծական ձևակերպումներից մեկը հանդիպում է Ու. Բիոնի մոտ: Փոխառելով Ջ. Քիթսի «բացասական կարողություն» (negative capability) արտահայտությունը՝ Բիոնը այն սահմանում է որպես անորոշությունների, կասկածների և առեղծվածների մեջ մնալու կարողություն՝ առանց փաստի և բանականության նկատմամբ «դյուրագրգիռ ձգտման»[16]: Նրա համար հասուն հոգեկանի կարևորագույն հատկանիշներից մեկն այն կարողությունն է, որով անձը կարող է պահպանել հարաբերությունը դեռևս ամբողջությամբ չճանաչված մտավոր փորձառության հետ՝ չշտապելով այն փոխարինել շտապ և կեղծ իմացությամբ: Այս տեսանկյունից Բիոնի նկարագրած «իմացության կապի ժխտումը» ճշգրտորեն արտացոլում է հիպերմենթալիզացիայի կառուցվածքը: Այստեղ չիմացությունը չի հանդուրժվում և արագորեն փոխարինվում է կեղծ, բայց վստահ մեկնաբանություններով: Այն, ինչ արտաքնապես կարող է թվալ որպես խորը ըմբռնում, իրականում դառնում է անորոշությունից փախուստ: Հիպերմենթալիզացիայի դեպքում անձը չի պահպանում մտավոր վիճակները որպես բաց և մասնակիորեն անհասանելի իրականություններ, այլ ձգտում է դրանք հնարավորինս արագ վերածել ավարտուն և համոզիչ «իմացության»:

---

[14] Տե՛ս **Clemmensen L.**, **van Os J.**, **Skovgaard A. M.** et al., Hyper-Theory-of-Mind in Children with Psychotic Experiences // PLoS ONE, 2014, Vol. 9, No. 11, e113082:

[15] Տե՛ս **Buhr K.**, **Dugas M. J.**, The Intolerance of Uncertainty Scale: Psychometric properties of the English version // Behaviour Research and Therapy, 2002, Vol. 40, No. 8, էջ 931-945:

[16] Տե՛ս **Bion W. R.**, Attention and Interpretation. London, Tavistock, 1970, էջ 124-126: Քիթսի բնագիր ձևակերպման համար տե՛ս **Keats J.**, Letter to George and Thomas Keats, 21 December 1817 // The Letters of John Keats (ed. H. E. Rollins), Vol. 1, Cambridge, Harvard University Press, 1958:

Նմանատիպ կառուցվածքային դիտարկում է առաջարկում նաև Ռ. Բրիթոնը: Նա հասուն հոգեկանի կարևոր ձեռքբերումներից է համարում «եռանկյունային տարածությունը»՝ այն կարողությունը, որով անձը ընդունում է, որ ուրիշների մտքերը մնում են առանձին, ինքնավար և ամբողջությամբ անհասանելի: Բրիթոնի համար հոգեկան հասունությունը ենթադրում է դիմանալ այն փաստին, որ անձը երբեք լիովին ներառված չէ ուրիշի ներաշխարհում: Այս կարողության խաթարումը նա նկարագրում է որպես «հոգեկան ատոպիա»՝ յուրահատուկ անհանդուրժողականություն այլոց մտավոր իրականության նկատմամբ[17]: Հիպերմենթալիզացիան այս պատկերի հակառակ, բայց կառուցվածքայնորեն նույնքան ոչ հասուն տարբերակն է: Այստեղ անձը ոչ թե հեռանում է այլոց մտքերից, այլ հակառակը՝ փորձում է յուրացնել դրանք սեփական մեկնաբանությունների միջոցով:

Նույն կառուցվածքի մեկ այլ տեսական տարբերակ առաջարկվում է ֆենոմենոլոգիական հոգեախտաբանության շրջանակում՝ Լ. Սասի «հիպերռեֆլեքսիվություն» (hyperreflexivity) հասկացության միջոցով: Սասը և Ջ. Պարնասը շիզոֆրենիայի փորձառությունը նկարագրում են որպես ինքնության հիմնաբար խաթարում, որի հիմնական բաղադրիչներից մեկը հենց հիպերռեֆլեքսիվությունն է: Այն վերաբերում է ինքնագիտակցության այնպիսի չափազանցված ձևերին, որոնց դեպքում այն գործընթացները, որոնք սովորաբար մնում են լուռ և ֆոնային, դառնում են չափազանց բացահայտ ուշադրության առարկա[18]: Սասի համար կարևոր է, որ հիպերռեֆլեքսիվությունը չի ներկայացնում «ավելացված» ինքնագիտակցություն կամ հասուն ռեֆլեքսիվություն: Ընդհակառակը, այն ինքնափորձառության խաթարում է, որի դեպքում ֆոնային, ինքնաբերական գործընթացները կորցնում են իրենց բնական ընթացքը: Անձը դադարում է պարզապես «լինել» և սկսում է անդադար դիտարկել ինքն իրեն: Նույն կառուցվածքը կարելի է տեսնել նաև սոցիալական ընկալման ոլորտում: Սովորաբար մարդը ուրիշներին ընկալում է մասամբ ֆոնային, կիսագիտակցական ձևով՝ առանց յուրաքանչյուր շարժման կամ արտահայտության նկատմամբ մշտական մեկնաբանություն կառուցելու: Հիպերմենթալիզացիայի դեպքում այս ֆոնային մակարդակը խախտվում է: Անձը սկսում է անդադար մտածել, թե ինչ կարող է զգալ, մտածել կամ ենթադրել մյուսը: Արդյունքում ուշադրության առարկա է դառնում այն, ինչը նորմալ պայմաններում մնում է թաքնված և չարտահայտված: Այսպիսով, ինչպես հիպերռեֆլեքսիվության դեպ-

---

[17] Տե՛ս **Britton R.**, *Belief and Imagination: Explorations in Psychoanalysis*. London, Routledge, 1998, էջ 41-58 (գլուխ "Subjectivity, objectivity, and triangular space"):

[18] Տե՛ս **Sass L. A.**, **Parnas J.,** Schizophrenia, Consciousness, and the Self // Schizophrenia Bulletin, 2003, Vol. 29, No. 3, էջ 427-444: Տե՛ս նաև՝ **Sass L. A.,** Madness and Modernism: Insanity in the Light of Modern Art, Literature, and Thought. Cambridge, Harvard University Press, 1992:

քում, այստեղ ևս տեղի է ունենում պարադոքսալ գործընթաց. այն կարողությունը, որը արտաքնապես թվում է ուժեղացված, իրականում խաթարվում է հենց չափից դուրս ակտիվացման պատճառով:

Զարգացման հոգեբանության և հոգեվերլուծության մի շարք ավանդույթներ փորձել են նկարագրել, թե ինչպես է երեխան առնչվում այլ մարդկանց մտավոր աշխարհի անթափանցելիությանը: Ֆոնագիի և Թարգեթի «խաղ իրականության հետ» աշխատանքները ցույց են տալիս, որ երեխան սկզբնական շրջանում հոգեկան իրականությունը կազմակերպում է երկու՝ դեռևս չինտեգրված ձևերի միջոցով: Առաջինը հոգեկան համարժեքության ռեժիմն է, որտեղ ներքինն ու արտաքինը նույնացվում են, իսկ երկրորդը ձևացման ռեժիմն է, որտեղ ներքին աշխարհը կտրվում է արտաքին իրականությունից[19]: Մինչ այս երկու ռեժիմների ինտեգրումը երեխան չի կարող լիարժեք հանդուրժել ներքինի և արտաքինի միջև եղած տարբերությունը: Հասուն մենթալիզացիան ձևավորվում է հենց այդ տարբերությանը դիմանալու կարողության զարգացման արդյունքում: Այն ենթադրում է, որ միտքը պահվում է որպես իրականության ներկայացում՝ ոչ իրականության անմիջական պատճեն, բայց նաև ոչ դրանից ամբողջությամբ անջատված երևակայական կառուցվածք: Այս իմաստով հասուն մենթալիզացիան հիմնված է ոչ թե ամբողջական իմացության, այլ մասնակի չիմացության հանդուրժման վրա:

Հոգեվերլուծական ավանդույթը նկարագրում է նաև, թե ինչպես է երեխան լրացնում մյուսի մտքի վերաբերյալ իր գիտելիքի բացերը: Մ. Քլայնի և Ս. Այզեքսի մոտ երևակայությունը (phantasy) ներկայացվում է որպես այն առաջնային մեխանիզմը, որի միջոցով երեխան փորձում է կառուցել օբյեկտի ներաշխարհի պատկերացում[20]: Երբ երեխան չի կարող հանդուրժել այն փաստը, որ մյուսի միտքը անմիջականորեն հասանելի չէ, նա այդ բացը լրացնում է կա՛մ առարկայական, կա՛մ երևակայական կառուցվածքներով:

Այս տեսանկյունից հիպերմենթալիզացնող մեծահասակը կառուցվածքայնորեն անում է նույնը՝ պարզապես ավելի բարդ և լեզվականորեն մշակված ձևով: Նրա խոսքը կարող է լինել ինտելեկտուալ, բառային առումով հարուստ և տեսականորեն բարդ, սակայն այդ բարդության տակ հաճախ պահպանվում է նույն հիմնարար անկարողությունը:

Հասուն հոգեկանի առանձնահատկությունը ոչ թե այն է, որ անձը «ավելի շատ» կամ «ավելի քիչ» է մտածում այլոց մասին, այլ այն, որ նա կարող է պահպանել չիմացության վիճակը՝ առանց այն անմիջապես հաղթահարելու կեղծ վստահությամբ: Այս տեսանկյունից հիպերմենթալիզացնող մեծահասակը, որքան էլ զարգացած թվա նրա լեզուն և մտածողությունը, կառուցվածքային

---

[19] Տե՛ս **Fonagy P.**, Target M., Playing with Reality: I. Theory of Mind and the Normal Development of Psychic Reality // International Journal of Psycho-Analysis, 1996, Vol. 77, No. 2, էջ 217-233:

[20] Տե՛ս **Isaacs S.**, The Nature and Function of Phantasy // International Journal of Psycho-Analysis, 1948, Vol. 29, էջ 73-97:

իմաստով մնում է ինֆանտիլ, քանի որ չի կարող դիմանալ սոցիալական ճանաչողության հիմնական պայմանին. ուրիշի միտքը միշտ մնում է մասամբ անհասանելի։

Ամփոփելով նշենք, որ մենթալիզացիայի տեսության շրջանակում հիպերմենթալիզացիան նկարագրված է որպես հասուն մենթալիզացիայի ձև չհանդիսացող երևույթ և դասվում է ձևացման (pretend mode) ռեժիմի շարքին։ Ֆոնագիի և Բեյթմենի մենթալիզացիայի տեսության համադրումը Ֆրոյդի «մտքի ամենազորության», Բիոնի «բացասական կարողության», Բրիթոնի «եռանկյունային տարածության» և Սասի «հիպերռեֆլեքսիվության» հասկացությունների հետ ցույց տվեց, որ տարբեր տեսական ուղղություններ, անկախ իրարից, նկարագրել են նույն կառուցվածքային խնդիրը՝ մտավոր վիճակների անթափանցելիությունը և անորոշությունը հանդուրժելու դժվարությունը։

Այստեղ շատ կարևոր է տարբերակել հասուն ռեֆլեքսիվությունը հիպերմենթալիզացիայից։ Արտաքնապես դրանք կարող են նման թվալ, քանի որ երկուսն էլ ներառում են մտքերի, զգացմունքների և միջանձնային հարաբերությունների մասին մտորումներ և խոսք։ Սակայն հասուն մենթալիզացիան բնութագրվում է ճկունությամբ, վերապահությամբ և այն գիտակցմամբ, որ սեփական պատկերացումները այլ անձի ներաշխարհի մասին միշտ մասնակի և վերանայելի են։ Հիպերմենթալիզացիայի դեպքում, ընդհակառակը, այլոց մտավոր վիճակների վերաբերյալ վերագրումները ստանում են չափազանց որոշակի և ոչ ճկուն բնույթ՝ շատ քիչ տեղ թողնելով այլընտրանքային մեկնաբանությունների և անորոշության համար։

Այս տարբերակումը հատկապես կարևոր է կլինիկական պրակտիկայում։ Հոգեթերապևտիկ դաշտում հաճախ ինտելեկտուալիզացիան, խոսքի առատությունը, բարդ հոգեբանական լեզուն և այլոց վարքի երկար մեկնաբանությունները կարող են սխալմամբ ընկալվել որպես բարձր մենթալիզացիա։ Իրական մենթալիզացիան սովորաբար ուղեկցվում է հետաքրքրասիրությամբ, երկիմաստության հանդուրժմամբ և սեփական եզրակացությունների վերանայման պատրաստակամությամբ։

Հետևաբար, թերապևտիկ խնդիրը ոչ թե այցելուի մտավոր վերագրումների քանակի ավելացումն է, այլ «չիմացության դիրքի» վերականգնումը՝ կարողությունը դիմանալու այն փաստին, որ ուրիշի միտքը մնում է միայն մասնակիորեն հասանելի։ Այս իմաստով հասունությունը սահմանվում է որպես կարողություն՝ ապրել ուրիշների կողքին՝ ընդունելով նրանց ներաշխարհի մշտական մասնակի անհասանելիությունը։ Հիպերմենթալիզացիան հենց այս ընդունման ձախողումն է։ Ընդ որում, դրա ինֆանտիլ բնույթը պայմանավորված չէ մտածողության պարզությամբ կամ ռեֆլեքսիայի պակասով. ընդհակառակը, այն հաճախ ուղեկցվում է բարձր ինտելեկտուալ ակտիվությամբ և բարդ վերլուծություններով, սակայն կառուցվածքային մակարդակում վերար-

տաղրում է զարգացման վաղ փուլերին բնորոշ նույն դժվարությունը՝ անորոշությունը և այլի մտավոր աշխարհի անթափանցելիությունը հանդուրժելու անկարողությունը:

**НЕЛЛИ АРОЯН, МАРИ МЕЛИКЯН – *Гиперментализация и проблема непрозрачности ментальных состояний.*** – Ментализация — способность понимать и интерпретировать собственное и чужое поведение через внутренние психические состояния — мысли, чувства и намерения — является одним из фундаментальных понятий современной клинической психологии. В данной работе гиперментализация рассматривается не как избыток зрелой ментализации, а как проявление инфантильной организации психики и особая форма нарушения ментализации. Предполагается, что гипоментализация и гиперментализация представляют собой не противоположные полюса, а два различных и внешне противоположных выражения одной и той же структурной неудачи — неспособности выдерживать непроницаемость психической реальности другого человека. Теоретический анализ основан на сопоставлении классических и современных подходов теории ментализации, психоанализа и феноменологической психопатологии. Показано, что гиперментализация структурно связана с доментализационными режимами, магическим и параноидным мышлением, а также с непереносимостью неопределенности. Подчеркивается, что ключевой характеристикой зрелой ментализации является не большая и более детальная уверенность в понимании мыслей другого, а способность сохранять «позицию незнания» и выдерживать частичную недоступность внутреннего мира другого человека. В результате гиперментализация определяется как негибкая, частично оторванная от реальности форма ментализации, сопровождающаяся псевдоуверенностью и воспроизводящая особенности ранней, инфантильной организации психики.

**Ключевые слова:** *гиперментализация, ментализация, психологический инфантилизм, режим «как будто», непрозрачность ментальных состояний, рефлексивная функция, магическое мышление, параноидное мышление*

**NELLI HAROYAN, MARI MELIKYAN – *Hypermentalizing and the Problem of the Opacity of Mental States.*** – Mentalization, the ability to understand and interpret one’s own and others’ behavior in terms of underlying mental states, is a fundamental concept in contemporary clinical psychology. This work conceptualizes hypermentalizing not as an excess of mature mentalization, but as a manifestation of an infantile psychic organization. It is proposed that hypomentalizing and hypermentalizing are not opposite poles, but two different expressions of the same structural failure: the inability to tolerate the opacity of another person’s mental reality. The theoretical analysis integrates perspectives from mentalization theory, psychoanalysis, and phenomenological psychopathology. It is argued that hypermentalizing is structurally linked to prementalizing modes, magical and paranoid thinking, and intolerance of uncertainty. The work further emphasizes that the defining feature of mature mentalization is not greater certainty about another person’s mind, but the capacity to maintain a “not-knowing stance” and tolerate the partial unknowability of the other’s inner world. Consequently, hypermentalizing is defined as a rigid and partially reality-disconnected form of mentalization characterized by pseudo-certainty and reflecting features of an early, infantile organization of the psyche.

**Key words:** *hypermentalizing, mentalization, psychological infantilism, pretend mode, opacity of minds, reflective function, magical thinking, paranoid thinking*

**Գրականության ցանկ / References**


Allen J. G., Fonagy P., Bateman A. (2008). Mentalizing in Clinical Practice. Washington DC: American Psychiatric Publishing.

Bateman A., Fonagy P. (2016). Mentalization-Based Treatment for Personality Disorders: A Practical Guide. Oxford: Oxford University Press.

Bateman A., Fonagy P. (2017). Mentalization-Based Treatment. In B. J. Sadock, V. A. Sadock, & P. Ruiz (Eds.), Kaplan and Sadock's Comprehensive Textbook of Psychiatry (10th ed.). Philadelphia: Wolters Kluwer.

Bion W. R. (1970). Attention and Interpretation: A Scientific Approach to Insight in Psycho-Analysis and Groups. London: Tavistock Publications.

Britton R. (1998). Belief and Imagination: Explorations in Psychoanalysis (The New Library of Psychoanalysis, Vol. 31). London: Routledge.

Buhr K., Dugas M. J. (2002). The Intolerance of Uncertainty Scale: Psychometric properties of the English version. Behaviour Research and Therapy, 40(8), 931-945.

Clemmensen L., van Os J., Skovgaard A. M., Væver M., Blijd-Hoogewys E. M. A., Bartels-Velthuis A. A., Jeppesen P. (2014). Hyper-Theory-of-Mind in Children with Psychotic Experiences. PLoS ONE, 9(11), e113082.

Duschinsky R., Foster S. (2024). Mentalizing and Epistemic Trust: The Work of Peter Fonagy and Colleagues at the Anna Freud Centre. Oxford: Oxford University Press.

Ensink K., Normandin L., Target M., Fonagy P., Sabourin S., Berthelot N. (2015). Mentalization in children and mothers in the context of trauma. British Journal of Developmental Psychology, 33(2), 203-217.

Fonagy P., Gergely G., Jurist E., Target M. (2002). Affect Regulation, Mentalization, and the Development of the Self. New York: Other Press.

Fonagy P., Luyten P. (2009). A developmental, mentalization-based approach to the understanding and treatment of borderline personality disorder. Development and Psychopathology, 21(4), 1355-1381.

Fonagy P., Luyten P., Allison E., Campbell C. (2016). Reconciling psychoanalytic ideas with attachment theory. In J. Cassidy & P. R. Shaver (Eds.), Handbook of Attachment (3rd ed., pp. 780-804). New York: Guilford Press.

Fonagy P., Target M. (1996). Playing with Reality: I. Theory of Mind and the Normal Development of Psychic Reality. International Journal of Psycho-Analysis, 77(2), 217-233.

Freud S. (1909/1955). Notes upon a Case of Obsessional Neurosis. In The Standard Edition of the Complete Psychological Works of Sigmund Freud (Vol. 10). London: Hogarth Press.

Freud S. (1913/1955). Totem and Taboo. In The Standard Edition of the Complete Psychological Works of Sigmund Freud (Vol. 13). London: Hogarth Press.

Isaacs S. (1948). The Nature and Function of Phantasy. International Journal of Psycho-Analysis, 29, 73-97.

Karterud S. (2015). Mentalization-Based Group Therapy (MBT-G): A Theoretical, Clinical, and Research Manual. Oxford: Oxford University Press.

Keats J. (1958). The Letters of John Keats (H. E. Rollins, Ed., Vol. 1). Cambridge: Harvard University Press.

Luyten P., Campbell C., Allison E., Fonagy P. (2020). The Mentalizing Approach to Psychopathology: State of the Art and Future Directions. Annual Review of Clinical Psychology, 16, 297-325.

Sass L. A. (1992). Madness and Modernism: Insanity in the Light of Modern Art, Literature, and Thought. Cambridge: Harvard University Press.

Sass L. A., Parnas J. (2003). Schizophrenia, Consciousness, and the Self. Schizophrenia Bulletin, 29(3), 427-444.

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 84-98
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.084

# МОТИВАЦИОННЫЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ ДЕТЕРМИНАНТЫ ПСИХОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ СТУДЕНТОВ В ЗАВИСИМОСТИ ОТ ПОРЯДКА РОЖДЕНИЯ

**ВАРДУИ ПАПОЯН*, АЛИНА ГАЛСТЯН****
***Ереванский государственный университет***

В статье рассматривается психологическая безопасность как одно из ключевых условий благоприятного развития личности. Она включает в себя не только субъективные переживания и жизненный опыт индивида, но и системы жизнедеятельности, в рамках которых личность проявляется, обучается и развивается, стремясь к самореализации. При изучении психологической безопасности студентов необходимо учитывать ряд факторов, связанных с системой высшего образования, которая выступает в качестве среды, способствующей обучению и социализации. В рамках настоящего исследования представляется целесообразным анализ взаимосвязей между компонентами психологической безопасности, жизнестойкостью и показателями мотивационной сферы студентов как в процессе обучения, так и в зависимости от порядка рождения в семье. Данный фактор оказывает существенное влияние на формирование базового доверия к миру, уверенности в себе и развитие личности.
Результаты исследования выявили статистически значимые различия между показателями психологической безопасности и мотивационной сферы студентов в зависимости от их позиции в семье. Были выявлены значительные различия между показателями единственных детей и сиблингов. Дети старшего возраста продемонстрировали более высокий уровень устойчивости и ответственности, что связано с их семейным происхождением и ранним семейным взаимодействием. Единственные дети в семье характеризовались более высокими показателями мотивации, в то время как у младших детей

* **Вардуи Папоян** – кандидат психологических наук, профессор кафедры общей психологии ЕГУ, научный сотрудник научно-исследовательского центра психологии ЕГУ
**Վարդուհի Պապոյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող
**Varduhi Papoyan** – Candidate of Psychological Sciences, Professor at the YSU General Psychology Chair, Researcher at YSU Psychology Research Center
Էլ. փոստ՝ vpapoyan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0000-0001-7534-6872
** **Алина Галстян** – преподаватель кафедры общей психологии ЕГУ, научный сотрудник научно-исследовательского центра психологии ЕГУ
**Ալինա Գալստյան** – ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դասախոս, ԵՊՀ Hոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող
**Alina Galstyan** – Lecturer at the YSU General Psychology Chair, Researcher at YSU Psychology Research Center
Էլ.փոստ alina.galstyan@ysu.am ORCID ID: https://orcid.org/0000-0002-3219-4052

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 29.04.2026
Գրախոսվել է՝ 20.05.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

были более низкие показатели по некоторым параметрам, что подчеркивает их стремление к психологическому комфорту. Для всех участников компонент «Семья», тесно связанный с эмоциональным благополучием и личной стабильностью, играет особую роль в структуре психологической безопасности.

**Ключевые слова:** *психологическая безопасность, студенты, мотивация, жизнестойкость, порядок рождения, личностное развитие*

На сегодняшний день безопасность рассматривается как одно из самых важных условий для развития человечества. Исследование психологической безопасности личности предполагает рассмотрение не только индивидуальных субъективных переживаний, но и анализ совокупности социальных и институциональных систем, в рамках которых осуществляется жизнедеятельность человека. Особое внимание при этом уделяется влиянию данных систем на формирование, поддержание и трансформацию состояния психологической безопасности личности. При исследовании психологической безопасности личности студента представляется необходимым рассматривать ряд вопросов, связанных с образованием как специфической социокультурной средой. Данная среда выступает значимым фактором, потенциально способствующим как учебной деятельности студента, так и процессам его социализации и личностного развития.

Значительный вклад в изучение психологической безопасности внесли такие ученые как: В.В. Авдеев, Б.Г. Ананьев, Л.Ф. Бурлачук, И.В. Дубровина, Б. Краус, Б.Ф. Ломов, А.А. Реан, В.И. Слободчиков, Д.И. Фельдштейн и другие.

Целью настоящего исследования является выявление взаимосвязи психологической безопасности и учебной мотивации студентов в процессе обучения.

В общепринятом понимании безопасность, как правило, ассоциируется с такими характеристиками, как неизменность, устойчивость и стабильность. Вместе с тем, в рамках диалектического подхода содержательное осмысление данного понятия предполагает учет категории изменчивости, обеспечивающей развитие объекта или субъекта, а также приобретение им новых качеств и свойств. Безопасность можно определить как состояние защищенности жизненно важных интересов личности, общества и государства от внешних либо внутренних угроз. При всем этом когда понятие «личностная безопасность» расширяется до понятия «психологической безопасности личности», то данный термин приобретает новую смысловую окраску. Состояние психологически безопасной личности характеризуется удовлетворенностью настоящим, уверенностью в будущем, сохранением вероятности достижения жизненных целей, защищенностью интересов, идеалов, позиций и ценностей, с которыми субъект отождествляет собственную жизнь[1].

Психологическую безопасность можно определить как состояние общественного сознания, при котором существующее качество жизни воспринимают как адекватное и надежное как отдельная личность, так и общество, так как оно создает объективные возможности для удовлетворения естественных и социальных

[1] **Лабунская В. А.**, Психология личности. Учебное пособие / под ред. проф. П. Н. Ермакова — М.: Эксмо, 2007 — 653 с.

потребностей граждан в настоящее время и в то же время дает им основания для уверенности в будущем[2].

Критерии безопасности истолковываются исходя из тех структур, с которыми исследователи отождествляют человека.

Согласно Н.Л. Шлыковой, динамика психологической безопасности обуславливается осуществляемым мыслительными и перцептивными операциями, индивидуально-типологическими характеристиками, личностными свойствами, условиями деятельности, субъект-объектными отношениями и эргономическим образом среды. Предпосылками развития психологической безопасности являются: высокий уровень эргономичности произвольных процессов, развития корпоративной культуры, личностных качеств субъекта, таких как готовность к риску, социальная и профессиональная активности, адекватное восприятие действительности. Степень готовности к риску выступает в роли фактора, который определяет уровень развития его психологической безопасности[3].

При рассмотрении психологической безопасности личности студента значимой является проблема автономности — зависимости личности в процессе учебной деятельности. Способность человека сопротивляться угрозе, опасности, риску и сохранять выносливость и стойкость в среде с психотравмирующими воздействиями связана с такими личностными характеристиками, как самостоятельность, целеустремленность, уверенность в себе, развитый самоконтроль, склонность к самостоятельному выполнению работы, с автономностью.

Психологическая безопасность личности студента непреложно связана с системой высшего образования, а ведущим фактором, обуславливающим эту связь является фактор «отношения» как со стороны социума и государства, так и со стороны самого студента к процессу обучения[4]. Склонность к преобразованию системы вузовского образования сводится к решению проблем как содержательного, так и организационно-управленческого характера; вместе с тем, предлагается смена парадигмы образования. Одна из оригинальных концепций смены парадигмы образования основывается на философии образования, науках о человеке и обществе и «теории практики». Речь идет о методологии гуманистической направленности, центральной фигурой которой является человек, его духовное развитие, система ценностей, а основной задачей этой методологии становится развитие нравственных и волевых качеств, творческой свободы личности[5].

Образование, ориентированное на развитие личностного потенциала студента и обращённое к ценностным уровням личности, способствующее становлению индивидуальности, предполагает рассмотрение мотивации как совокупности причин психологического характера, объясняющих поведение человека, его инициацию,

---

[2] **Агузумцян Р. В., Е. Б. Мурадян,** Психологическая безопасность личности в периоды поздней взрослости и старости // Психологический журнал. - 2008. - N 3. - С. 22-29.

[3] **Шлыкова Н.Л.** Психологическая безопасность субъекта профессиональной деятельности: дис. ... д-ра психол. наук. М.: РГБ, 2005 332 с.

[4] **Мурадян Е., В. Папоян.** Образовательная система с точки зрения обеспечения психологической безопасности личности студента. Ер.; Пенза; Колин: НИЦ «Социосфера», 2012. — С. 44–49.
**Агузумцян Р. В., Е. Б. Мурадян,** ук. соч.

[5] Проблемы психологической безопасности личности: теоретические и экспериментальные исследования/ Р.Агузумцян, С.Амирян, В.Папоян и др. Ер., Изд-во ЕГУ, 2013, С. 11-17

направленность и активность. В соответствии со своей теорией А. Маслоу отмечал, что потребности выступают в качестве детерминант, направляющих поведение индивида[6].

В этом контексте мотивация может рассматриваться как внутренний механизм, обеспечивающий активность и целенаправленность деятельности субъекта.

Логическим продолжением анализа мотивационных процессов является обращение к феномену жизнестойкости, поскольку именно она отражает способность личности не только инициировать и поддерживать деятельность, но и сохранять ее направленность в условиях неопределенности и внешнего давления. Жизнестойкость при этом выступает ключевым ресурсом, обеспечивающим преобразование жизненных событий в новые возможности вопреки неблагоприятным обстоятельствам.

Жизнестойкость рассматривается как ключевой ресурс преобразования жизненных событий в новые возможности вопреки внешним давлениям. Она связана с формированием более гибких ценностных ориентаций, соответствующих реалиям сегодняшнего дня. Понятие жизнестойкости относится к категориям психологии личности и направлено на расширение наших представлений о потенциале развития и адаптации личности. Проблеме личностного развития и психологической адаптации посвящено множество отечественных и зарубежных исследований.

Жизнестойкость дает возможность человеку вынести неустранимую тревогу, которая сопровождает выбор будущего, а не стремление к неизменности прошлого в ситуации экзистенциальной дилеммы. Жизнестойкость представляет собой систему убеждений о себе, о мире, об отношениях с миром. Это диспозиция, которая включает в себя три относительно независимых компонента: вовлеченность, контроль и принятие риска. Выраженность этих компонентов и жизнестойкости вообще, мешает возникновению внутренней напряженности в стрессовых ситуациях за счет стойкого совладения со стрессами и восприятия их как менее значимых[8].

Анализ научной литературы, посвящённой проблемам психологической безопасности, мотивации и жизнестойкости в образовательной среде, позволил обосновать целесообразность проведения эмпирического исследования среди студентов с учётом порядка рождения в семье как значимого социально-психологического фактора, потенциально влияющего на формирование личностных и поведенческих характеристик.

В исследовании приняли участие студенты магистратуры (63 испытуемых в возрасте от 20 до 24 лет). Были использованы следующие методики: методика САН (Методика и диагностика самочувствия, активности и настроения), тест Мильмана «Диагностика мотивационной структуры личности», «Тест жизнестойкости» С. Мадди и опросник «Шала психологической безопасности личности»[7].

В ходе обработки результатов методики САН, мы для общей выборки (n=63) выявили следующее. Все три компонента по всем группам – самочувствие (M= 5,

---

[6] **Маслоу А.** Мотивация и личность. Санкт-Петербург, 2001. – 478 с.

[7] **Мадди С. Р.** Смыслообразование в процессе принятия решений/ Психологический журнал: Российская академия наук. - 2005. Т. 26. №6. С. 87–101.

s=1,84), активность (M= 4, s=1,35) и настроение (M= 5, s=1,69), находятся в пределах нормы. В среднем у всех испытуемых наблюдается благоприятное состояние. В рамках исследования была применена методика для анализа влияния порядка рождения ребенка в семье на указанные показатели. Как видно из данных, представленных на рисунке 1. У старших детей по сравнению с другими группами наблюдаются более высокие значения по всем компонентам. У единственных детей, по сравнению со старшими и младшими, отмечаются более низкие показатели самочувствия и настроения. В группе младших детей зафиксировано наименьшее значение по компоненту активности. При этом выявленные различия носят относительный характер.

***Рис. 1.*** **Результаты методики САН у старших, единственных и младших по порядку рождения детей в семье**




Результаты исследования по тесту Мильмана «Диагностика мотивационной структуры личности» показали, что у испытуемых доминирует шкала мотивационного профиля «творческая активность» (M=29, s=7,13). В то же время, шкала «общественная полезность» (M=12, s=4,29), сравнительно ниже у всех испытуемых (n=63). Такие шкалы, как «комфорт», «общая активность», «социальный статус», «поддержание жизнеобеспечения» и «общение», близки к средним показателям.

Методика «Диагностика мотивационной структуры личности» была применена для анализа особенностей мотивационного профиля в зависимости от порядка рождения ребенка в семье. Полученные результаты представлены на рисунке 2.

Независимо от порядка рождения у всех испытуемых доминирует шкала мотивационного профиля «Творческая активность». При этом у старших и единственных детей данная шкала занимает ведущее место. В группе младших детей наибольшее значение имеет шкала «комфорт», которая выступает в качестве доминирующей.

***Рис. 2.* Результаты теста Мильмана «Диагностика мотивационной структуры личности» у старших, единственных и младших по порядку рождения детей в семье**



| | П | К | С | О | А | ТА | ОА |
|---|---|---|---|---|---|---|---|
| Старший | 22 | 22 | 20 | 23 | 21 | 30 | 16 |
| Единственний | 25 | 21 | 24 | 22 | 23 | 32 | 21 |
| Младший | 21 | 27 | 19 | 21 | 17 | 24 | 14 |

Сравнительный анализ показывает, что у единственных детей значения по всем шкалам в целом выше по сравнению с другими группами. В то же время у младших детей наблюдаются более низкие значения по большинству показателей, за исключением шкалы «Комфорт», по которой их результаты являются относительно более высокими.

Следует также отметить, что шкала «Общественная полезность» у всех испытуемых занимает наименьшую позицию в структуре мотивационного профиля.

Результаты, полученные по тесту жизнестойкости, свидетельствуют о следующем распределении показателей (n=63). Показатель по компоненту «Вовлеченность» находится в пределах нормативных значений: (M=38, s=9,11). Компонент «Контроль» демонстрирует незначительное превышение среднего уровня (M=32, s=8,18). Аналогичная тенденция наблюдается по компоненту «Принятие риска (M=16, s=7,24). В целом полученные результаты свидетельствуют о достаточно высоком уровне жизнестойкости испытуемых: все её компоненты находятся в пределах нормы или демонстрируют умеренное превышение средних значений.

Анализ сравнительных данных по компонентам жизнестойкости демонстрирует выраженные различия в зависимости от порядка рождения ребенка в семье. Установлено, что старшие дети характеризуются наиболее высокими значениями по шкалам «Вовлеченность» и «Контроль». Это может свидетельствовать о более сформированной установке на активное включение в жизненные процессы и выраженном чувстве субъектной ответственности за происходящее (рис.3).

Единственные дети занимают промежуточное положение по всем трем компонентам, что отражает относительно сбалансированный, но менее выраженный профиль жизнестойкости.

***Рис. 3.*** **Сравнительные результаты по тесту жизнестойкости**




Младшие дети демонстрируют наименьшие значения по шкалам «Контроль» и особенно «Принятие риска», что может указывать на меньшую готовность к принятию неопределенности и сниженный уровень толерантности к стрессогенным ситуациям. Отдельного внимания заслуживает компонент «Принятие риска», который в целом снижен у всех групп испытуемых. Однако у младших детей он выражен минимально, что может быть связано с особенностями семейной социализации (например, более выраженной опекой или меньшим опытом самостоятельного принятия решений). В совокупности это указывает на то, что структура жизнестойкости варьирует в зависимости от позиции ребенка в семье, причем старшие дети обладают наиболее выраженным адаптационным потенциалом. Результаты исследования по «Шкале оценки компонентов безопасности личности» показывают, что компоненты «Семья» (M=8,0; s=1,53), «Друзья» (M=6,0; s=1,61) и «Здоровье» (M=6,0; s=1,15) с большим отрывом превышают остальные показатели. А самые низкие показатели у компонентов «Общество» (M=2,0; s=0,98) и «Экология» (M=2,0; s=1,19). Учитывая порядок рождения при обработке данных шкалы компонентов безопасности, мы можем пронаблюдать, что у младших детей компонент «Семья» (M=9, s=2,05) стоит выше остальных показателей, по сравнению с единственными (M=8, s=1,44) и старшими (M=6, s=1,37) детьми. Это указывает на более сильную зависимость субъективного чувства безопасности от семейной среды. Показатели компонента «Здоровье» с единственными (M=5, s=0,79) и старшими (M=6, s=1,39) детьми тоже имеют превосходство, что связано с повышенным вниманием со стороны родителей. У старших детей наиболее выражен компонент «Друзья» (M=7; s=1,46), что может свидетельствовать о большей социальной автономии и ориентации на внешние социальные связи (рис. 4).

***Рис. 4.*** **Результаты исследования по «Шкале оценки компонентов безопасности личности» у детей с различным порядком рождения (старших, единственных и младших)**




Таким образом, полученные результаты подтверждают, что порядок рождения выступает значимым фактором, влияющим как на структуру жизнестойкости, так и на субъективную оценку безопасности личности. Единственные дети демонстрируют промежуточные значения по большинству шкал, что подтверждает их положение как «средней» группы по выраженности компонентов безопасности. Был проведен корреляционный анализ между компонентами психологической безопасности с данными методики САН и жизнестойкостью. Результаты исследования свидетельствуют о наличии положительной корреляции между компонентом безопасности «Семья» и показателями «Настроения», «Активности» и «Вовлечённости» личности. (табл.1). Также наблюдается отрицательная корреляция между информацией и принятием риска.

***Таблица 1.*** **Значения коэффициентов корреляционного анализа по методикам**

| **n=63** | Самочувствие | Активность | Настроение | Вовлеченность | Контроль | Принятие риска | Жизнестойкость |
|---|---|---|---|---|---|---|---|
| Семья | ,336 | ,543* | ,678** | ,586* | ,277 | -,062 | ,386 |
| Работа | ,387 | ,137 | ,143 | ,239 | ,029 | -,217 | ,061 |
| Друзья | ,288 | ,163 | ,349 | ,003 | ,299 | ,282 | ,240 |
| Здоровье | ,020 | -,061 | ,219 | ,186 | ,154 | -,034 | ,156 |
| Информация | -,139 | -,020 | -,030 | ,158 | -,243 | -,759** | -,262 |
| Права человека | -,090 | -,081 | -,037 | ,081 | ,164 | -,096 | ,101 |
| Общество | -,418 | ,135 | -,025 | -,247 | -,176 | -,045 | -,213 |
| Культура | ,232 | ,398 | ,088 | ,162 | ,247 | ,061 | ,222 |
| Экология | ,275 | -,042 | ,231 | ,022 | -,061 | ,379 | ,071 |

*p < 0.01, p < 0.001

Обобщая результаты данных, можно сказать, что, преобладание мотивационного профиля творческой активности взаимосвязано с тем, что такой компонент психологической безопасности, как семья был выбран как наиболее важный.

В ходе нашего исследования мы выявили также, что уровень мотивированности личности тем или иным образом зависит от позиции ребенка в семье. Основываясь в частности на теории А. Адлера, мы пришли к выводу, что в процессе творческой деятельности в целом и, в частности, в процессе обучения, как правило, наиболее мотивированы индивиды, являвшиеся единственным ребенком в семье. Выявлены достаточно показательные закономерности во взаимосвязи мотивации и жизнестойкости в зависимости от порядка рождения в семье. В отношении старших детей можно отметить, что формирование определенного уровня мотивации во многом обусловлено их ранним опытом, связанным с пребыванием в статусе единственного ребенка. В этот период они получают концентрированное внимание и поддержку со стороны родителей, что способствует формированию базового доверия к миру и уверенности в собственных возможностях. Сходные предпосылки характерны и для единственных детей.

Вместе с тем данная позиция не является однозначно благоприятной. В контексте теории А. Адлера старший ребенок после рождения младшего оказывается в ситуации утраты исключительного положения, что может сопровождаться снижением чувства стабильности и внутреннего комфорта. Это, в свою очередь, в отдельных случаях отражается на особенностях мотивации и жизнестойкости.

Младшие дети также сталкиваются со специфическими трудностями. Находясь в условиях уже сформированной семейной иерархии, где старший сиблинг нередко занимает более устойчивую позицию, они могут испытывать необходимость постоянного подтверждения собственной значимости. Это может способствовать формированию чувства неуверенности или переживанию собственной недостаточности.

Тем не менее результаты проведенного исследования позволяют заключить, что более высокий уровень жизнестойкости в целом демонстрируют старшие дети. Это объясняется не только опытом первоначального безраздельного родительского внимания, но и последующим формированием ответственности в связи с появлением младшего ребенка. Наделение определенными обязанностями и ожиданиями способствует развитию саморегуляции, устойчивости к трудностям и более выраженной личностной ответственности, что в дальнейшем положительно отражается на уровне жизнестойкости.

В целом результаты проведенного исследования подтверждают значимость порядка рождения как фактора, влияющего на формирование мотивационной сферы, жизнестойкости и компонентов психологической безопасности личности студента. Установлено, что, несмотря на сохранение всех показателей в пределах нормы, между группами испытуемых наблюдаются устойчивые различия. Старшие дети демонстрируют более высокий уровень жизнестойкости и ответственности, что связано с особенностями их семейной позиции и опытом раннего взаимодействия в семье. Единственные дети характеризуются более высокими показателями мотивации, тогда как у младших детей отмечается относительное снижение по ряду параметров при одновременном акценте на стремлении к психологическому комфорту.

Особую роль в структуре психологической безопасности играет компонент «Семья», который тесно связан с эмоциональным состоянием и личностной устойчивостью.

ՎԱՐԴՈՒՀԻ ՊԱՊՈՅԱՆ, ԱԼԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ – ***Ուսանողների հոգեբանական անվտանգության մոտիվացիան և հոգեբանական որոշիչները՝ կախված ծննդյան հերթականությունից*** – Հոդվածում ներկայացված է անձի նպաստավոր զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը՝ հոգեբանական անվտանգությունը: Այն ներառում է ոչ միայն անհատի սուբյեկտիվ փորձառությունները, կենսափորձը, այլև կենսագործունեության տարբեր համակարգերը, որոնցում անձը դրսորվում է, կրթվում և զարգանում, ձգտում ինքնիրացման: Ուսումնասիրելով ուսանողների հոգեբանական անվտանգությունը՝ անհրաժեշտ է հաշվի առնել բարձրագույն կրթության համակարգին վերաբերող որոշակի հարցեր, որոնք ենթադրաբար ծառայում են որպես ուսանողների ուսուցման և սոցիալականացման համար նպաստավոր միջավայր: Իրականացված հետազոտության համատեքստում նպատակահարմար է գտնվել դիտարկելու ուսանողների անձի հոգեբանական անվտանգության բաղադրիչների, կենսակայունության և մոտիվացիոն ոլորտի տարբեր ցուցանիշների միջև եղած փոխկապակցվածությունները ոչ միայն ուսումնական գործընթացում, այլև կախված այն հանգամանքից, թե որերորդ երեխան է նա ընտանիքում: Այս փաստը մեծապես ազդում է աշխարհի նկատմամբ երեխայի հիմնարար վստահության և ինքնավստահության զգացողության զարգացման և անձի ձևավորման վրա: Նշանակալի տարբերություններ են դուրս բերվել ուսանողների հոգեբանական անվտանգության և մոտիվացիոն ոլորտի ցուցանիշների միջև՝ կապված ընտանիքում նրանց դերի հետ: Միակ երեխաների և սիբլինգների տվյալների միջև նկատվել են հավաստի տարբերություններ: Երեխաներից մեծերը ցուցաբերել են դիմադրողականության և պատասխանատվության ավելի բարձր մակարդակ, ինչը կապված է նրանց ընտանեկան ծագման և վաղ ընտանեկան փոխազդեցությունների հետ: Միակ երեխաները բնութագրվել են ավելի բարձր մոտիվացիայի միավորներով, մինչդեռ ավելի փոքրերի մոտ որոշ պարամետրեր նվազել են՝ միաժամանակ ընդգծելով հոգեբանական հարմարավետության ցանկությունը: Բոլոր մասնակիցների մոտ «Ընտանիք» բաղադրիչը, որը սերտորեն կապված է հուզական բարեկեցության և անձնական կայունության հետ, հատուկ դեր է խաղում հոգեբանական անվտանգության կառուցվածքում:

**Բանալի բառեր** – *հոգեբանական անվտանգություն, ուսանողներ, դրդապատճառ, կենսունակություն, ծննդյան հաջորդականություն, անձնային զարգացում*

**VARDUHI PAPOYAN, ALINA GALSTYAN. –** ***Motivational and Psychological Determinants of Students' Psychological Safety Depending on Birth Order.*** **–** The article examines psychological safety as one of the key preconditions for positive personality development. It encompasses not only the individual's subjective experiences and life history but also the systems of activity within which a person functions, learns, and develops while striving for self-realization. The study of students' psychological safety requires consideration of factors related to the higher education system, which serves as an environment facilitating learning and socialization.

Within the framework of this research, particular attention is given to the relationships between components of psychological safety, hardiness, and motivational characteristics of students, both in the educational process and in relation to birth order within the family. This factor significantly influences the development of basic trust in the world, self-confidence, and overall personality formation.

The findings reveal statistically significant differences in psychological safety and motivational indicators among students depending on their birth order position within the family. Significant differences were found between the scores of only children and siblings. Older children demonstrated higher levels of resilience and responsibility, reflecting their family background and early family interactions. Single children were characterized by higher motivation scores, while younger siblings had lower scores on some parameters, highlighting their desire for psychological comfort. For all participants, the "Family" component, closely linked to emotional well-being and personal stability, plays a special role in the psychological security construct.

**Key words:** *psychological safety, students, motivation, hardiness, birth order, personality development*

**Список литературы / References**

Лабунская В. А., Психология личности. Учебное пособие / под ред. проф. П. Н. Ермакова — М.: Эксмо, 2007 — 653 с. (Labunskaya V. A. Psikhologiya lichnosti. Uchebnoe posobie / pod red. P. N. Ermakova — M.: Eksmo, 2007 — 653 s.)

Агузумцян Р. В., Е. Б. Мурадян, Психологическая безопасность личности в периоды поздней взрослости и старости // Психологический журнал. - 2008. - N 3. - С. 22-29. (Aguzumtsyan R. V., Muradyan E. B. // Psikhologicheskiy zhurnal. - 2008. - N 3. - S. 22–29.)

Шлыкова Н.Л. Психологическая безопасность субъекта профессиональной деятельности: дис. ... д-ра психол. наук. М.: РГБ, 2005 332 с. (Shlykova N. L. Psikhologicheskaya bezopasnost' sub"ekta professional'noy deyatel'nosti https://www.monographies.ru/ru/book/section?id=4560

Мурадян Е., В. Папоян. Образовательная система с точки зрения обеспечения психологической безопасности личности студента. Издательство: НИЦ «Социосфера», Ереван; Пенза; Колин. — С. 44-49. — Год издания: 2012. (Muradyan E., Papoyan V. Obrazovatel'naya sistema s tochki zreniya obespecheniya psikhologicheskoy bezopasnosti lichnosti studenta. Izdatel'stvo: NITs "Sotsiosfera"; Yerevan; Penza; Kolin. Stranitsy: 44–49. God izdaniya: 2012.)

Проблемы психологической безопасности личности: теоретические и экспериментальные исследования/ Р.Агузумцян, С.Амирян, В.Папоян и др. - Ереван, Изд-во ЕГУ, 2013, С. 11-17. (Problemy psikhologicheskoy bezopasnosti lichnosti: teoreticheskie i eksperimental'nye issledovaniya / R. Aguzumtsyan, S. Amiryan, V. Papoyan i dr. – Yerevan, Izd-vo YSU, 2013, s. 11–17

Маслоу А. Мотивация и личность. Санкт-Петербург, 2001. – 478 с. (Maslou A. Motivatsiya i lichnost'. Sankt-Peterburg, 2001. – 478 s.)

Мадди С. Р. Смыслообразование в процессе принятия решений/ Психологический журнал: Российская академия наук. - 2005. Т. 26. № 6. С. 87–101. (Maddi S.R. // Smysloobrazovanie v protsesse prinyatiya resheniy / Psikhologicheskiy zhurnal: Rossiyskaya akademiya nauk. – 2005. T. 26. No. 6. S. 87–101.)

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 95-107
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.107

# ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՍԹՐԵՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՍԱՀԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
***Երևանի պետական համալսարան***

Ժամանակակից հոգեբանական միտքը վաղուց է դուրս եկել սթրեսի՝ որպես լոկ «մեկանգամյա հարվածի» պարզունակ ընկալումից: Այսօր մենք գործ ունենք մի իրականության հետ, որտեղ սթրեսը ոչ թե իրադարձություն է, այլ շերտավորվող հիշողություն և մարդու կենսական ուժերը հյուծող, ինչպես նաև օրգանիզմի ռեսուրսները ծանրաբեռնող կամ սպառող գործոն: Հայաստանի համար այս խնդիրն ունի առավել խոցելի և խիստ թիրախային հասցեատերեր՝ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցները: Սա մի հանրույթ է, որի համար սթրեսը սկսվել է տասնամյակներ առաջ ձգվող «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» անորոշությունից, անցել 44-օրյա պատերազմի սարսափներով, համավարակի մղձավանջով, տևական շրջափակման նվաստացմամբ և ավարտվել (կամ գուցե նոր փուլ թևակոխել) լիակատար տեղահանությամբ:
Սույն ուսումնասիրությունը յուրահատուկ փորձ է՝ հասկանալու այս «դիսթրեսի քառակուսին», որը գիտական գրականության մեջ ընդունված է կոչել «կուտակային (կումուլյատիվ) սթրես» եզրույթով: Այս երևույթը սահմանվում է որպես բազմագործոն բացասական ներգործությունների արդյունք, որտեղ յուրաքանչյուր նոր սթրեսոր ոչ միայն գումարվում է նախորդին, այլև որակապես փոխում է հոգեբանական դիմակայունության կառուցվածքը: Հետազոտությունում կուտակային սթրեսը դիտարկվում է ոչ միայն տեղական փորձի, այլև համաշխարհային մեթոդաբանական զուգահեռների լույսի ներքո:

* **Սահակ Հովհաննիսյան** - մանկավարժական գիտությունների թեկնածու, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ, ԵՊՀ հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի գիտաշխատող
**Саак Оганесян** – кандидат педагогических наук, доцент кафедры общей психологии ЕГУ, научный сотрудник научно-исследовательского центра психологии ЕГУ
**Sahak Hovhannisyan** – PhD, Associate Professor, Chair of General Psychology, YSU, Senior Researcher, Research Center of Psychology, YSU
Էլ. փոստ՝ s.hovhannisyan@ysu.am ORCID: https://orcid.org/0000-0002-4733-322X

- Հետազոտությունը ֆինանսավորվել է ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից (Հետազոտական նախագիծ № 25RG-5A146)

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 16.05.2026
Գրախոսվել է՝ 30.05.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

Այսպիսով, սույն հոդվածի նպատակն է ներկայացնել կուտակային սթրեսի հիմնահարցին նվիրված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվող հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, ինչպես նաև փորձարարական փուլի միջանկյալ արդյունքներն ու կիրառական ելքերը:

**Բանալի բառեր** – *կուտակային սթրես, համալիր թեստավորում, կենսահոգեսոցիալական մոտեցում, քոփինգ-ռազմավարություններ, ռեզիլիենտություն, հոգեֆիզիոլոգիական օբյեկտիվացում, հաղթահարման ուղիներ*

Արդի աշխարհի համընդհանուր աշխարհաքաղաքական տեղաշարժերը, զինված հակամարտությունները և դրանցից բխող հարկադրված, բռնի տեղահանությունները լրջագույն մարտահրավեր են մարդու հոգեկան առողջության և բարեկեցության համար: Այս համատեքստում արցախահայության փորձառությունը յուրահատուկ ախտաբանական դաշտ է ձևավորել, որի ուսումնասիրությունները շարունակվում են մինչ այսօր: Վերջին երեք տասնամյակների «խրամատային պատերազմին» բնորոշ Արցախյան իրավիճակը, իր միջազգային մեկուսացվածությամբ հանդերձ, դանդաղ գործողության ականի նման երկարատև ազդեցություն է թողել ազգաբնակչության կոլեկտիվ հոգեկանի վրա՝ հյուծելով հոգեկան ճկունության և փոխհատուցման մեխանիզմները: Հայաստանի պարագայում արցախցիների շուրջ տեղի ունեցած իրադարձությունները (30-ամյա անորոշություն, սահմանային միջադեպեր, անհամար մարդկային կորուստներ, համավարակ, 44-օրյա պատերազմ, 10-ամսյա շրջափակում և լիակատար տեղահանություն) հանգեցրել են այնպիսի մի ծայրահեղ ծանր վիճակի, որտեղ սթրեսածին ազդեցությունները ոչ միայն բազմաշերտ են, այլև շարունակական ու կուտակային (կումուլյատիվ)[1]:

Կուտակային սթրեսի յուրահատկությունների և դրան հակազդելու կառուցակարգերի բացահայտմանը միտված դրամաշնորհային թեմայի շրջանակում իրականացվող համալիր հետազոտության նպատակն է ուսումնասիրել և բացահայտել սթրեսածին ազդեցության և դրա կուտակային էֆեկտի ընկալման, հարմարման ու հաղթահարման հոգեբանական առանձնահատկությունները՝ կապված միմյանց հաջորդող, շարունակական և բազմագործոն բացասական ներգործությունների հետ: Հետևաբար, նշված նպատակի նվաճման համար կատարված ուսումնասիրությունների ներկայիս արդյունքների քննարկումը սույն հոդվածում միտված է լուսաբանելու կուտակային սթրեսի՝ որպես բազմաշերտ և ռեսուրսները սպառող երևույթի գնահատման անհրաժեշտության, ինչպես նաև դրա հաղթահարման ուղիների գիտական հիմնավորումները:

---

[1] Տե՛ս **Hovhannisyan, S., Yaramishyan, V.** (2025). Specific features of assessing stress factors contributing to the accumulation of psychological tension. / Proceedings of the 10th International Scientific Conference on "The Current Issues in theoretical and applied psychology", Yerevan, YSU press, էջ 317: // URL: http://publishing.ysu.am/files/The_Current_Issues_In_Theoretical_and_Applied_Psychology.pdf

Այսպիսով, ընդհանրացնելով կատարված հետազոտության տեսական հիմքերի և փաստարկված տեսակետների համակարգային վերլուծությունը, կարելի է ձևակերպել կուտակային սթրեսի ուսումնասիրման հետևյալ հայեցակարգային տեսլականը:

Կուտակային (կումուլյատիվ) սթրեսը հարկավոր է դիտարկել որպես բազմակի, փոխկապակցված և ժամանակի ընթացքում կուտակվող սթրեսորների համակցված արդյունք[2]: Ի տարբերություն քրոնիկ սթրեսի, որը բնութագրում է կյանքի մեկ ոլորտ, կուտակային սթրեսը թույլ է տալիս գնահատել սթրեսորների հավաքական բնույթը կյանքի տարբեր ոլորտներում (ֆինանսներ, հարաբերություններ, աշխատանք և այլն)[3]: Սույն հիմնախնդիրը հետազոտելիս առավել նպատակահարմար է ցուցաբերել համալիր՝ կենսահոգեսոցիալական մոտեցում[4], որի շրջանակում կուտակային սթրեսը դիտարկվում է որպես անհատի կենսաբանական, հոգեբանական և սոցիալ-մշակութային համակարգերի վրա միաժամանակ ներգործող երևույթ:

Ամբողջացնելով կուտակային սթրեսին նվիրված մի շարք հետազոտություններով ապացուցված օբյեկտիվ փաստերն ու օրինաչափությունները՝ կարելի է հավաստանշել, որ սույն հոգեբանական երևույթի էությունն որոշարկվում է հետևյալ տեսական հասկացությունների դիտարկումներով՝ ալոստազ և ալոստատիկ բեռ, վաղաժամ ծերացում, ՀՀՄ (հիպոթալամուս-հիպոֆիզ-մակերիկամային) գործառույթների խաթարում (դիսռեգուլյացիա), մեդիամիջավայր (մեդիասթրես), հոգեբանական տոկունություն (ռեզիլիենտություն) և այլն:

Ալոստազը միջավայրի փոփոխվող պայմաններին և սթրեսին օրգանիզմի՝ ակտիվորեն հարմարվելու գործընթացն է: Հայդմ՝ օրգանիզմի ներքին պարամետրերի փոփոխության ճանապարհով այդ հատկության չարաշահումը հանգեցնում է «ալոստատիկ բեռի» կուտակման և գործառական համակարգերի հյուծման ու սպառման: Այսպես, երբ մարդը ենթարկվում է երկարատև ճնշող ազդեցության, նրա օրգանիզմը փորձում է գտնել նոր հավասարակշռություն՝ ալոստազի միջոցով: Սակայն, եթե սթրեսորները կրկնվում են կամ դառնում քրոնիկ, ապա ձևավորվում է ալոստատիկ ծանրաբեռնվածություն: Սա այն գինն է, որը վճարում է մարմինը հարմարվելու համար[5]: Բռնի տեղահանված

---

[2] Տե՛ս **Ավանեսյան Հ., Ավթանդիլյան Դ., Ամիրջանյան Ա.** (2026): Բռնի տեղահանված անձանց մոտ կուտակային սթրեսի միջառարկայական գնահատման անհրաժեշտության մեթոդաբանական սկզբունքներ // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, հտ. 17, № 1(49), էջ 51:

[3] Տե՛ս **Haight, B. L., Peddie, L., Crosswell, A. D. et al.** (2023). Combined effects of cumulative stress and daily stressors on daily health. Health Psychology, 42(5), էջ 325-334:

[4] Տե՛ս **Lugg, W.** (2022). The biopsychosocial model–history, controversy and Engel. Australasian Psychiatry, 30(1), էջ 55-59, նաև՝ **Ավանեսյան Հ., Ավթանդիլյան Դ., Ամիրջանյան Ա.** (2026), էջ 60:

[5] Տե՛ս **Stewart, J. A.** (2006). The detrimental effects of allostasis: allostatic load as a measure of cumulative stress. Journal of Physiological Anthropology, 25(1), էջ 133-145:

անձանց պարագայում այս բեռը դառնում է կրիտիկական (սահմանային), քանի որ սթրեսորները հաջորդում են միմյանց՝ թույլ չտալով օրգանիզմին վերադառնալ իր բնականոն վիճակին: Ակնհայտ է դառնում, որ այսպիսի սահմանային վիճակի շտկումը պահանջում է ոչ թե պարզապես առկա ախտանիշների վերացում, այլ ինքնակարգավորման հմտությունների ձևավորում ԿՀԿ (կենսաբանական հետադարձ կապի) տեխնոլոգիաների միջոցով:

Հետազոտական ճանապարհով ապացուցված է, որ «Պատերազմի սթրես» տանում են ոչ միայն առաջնագծում գտնվող մարտիկները, այլև այն տարածքների բնակիչները, որտեղ մարտեր են ընթանում, և որտեղ մարտեր չկան, այսինքն՝ հարաբերականորեն անվտանգ է: Պատերազմական գոտում երկարատև բնակությունը առաջացնում է կուտակային սթրես, որը հանգեցնում է հոգեախտաբանական տարբեր ապրումների, հուզական և ճանաչողական խանգարումների: Կյանքին սպառնացող երկարատև վտանգն առաջացնում է վախ, սարսափ և անելանելիության զգացում: Պատերազմական պայմաններում խաղաղ բնակչությանն աստիճանաբար համակում են պասիվությունը, հիասթափությունն ու դժգոհությունը, նվազում է աշխատունակությունը, վրա է հասնում ֆիզիկական և մտավոր հյուծվածությունը, թուլանում են իմունային համակարգն ու օրգանիզմի պաշտպանական գործառույթները: Մշտական լարվածությունն ու սպառնալիքի սպասումն անհնար են դարձնում հանգստանալն ու թուլանալը[6]:

Մեր հետազոտության առանցքային գիտական թեզերից մեկն էլ այն է, որ տևական սթրեսը հոգեֆիզիոլոգիական մակարդակում արագացնում է օրգանիզմի հյուծումը[7]: Միջազգային հետազոտությունների[8] վերլուծությունը ցույց է տալիս, որ կուտակային սթրեսը չի սահմանափակվում միայն հուզական դիսթրեսով, այլև հանգեցնում է կենսահոգեբանական տարիքի փոփոխության և վաղ ծերացման: Պատերազմի հետևանքները ստիպում են մարդկանց ծերանալ վաղաժամ, ինչն արտահայտվում է նրանց արտաքին տեսքի և ֆիզիկական առողջության վրա: Սա հատկապես ակնառու է ՀՀՄ առանցքի կարգավորիչ գործառույթների խանգարման (դիսռեգուլյացիայի) համատեքստում, որտեղ սթրեսային ազդեցությունները դառնում են շարունակական և կյանքին սպառնացող: Սա նշանակում է, որ տևական սթրեսի տակ գտնվող մարդու

---

[6] Տե՛ս **Захарова Н. М., Цветкова М. Г.** (2020). Психические и поведенческие нарушения у мирного населения региона, подвергшегося локальным военным действиям // Психология и право. Том 10, № 4, էջ 185-197:

[7] Տե՛ս **Epel, E. S., Crosswell, A. D., Mayer, S. E. et al.** (2018). More than a feeling: A unified view of stress measurement for population science // Frontiers in Neuroendocrinology, Vol. 49, էջ 146-169:

[8] Տե՛ս **Mischoulon, M. D.** (2019). Commentary on “Accelerated DNA Methylation Aging in U.S. Military Veterans: Results from the National Health and Resilience in Veterans Study” The American Journal of Geriatric Psychiatry, 27(5), էջ 533-535: **Финогенова, Т. А., Березина, Т. Н., Литвинова, А. В., Рыбцов, С. А.** (2023). Влияние разных видов стресса на биопсихологический возраст. Современная зарубежная психология, 12(3), էջ 41-51:

կորտիզոլի հակազդեցությունը փոխվում է. այն կա՛մ դառնում է չափազանց զգայուն (հիպոռեակտիվ), կա՛մ, ընդհակառակը, «հոգնում է» ու դադարում արձագանքել, ինչը վկայում է հարմարվողական ռեսուրսների լիակատար հյուծման մասին: Կորտիզոլը առավել հայտնի է սթրեսին օրգանիզմի պատասխանի ձևավորման վրա ունեցած ազդեցությամբ, սակայն այն նաև մասնակցում է նյութափոխանակության կարգավորմանը, նվազեցնում է բորբոքումը և մասնակցում է հիշողության ձևավորմանը: Կորտիզոլի մշտապես բարձր մակարդակները հանգեցնում են տրամադրության տատանումների, անհանգստության և դեպրեսիայի[9]: Այս համատեքստում 2020 թ. Արցախյան պատերազմն ու դրան հաջորդած 10-ամսյա շրջափակումը ստեղծեցին լարվածության կուտակման մի այնպիսի մակարդակ, որը կարելի է բնորոշել որպես «լետալ» սթրեսի հիմք: Շրջափակումը, որն ուղեկցվում էր սննդի, վառելիքի և դեղորայքի սպառմամբ, ինչպես նաև հակառակորդի կողմից տարածվող կեղծ լուրերով, ամբողջականացրեց մարդկանց հուսահատությունն ու բոլորի կողմից լքված լինելու զգացողությունը:

Հայտնի է նաև, որ կուտակային սթրեսը տարբեր սրտանոթային հիվանդությունների, տրամադրության խանգարումների, դեպրեսիայի և հետտրավմատիկ սթրեսային խանգարումների զարգացման գործոն է: Այսպես, Եյլի համալսարանի ամերիկացի գիտնականների ուսումնասիրությունը, որին մասնակցել է մոտ 450 մեծահասակ, հաստատում է կուտակային սթրեսի կապը կենսաբանական ծերացման արագացմանը հանգեցնող մի շարք հիվանդությունների հետ: Ապացուցվել է նաև կուտակային սթրեսի ազդեցությունը մարդու կենսաբանական տարիքը որոշող էպիգենետիկական ժամացույցի («GrimAge») վրա: Արդյունքները ցույց են տալիս, որ զինված հակամարտության գոտիներում ապրողների և առաջնագծում կռվողների շրջանում դրսևորվող կուտակային սթրեսն արագացնում է էպիգենետիկ ծերացումը, մեծացնում է կենսաբանական տարիքը, հիվանդացությունն ու մահացությունը[10]:

Ժամանակակից պայմաններում սթրեսի կուտակմանը զգալիորեն նպաստում է նաև տեղեկատվական հոսքերի ինտենսիվությունը և սոցիալական մեդիայի միջոցով տարածվող տագնապածին տեղեկատվությունը: Սովորաբար, մեդիասթրեսը դրսևորվում է քրոնիկ հոգնածության, անհանգստության, անտարբերության և դատարկության զգացողության միջոցով, սակայն վերջերս կատարված հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ սոցիալական ցանցերի չափազանց օգտագործումը կապված է թե՛ անհանգստության, թե՛ դեպրեսիայի և թե՛ ճանաչողական խանգարումների մակարդակի

---

[9] Տե՛ս **Young, E. S., Doom, J. R. et al.** (2021). Life stress and cortisol reactivity: An exploratory analysis of the effects of stress exposure across life on HPA-axis functioning. Development and Psychopathology, 33(1), էջ 301-312, նաև՝ **Ավանեսյան Հ., Ավթանդիլյան Դ., Ամիրջանյան Ա.** (2026), էջ 54-55:

[10] Տե՛ս **Zachary, M. H., Nia, F., Ke, X. & Rajita, S.** (2021). Psychological and biological resilience modulates the effects of stress on epigenetic aging. Translational Psychiatry, 11, էջ 601:

բարձրացման հետ, մասնավորաբար՝ հիշողության և կենտրոնացման խանգարումների հետ[11]: Այն սրում է կախվածություն առաջացնող վարքագիծը սոցիալական ցանցերում՝ ստեղծելով արատավոր շրջան: Այստեղ զգալի դեր են խաղում նաև միջնորդող գործոնները, այդ թվում՝ տեղեկատվության անընդհատ հոսքից հոգնածությունը, ինչ-որ կարևոր բան բաց թողնելու վախը և տեղեկատվական հաղորդագրությունների հավաստիության գնահատման բարձր անորոշությունը[12]: Այսպիսով, սույն հետազոտությունում սոցիալական ցանցերից առաջացած սթրեսը դիտվում է որպես բազմագործոն երևույթ, բացի այդ, միշտ չէ նաև, որ սոցիալական մեդիան ուղղակիորեն է բարձրացնում սթրեսի մակարդակը:

Թեև կուտակային սթրեսի առաջացման գործոններն ու պայմանները դեռևս ամբողջությամբ պարզված չեն, այդուհանդերձ որոշ հետազոտություններ[13] ցույց են տալիս, որ անհատական բնութագրերը, մասնավորաբար՝ դժվարությունների հաղթահարման ոճն ու անձնային դիմադրողականությունը, կարող են բուֆերային դեր խաղալ՝ ենթադրաբար բացատրելով տեղահանվածների ժողովրդագրական տվյալներից կախված հետտրավմատիկ սթրեսային խանգարումների հաճախության տարբերությունները:

Հոգեբանական տոկունությունը սահմանվում է որպես կյանքի դժվարին հանգամանքներին հարմարվելու, վերականգնվելու, հոգեկան առողջությունը պահպանելու և անգամ դրանցից հետո հոգեբանական աճ արձանագրելու ունակություն՝ անկախ դժբախտությունների հետևանքներից[14]: Սույն հետազոտության ուղղվածությունը նախանշող մոտեցումն այն է, որ հաջողված քոփինգ-ռազմավարությունները (օրինակ՝ ընտանեկան և/կամ սոցիալական աջակցությանն ապավինելը)[15] ուղղակիորեն նպաստում են հոգեբանական տոկունությանը, իսկ դիմացկուն անհատները ավելի քիչ հավանականությամբ են ունենում հետտրավմատիկ սթրեսային խանգարման ախտանիշներ, քան ոչ ռեզիլիենտները:

---

[11] Տե՛ս **Ou M., Zheng H., Kim H. K., Chen X.** (2023). A Meta-Analysis of Social Media Fatigue: Drivers and a Major Consequence / Computers in Human Behavior. Vol. 140, էջ 14:

[12] Տե՛ս **Xie T., Wang Y.** (2025). Too much social media to sleep: the chained mediation effect of information strain and depressive symptoms on the relationship between social media overload and insomnia // BMC Public Health, 25, էջ 1404:

[13] Տե՛ս **Hooberman, J., Rosenfeld, B., Rasmussen, A. & Keller, A.** (2010). Resilience in Trauma‐Exposed Refugees: The moderating effect of coping style on resilience variables. Am J Orthopsychiatr., 80, էջ 557-63: **Thompson, N. J., Fiorillo, D., Rothbaum, B. O. et all.** (2018). Coping strategies as mediators in relation to resilience and posttraumatic stress disorder. J. Affect. Disorder. 1; 225, էջ 153-159:

[14] Տե՛ս **Bonanno, G. A.** (2004). Loss, trauma, and human resilience: have we underestimated the human capacity to thrive after extremely aversive events? American Psychologist, 59(1), էջ 20-28: **Bonanno, G. A.** (2005). Resilience in the Face of Potential Trauma. Current Directions in Psychological Science, 14(3), էջ 135-138:

[15] Տե՛ս **Vogel, J. M., & Pfefferbaum, B.** (2014). Family resilience after disasters and terrorism: Examining the concept. In R. Pat-Horenczyk, D. Brom, & J. M. Vogel (Eds.), Helping children cope with trauma: Individual, family and community perspectives, էջ 81-100:

Այսպիսով, վերը դիտարկված տեսական հիմքերը, ինչպես նաև փորձարարական փուլի ընթացիկ արդյունքները հիմք են տալիս ձևավորելու կուտակային սթրեսի համալիր և բազմափուլ հետազոտական ռազմավարության առանցքը: Վերջինիս մեթոդաբանական հիմքը պետք է կազմի ինտեգրված գնահատման մոտեցումը, որը ներառում է ինչպես արտաքին սթրեսորների, այնպես էլ ներքին գործոնների չափումը: Հետազոտական համալիր մեթոդաբանության մշակման ընթացքում անդրադարձ է արվել մի քանի առանցքային միջազգային մոդելների, որոնց թվում են.

• *Ավստրալական BNLA (Ավստրալիայում նոր կյանք կառուցելու) նախագիծը:* Այս հետազոտությունը[16] շեշտը դնում է նախամիգրացիոն տրավմայի և հետմիգրացիոն սթրեսորների (մենակություն, տնտեսական խնդիրներ) փոխազդեցության վրա: Մենք նույնպես որդեգրել ենք այս բաժանումը՝ հետազոտությունում առանձնացնելով նախքան տեղահանումը (Արցախում ապրած տարիները, Արցախյան իրադարձությունները) և տեղահանումից հետո (Հայաստանում հաստատվելու դժվարությունները) եղած դրսևորումները:

• *Սիրիական փախստականների «ընտանեկան համակարգի» մոտեցումը:* Հեյզերը և Գրեդեբեկը (2023)[17] ապացուցել են, որ մոր հոգեկան առողջությունը ուղղակիորեն կանխորոշում է երեխայի կոգնիտիվ զարգացումը: Սա մեզ հուշեց ներառել սեռատարիքային գործոնների խորքային վերլուծություն և թիրախավորել ընտանիքը՝ որպես մեկ միասնական հոգեբանական միավոր, այդ թվում՝ դիտարկելով ընտանիքի անդամների կորստյան հանգամանքը:

• *Ուկրաինական ճգնաժամի փորձը:* Ռիցցիի (2023) և Օվիեդոյի (2022) աշխատանքները[18] ցույց տվեցին «ներքին կապիտալի» (հավատք, ինքնակազմակերպում) և թվային հաղորդակցության դերը ռեզիլիենտության (հոգեբանական տոկունության) ձևավորման գործում:

Մշակված մեթոդաբանությունը և փորձարկված թեստավորման փաթեթները թույլ են տալիս ոչ միայն արձանագրել հոգեկան առողջության խաթարումները, այլև բացահայտել դրանց առաջացման մեխանիզմները՝ ստեղծելով հիմքեր նպատակային և արդյունավետ հոգեբանական միջամտության համար:

---

[16] Տե՛ս **Chen, W., Hall, B. J., et al.** (2017). Pre-migration and post-migration factors associated with mental health in humanitarian migrants in Australia and the moderation effect of post-migration stressors: findings from the first wave data of the BNLA cohort study // Lancet Psychiatry. Published online February 1:

[17] Տե՛ս **Hazer, L., Gredebäck, G.** (2023). The effects of war, displacement, and trauma on child development. Humanities and Social Sciences Communications, էջ 10:

[18] Տե՛ս **Rizzi, D., Ciuffo, G., Landoni, M., Mangiagalli, M. and Ionio, C.** (2023). Psychological and environmental factors influencing resilience among Ukrainian refugees and internally displaced persons: a systematic review of coping strategies and risk and protective factors. Front. Psychol, էջ 14, նաև՝ **Oviedo, L., Seryczy´nska, B., Torralba, J., Roszak, P., Del Angel, J., Vyshynska, O., Muzychuk, I., Churpita, S.** (2022). Coping and Resilience Strategies among Ukraine War Refugees. Int. J. Environ. Res. Public Health, 19, էջ 13094:

Վերոնշյալը հիմնավորվում է մշակված համալիր փորձարարական գործիքակազմով, որը ներառում է՝ ճգնաժամային իրավիճակներում հոգեվիճակի արագ գնահատում ապահովող մեթոդիկաներ, սթրեսի արտահայտվածության կլինիկական ախտորոշում, սթրեսածին գործոնների ազդեցության հարաբերակցությունը բացահայտող հեղինակային հարցարան, հետևանքների հաղթահարման մեխանիզմները բացահայտող քոփինգ-ռազմավարություններ, օբյեկտիվ ցուցանիշների դուրսբերման հոգեֆիզիոլոգիական չափումներ:

Այսպես, բացի առաջնային կանխարգելման (սքրինինգային) ընթացակարգերից (ճեպընթաց-մեթոդիկաներ), որոնք թույլ են տալիս սեղմ ժամկետներում ստանալ վալիդ տվյալներ՝ առանց հետազոտվողին հավելյալ հոգնեցնելու, իրականացվել է նաև կլինիկական խորքային գնահատում (Դեյթոյի սթրեսի թեստի (ԴՍԹ) տեղայնացված տարբերակ), որը թույլ է տալիս տարբերակել սթրեսի արտահայտվածության չորս մակարդակները՝ թույլից մինչև ծայրահեղ:

Համալիր թեստավորման փաթեթի մշակման գործընթացն անցել է մի քանի փուլով՝ թարգմանություն, տեղայնացում և պիլոտային փորձարկում: 2023-ին իրականացված պիլոտային հետազոտությանը մասնակցել են բռնի տեղահանված 176անձինք: Հետազոտական այս փուլը բացահայտեց մի պատկեր, ըստ որի՝ տագնապն ու դեպրեսիան դարձել են «նոր նորմա», ինչը պահանջում էր անհապաղ միջամտություն:

Նախնական հետազոտությունը ցույց է տվել, որ 10.79%-ի մոտ արձանագրվել է ծանր դեպրեսիա: Տեղահանվածների միայն 28.98%-ի մոտ է դիտվել նվազագույն տագնապ, իսկ 11.36%-ն ունեցել է ուժեղ տագնապի դրսևորումներ: Մնացած բոլոր հարցվածների մոտ արտահայտվել է տարբեր աստիճանի տագնապայնություն: Հետաքրքրական է նաև սեռային համեմատությունը, ըստ որի՝ տեղահանված կանանց շրջանում տագնապայնության մակարդակը զգալիորեն ավելի բարձր է եղել:

Հաջորդիվ մշակվել է սթրեսածին գործոնների ըմբռնման և հաղթահարման մեխանիզմների հեղինակային հարցարան, որի միջոցով գնահատվել են տեղահանման փուլերին (նախամիգրացիոն, միգրացիոն, հետմիգրացիոն) բնորոշ արտաքին և ներքին սթրեսածին գործոնների ազդեցությունը: Հաշվի առնելով պիլոտային փուլի արդյունքները՝ թեստային փաթեթները լրամշակվել են. անցում է կատարվել 5-բալանոց Լայկերտի սանդղակի, ինչը նվազեցնում է կոգնիտիվ ծանրաբեռնվածությունը և ապահովում տվյալների անհրաժեշտ դիսպերսիա: Ավելին, ստացված արդյունքների հիման վրա հարցարանը լրամշակվել է և ստեղծվել է դրա թվայնացված տարբերակը, որը հնարավորություն է տալիս ինքնաշխատ կերպով հաշվարկելու հետազոտվողների ստացած միավորները:

Հատկանշական է, որ տեղեկատվական հոսքերը (մեդիասթրեսորները) ստացել են ամենաբարձր միջին ցուցանիշը (M=3.15)՝ գերազանցելով ներքին և

արտաքին այլ սթրեսորներին: Սա նշանակում է, որ սոցիալական մեդիան և անընդհատ տագնապածին լուրերը դարձել են կուտակային սթրեսի հիմնական «սնուցողները»: Հենց այս հանգամանքն էլ հիմնավորում է սույն հետազոտությունում ամրագրված մոտեցումը՝ կազմված հարցարանում մեդիամիջավայրը դիտարկելու որպես առանձին և հզոր սթրեսածին կառուցամաս:

Կուտակային սթրեսից ձերբազատվելու առավել նպատակահարմար քոպինգ-ռազմավարությունները բացահայտելու համար թվայնացվել է նաև Է. Հայմի մեթոդիկան: Վերջինիս միջոցով ուսումնասիրվել է, թե ինչպես են մարդիկ հաղթահարում վարքային, հուզական և ճանաչողական դժվարությունները: Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ «փախուստի» կամ «մեկուսացման» ռազմավարությունները միայն խորացնում են տագնապը, մինչդեռ «ճանաչողական վերաիմաստավորումը» և սոցիալական աջակցությունը ռեզիլիենտության հիմք են:

Հետազոտության հաջորդ փուլերն արդեն միտված են լինելու զուտ ախտորոշումից դեպի թիրախային միջամտությունների անցմանը, ինչը, մեր համոզմամբ, պետք է իրականացվի նկար 1-ում ներկայացված մոդելով:

***Նկար 1.*** **Կուտակային սթրեսի դիմակայման և հաղթահարման մոդելը**

| Քոպինգ ռազմավարությունների ընտրություն | Հոգեֆիզիոլոգիական օբյեկտիվացում | Ինքնակարգավորման հմտությունների ձևավորում |
|---|---|---|
| • Ճանաչողական վերաիմաստավորում և սոցիալական աջակցության որոնում: | • ԿՀԿ-ի և ԷԷԳ-ի միջոցով սթրեսի «մատնահետքերի» բացահայտում գլխուղեղի ալիքային ակտիվության մեջ: | • Թիրախային միջամտություն՝ միտված հոգեհուզական վիճակի շտկմանը և ներքին հավասարակշռության վերականգնմանը: |

Ներկայացված մոդելից բխում է, որ վերը նշված թիրախային միջամտությունների շարքում առաջնահերթ կարևորվում է կուտակային սթրեսի օրինաչափությունների հոգեֆիզիոլոգիական օբյեկտիվացումը, որը համալիր հետազոտության ամենահավակնոտ կառուցամասն է: Ենթադրվում է, որ ԿՀԿ և ԷԷԳ տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն կտան դուրս բերելու արտահայտված սթրես և տագնապ ունեցող անձանց օբյեկտիվ ցուցանիշները: Դրանց միջոցով փորձ է արվելու տեսնել կուտակային սթրեսի «մատնահետքերը» ուղեղի ալիքային ակտիվության մեջ, և այդ հենքի վրա՝ իրականացնել թիրախային խմբի հոգեհուզական վիճակների շտկում, ինչպես նաև ձևավորել հոգեշտկողական ինքնակարգավորման հմտություններ: Փորձը ցույց է տալիս,

որ նմանատիպ տեխնոլոգիաները հատկապես արդյունավետ են հետվնասվածքային սթրեսային խանգարումների (PTSD) դեպքում:

Նկար 1-ում ներկայացված սթրեսի հաղթահարման և ռեզիլիենտության ուրվագծային մոդելը պատկերավոր ցույց է տալիս հնարավոր դինամիկ անցումը՝ ոչ արդյունավետ քոփինգներից (փախուստ, մեկուսացում) դեպի տոկունություն ձևավորող ռազմավարություններ, ինչպիսիք են ճանաչողական վերաիմաստավորումը և սոցիալական աջակցությունը: Մոդելում առանձնահատուկ տեղ է հատկացված ՎՀԿ տեխնոլոգիաներին՝ որպես ինքնակարգավորման հմտությունների ձևավորման և ալոստատիկ բեռի նվազեցման գործուն միջոցի:

Այսպիսով, սթրեսի գնահատումը ճգնաժամային պայմաններում պահանջում է նուրբ հավասարակշռություն ակադեմիական ճշգրտության և կիրառական արագության միջև: Այնուհանդերձ, սույն հետազոտության կիրառական ելքը լոկ թվերի հավաքագրումը չէ: Այն միտված է ստեղծելու համալիր թեստավորման փաթեթներ և թիրախային շտկողական ծրագրեր, որոնք հասանելի կլինեն ՀՀ պրակտիկ հոգեբանների ողջ հանրույթին:

Մեր խորին համոզմամբ՝ միայն գիտականորեն հիմնավորված, հոգեֆիզիոլոգիական և կենսահոգեսոցիալական մոտեցումների համադրումը թույլ կտա գործնական հոգեբանին ոչ միայն պարզապես ախտորոշել սթրեսի հասցրած վնասը, այլև օգնել մարդկանց վերագտնելու իրենց ներքին հավասարակշռությունը ժամանակակից աշխարհում, որը դեռ շարունակում է ենթարկվել նորանոր ցնցումների:

Ամփոփելով կարելի է փաստել, որ կուտակային սթրեսի հետազոտությունը հետպատերազմյան Հայաստանում պահանջում է անցում իրադարձակենտրոն պարզ մոդելներից բազմամակարդակ կենսահոգեսոցիոմշակութային գնահատման: Հետազոտական հիմնահարցի ձևակերպումից սկսած՝ ցայժմ իրականացված աշխատանքները, տեսական վերլուծությունից մինչև գործիքակազմի թվայնացում և պիլոտային հետազոտություն, ստեղծել են ամուր գիտական հիմք հասարակության հոգեբանական դիմակայունությունն ամրապնդելու համար:

**СААК ОГАНЕСЯН – *Комплексная методология оценки кумулятивного стресса и пути преодоления в послевоенной Армении**.–** Современная психологическая мысль давно вышла за рамки упрощенного восприятия стресса, как простого «разового удара». Сегодня мы имеем дело с реальностью, где стресс — это не событие, а многослойная память и фактор, истощающий жизненные силы человека, а также обременяющий или потребляющий ресурсы организма. Для Армении эта проблема затрагивает наиболее уязвимых и целенаправленно пострадавших: наших соотечественников, насильственно перемещенных из Арцаха. Это сообщество (социум), для которого стресс начался с длившейся

* Исследование было поддержано Комитетом по высшему образованию и науке МЭСКС РА (Научно-исследовательский проект № 25РГ-5А146)

десятилетиями неопределенности «ни войны, ни мира», прошел через ужасы 44-дневной войны, кошмар пандемии, унижение длительной блокады и завершился (или, возможно, вступил в новую фазу) полным перемещением населения.
Данное исследование представляет собой уникальную попытку понять этот «квадрат стресса», который в научной литературе обычно называют «кумулятивным стрессом». Это явление определяется как результат многофакторных негативных воздействий, где каждый новый стрессор не только усиливает предыдущий, но и качественно изменяет структуру психологической устойчивости. В данном исследовании кумулятивное напряжение рассматривается не только в свете локального опыта, но и в свете глобальных методологических параллелей.
Таким образом, цель данной статьи — представить теоретические и методологические основы исследования, проводимого в рамках грантовой программы, посвященной проблеме кумулятивного стресса, а также промежуточные результаты и практические выводы экспериментального этапа.

**Ключевые слова:** *кумулятивный стресс, комплексное тестирование, биопсихосоциальный подход, копинг-стратегии, резилиентность, психофизиологическая объективация, пути преодоления*

**SAHAK HOVHANNISYAN – *Comprehensive Methodology for Assessing Cumulative Stress and Ways of Overcoming in Post-war Armenia*[*].–** Modern psychological thought has long since moved beyond the simplistic perception of stress as a mere "one-time blow." Today, we are dealing with a reality where stress is not an event, but a layered memory and a factor that depletes a person's vital forces, as well as burdens or consumes the body's resources. For Armenia, this problem has the most vulnerable and strictly targeted recipients: our compatriots forcibly displaced from Artsakh. This is a community (society) for which stress began with the decades-long uncertainty of "neither war nor peace" passed through the horrors of a 44-day war, the nightmare of a pandemic, the humiliation of a prolonged blockade, and culminated (or perhaps entered a new phase) in total displacement.
This study is a unique attempt to understand this "distress square," which in scientific literature is commonly called "cumulative stress." This phenomenon is defined as the result of multifactorial negative influences, where each new stressor not only adds to the previous one, but also qualitatively changes the structure of psychological resilience. In the study, cumulative stress is considered not only in the light of local experience, but also in the light of global methodological parallels.
Thus, the purpose of this article is to present the theoretical and methodological foundations of the research carried out within the framework of the grant program dedicated to the issue of cumulative stress, as well as the intermediate results and practical outcomes of the experimental stage.

**Key words:** *cumulative stress, comprehensive testing, biopsychosocial approach, coping strategies, resilience, psychophysiological objectification, ways of overcoming*

[*] The research was supported by the Higher Education and Science Committee of MESCS RA (Research project № 25RG-5A146)

Օգտագործված գրականություն / References

**Ավանեսյան Հ., Ավթանդիլյան Դ., Ամիրջանյան Ա.** (2026). Բռնի տեղահանված անձանց մոտ կուտակային սթրեսի միջառարկայական գնահատման անհրաժեշտության մեթոդաբանական սկզբունքներ // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, հտ. 17, № 1(49), 51-62: *[Avanesyan H., Avt'andilyan D., Amirjanyan A. (2026). Brrni teghahanvats andzants' mot kutakayin st'resi mijarrarkayakan gnahatman anhrazheshtut'yan met'vodabanakan skzbunk'ner: Banber Yerevani hamalsarani. P'ilisop'ayut'yun, Hogebanut'yun, Ht. 17, № 1(49), 51-62:]* DOI: https://doi.org/10.46991/BYSU.E/2025.17.1.051

**Захарова Н. М., Цветкова М. Г.** (2020). Психические и поведенческие нарушения у мирного населения региона, подвергшегося локальным военным действиям. Психология и право. Том 10, № 4, с. 185-197. *[Zaharova N. M., Cvetkova M. G. (2020). Psihičeskie i povedenčeskie narušeniâ u mirnogo naseleniâ regiona, podvergšegosâ lokal'nym voennym dejstviâm. Psihologiâ i pravo. Tom 10, № 4, s. 185-197.]* DOI: doi:10.17759/psylaw.2020100413

**Финогенова, Т. А., Березина, Т. Н., Литвинова, А. В., Рыбцов, С. А.** (2023). Влияние разных видов стресса на биопсихологический возраст. Современная зарубежная психология, 12(3), 41-51. *[Finogenova, T. A., Berezina, T. N., Litvinova, A. V., Rybcov, S. A. (2023). Vliânie raznyh vidov stressa na biopsihologičeskij vozrast. Sovremennaâ zarubežnaâ psihologiâ, 12(3), 41-51.]* DOI: https://doi.org/10.17759/jmfp.2023120304

**Bonanno, G. A.** (2004). Loss, trauma, and human resilience: have we underestimated the human capacity to thrive after extremely aversive events? American Psychologist, 59(1), 20-28. DOI: https://doi.org/10.1037/0003-066x.59.1.20;

**Bonanno, G. A.** (2005). Resilience in the Face of Potential Trauma. Current Directions in Psychological Science, 14(3), 135-138. DOI: https://doi.org/10.1111/j.0963-7214.2005.00347.x

**Chen, W., Hall, B. J., et al.** (2017). Pre-migration and post-migration factors associated with mental health in humanitarian migrants in Australia and the moderation effect of post-migration stressors: findings from the first wave data of the BNLA cohort study // Lancet Psychiatry. Published online February 1. DOI: http://dx.doi.org/10.1016/S2215-0366(17)30032-9

**Epel, E. S., Crosswell, A. D., Mayer, S. E. et al.** (2018). More than a feeling: A unified view of stress measurement for population science. Frontiers in Neuroendocrinology, Vol. 49, 146-169. DOI: https://doi.org/10.1016/j.yfrne.2018.03.001

**Haight, B. L., Peddie, L., Crosswell, A. D. et al.** (2023). Combined effects of cumulative stress and daily stressors on daily health. Health Psychology, 42(5), 325-334. DOI: doi: 10.1037/hea0001281

**Hazer, L., Gredebäck, G.** (2023). The effects of war, displacement, and trauma on child development. Humanities and Social Sciences Communications, 10:909. DOI: https://doi.org/10.1057/s41599-023-02438-8

**Hooberman, J., Rosenfeld, B., Rasmussen, A. & Keller, A.** (2010). Resilience in Trauma-Exposed Refugees: The moderating effect of coping style on resilience variables. Am J Orthopsychiatr., 80, 557-63. DOI: https://doi.org/10.1111/j.1939-0025.2010.01060

**Hovhannisyan, S., Yaramishyan, V.** (2025). Specific features of assessing stress factors contributing to the accumulation of psychological tension. / Proceedings of the 10th International Scientific Conference on "The Current Issues in theoretical and applied psychology", Yerevan, YSU press, p. 317-320. // URL: http://publishing.ysu.am/files/The_Current_Issues_In_Theoretical_and_Applied_Psychology.pdf

**Lugg, W.** (2022). The biopsychosocial model–history, controversy and Engel. Australasian Psychiatry, 30(1), 55-59. DOI: https://doi.org/10.1177/10398562211037333

**Mischoulon, M. D.** (2019). Commentary on "Accelerated DNA Methylation Aging in U.S. Military Veterans: Results from the National Health and Resilience in Veterans Study". The American Journal of Geriatric Psychiatry, 27(5), 533-535. DOI: 10.1016/j.jagp.2019.01.008

**Ou M., Zheng H., Kim, H. K., Chen, X.** (2023). A Meta-Analysis of Social Media Fatigue: Drivers and a Major Consequence / Computers in Human Behavior. Vol. 140, 1–15. DOI: https://doi.org/10.1016/j.chb.2022.107597

**Oviedo, L., Seryczy´nska, B., Torralba, J., Roszak, P., Del Angel, J., Vyshynska, O., Muzychuk, I., Churpita, S.** (2022). Coping and Resilience Strategies among Ukraine War Refugees. Int. J. Environ. Res. Public Health, 19, 13094. DOI: https://doi.org/10.3390/ijerph192013094

**Rizzi, D., Ciuffo, G., Landoni, M., Mangiagalli, M. and Ionio, C.** (2023). Psychological and environmental factors influencing resilience among Ukrainian refugees and internally displaced persons: a systematic review of coping strategies and risk and protective factors. Front. Psychol. 14:1266125. DOI: https://doi.org/10.3389/fpsyg.2023.1266125

**Stewart, J. A.** (2006). The detrimental effects of allostasis: allostatic load as a measure of cumulative stress. Journal of Physiological Anthropology, 25(1), 133-145. DOI: https://doi.org/10.2114/jpa2.25.133

**Thompson, N. J., Fiorillo, D., Rothbaum, B. O. et al.** (2018). Coping strategies as mediators in relation to resilience and posttraumatic stress disorder. J. Affect. Disorder. 1; 225:153-159. DOI: https://doi.org/10.1016/j.jad.2017.08.049.

**Vogel, J. M., & Pfefferbaum, B.** (2014). Family resilience after disasters and terrorism: Examining the concept. In R. Pat-Horenczyk, D. Brom, & J. M. Vogel (Eds.), Helping children cope with trauma: Individual, family and community perspectives (pp. 81–100). // URL: https://psycnet.apa.org/record/2013-44051-005

**Xie T., Wang Y.** (2025). Too much social media to sleep: the chained mediation effect of information strain and depressive symptoms on the relationship between social media overload and insomnia // BMC Public Health, 25:1404. DOI: https://doi.org/10.1186/s12889-025-22698-0

**Young, E. S., Doom, J. R. et al.** (2021). Life stress and cortisol reactivity: An exploratory analysis of the effects of stress exposure across life on HPA-axis functioning. Development and Psychopathology, 33(1), 301-312: DOI: https://doi.org/10.1017/S0954579419001779

**Zachary, M. H., Nia, F., Ke, X. & Rajita, S.** (2021). Psychological and biological resilience modulates the effects of stress on epigenetic aging. Translational Psychiatry, 11:601. DOI: https://doi.org/10.1038/s41398-021-01735-7

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 108-119
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.108

# ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆԹԱԴՐՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՈՒԶԱԿԱՆ ԱՅՐՄԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԻ ՇԵՇՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ (Շտապօգնության բժիշկների, փրկարարների և զինվորական սակրավորների օրինակով)

ԱԻԴԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

Արտակարգ իրավիճակներ ներառող մասնագիտական գործունեության պայմաններում մասնագետի բարոյահոգեբանական կայուն վիճակը արդյունավետ աշխատանքի առանցքային նախապայման է: Արտակարգ պայմաններում հայտնվելը մասնագետի անձի համար հոգեհուզական մեծ գործոն է, որը նրա կյանքի և առողջության համար ռիսկային տարրեր է պարունակում: Այն զգալի ներգործություն է ունենում անձի օրգանիզմի և հոգեկան համակարգի վրա՝ ստիպելով հարմարվել կենսագործունեության հարափոփոխ պայմաններին:
Ժամանակի ընթացքում այս մասնագետների շրջանում, կապված բարոյական, հոգեբանական ու ֆիզիկական ծանրաբեռնվածությունների հետ, ձևավորվում են անհրաժեշտ հոգեբանական որակներ (սթրեսակայունություն, հոգեբանական ճկունություն, ինքնակարգավորման կարողություն և այլն), որոնք էլ պայմանավորում են աշխատանքային դժվարությունների հաղթահարման արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, երկարատև լարվածությունն ու բարձր պատասխանատվությունը կարող են նպաստել հուզական ռեսուրսների սպառմանը, մասնագիտական մոտիվացիայի նվազմանը և հուզական այրման համախտանիշի ձևավորմանը:
Մասնագետների հոգեբանական առողջության պահպանման և ռիսկային խմբերի նախանշման համար կիրառական առումով առանձնահատուկ նշանակություն է

* **Աիդա Վարդանյան –** ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի ասպիրանտ, ԵՊԲՀ հոգեբուժության ամբիոնի բժշկական հոգեբանության կուրս, ասիստենտ
**Аида Варданян –** аспирантка кафедры общей психологии ЕГУ, ассистент кафедра психиатрии, курс медицинской психологии ЕГМУ
**Aida Vardanyan** – PhD Student at the YSU Chair of General Psychology, Assistant at the YSMU Chair of Psychiatry, Medical Psychology Course
Էլ. փոստ՝ aida.vardanyan@ysu.am https://orcid.org/0009-0004-3229-3167

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 19.05.2026
Գրախոսվել է՝ 31.05.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

հաղորդվում հուզական այրման համախտանիշի և անձի շեշտվածության կապերի ուսումնասիրությանը: Անձնային շեշտվածությունների որոշ տեսակներ կարող են հանդես գալ ինչպես պաշտպանիչ, այնպես էլ խոցելիություն մեծացնող գործոններ՝ պայմանավորելով սթրեսային իրավիճակներին արձագանքման առանձնահատկությունները: Հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել կանխարգելիչ ծրագրերի մշակման, մասնագիտական և հոգեբանական համապատասխանության գնահատման գործիքակազմի կատարելագործման և մասնագիտական արդյունավետության բարձրացման համար: Տվյալ հիմնախնդրի գիտական վերլուծությունը կարևոր է ոչ միայն տեսական, այլև գործնական մակարդակում՝ նպաստելով արտակարգ պայմաններում գործող մասնագետների հոգեբանական բարեկեցության պահպանմանը:

**Բանալի բառեր** – *անձի շեշտվածություն, հուզական այրման սինդրոմ, հոգեբանական ծանրաբեռնվածություն, հուզական ռեսուրսներ, սթրեսադիմացկունություն*

Հուզական այրման առաջացման մեջ անձնահեն գործոնի հարցը համեմատաբար վերջերս սկսել է գրավել մասնագետների ուշադրությունը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ արտակարգ իրավիճակներ ներառող ծառայությունների աշխատակիցների շրջանում այրման համախտանիշը դրսևորում է միջինից բարձր մակարդակներ[1]: Այս պայմաններում գործող մասնագետները, պայմանավորված իրենց մասնագիտական գործունեության բնույթով, ենթարկվում են սթրեսային գործոնների համալիրի, ինչը հետևանքներ է թողնում նրանց ֆիզիկական և հոգեկան վիճակի վրա: Այսպիսի սթրեսային պայմանները հաճախ կապված են անորոշության, ռիսկի, հուզական և ֆիզիկական ծանրաբեռնվածության ու քնի պակասի հետ: Հուզական հագեցվածության բարձր մակարդակը նպաստում է դյուրագրգռության, տագնապայնության, նյարդային պոռթկումների դրսևորմանը, որոնք դիտարկվում են որպես հուզական այրման համախտանիշին բնորոշ ախտանշաններ[2]: Այս ամենի հետևանքով հաճախ տեղի են ունենում վարքագծային մի շարք փոփոխություններ և նույնիսկ խանգարումներ (սեռական, սննդային վարքի և այլն), որոնց հիմքում հիմնականում

---

[1] Տե՛ս **Alanazy A.R.M., Alruwaili A.** The Global Prevalence and Associated Factors of Burnout among Emergency Department Healthcare Workers and the Impact of the COVID-19 Pandemic: A Systematic Review and Meta-Analysis. Switzerland, Healthcare, 2023, էջ 2-4: Տե՛ս նաև՝ **Potter C.** To what extent do nurses and physicians working with emergency department experience burnout: A review of the literature. Australia, Australasian Emergency Nursing Journal, 9(2), 2006, էջ 57-59, **Somville F., Van der Mieren G., De Cauwer H., Van Bogaert P., Franck E.** Burnout, stress and Type D personality amongst hospital/emergency physicians. Germany, International Archives of Occupational and Environmental Health. 2022, էջ 389-390, **Teixeira C., Ribeiro O., Fonseca A.M., Carvalho A.S.** Burnout in intensive care units—A consideration of the possible prevalence and frequency of new risk factors: A descriptive correlational multicentre study. Great Britain, BMC Anesthesiology, 2013, էջ 1-3:

[2] Տե՛ս **Միրզոյան Վ., Միքայելյան Մ.** Մասնագիտական դեֆորմացիայի տեսակներն ու դրա վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնները / ՎՇՈւ գիտական աշխատությունները, թիվ 3, Վանաձոր, 2022, էջ 4:

ընկած են հոգեբանական պատճառներ: Այս խանգարումները կարող են խիստ կապված լինել խառնվածքի, բնավորության, ինչպես նաև սթրեսի հաղթահարման համար անձի պաշտպանական ներուժի անբավարարության հետ:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել արտակարգ պայմաններում գործող մասնագետների անհատականության այնպիսի բնութագրերի ազդեցությունը մասնագիտական այրման համախտանիշի զարգացման վրա, ինչպիսին է անձի շեշտվածությունը: Ենթադրաբար, անձի շեշտվածության տարբեր տիպերի դեպքում այրման համախտանիշի հասնելու ցուցանիշները կարող են տարբեր լինել: Սույն հետազոտությամբ փորձել ենք պարզել, թե շեշտվածության տիպերից որոնք են առավել միտված հուզական այրման: Հետազոտությանը մասնակցել են փրկարարներ, շտապօգնության բժիշկներ և զինվորականներ:

Վերջին տարիներին գիտական հրապարակումներում կարելի է հանդիպել այնպիսի մոտեցումների, որոնց համաձայն՝ մասնագիտական այրման համախտանիշը տարածում է գտնում ոչ միայն ուսուցիչների, հոգեբանների շրջանում, այլև այն աշխատողների վրա, որոնց գործունեությունը կապված է մշտական մասնագիտական ռիսկի հետ՝ ոստիկանների, զինվորականների, փրկարարների և այլն[3]:

Աշխատանքային սթրեսը բազմաչափ և համակողմանի երևույթ է, որը կարելի է ուսումնասիրել հոգեբանական և ֆիզիոլոգիական արտահայտված հակազդումներով: Այն ազդում է աշխատողների առողջության (օրինակ՝ արյան բարձր ճնշում, սրտանոթային հիվանդություններ, իմունային համակարգի թուլացում) և նրանց արտադրողականության վրա (օրինակ՝ կենտրոնացման պակաս, մոտիվացիայի անկում, թիմային աշխատանքի խաթարում):

Աշխատանքային գործընթացի շատ կողմեր կարող են սթրես առաջացնել, իսկ արտակարգ պայմաններում աշխատելը անկասկած ազդում է մասնագետի աշխատանքային սթրեսի ուժգնության վրա: Աշխատանքային լարվածության մակարդակ, իհարկե, որոշ չափով պետք է լինի, բայց այն սահմաններում, որում այն չի վնասի աշխատողին, այլ կապահովի օրգանիզմի ներուժի շարժունությունը, կխթանի առողջ մրցակցությունը, կնպաստի ավելի արդյունավետ գործունեությանը:

Մասնագիտական այրման ռիսկային խմբում ընդգրկվածությունը արտակարգ պայմաններում գործող մասնագետների շրջանում պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպիսիք են՝ մասնագիտական գործունեության միջավայրում մշտական սթրեսային գործոնների աճը, միջանձնային կոնֆլիկտները, կյանքին սպառնացող իրավիճակները և այլն:

---

[3] Տե՛ս **Волчанский М.Е., Деларю В.В., Болучевская В.В., Золотарёва О.С.** Психология и педагогика: Учебно-методическое пособие для студентов медицинских вузов. 3-е изд., доп. и перераб. Волгоград, ВолгГМУ, 2018, էջ 240:

Բնավորության շեշտվածության յուրաքանչյուր տիպի հիմքում ընկած են նյարդային համակարգի առանձնահատկությունների, անձնային հատկությունների որոշակի համադրություններ: Այս տիպերին բնորոշ են նյարդային համակարգի անհավասարակշռությունը, նևրոտիզմը, կասկածամտությունը և ագրեսիվությունը[4]:

Շեշտվածությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ միջանձնային հաղորդակցման, հարաբերությունների ձևավորման և մասնագետի գործունեության արդյունավետության վրա: Այն մասնագետները, որոնք ունեն անձի շեշտվածություն, հաճախ ունենում են դժվարություններ՝ կապված հուզական ինքնակառավարման հետ, որի դեպքում իջնում է աշխատանքային արդյունավետությունը, ինչն այդ տիպերից մեծ մասի դեպքում հանգեցնում է ապահարմարման և անկառավարելիության:

Անձնային դրսևորումներում բնավորության շեշտված գծերը կարող են ձեռք բերել առանցքային նշանակություն և փոխել անձի ողջ նկարագիրը, իսկ արտակարգ պայմաններ ներառող աշխատանք կատարելիս երբեմն էլ հիմք հանդիսանալ որոշակի հոգեբանական խնդիրների համար, ինչպիսին է հենց մասնագիտական հուզական այրումը:

Այսպիսով, ենթադրվում է, որ արտակարգ իրավիճակներում գործող այն մասնագետները, որոնց շրջանում առկա է անձի շեշտվածություն (օրինակ՝ մարդկանց խնամքի, օգնություն ցուցաբերելու հարցում բարձր պատասխանատվություն), կարող են ավելի խոցելի լինել հուզական այրման նկատմամբ: Այս երևույթը վերաբերում է այն դեպքին, երբ երկարատև, մշտական սթրեսը և հոգնածությունը հանգեցնում են հոգեկան և ֆիզիկական հյուծվածության, որը մաշում է մասնագետի ներսում հուզական պաշարները:

Պատճառներից մեկն այն է, որ անձի այս կամ այն շեշտվածությունը կարող է առաջացնել ավելի կամ պակաս ներգրավվածություն աշխատանքում, ինչը կարող է անդրադառնալ սթրեսի մակարդակի և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության չափի վրա: Երբ այս գործոնները համադրվում են արտակարգ իրավիճակներում աշխատելու մշտական պահանջներով, մասնագետը հուզական այրման առումով դառնում է առավել խոցելի:

Անձի շեշտվածությունը, որը վերաբերում է այն մարդկանց բնութագրին, ովքեր ունեն բարձր զգացմունքային ներգրավվածություն, պատասխանատվություն կամ զոհաբերելու պատրաստակամություն (օր.՝ խնամող մասնագետներ, բժիշկներ, սոցիալական աշխատողներ), կարող է նպաստել հուզական այրման առաջացմանը մի քանի առանցքային եղանակներով:

---

[4] Տե՛ս **Леонгард К.** Акцентуированные личности. Москва, Медицина, 1977, էջ 15-40, տե՛ս նաև՝ **Личко А. Е.** Психопатии и акцентуации характера у подростков. Санкт-Петербург, Питер, 1983, էջ 20-45:

• **Բարձր պատասխանատվություն և հոգեկան գերծանրաբեռնվածություն:**

Անձնային շեշտվածություն ունեցող անձինք հաճախ կրում են մեծ պատասխանատվություն այլ մարդկանց համար, ինչը կարող է հանգեցնել երկարատև սթրեսի, քանի որ նրանք մշտապես մտահոգված են իրենց աշխատանքով:

• **Սահմանափակ ինքնախնամք:**

Այսպիսի մարդիկ հաճախ չեն հատկացնում բավարար ժամանակ իրենց անձնական հոգևոր ու ֆիզիկական առողջությանը, քանի որ առաջնային են համարում ուրիշներին աջակցելը: Սեփական կարիքները հաճախ երկրորդ պլան են մղվում, ինչը հանգեցնում է ֆիզիկական և նյարդահոգեկան հյուծվածության:

• **Շատ ինտենսիվ հուզական ներգրավվածություն:**

Անձի շեշտվածությունը կարող է հանգեցնել աշխատանքում շատ բարձր զգացմունքային ներգրավվածության: Հաճախ մասնագետները զգում են, որ չեն կարող ապրել առանց որակյալ աջակցություն ցուցաբերելու: Նման հոգեկան ծանրաբեռնվածությունը կարող է դանդաղորեն սպառել մասնագետին:

• **Հաճախակի խոչընդոտներ և ոչ բավարար աջակցություն:**

Բարձր պատասխանատվություն կրող անձինք հաճախ կանգնում են խնդիրների առաջ, որոնք դուրս են իրենց ուժերից, բայց նրանք չեն ուզում ընդունել ձախողումները: Եթե չեն ստանում բավարար աջակցություն, ապա դա կարող է խորացնել հուզական այրման գործընթացը[5]:

Ենթադրվում է, որ անձի շեշտվածության որոշ տիպեր առավել հակված են մասնագիտական այրման սինդրոմի՝ հատկապես այն մասնագիտություններում, որոնք ներառում են սթրեսային և արտակարգ իրավիճակներ, պահանջում են բարձր պատասխանատվություն, հոգեբանական կամ ֆիզիկական խիստ ծանրաբեռնվածություն:

Անշուշտ, հուզական այրումը արտակարգ իրավիճակներում գործող մասնագետների շրջանում կարող է լինել բազմաթիվ գործոնների հետևանք, սակայն այս հետազոտության շրջանակներում մենք դիտարկել ենք այրման փոխհարաբերակցությունը անձի շեշտվածության հետ: Այդ կապի ուսումնասիրման համար կիրառվել է Վ. Բոյկոյի անձնային հարցարանը և Ա. Ե. Լիչկոյի անձի շեշտվածության հարցարանը[6]:

Հետազոտությունը իրականացվել է «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և Երևանի քաղաքապետարանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի բժիշկների, ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության աշխատակիցների և ՀՀ ԶՈՒ զինվորական սակրավորների շրջանում: Հետազոտությանը մասնակցել են և՛ կանայք, և՛ տղամարդիկ, որոնց տարիքը եղել է 22-53-ի

---

[5] Տե՛ս **Freudenberger H. J.** Staff Burnout. USA, Journal of Social Issues, 30(1), 1974, էջ 159–165, տե՛ս նաև՝ **Maslach C. & Jackson, Susan E.** Maslach Burnout Inventory Manual (2nd Edition). Palo Alto, California, Consulting Psychologists Press. 1986, էջ 4-9:

[6] https://testometrika.com/diagnosis-of-abnormalities/accentuation-of-character-licko/

միջակայքում, իսկ աշխատանքային փորձը` 2-25 տարի: Մասնակիցները գրավոր պատասխանել են հարցարանների հարցադրումներին: Ստորև ներկայացնում ենք այն հետազոտական արդյունքները, որոնք ստացվել են այդ կապի ուսումնասիրման գործընթացում:

*Աղյուսակ 1*

**Հուզական այրման ախտանիշների և փուլերի դրսևորումները (n2+n3+n2+n8+n9+n3+n9+n2+n1+n9+n1+n1=50)**

| | M n=2 | M n=3 | M n=2 | M n=8 | M n=9 | M n=3 | M n=9 | M n=2 | M n=1 | M n=1 | M n=1 | M n=9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հոգեվնասվածքային իրավիճակների ապրում | 17 | 58 | 21 | 24 | 159 | 48 | 47 | 5 | 9 | 12 | 3 | 93 |
| Անբավարարվածություն սեփական անձից | 11 | 33 | 8 | 38 | 63 | 23 | 34 | 11 | 5 | 5 | 13 | 32 |
| Մեկուսացվածություն | 11 | 40 | 13 | 15 | 73 | 18 | 13 | 20 | 6 | 2 | 12 | 25 |
| Տագնապ և դեպրեսիա | 38 | 81 | 28 | 28 | 153 | 38 | 45 | 0 | 13 | 8 | 10 | 62 |
| **Լարվածության փուլ** | **77** | **212** | **70** | **105** | **448** | **127** | **139** | **36** | **33** | **27** | **38** | **212** |
| Ոչ համարժեք հուզական արձագանք | 52 | 74 | 23 | 97 | 179 | 45 | 58 | 22 | 20 | 10 | 5 | 85 |
| Բարոյահուզական ապակողմնորոշում | 39 | 39 | 32 | 141 | 130 | 44 | 157 | 7 | 10 | 15 | 15 | 106 |
| Հույզերի խնայում | 88 | 124 | 92 | 147 | 310 | 61 | 95 | 48 | 31 | 20 | 6 | 138 |
| Մասնագիտական պարտականությունների կրճատում | 32 | 51 | 35 | 96 | 138 | 45 | 83 | 17 | 13 | 18 | 13 | 82 |
| **Դիմադրության փուլ** | **211** | **288** | **182** | **481** | **757** | **195** | **393** | **94** | **74** | **63** | **39** | **411** |
| Հուզականության պակաս | 15 | 67 | 27 | 74 | 105 | 32 | 58 | 18 | 5 | 18 | 11 | 53 |
| Հուզական մեկուսացվածություն | 42 | 46 | 31 | 87 | 113 | 38 | 103 | 22 | 13 | 15 | 13 | 73 |
| Անձնական մեկուսացվածություն | 38 | 67 | 33 | 56 | 159 | 43 | 24 | 5 | 8 | 8 | 0 | 42 |
| Հոգեմարմնական և հոգեվեգետատիվ խանգարումներ | 30 | 55 | 40 | 20 | 95 | 28 | 33 | 10 | 8 | 3 | 12 | 42 |
| **Հյուծվածության փուլ** | **125** | **235** | **131** | **237** | **472** | **141** | **218** | **55** | **34** | **44** | **36** | **210** |

Այսպիսով, կատարված հետազոտության արդյունքների համաձայն, արտակարգ պայմաններում գործող վերոնշյալ մասնագետների շրջանում հուզական այրման սինդրոմի պատկերում գերակշռում են մասնագիտական այրման դիմադրության փուլի ախտանիշները: Երկրորդ տեղում արդյունքների ցուցանիշով հյուծվածության փուլն է, այնուհետև` լարվածության փուլը:

Հետազոտության 50 մասնակիցներից 2-ը դրսևորել են անձի շիզոիդ տիպի շեշտվածություն (1 բժիշկ, 1 զինվորական, 34-44 տ., 4-8 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլի ձևավորվածություն առկա չէ. 2-ը գրանցել են դիմադրության փուլի ձևավորվածություն, իսկ հյուծվածության փուլի ձևավորվածություն՝ 1 մասնակից:

3 մասնակից դրսևորել է անձի ցիկլոիդ տիպի շեշտվածություն (1 բժիշկ, 2 զինվորական, 24-41տ., 2-19 տարվա աշխ. փորձ): Նրանցից 3-ը գրանցել են լարվածության և դիմադրության փուլերի ձևավորվածություն, իսկ հյուծվածության փուլի ձևավորվածություն գրանցել են 2-ը:

2 մասնակից դրսևորել է անձի էպիլեպտոիդ տիպի շեշտվածության հակում (2 զինվորական, 41-50 տ., 13-15 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլի ձևավորվածություն առկա չէ, դիմադրության փուլի ձևավորվածություն գրանցել են 2 մասնակից, իսկ հյուծվածության փուլի ձևավորվածություն՝ 1-ը:

8 մասնակից դրսևորել է անձի շիզոիդ տիպի շեշտվածության հակում (3 բժիշկ, 4 փրկարար, 1 զինվորական, 25-50 տ., 3-23 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլի ձևավորվածություն առկա չէ, դիմադրության փուլի ձևավորվածություն գրանցել են 4 մասնակից, իսկ հյուծվածության փուլի ձևավորվածություն առկա չէ:

9 մասնակից դրսևորել է անձի փսիխոասթենիկ տիպի շեշտվածության հակում (3 բժիշկ, 3 փրկարար, 3 զինվորական, 23-51 տ., 2-22 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլի ձևավորվածություն գրանցել են 5 մասնակից, դիմադրության փուլի ձևավորվածություն՝ 6-ը, իսկ հյուծվածության փուլի ձևավորվածություն՝ 5 մասնակից:

3 մասնակից դրսևորել է անձի ցիկլոիդ տիպի շեշտվածության հակում (1 բժիշկ, 1 փրկարար, 1 զինվորական, 22-45 տ., 7-24 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլի ձևավորվածություն գրանցել է 1 մասնակից, դիմադրության փուլի ձևավորվածություն՝ 2, իսկ հյուծվածության փուլի ձևավորվածություն գրանցել է 1 մասնակից:

9 մասնակից դրսևորել է անձի հիպերտիմ տիպի շեշտվածության հակում (4 բժիշկ, 3 փրկարար, 2 զինվորական, 22-45 տ., 2-24 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլի ձևավորվածություն առկա չէ, դիմադրության փուլի ձևավորվածություն գրանցել է 2 մասնակից, իսկ հյուծվածության փուլի ձևավորվածություն չի գրանցվել:

2 մասնակից դրսևորել է անձի ասթենոնևրոտիկ տիպի շեշտվածության հակում (1 բժիշկ, 1 զինվորական, 32-39 տ., 10-16 տարվա աշխ. փորձ): Լարվածության, դիմադրության և հյուծվածության փուլերի ձևավորվածություն չեն գրանցվել:

1 մասնակից դրսևորել է անձի սենսիտիվ տիպի շեշտվածություն (1 զինվորական, 34 տ., 17 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլը ձևավորված չէ, դիմադրության փուլը ձևավորված է, իսկ հյուծվածության փուլը ձևավորված չէ:

1 մասնակից դրսևորել է անձի կոնֆորմալ տիպի շեշտվածության հակում (փրկարար, 41 տ., 15 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլը ձևավորված չէ, դիմադրության փուլը ձևավորված է, իսկ հյուծվածության փուլը ձևավորված չէ:

1 մասնակից դրսևորել է անձի անկայուն տիպի շեշտվածության հակում (փրկարար, 31 տ., 9 տարվա աշխ. փորձ): Լարվածության, դիմադրության և հյուծվածության փուլերը ձևավորված չեն:

9 մասնակից չի դրսևորել անձի որևէ տիպի շեշտվածություն և հակվածություն (1 բժիշկ, 7 փրկարար, 1 զինվորական, 38-53 տ., 2-25 տարվա աշխ. փորձ): Լարվածության փուլը ձևավորված չէ, դիմադրության փուլի ձևավորվածություն գրանցել են 2 մասնակից, իսկ հյուծվածության փուլի ձևավորվածություն չի գրանցվել:

***Աղյուսակ 2***

**Անձի շեշտվածության տիպերի և այրման փուլերի հարաբերությունը տոկոսներով**

| Շեշտվածության տիպ | Մասնակիցների թիվը | Լարվածություն % | Դիմադրություն % | Հյուծվածություն % |
|---|---|---|---|---|
| Շիզոիդ | 2 | 0% | 100% | 50.0% |
| Ցիկլոիդ | 3 | 100% | 100% | 66.7% |
| Էպիլեպտոիդ հակում | 2 | 0% | 100% | 50.0% |
| Շիզոիդ հակում | 8 | 0% | 50% | 0% |
| Փսիխոասթենիկ հակում | 9 | 55.6% | 66.7% | 55.6% |
| Ցիկլոիդ հակում | 3 | 33.3% | 66.7% | 33.3% |
| Հիպերտիմ հակում | 9 | 0% | 22.2% | 0% |
| Ասթենոնևրոտիկ հակում | 2 | 0% | 0% | 0% |
| Սենսիտիվ հակում | 1 | 0% | 100% | 0% |
| Կոնֆորմալ հակում | 1 | 0% | 100% | 0% |
| Անկայուն հակում | 1 | 0% | 0% | 0% |
| Հակում չկա | 9 | 0% | 22.2% | 0% |

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները ցույց են տալիս, որ արտահայտված շեշտվածություն ունեցող մասնագետների շրջանում այրման հակվածությունը մեծ է, և, որ առավել վտանգված են ցիկլոիդ տիպի շեշտվածություն ունեցող մասնագետները՝ իրենց հուզական փոփոխականության պատճառով, փսիխոասթենիկ տիպերը՝ ինքնանպաստող անհանգստությունների և անորոշության անհանդուրժողականության պատճառով, ինչպես նաև շեշտվածության շիզոիդ և էպիլեպտոիդ հակում ունեցող մասնագետները՝ ներքին փակվածության և վերահսկողության պատճառով: Հակվածություն չունեցող մասնագետները չեն ցուցաբերել հյուծվածություն:

Լարվածության փուլի ամենաբարձր ցուցանիշ ունեցողներն էին՝ ցիկլոիդ (արտահայտված) – 100%, փսիխոասթենիկ (հակում) – 55.6%, ցիկլոիդ (հակում) – 33.3%:

Ցիկլոիդ տիպի ներկայացուցիչները սուր և արագ արձագանքում են հոգեբանական սթրեսներին՝ հաճախ ընկրկելով: Փսիխոասթենիկ տիպը իր խորը ինքնավերլուծության ու անհանգստության հակումով նույնպես լարվածություն է կուտակում վաղ փուլում:

Դիմադրության փուլի ամենաբարձր ցուցանիշ ունեցողներն էին շիզոիդ / էպիլեպտոիդ / ցիկլոիդ (արտահայտված) – 100%, փսիխոասթենիկ (հակում) – 66.7% և ցիկլոիդ (հակում) – 66.7%:

Այս տիպերը ունակ են դիմանալու լարված իրավիճակներին երկար ժամանակ՝ «սառեցնելով» իրենց հույզերը կամ ձգտելով կոկիկության ու վերահսկման: Բայց դա հաճախ հանգեցնում է հոգնածության կուտակմանը, ինչն էլ հիմք է դնում հյուծման փուլին:

Հյուծվածության փուլի համար ամենավտանգված տիպերն էին՝ ցիկլոիդ (արտահայտված) – 66.7%, փսիխոասթենիկ (հակում) – 55.6%, շիզոիդ / էպիլեպտոիդ (արտահայտված) – 50%:

Ցիկլոիդ տիպի ներկայացուցիչները անկայուն են տրամադրության առումով հեշտությամբ կոտրվում են երկարաժամկետ լարվածությունից: Փսիխոասթենիկ տիպը ներքին անհանգստությամբ հոգնեցնում է ինքն իրեն: Շիզոիդն ու էպիլեպտոիդը երկար դիմանում են, բայց երբ հոգնածությունը հասնում է գագաթնակետին, սկսվում է հուզական մեկուսացումը շրջապատից:

Ամփոփելով կարելի է ասել, որ հուզական այրմանը առավել հակված են ցիկլոիդ, փսիխոասթենիկ, շիզոիդ և էպիլեպտոիդ տիպերը: Հիպերտիմ, կոնֆորմալ, աստենոնևրոտիկ և սենսիտիվ տիպերի շրջանում գրեթե չի դրսևորվել այրում: Հակվածություն չունեցող մասնակիցների շրջանում նույնպես այրման փուլ չի դիտվել:



Վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ հուզական այրման առաջացմանը առավել ենթակա են՝

• Ցիկլոիդ տիպի շեշտվածություն ունեցող անձինք՝ հատկապես հյուծվածության փուլում (66.7%):

• Փսիխոասթենիկ տիպի հակում ունեցողները՝ լարվածության (55.6%) և հյուծվածության փուլերում (55.6%):

• Շիզոիդ և էպիլեպտոիդ շեշտվածությամբ մասնակիցները՝ բարձր դիմադրության ունակությամբ, սակայն հյուծման ռիսկով:

Հիպերտիմ, կոնֆորմալ, ասթենոնևրոտիկ, սենսիտիվ, անկայուն տիպերը, ինչպես նաև շեշտվածություն չունեցողները, ընդհանուր առմամբ, մասնագիտական այրման բոլոր փուլերում ցույց են տալիս ավելի ցածր ցուցանիշներ:

Հետազոտությունների արդյունքում վեր հանված փաստերը վկայում են, որ անձի հոգեբանական պրոֆիլը կարող է ունենալ կանխատեսելի նշանակություն՝ մասնագիտական այրման նկատմամբ հակվածության տեսանկյունից:

Արտակարգ պայմաններ ենթադրող գործունեության մասնագետների, մասնավորապես՝ բժիշկների, փրկարարների և զինվորական սակրավորների շրջանում մասնագիտական հուզական այրման առաջացման մակարդակը զգալիորեն պայմանավորված է անձի շեշտվածության տիպով:

Այսպիսով, անձի շեշտվածության տիպերը ոչ միայն պայմանավորում են մասնագետների հուզական արձագանքների դինամիկան, այլև կանխորոշիչ դեր են ունենում այրման համախտանիշի զարգացման միտումներում: Շեշտվածությանը բնորոշ հոգեբանական առանձնահատկությունների հետևանքով սահմանափակվում է մասնագետների հուզական ռեսուրսների ճկունությունը և խաթարվում սթրեսադիմացկունությունը՝ նրանց դարձնելով առավել խոցելի երկարատև սթրեսային ծանրաբեռնվածության պայմաններում: Քանի որ այրման դրսևորումները արձանագրվել են բացառապես շեշտվածություն ունեցող մասնագետների շրջանում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ շեշտվածության առկայությունը ռիսկի հիմնական գործոնն է, կարելի է հաստատապես պնդել, որ այն մասնագետները, որոնց մոտ առկա էր շեշտվածություն, ունեն այրման համախտանիշի զարգացման առավել մեծ հակում:

Ուսումնասիրության արդյունքում ստացված արդյունքները կարևոր հենք են ստեղծում արտակարգ իրավիճակներում գործող մասնագետների հոգեկան առողջության պահպանման ռազմավարությունների ձևավորման համար: Մասնագիտական այրման կանխարգելման նպատակով առանձնահատուկ կարևորություն են ստանում անձի այս կամ այն շեշտվածության հակվածության վաղ բացահայտումն ու համապատասխան միջամտությունների իրականացումը՝ մասնագիտական խորհրդատվության, հոգեբանական աջակցության պլանավորման և ռիսկային խմբերի առանձնացման համատեքստում:

**АИДА ВАРДАНЯН – *Взаимосвязь тенденций развития синдрома эмоционального выгорания и акцентуации личности в деятельности, осуществляемой в чрезвычайных условиях (на примере врачей скорой помощи, спасателей и военных сапёров).–*** Устойчивое морально-психологическое состояние специалиста, осуществляющего профессиональную деятельность в условиях чрезвычайных ситуаций, является ключевым условием эффективной работы. Оказавшись в условиях чрезвычайной обстановки, специалист сталкивается с сильным эмоциональным воздействием, которое содержит элементы риска для его жизни. Это оказывает значительное влияние на организм и психическую систему человека, вынуждая его адаптироваться к постоянно меняющимся условиям жизнедеятельности.

Со временем у этих специалистов, под воздействием моральных, психологических и физических нагрузок, формируются необходимые психологические качества, которые и обусловливают эффективность преодоления профессиональных трудностей. В то же время длительное напряжение и высокий уровень ответственности могут способствовать истощению эмоциональных ресурсов, снижению профессиональной мотивации и формированию синдрома эмоционального выгорания.

С прикладной точки зрения особое значение придаётся взаимосвязи синдрома эмоционального выгорания и акцентуаций личности для сохранения психологического здоровья специалистов и выявления групп риска. Определенные типы личностных акцентуаций могут выступать как защитными, так и повышающими уязвимость факторами, обусловливая особенности реагирования на стрессовые ситуации. Результаты исследования могут служить основой для разработки профилактических программ, совершенствования инструментария оценки профессиональной и психологической пригодности, а также повышения профессиональной эффективности. Научный анализ данной проблемы важен не только на теоретическом, но и на практическом уровне, способствуя сохранению психологического благополучия специалистов, действующих в условиях чрезвычайных ситуаций.

**Ключевые слова:** *акцентуация личности, синдром эмоционального выгорания, психологическая нагрузка, эмоциональные ресурсы, стрессоустойчивость*

**AIDA VARDANYAN** – ***The Relationship Between Tendencies in the Development of Emotional Burnout Syndrome and Personality Accentuation in Emergency-Related Activities (a Case Study of Emergency Physicians, Rescuers and Military Sappers).–*** A stable moral and psychological state of a specialist operating under conditions involving emergency situations constitutes a key prerequisite for effective professional performance. Finding oneself in emergency conditions is a major psycho-emotional factor for a specialist, which contains elements of risk to his or her life. It has a fairly strong effect on a person's body and psychological system, forcing them to adapt to the rapidly changing conditions of life.

Over time, these specialists develop the necessary psychological qualities associated with moral, psychological, and physical burdens, which in turn determine the effectiveness of overcoming work-related difficulties. At the same time, prolonged stress and high levels of responsibility may contribute to the depletion of emotional resources, a decline in professional motivation, and the development of burnout syndrome.

From an applied perspective, special importance has been given to the relationship between burnout syndrome and personality accentuation for the purpose of maintaining specialists' psychological health and identifying risk groups. Certain types of personality accentuations may function both as protective factors and as vulnerability-enhancing factors, shaping the specific patterns of response to stressful situations. The findings of the study may serve as a basis for the development of preventive programs, the refinement of tools for assessing professional and psychological suitability, and the enhancement of professional effectiveness. The scientific

analysis of this issue is important not only at the theoretical level but also at the practical level, contributing to the maintenance of psychological well-being among specialists operating under emergency conditions.

**Key words:** *Personality accentuation, emotional burnout syndrome, psychological overload, emotional resources, stress resilience*

Գրականության ցանկ / References

**Միրզոյան Վ., Միքայելյան Մ.** Մասնագիտական դեֆորմացիայի տեսակներն ու դրա վրա ազդող սոցիալ-հոգեբանական գործոնները / ՎՇՈւ Գիտական Աշխատությունները (-Թիվ 3), Վանաձոր, 2022:

**Волчанский М.Е., Деларю В.В., Болучевская В.В., Золотарёва О.С.** Психология и педагогика: Учебно-методическое пособие для студентов медицинских вузов. 3-е изд., доп. и перераб. Волгоград, ВолгГМУ, 2018.

**Леонгард К.** Акцентуированные личности. Москва, Медицина, 1977.

**Личко А. Е.** Психопатии и акцентуации характера у подростков. Санкт-Петербург, Питер, 1983.

**Alanazy A.R.M., Alruwaili A.** The Global Prevalence and Associated Factors of Burnout among Emergency Department Healthcare Workers and the Impact of the COVID-19 Pandemic: A Systematic Review and Meta-Analysis. Switzerland, Healthcare, 2023.

**Freudenberger H. J.** Staff Burnout. USA, Journal of Social Issues, 30(1), 1974.

**Maslach C. & Jackson, Susan E.** Maslach Burnout Inventory Manual (2nd Edition). Palo Alto, California, Consulting Psychologists Press. 1986.

**Potter C.** To what extent do nurses and physicians working with emergency department experience burnout: A review of the literature. Australia, Australasian Emergency Nursing Journal, 9(2), 2006.

**Somville F., Van der Mieren G., De Cauwer H., Van Bogaert P., Franck E.** Burnout, stress and Type D personality amongst hospital/emergency physicians. Germany, International Archives of Occupational and Environmental Health. 2022.

**Teixeira C., Ribeiro O., Fonseca A.M., Carvalho A.S.** Burnout in intensive care units—A consideration of the possible prevalence and frequency of new risk factors: A descriptive correlational multicentre study. Great Britain, BMC Anesthesiology, 2013.

https://testometrika.com/diagnosis-of-abnormalities/accentuation-of-character-licko/

Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2026, Vol. 17, No. 2(50), հունիս, 120-135
https://doi.org/10.46991/BYSU.E/2026.17.2.120

# ԻՆՉՈ՞Ի (Չ)ՆԵՐԳՐԱՎՎԵԼ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՎՈՂ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼԱԿՆԵՐԸ

ՍՈՆԱ ՄԱՆՈՒՍՅԱՆ*, ԱՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ**, ԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ***, ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ****
*Երևանի պետական համալսարան*

Հոդվածի նպատակն է սոցիալ-հոգեբանական տեսանկյունից քննարկել հետհեղափոխական և հետպատերազմական Հայաստանում երկրում ընթացող իրադարձությունների վրա ազդելու սահմանները և քաղաքացիական մասնակցության

---

* **Սոնա Մանուսյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, Հանրային գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններ գիտական խմբի ղեկավար, ԵՊՀ
**Сона Манусян** – кандидат психологических наук, руководитель научной группы Психологические исследования общественных процессов, ЕГУ
**Sona Manusyan** – Candidate of Psychological Sciences, Head of the YSU Psychological Studies of Societal Processes Research Group
Էլ.փոստ՝ s_manusyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0000-0001-8014-9443

** **Անի Պողոսյան** – ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի դասախոս, Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող
**Ани Погосян** – преподаватель кафедры психологии личности, младший научный сотрудник научно-исследовательской лаборатории Личность и социальная среда, ЕГУ
**Ani Poghosyan** – Lecturer at the YSU Chair of Personality Psychology, Junior Researcher at the Personality and Social Context Research Laboratory
Էլ.փոստ՝ anipoghosyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0009-0000-3993-0828

*** **Անի Գասպարյան** – ԵՊՀ Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող
**Ани Гаспарян** – младший научный сотрудник научно-исследовательской лаборатории Личность и социальная среда, ЕГУ
**Ani Gasparyan** – Junior Researcher at the YSU Personality and Social Context Research Laboratory
Էլ.փոստ՝ anigasparyan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0009-0004-6714-7215

**** **Նարինե Խաչատրյան** – հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ անձի հոգեբանության ամբիոնի վարիչ, Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ
**Нарине Хачатрян** – кандидат психологических наук, доцент, заведующая кафедрой психологии личности, руководитель научно-исследовательской лаборатории Личность и социальная среда, ЕГУ
**Narine Khachatryan** – Candidate of Psychological Sciences, Associate Professor, Head of the YSU Chair of Personality Psychology, Head of the Personality and Social Context Research Laboratory
Էլ.փոստ՝ n_khachatryan@ysu.am ORCID ID:https://orcid.org/0000-0003-3590-7131

➤ *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման» 23RL-5A044 ծածկագրով դրամաշնորհային ծրագրի շրջանակներում*

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 16.05.2026
Գրախոսվել է՝ 30.05.2026
Հաստատվել է՝ 22.06.2026
© The Author(s) 2026

արգելակները երիտասարդների ընկալումներում: Ե՛վ տեսությունը, և՛ սոցիալական պրակտիկան վկայում են, որ փոփոխություններին մասնակցելու և առհասարակ՝ սոցիալական իրականության վրա ազդելու՝ սուբյեկտիվորեն գնահատվող հնարավորությունները գործնական հետևանքներ են ունենում փաստացի (չ)մասնակցության համար, ինչն իր հերթին կառուցում է այդ իրականությունը: Ուստի, հաշվի առնելով հետպատերազմական անորոշության պայմաններում քաղաքացիական մասնակցության նվազումը, այդ քաղաքացիական մասնակցության իմաստալից ձևերը վեր հանելու և խթանելու համար դրանց ընկալվող խոչընդոտների և սահմանների ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ձեռք բերում: Ուսումնասիրությունը հիմնված է Երևանում և ՀՀ չորս մարզերում 2024 թ. արված ֆոկուս-խմբային հարցազրույցների վրա: Վերլուծության արդյունքում վեր են հանվում սեփական չներգրավումը մեկնաբանող վերանհատական-կառուցվածքային, խմբային-համայնքային և անհատական մակարդակի գործոններ: Այդ մեկնաբանումները արտացոլում են անհատի համար սոցիալ-քաղաքական իրողությունների բարդությունը և հակասականությունը, որոնք իմաստավորել փորձելիս նա հաճախ ընտրում է չներգրավվել: Ե՛վ ներգրավվելու, և՛ չներգրավվելու ընտրությունները մենք մեկնաբանում ենք որպես անձի սուբյեկտայնության, գործականության (agency) դրսևորում՝ չսահմանափակվելով քաղաքացիական ակտիվություն-պասիվություն հակադրող և ստատիկ պատկերացումներով:

**Բանալի բառեր** – *քաղաքացիական մասնակցություն, (չ)ներգրավում, ընկալվող սահման(ափակում)ներ, գործականություն, հավաքական արդյունավետություն*

**Հայաստանյան բարդ համատեքստը և դրա հոգեբանական առումները**

Հայաստանը ներկայումս ապրում է պատմաքաղաքական բարդ փուլ, որը կարելի է բնորոշել բազմաճգնաժամայնությամբ՝ պոլիկրիզիսով[1]: Հետհեղափոխական փուլում 44-օրյա պատերազմով կա՛մ բերված, կա՛մ սրված մարտահրավերները բազմամակարդակ են և շարունակում են մնալ ինչպես հանրային դիսկուրսի, այնպես էլ հասարակագետների և քաղաքական փորձագետների քննարկման կենտրոնում: Քաղաքական իրադարձությունների ինտենսիվությանը հակառակ, սակայն, հանրային դաշտը քաղաքացիական գործընթացների առումով բավականին «նոսրացած» է: Պատերազմում պարտությունից և Արցախի կորստից ի վեր քաղաքացիական ներգրավումն առնվազն պակաս տեսանելի է. կարելի է ասել, որ անհատի՝ քաղաքականապես ակտիվ լինելու ձևերում նս ճգնաժամ է՝ իբրև բազմաճգնաժամային իրադրության մաս: 2018 թ. «թավշյա» հեղափոխությունից հետո, որը նշանավորեց ՀՀ-ում արմատաբուխ (grassroot) ակտիվիզմի մոտ տասնամյա փորձի կուտակման կիզակետը, և որը քաղաքացին ապրեց իբրև սեփական դերակատարության

[1] Տե՛ս **Henig, D. & Knight, D.M.** (2023), Polycrisis: Prompts for an emerging worldview. Anthropology Today, 39: էջ 3-6. DOI:10.1111/1467-8322.12793

դրական փորձ, տեղ է գտել ծանոթ բողոքի ձևերի հետաձ[2]: Ադրբեջանի շարունակվող էքսպանսիվ ու թշնամական հռետորաբանության ներքո անվտանգային հարցերն ու դրանք հասցեագրելու՝ իշխանության կարողության հարցում տարակուսանքը, 2025 թ. օգոստոսի 8-ին Վաշինգտոնում նախաստորագրված խաղաղության հռչակագրից հետո որոշակիորեն մեղմվելով հանդերձ, շարունակում են մնալ հանրային առաջնահերթ մտահոգություններ՝ ստվերելով մի շարք ներքաղաքական, կառավարման խնդիրներ, որոնց բարձրաձայնումը մինչհեղափոխական փուլում հավանաբար ակտիվիզմի կվերաճեր: Չնայած ժողովրդավարությունը վնասող իշխանական խոսույթներին ու պրակտիկաներին, որոնք դրվագայնորեն քննադատվում են քաղաքացիական հասարակության շրջանում, և չնայած հանրության համար զգայուն մի շարք հարցերում իշխանությունների՝ լայն բացասական արձագանք ստացող գործելակերպին և հռետորաբանությանը՝ դժգոհությունները չեն վերաճում բողոքի գործողությունների: Փորձության են ենթարկվել նաև հանրային համերաշխության և ինքնության հարցերը, որոնք մասնավոր դրսևորում են ստանում քաղաքացիական հատվածում: Այս խնդիրներն է մատնանշում նաև քաղաքացիական հասարակության ճգնաժամի մասին այդ ոլորտում իսկ արված ինքնավերլուծությունը[3]: Նկատելի են հանրային-քաղաքական պրոցեսներից անհատի դիստանցվելու միտումները: Այսպիսով, թեև բազմաբարդ մարտահրավերները պահանջում են է՛լ ավելի ընդլայնված և պահանջատեր քաղաքացիական ներգրավվածություն, փաստացի տեղի է ունենում քաղաքացիական իմպուլսի նվազում: Այս անգործությունը դժվար է բացատրել քաղաքական ինստիտուտների հանդեպ վստահության աճով՝ հաշվի առնելով վստահության ցածր ցուցանիշները հանրային կարծիքի վերջին, այդ թվում՝ նախընտրական հարցախույզներում[4,5]:

Քաղաքացիական պասիվացումը ունի մեկից ավելի հավանական բացատրություններ: Մեկը քաղաքական և տարածաշրջանային անորոշությունն է՝ և՛ որպես օբյեկտիվ իրավիճակ, և՛ որպես ապրում: Փոփոխականությունն ու անորոշությունը կարող են աշխատել ի վնաս ակտիվիզմի՝ որպես նպատակային, պլանավորված գործողության, հատկապես պարտության հետևանքով ենթադրաբար ցածր հավաքական արդյունավետության պարագայում[6]: Կարևոր

---

[2] Տե՛ս **Մանուսյան, Ա., Խալաթյան, Մ., Մարտիրոսյան, Ս.** (2025, օգոստոսի 13). Ի՞նչ անել, երբ հին ակտիվիզմը չի աշխատում. ռադիկալացնել ժողովրդավարությունը: «Սոցիոսկոպ» ՀԿ:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Հոդվածը նախապատրաստվել է 2025 թ. ընթացքում, հրապարակման պատրաստվել՝ 2026 թ. մայիսին՝ ԱԺ ընտրությունների նախընտրական շրջանում:

[5] Տե՛ս CRRC Հայաստան. (2024). Բարոմետր 2024. Հասարակական կարծիքի ուսումնասիրություն, Եր.:

IRI (2026). Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն. Երևան:

[6] Տե՛ս **Zhang, S. (**2013). Intergroup threat and collective action intention: Dual-pathway model of mass incidents. *Acta Psychologica Sinica.* DOI:10.3724/SP.J.1041.2013.01410

գործոն է նաև հանրային համերաշխության և հավաքական ինքնության ճգնաժամը։ Բացի այդ, քաղաքացիական լայն շերտերը չեն ներգրավվում պրոգրեսիվ քաղաքացիական հասարակության (մարդու իրավունքների ՀԿ-ներ, ակտիվիստներ) սեգմենտի պասիվացման պատճառով, որը չի կարողանում իրականացնել բողոքը գործիքավորելու և հանրությանը գաղափարապես առաջնորդելու գործը։ Քաղաքացիական սեկտորի պասիվացումը իր հերթին պարտական է հետհեղափոխական դինամիկային, որը բնորոշվեց սեկտորի ներկայացուցիչների մի մասի՝ ինստիտուցիոնալ քաղաքականություն մուտքով և դրա հետևանքով նրանց և «դրսում մնացած» խմբերի միջև փոխհարաբերությունների դժվարացմամբ ու ամբիվալենտությամբ, վերջիններիս մոտ նոր իրողությունների ներքո սեփական անելիքի և ինքնության անորոշությամբ[7]։ Ի հավելումն՝ նշմարվում է փխրուն դեմոկրատիան պահպանելու հոգատարություն, այդ նկատառումով հիասթափությունները և քննադատությունները հնչում են «շշուկով», վերապահումներով։

Այսպիսով, առանձին ուսումնասիրության կարիք ունի արագափոփոխ և անորոշ ժամանակների բերած հանրային խնդիրների սոցիալ-հոգեբանական շերտը։

**Գրականության անդրադարձ**

Ինչպես սոցիալական հոգեբանության մեջ, այնպես էլ սոցիալական և քաղաքական փոփոխությունների ուսումնասիրություններում բավարար վկայություն կա, որ փոփոխություններ առաջ բերելու՝ սուբյեկտիվորեն ընկալվող կարողությունը, որը հոգեբանության մեջ ուսումնասիրվում է *ինքնարդյունավետություն* և *խմբային* կամ *հավաքական արդյունավետություն* կոնստրուկտների միջոցով[8], իսկ ավելի լայն սոցիալական տեսության մեջ՝ *«գործո՞րդ, թե՞ կառուցվածք»* (agency vs. structure) հարցադրման միջոցով[9], կարևոր նշանակություն ունի բուն ներգրավման և ազդեցության համար։ Այսպես, սոցիալական շարժումների ուսումնասիրությունները մատնանշում են հավաքականորեն գործելու ընկալվող հնարավորությունների և արգելքների կարևոր դերը ներգրավման ձևավորման, պահպանման կամ դադարեցման մեջ[10]։ Էական են

---

[7] Տե՛ս **Մանուսյան, Ա., Խալաթյան, Մ., Մարտիրոսյան, Ս.** (2025, օգոստոսի 13)։

[8] Տե՛ս **Bandura, A.** (2000). *Exercise of human agency through collective efficacy. Current Directions in Psychological Science, 9*(3), pp. 75–78. DOI:10.1111/1467-8721.00064 / **Hogg, M. A.** (2007). Uncertainty–Identity Theory. Advances in Experimental Social Psychology, 39, pp. 69–126. DOI:10.1016/S0065-2601(06)39002-8

[9] Տե՛ս **Էմիրբայեր, Մ., Միշե, Ա.** (2024). Ի՞նչ է գործականությունը։ Ս. Մանուսյան (կազմ. և խմբ.), Անհատը և հանրայինը. տեքստեր փոխհարաբերության մասին։ «Սոցիոսկոպ» ՀԿ։ էջ 181–229, նաև՝ **Archer, M. S.** (2013). The Ontological Status of Subjectivity: The Missing Link Between Structure and Agency, in *Contributions to social ontology*, pp. 17–31. Abingdon: Routledge. DOI:10.4324/9780203083107-4

[10] Տե՛ս **Van Bezouw, M. J., Závecz, G., Penna, C., Rijken, A. J., Klandermans, P. G., & Uluğ, Ö. M.** (2019). Social Psychological Explanations of Political Inaction: Citizens’ Perspectives in Brazil, Hungary,

նաև սեփական ներգրավումը կամ հետ մնալը պատճառաբանող համոզմունքները. որակական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես դժվար, ճգնաժամային կամ բռնի համատեքստերում քաղաքա(ցիա)կան մասնակցությունը հաճախ կառուցվում է ոչ միայն ռացիոնալ հաշվարկների, այլև բարոյական պարտավորության, արժանապատվության և սեփական, թեկուզ սահմանափակված, ազդեցության հավատի շուրջ[11]: Հոգեբանությունից դուրս՝ սոցիոլոգիայի, քաղաքական տեսության և սոցիալական շարժումների տեսության մի շարք ուղղություններ ևս շեշտադրում են գործորդին (agent) ընդդեմ կառուցվածքի: Քաղաքացիները ոչ միայն արձագանքում են կառուցվածքային սահմանափակումներին, այլև առօրյա պրակտիկաների, հարաբերությունների և իմաստավորման միջոցով վերաձևում են քաղաքական հնարավորությունների դաշտը[12]: Մասնակցությունը առանցքային է դեմոկրատական համակարգի շարունակականության համար[13]: Այս տարբեր մոտեցումները վկայում են անհատի սուբյեկտայնության պահպանման կարևորությունը դեմոկրատական համակարգերի կենսունակության համար: Դրա ճնշումը վնասում է դեմոկրատական զարգացումը՝ դառնալով դեմոկրատական հետաճի առնվազն ախտանիշ, եթե ոչ՝ գործոն[14]:

Մեկ այլ՝ ավելի մակրո գործոն, որը կարող է արտացոլվել սուբյեկտիվ ընկալումներում և հանգեցել մասնակցության սահմանափակման, «լարումն» է դեմոկրատական գործընթացների և անվտանգայնացման (securitization) միջև, որի ներքո մասնակցության հատկապես խմբային ձևերը սկսում են սահմանափակվել[15]: Ընդ որում, սա տեղի է ունենում ոչ միայն համակարգի կողմից խստացման, այլև, ենթադրաբար, հենց մարդկանց մոտիվների փոփոխված դինամիկայի բերումով, երբ անվտանգային սպառնալիքների ընկալումն ուժեղացնում է գոյապահպանմանն ուղղված արժեքները[16], ինչպես նաև զգուշավո-

---

and the Netherlands. Analyses of Social Issues and Public Policy, 19(1), էջ 381-406: DOI:10.1111/asap.12189 /**van Zomeren, M., Postmes, T., & Spears, R.** (2008). Toward an integrative social identity model of collective action. A quantitative research synthesis of three socio-psychological perspectives. Psychological Bulletin, 134(4), pp. 504–535. DOI:10.1037/0033-2909.134.4.504

[11] Տե՛ս **Polletta, F.** (2006). It was like a fever: Storytelling in Protest and Politics. University of Chicago Press,/ **Baiocchi, G., Bennett, E. A., Cordner, A., Klein, P., & Savell, S. (**2015). Civic imagination: Making a difference in American political life. Routledge:

[12] Տե՛ս **Tilly, C., & Tarrow, S.** (2015). Contentious Politics (2nd ed.). Oxford University Press. / **Էմիրբայեր, Մ., Միշե, Ա.** (2024):

[13] Տե՛ս **Norris, P.** (2011). Democratic Deficit: Critical Citizens Revisited. Cambridge University Press.

[14] Տե՛ս **Levitsky, S., & Ziblatt, D.** (2018). How Democracies Die. Crown:

[15] Տե՛ս **Jäger, F.** (2023). Security vs. Civil Liberties: How Citizens Cope with Threat, Restriction, and Ideology. Frontiers in Political Science, 4. DOI:10.3389/fpos.2022.1006711, /**Huysmans, J.** (2014). Security unbound: Enacting democratic limits. Routledge:

[16] Տե՛ս **Schwartz, S. H.** (2012). An Overview of the Schwartz Theory of Basic Values. Online Readings in Psychology and Culture, 2(1). DOI:10.9707/2307-0919.1116

րության և ինքնագրաքննության աճի միջոցով, երբ մարդիկ սկսում են խուսափել քաղաքական արտահայտումից՝ հնարավոր ռիսկեր կամ պատիժ ակնկալելով[17]:

Քաղաքացիական ազատությունների և ազգային անվտանգության «վատ համադրությանն» առնչվող վերլուծությունները հիմնականում մատնանշում են սահմանափակող քաղաքականությունների նկատմամբ հանրային աջակցության և պահպանողականության աճ, մարդու իրավունքներ հասցեագրող քաղաքացիական ակտիվության ձևերի սահմանափակում[18]: Առկա քննարկումները, սակայն, արված են գերազանցապես քաղաքականապես Հայաստանից բավական տարբեր՝ 9/11-ին հաջորդած ամերիկյան «տեռորի դեմ պատերազմի» համատեքստում և հոգեբանական դիտանկյունից չեն: Հետազոտությունները չեն անդրադառնում անվտանգային սպառնալիքների և քաղաքական անկայունության պայմաններում քաղաքացիական (չ)ներգրավմանը, երբ կառավարության դեմ հավաքական գործողությունը կարող է ընկալվել որպես պետությունն ապակայունացնող, անցանկալի քայլ: Գրեթե չի քննարկվում այն նրբերանգը, թե ինչ է տեղի ունենում քաղաքացիների՝ երկրի կամ համայնքի խնդիրների վրա ազդելու ընկալվող կարողության հետ, երբ իրար վրա են բարդվում մի կողմից՝ քաղաքացիական սեկտորում վերը նկարագրված հետհեղափոխական վակուումը և մյուս կողմից՝ պարտության և շարունակվող անվտանգային սպառնալիքների հարվածը հավաքական ինքնարդյունավետությանը և ինքնությանը, որոնք երկուսն էլ առանցքային են հավաքական գործողության համար[19]: Այսօր ՀՀ քաղաքացին միաժամանակ պետք է նավարկի երկու վատ համադրվող հանրային սպառնալիքներով՝ մի կողմից ազգային և մշակութային անվտանգության, մյուս կողմից՝ ժողովրդավարական անկման:

Փոքրաթիվ վերլուծություններ, հատկապես ուկրաինական համատեքստում, մոտենում են մեր դեպքին: Այսպես, Ստեպանենկոն ցույց է տալիս հետհեղափոխական և պատերազմական Ուկրաինայում միաժամանակ հիասթափության, հյուծվածության և շարունակվող քաղաքացիական պատասխանատվության բարդ համադրությունը[20]: Սակայն ուկրաինական դեպքը ներառում է նաև հակառակ օրինակը, երբ անգամ պատերազմի ընթացքում տեղ են

---

[17] Տե՛ս **Hayes, A. F., Glynn, C. J., & Shanahan, J.** (2005). Willingness to Self-Censor: A Construct and Measurement Tool for Public Opinion Research. International Journal of Public Opinion Research, 17(3), էջ 298-323. DOI:10.1093/ijpor/edh073

[18] Տե՛ս **Huddy, L., Feldman, S., & Weber, C.** (2007). The political consequences of perceived threat and felt insecurity. The ANNALS of the American Academy of Political and Social Science, 614(1), էջ 131-153. /**Davis, D.W. and Silver, B.D.** (2004). Civil Liberties vs. Security: Public Opinion in the Context of the Terrorist Attacks on America. American Journal of Political Science, 48, էջ 28-46: DOI:10.1111/j.0092-5853.2004.00054.x

[19] Տե՛ս **van Zomeren, M., Postmes, T., & Spears, R.** (2008). /**Bandura, A.** (2000):

[20] Տե՛ս **Stepanenko, V.** (2022). Ukrainian Society Under War: An Insider's Sociological Notes. Przegląd socjologiczny, 71(3), էջ 11-26. DOI:10.26485/PS/2022/71.3/1

գտել քաղաքացիական պայքարի փողոցային ձևեր՝ ցույց տալու կառավարության պատերազմական «զեղչեր» չանելու կարևորությունը[21]: Սա հուշում է, որ անվտանգային ճնշումը քաղաքացիական գործակալությունը կարող է ոչ այնքան սահմանափակել, որքան վերակազմավորել՝ նոր ձևերի արդյունում:

Մեկ այլ կարևոր գործոն է բարձր անորոշությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ անորոշությունը, հատկապես քաղաքական անկայունության և ընկալվող սպառնալիքի պայմաններում, կարող է ուժեղացնել ներխմբային նույնականացումը և խթանել այնպիսի հուզական արձագանքներ, ինչպիսիք են վախը կամ զայրույթը՝ կախված խմբի ընկալվող արդյունավետությունից[22]: Անորոշությունը, այսպիսով, միարժեքորեն ապաքաղաքականացնող գործոն չէ: Այն կարող է խթանել քաղաքացիական ակտիվությունը, երբ անհատները կամ խմբերը պահպանում են ապագայի վրա ազդելու հնարավորության, ինքնարդյունավետության զգացումը, սակայն դրանց ցածր լինելու դեպքում կարող է հանգեցնել անգործության կամ չներգրավման[23]:

Այսպիսով, ազդելու, մասնակցելու և հատկապես՝ այդ հարցում սահմանափակումների ուսումնասիրումը ուղիղ, պրագմատիկ նշանակություն ունի հատկապես փխրուն և վտանգված դեմոկրատական համակարգերում, ինչպիսին Հայաստանն է:

### Ուսումնասիրության նպատակը և մեթոդը

Ֆոկուս-խմբային հարցազրույցները քաղաքացիական ներգրավման սոցիալ-հոգեբանական գործոններին նվիրված մեր ընդհանուր հետազոտական նախագծի մաս են, որի նպատակն է վերլուծել, թե ինչ է տեղի ունենում անհատների քաղաքացիական և քաղաքական մասնակցության հիմքում ընկած խմբային ինքնության և հավաքական արդյունավետության զգացման հետ, երբ հանրությունը բախվում է ավելի բարձր մակարդակի՝ գոյութենական խնդիրների: Այս վերլուծության մեջ կենտրոնանում ենք իբրև քաղաքացի սեփական դերի և ազդեցության իրացման սահմանների և արգելակների վրա: Մասնավորապես, հարցադրում ենք.

---

[21] Տե՛ս **Santora, M.** (2025, July 22). Wartime Protests in Ukraine Target Zelensky for the First Time. The New York Times. https://www.nytimes.com/2025/07/22/world/europe/zelensky-protests-corruption.html (դիտվել է՝ 22.05.2026)

[22] Տե՛ս **Hogg, M. A.** (2007). Uncertainty–Identity Theory. Advances in Experimental Social Psychology, 39, pp. 69–126. DOI:10.1016/S0065-2601(06)39002-8, / **Fritsche, I., Jonas, E., & Kessler, T.** (2011). Collective reactions to threat: Implications for intergroup conflict and for solving societal crises. Social issues and policy review, 5(1), pp. 101-136.

[23] Տե՛ս **Bandura, A.** (2000). / **Zhang, S.** (2013). / **Kende, A., Lukács, D., Rényi, D., & Lantos, N. A.** (2023). Reactions to perceived threats and opportunities in a polarized society: Collective action among progressive movements in Poland. Current Psychology. DOI:10.1007/s12144-023-04926-1

- Ինչպիսի՞ սուբյեկտիվ ընկալումներ ունեն երիտասարդները սեփական ազդեցության հնարավորությունների և սահմանափակումների վերաբերյալ, և ինչպե՞ս են այդ ընկալումները կապված նրանց՝ իբրև քաղաքացու փորձառության հետ:
- Ի՞նչ տեսական և գործնական հետևություններ կարելի է անել անորոշությունում գործող անհատի քաղաքացիական (չ)ներգրավվածության և գործակալության վերաբերյալ:

Վերլուծությունը հիմնված է Երևանում և ՀՀ չորս մարզերում (Գեղարքունիք, Սյունիք, Շիրակ, Արմավիր) անցկացված 10 ֆոկուս-խմբային քննարկումների վրա՝ 2-ական մայրաքաղաքում և յուրաքանչյուր ընտրված մարզում: Մարզերը ընտրվել են համակցված չափանիշներով՝ մարզերի աշխարհագրությունը, սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակները, բնակչության չափը, սահմանամերձ լինելը կամ չլինելը: Տվյալները հավաքագրվել են 2024 թ. աշնանը: Հարցազրույցները իրականացվել են նպատակային ընտրանքի միջոցով՝ ըստ կրթության և սեռի տարասեռ, 8-9 հոգուց բաղկացած խմբերով: Մասնակիցների տարիքային միջակայքը եղել է 20-40-ը:

Հարցազրույցի ուղեցույցը ներառել է 4 թեմատիկ բլոկներ՝ 1. մասնակիցների սուբյեկտիվ իրականություն/անձնական դիտակետ, 2. քաղաքացիական մասնակցության փորձառություն և ներկայիս դիրքավորում/ներգրավվածություն, 3. ընկալվող սեփական ազդեցություն/գործակալություն, 4. ապագայի ընկալում. հույսեր ու վախեր: Վերլուծությունն իրականացվել է թեմատիկ որակական վերլուծության սկզբունքներով[24]:

**Արդյունքների վերլուծություն**

Ֆոկուս-խմբերում աչքի ընկած կրկնվող մտահոգությունները, մեկնաբանությունները դուրս են բերում անորոշության ու սպասումի գերիշխող պատկեր: Ընդհանուր առմամբ, անհատները ինքնաքննադատաբար և ռեֆլեքսիվորեն կարողանում են նկատել ինչպես իրենց ազդեցության ու մասնակցության հնարավոր ձևերը, այնպես էլ սահմանափակումները: Այս պատկերը որոշակի զանազանություն ունի մարզից մարզ՝ մասնակցության փորձառության, դրա ընկալվող հեռանկարների և այլ առումներով: Այս հոդվածի շրջանակներում, այդուհանդերձ, կներկայացնենք առավել տարածված, կրկնվող թեմաները:

Թեմատիկ վերլուծությունը թույլ է տալիս քաղաքացիական ազդեցության սահմանափակումները և մասնակցության ընկալվող արգելակները քննարկել երեք մակարդակներում՝ *վերանհատական-կառուցվածքային, խմբային-համայնքային և անհատական:*

---

[24] Տե՛ս **Braun, V., & Clarke, V. (**2006). Using Thematic Analysis in Psychology. Qualitative Research in Psychology, 3(2), էջ 77–101. DOI:10.1191/1478088706qp063oa

***Վերանհատական-կառուցվածքային գործոնները*** կարելի է սահմանել որպես մարդու գործականությունը սահմանափակող ընկալումներ, իմաստավորումներ, որոնք կապված են անհատից դուրս գործող համակարգերի աշխատանքի հետ: Քաղաքացիական չներգրավվածության մասին խորհելիս որպես այդպիսի գործոն հիշատակվում է *ոչ ակնհայտ, անուղղակի քաղաքական ճնշումների առկայության զգացողությունը:* Շրջանառվում է այն միտքը, որ մտահոգության բարձրաձայնումը կարող է չարժանանալ իշխանությունների հավանությանը, իսկ դրա ուղղակի և անուղղակի հետևանքները կարող են կրել նաև ընտանիքի անդամները:

*Ով իրենց կողմից է խոսում, ամեն ինչ թույլ են տալիս, կարող է ինչ ուզի, անի, բայց ով իրենց դեմ թեկուզ խաղաղ ցույց է անում՝ բռնում, ինչ ասես անում են: (Սյունիք, տղ., 32 տ.)*

*Մեր մոտ անձնագրային բաժանմունք կար, տեղափոխեցին: Ես ճիշտն ասած մի թեթև ուզեցի կազմակերպել, բողոքել: Վախեցանք, ասեցինք՝ մեզ աշխատանքից կհանեն … այո, ինչո՞ւ չէ. վերջը համայնքապետարանում ես աշխատում, չես կարող ասես՝ այսօր աշխատում ես, վաղը՝ գուցե ոչ: (Շիրակ, տղ., 29 տ.)*

Քաղաքացիական ներգրավման ևս մեկ ընկալվող սահմանափակում է *սեփական ձայնի լսելի չլինելը:* Քաղաքացիական մասնակցությունը և արտահայտվելու հնարավորությունը չեն նույնացվում իրական փոփոխություն բերելու կամ որոշումների վրա ազդելու հնարավորության հետ: Թեև սոցիալական ցանցերը հնարավորություն են տալիս մտահոգող խնդիրները բարձրաձայնելու և արձագանքներ համախմբելու, դա հաճախ կարճաժամկետ է և ոչ բավարար՝ իրական փոփոխության հասնելու համար: Կա համոզմունք, որ քաղաքացու ձայնը պետք է ոչ միայն արտահայտվի, այլև լսվի և հաշվառվի որոշում կայացնողների կողմից:

*Կարող ենք բարձրաձայնել, բայց ինչ որ բան փոխե՞նք… չենք կարող: Խոսքի ազատություն կա էլի, ամեն դեպքում Աֆղանստանում չենք, բայց որ բարձրաձայնում ես, ինչ-որ, չգիտեմ, 10 կամ 20 հոգի այդտեղ է, ևս մի 100, 200 հոգի իմանում են այդ մասին, մի քիչ աղմուկ է լինում, դրանով ոչ մի բան չի փոխվում, որովհետև դու ոչ մի առանձնապես ազդեցություն չունես: (Երևան, կին, 21 տ.)*

Մասնակիցների խոսքում նկատելի է նաև քաղաքական և հանրային գործընթացներում *ուղղահայացության ու առաջնորդության ակնկալիքը*. փոփոխության հնարավորությունը և քաղաքացու գործականությունը հաճախ կապվում են «վերևից» նախաձեռնվող քայլերի, ազդեցիկ առաջնորդների, որոշում կայացնողների կամքի հետ:

*Իսկ ես մտածում էի, որ եթե վերևից հրաման լիներ, բոլորս էլ կմիանայինք: Համա՛յնքը պետք է որևէ բան աներ, թե՝ ժողովուրդ, եկե՛ք մի բան անենք: (…)*

*Մենք պետք է հասկանանք, որ ոչ թե անհատը, ասենք, պետք է ինչ-որ բան անի, այլ պետությունը (հոգածություն ունենա). պետք է վերևները ուղղվածություն տան: (Շիրակ, կին, 31 տ.)*

*Չէ, ես անտարբեր չեմ դարձել, ես ուղղակի ինչքան էլ ուզենամ... լիքը բան կախված է մեր... բարձրագույն ուժեր ասեմ, ինչ ասեմ, իրենցից. մենք ինչ էլ որ ուզենք փոխենք, հիմնականում իրենց ձեռքում է ամեն ինչ: Երկրի կառավարությունը, ղեկավարությունը ոնց որոշեն, այդպես էլ կլինի: (Արմավիր, կին, 22 տ.)*

Հաճախ ընդգծվում է նաև *արժանի և վստահություն ներշնչող առաջնորդների բացակայության* մտագոհությունը: Խնդիր է համարվում այնպիսի առաջնորդների, պաշտոնյաների բացը, ում կարելի է հետևել, ում գործունեությունը կարող է ընկալվել որպես հանրային շահին միտված: Լավ առաջնորդը պատկերացվում է որպես հանրության հետ հաղորդակցվող, հարգալից, պատասխանատու և խնդիրներ լուծելու կարող գործիչ, որի առկայությունը կարող է անգամ նվազեցնել քաղաքացիական ակտիվիզմի անհրաժեշտությունը:

*Եթե ցանկացած համայնք ունենա լավ առաջնորդ, բնակիչները դիմեն այդ լավ առաջնորդին, այդ լավ առաջնորդը կարող է այդ խնդիրն այնպե՛ս ներկայացնել ում պետք է, որտեղ որ պետք է, որ բնակիչների մտավախությունը և մնացած հարցերը չդառնան ճամփա փակելու խնդիր: (…) լավ առաջնորդին մենք կարոտ ենք, չունենք նորմալ առաջնորդ. շատ բաց է դա, շա՛տ բաց է այս պետության մեջ: (Սյունիք, տղ., 35 տ.)*

Նկատելի է նաև երկրի քաղաքական գործընթացները որպես *«մեծ խաղացողների» կողմից որոշվող* և սովորական քաղաքացիների ազդեցությունից դուրս գտնվող, զլոբալ որոշումների մաս հանդիսացող երևույթներ ընկալելու միտումը, որի շրջանակում առանձին քաղաքացու ազդեցությունը գնահատվում է որպես սահմանափակ և ոչ որոշիչ:

*Դե մենք սովորական մահկանացուներ ենք, քաղաքացիներ ենք... մեր ձայնը ինչքան էլ որ լսելի լինի, չեմ կարծում, որ զլոբալ ինչ-որ բան կփոխվի...: Ուղղակի մեր պետությանը, հենց մեր երկրագնդին խելացի առաջնորդներ են պետք, որպեսզի երկրագունդը կործանման չտանեն..., որպեսզի այսպիսի պատերազմներ, արհավիրքներ չլինեն աշխարհում: (Սյունիք, կին, 39 տ.)*

*... Իշխում է երևի փողը, հենց հարուստ պետություններն էլ թելադրողն են,... մեր իրավիճակն է՛լ են իրենք թելադրում... (Շիրակ, կին, 35 տարեկան)*

***Խմբային-համայնքային գործոնները*** ևս վերանհատական բնույթ ունեն, սակայն այս գործոնների դեպքում քաղաքացիական ներգրավվածության սահմանները կառուցվում են ոչ թե քաղաքական կամ ինստիտուցիոնալ լայն համակարգերի, այլ անհատի և անմիջական սոցիալական միջավայրի փոխազդեցությունների ներքո:

Մասնակիցները ներգրավումը սահմանափակող գործոն են տեսնում *համայնքային համախմբվածության և «թիկունքի» պակասը:* Մարդիկ հաճախ են

կիսվում սեփական նախաձեռնություններում իրենց միայնակ զգալու փորձառությամբ և այն համոզմունքով, որ անհատապես, առանց կոլեկտիվ աջակցության չեն կարող ազդեցություն ունենալ:

*Չկանգնեց, գյուղացին չկանգնեց գյուղացու կողքին, տանից հեշտ է խոսելը...: Չգիտեմ՝ տեղյակ եք, թե ոչ, բայց գյուղացիներից շատերին ձերբակալեցին, նման այլ հարցեր. աջակցություն պե՛տք էր, բայց չեղավ: (Գեղարքունիք, կին, 34 տարեկան)*

Միևնույն ժամանակ, թեև որոշ խմբերում կա համայնքում միասնականության և համատեղ գործողությունների արդյունավետության զգացումը, այդ ներուժը միշտ չէ, որ վերածվում է ակտիվ գործողության՝ պայմանավորված իշխանություններից *փոփոխությունների սպասման դիրքավորմամբ, «պայմանով վստահությամբ»:*

*Մեր գյուղը ընտրություններին 90% ձայն է տվել գործող իշխանություններին: Մեզ մոտ սպասողական այդ փուլն է, որ մենք, այսպես ասած, վստահում ենք իշխանություններին: Ոչ թե վստահում ենք, այլ սպասում ենք այն հույսով, որ կարդարացնեն մեր սպասելիքները: Այդպիսով, այս պահին ոչինչ չենք ա- րել, բայց չենք պատրաստվում երկար սպասել: (Սյունիք, տղ., 36 տ.)*

Որպես քաղաքացիական մասնակցությունը արգելակող կարևոր սոցիալական գործոն է ներկայանում նաև *ընտանիքը:* Նշվում է, որ ընտանիքի անդամները ոչ միշտ են աջակցող վերաբերմունք ցուցաբերում քաղաքացիական տարբեր նախաձեռնություններին՝ որոշ դեպքերում անգամ բացահայտորեն սահմանափակելով նման ներգրավվածությունը: Բացի այդ, ընտանիքի, երեխաների կենսապահովման պատասխանատվությունը հաճախ ներկայացվում է որպես քաղաքացիական մասնակցությունից հրաժարվելու պատճառ կամ դրա էներգիան սահմանափակող գործոն: Այս համատեքստում քաղաքացիական ակտիվությունը ընկալվում է որպես ռիսկային վարքագիծ, որը կարող է հանգեցնել աշխատանքի կորստի կամ հարաբերությունների լարման՝ վտանգելով ընտանիքի բարեկեցությունը:

*Չեմ պատկերացնում ինձ այնտեղ... կարող է ես ուզեմ, բայց ամուսինս չի թողի ես գնամ… (Արմավիր, կին, 40 տ.)*

*Հավաքներ կան չէ՞ եռամսյա, որ կարող ես քո պետության համար մասնակցել, չէ՞: Ես մտածում եմ՝ կարող եմ գնալ, բայց նաև մտածում եմ՝ իսկ իմ երեխեքին ո՞վ պահի, որ ես գնամ: Կուզե՛մ անել, ավելի՛ն կուզեմ անել, բայց որ մտածում եմ՝ այդ լավ բանն անելու համար պետք է գումար լինի, որ ես գնեմ իմ երեխաներին պահեմ: Եթե գումար չկա, էլ չես կարողանում (...) որպես քաղաքացի լավ բան անել: (Գեղարքունիք, տղ., 36 տ.)*

Քաղաքացիական ներգրավումից հետ պահող ***անհատական գործոններն*** արտահայտվում են անհատի համոզմունքների, մոտիվների, ինքնընկալումների և նախկին փորձի հանդեպ հուզական վերաբերմունքի ձևով:

Քննարկումներում հաճախ շոշափվում են *հետհեղափոխական և հետպատերազմական հիասթափությունը և մասնակցության քննադատական վերաիմաստավորումը,* որոնց առավել սուր դրսևորումը համատարած *անտարբերությունն* է: Այս իմաստավորումները մասնակիցները կապում են 2018 թ. իրադարձություններն ուղեկցող հուզական վերելքի, դրական փոփոխություններին հավատի ու սպասումի չիրականացման և հետպատերազմյան հուսախաբության հետ՝ ընդգծելով, որ այլևս չեն ցանկանում ներգրավվել կամ վստահել քաղաքա(ցիա)կան նախաձեռնություններին՝ կրկին հիասթափվելու վախից ելնելով:

*Ապրելով, շարժ ապահովելով արդեն իսկ մարդն իր երկիրը պահում է իր չափով՝ ով ինչքանով կարող է: Իսկ անտարբերություն ասվածը, ինձ թվում է, նրա հետ է կապված, որ մի ընթացք շատ մեծ ոգևորություն եղավ հեղափոխության ժամանակ, հետո շատ մեծ-մեծ հույսեր էին տալիս, որ պատերազմը մենք ենք հաղթելու: Մի օր արթնացանք, իմացանք, որ չկա նման բան: Ու դրանից հետո չե՛նք կարող մեղադրել, որ անտարբեր են մարդիկ: (Սյունիք, կին, 22տ.)*

Քաղաքացիական և քաղաքական շարժումների նկատմամբ թերահավատությունը հաճախ արտահայտվում է նաև *շարժումների առաջնորդների նկատմամբ անվստահությամբ,* նրանց որպես «կեղծ» առաջնորդի կամ ինքնակոչի ընկալմամբ: Որոշ խմբերում շարժումները բնութագրվում են որպես «շոու», «փուչ նախաձեռնություն» կամ արտաքին շահերով դրդված գործընթացներ: Միաժամանակ, թեև մի շարք մասնակիցներ պատմում են քաղաքացիական մասնակցության և բողոքի ակցիաներին մասնակցության՝ ստացված փորձառությունների մասին՝ հիշատակելով «Էլեկտրիկ Երևանը», «Թավշյա հեղափոխությունը», տրանսպորտի թանկացման դեմ պայքարը և այլն, մասնակցության արդյունավետությունը հաճախ դարձյալ կապվում է *իշխանությունների արձագանքման պատրաստակամության* հետ:

Քաղաքացու գործոնը հաճախ ընկալվում է որպես առավելապես *անմիջական սոցիալական շրջապատի կամ առօրեական փոքր հարցերի շրջանակում գործող ազդեցություն,* մինչդեռ ավելի լայն հանրային և քաղաքական գործընթացների վրա ազդելու հնարավորությունը գնահատվում է որպես սահմանափակ կամ անիրատեսական:

*Քանի ամիս է՝ այս Արբազանը գալիս է, գնում, խմբով էլ ... մինչև հիմա ի՞նչ է եղել՝ ոչ մի բան: Մեկ է՝ օգուտ չկա: Մենք շատ-շատ խմբով հավաքվենք, ծնողական ժողով անենք, դպրոցի մեջ հարց լուծենք, բայց ավելին չենք կարող լուծել: Որոշեն՝ վարագույր փոխեն, ուրիշը դնեն. դա է... (Սյունիք, տղ., 35 տ.)*

Առանձնանում է նաև *կենսապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված ինքնասահմանափակման* թեման: Այս դեպքում քաղաքացիական չներգրավումը պայմանավորված չէ արտաքին ճնշման կամ աշխատանքը

կորցնելու անմիջական վախով, այլ նրանով, որ վնասակար աշխատանքը ընտանիքի ապրուստի հիմնական աղբյուրն է: Արդյունքում, մարդիկ հաճախ խուսափում են բնապահպանական կամ սոցիալական խնդիրների շուրջ ակտիվ դիրքորոշում արտահայտելուց կամ նախաձեռնություններին միանալուց, նույնիսկ այն դեպքում, երբ գիտակցում են խնդիրների բացասական ազդեցությունը սեփական առողջության, ընտանիքի կամ համայնքի վրա:

*Իսկ հիմա ինձ թվում է՝ բոլորը պետք է փողոց փակեն կոմբինատի համար. շրջակա միջավայրի աղտոտման համար: Այդ պոչամբարը, որ տեսնում ենք, շատ մեծ ափսոսանք ենք ապրում, ... որ բնությունը ծանր մետաղները քայքայում են: Եթե էկոլոգիական շարժում լինի, մարդիկ չեն միանա, որովհետև իրենք աշխատում են, հստակ եկամուտ ստանում, իրենց դա բավականացնում է: (Սյունիք, կին, 38 տ.)*

Քաղաքա(ցիա)կան չներգրավվածությունը հաճախ կապվում է նաև *սեփական կոմպետենտության սահմանների՝ քաղաքացիական և հանրային գործընթացների վերաբերյալ բավարար գիտելիք չունենալու* ընկալման հետ: Թեև մասնակիցները նշում են մասնակցելու կամ դիրքորոշում արտահայտելու ցանկություն, նրանք սեփական կրթական մակարդակը, գիտելիքները կամ իրավիճակի ըմբռնումը բավարար չեն համարում նման նախաձեռնություններում ներգրավվելու համար: Հաճախ ընդգծվում է հանրային և քաղաքական դաշտի՝ իբրև անհատի բանիմացության ոլորտից դուրս մասնագիտական գործունեության մասին պատկերացումը: Քաղաքականից հեռու մնալը երբեմն բացատրվում է նաև դրա բարդության, քաղաքական գործընթացները «չհասկանալու» զգացման միջոցով:

*Օրինակ՝ ես ուզում եմ դուրս գամ, չէ՞, փողոց: Բայց նախ իմ կրթական մակարդակը. ես ի՞նչ կրթություն ունեմ, տիրապետո՞ւմ եմ իրավիճակին, հասկանո՞ւմ եմ, թե ինձ 5000 դրամ փող են տվել, դրա համար պիտի ելնեմ գոռամ... (Գեղարքունիք, տղ., 32 տ.)*

*Օրինակ՝ ես կոնկրետ քաղաքականության հետ կապված չունեմ համապատասխան գիտելիքներ: Ես կյանքում այսպես եմ. ինչից հասկանում եմ, հասկանում եմ, ինչից չեմ հասկանում՝ չեմ անում: (Արմավիր, տղ., 40 տ.)*

**Արդյունքների քննարկում և ամփոփում**

Այսպիսով, սուբյեկտիվ մի խումբ գործոններ կան, որոնք խոչընդոտում կամ սահմանափակում են երիտասարդների քաղաքացիական մասնակցությունը: Դրանց մի մասը ուղիղ անվանում է ստանում՝ հենց մասնակիցների կողմից մատնանշվելով (օրինակ՝ աշխատատեղում հնարավոր ճնշումները, համայնքի կողմից չաջակցվելու հավանականությունը և այլն): Մյուս մասի արգելակող ազդեցությունը հետազոտական հայացքով նկատվում և անուղղակիորեն դուրս է բերվում վերլուծական մակարդակում (օրինակ՝ «ուժեղ առաջնորդի», ուղղահայացության պասիվ ակնկալիքը, քաղաքական ոլորտը «իր

խելքի բան» չհամարելը՝ որպես հեռարկվելու հիմնավորում օգտագործելը): Այս իմաստավորումները ցույց են տալիս սոցիալ-քաղաքական իրողությունների բարդությունը և հակասականությունը անհատի համար, որն իմաստավորել փորձելիս անհատը հաճախ ընտրում է չներգրավվել, ինչը ևս կարող է հենց անձի գործականության դրսևորում լինել[25]: Անորոշության և առաջնորդության պակասի պայմաններում հավանականորեն անարդյունավետ գործընթացներում չներգրավվելը կարող է դրդված լինել դրական ինքնագնահատականի պահպանմամբ[26]: Ուշադրությունից, սակայն, հարկ է դուրս չթողնել այն, որ հետպատերազմական քաղաքացիական «ընդարմացումը», «արգելակվածությունը» նաև հավաքական տրավմայի հետևանք է, որը մենք նախնականորեն անվանում ենք «քաղաքացիական տրավմա», և որն ավելի հանգամանորեն վերլուծելու ենք հետազոտական նախագծի քանակական ուսումնասիրության մեջ:

Ինչևէ, խմբային քննարկումներում ուրվագծվել և հետագա վերլուծության է արժանի նաև մասնակցել-չմասնակցել երկընտրանքի միջև ընկած «միջնաշերտը», որտեղ մարդիկ տեսնում են սեփական ազդեցության իրատեսական մակարդակը: Այն արտահայտվում է համայնքային զարգացման և բարեկարգման առօրեական մասնակցությունների, սեփական գործը իր տեղում լավ անելու հանձնառությունների ձևով: Այս տեսակետից քաղաքացիական ներգրավման հավաքական, վիճարկող (contentious) ձևերի նահանջը ավելի տեղին է մեկնաբանել որպես ոչ թե քաղաքացու սուբյեկտայնության կորուստ, այլ դրա փոխակերպում մասնակցության ամենօրյա, շոշափելի միկրո ձևերի, որոնց միջոցով մարդիկ փորձում են պահպանել սեփական սուբյեկտայնությունն ու քաղաքացի լինելու զգացումը:

**СОНА МАНУСЯН, АНИ ПОГОСЯН, АНИ ГАСПАРЯН, НАРИНЕ ХАЧАТРЯН** – ***Почему (не) вовлекаться: воспринимаемые границы гражданского влияния и барьеры участия в Армении.***– Цель статьи - обсудить с социально-психологической точки зрения воспринимаемые молодёжью барьеры гражданского участия и пределы влияния на происходящие в стране процессы в постреволюционной и послевоенной Армении. Как теория, так и социальная практика свидетельствуют о том, что субъективно оцениваемые возможности участия в изменениях и влияния на социальную реальность имеют практические последствия для фактического (не)участия, которое, в свою очередь, конструирует эту реальность. В условиях неопределенности и снижения уровня гражданского участия особую значимость приобретает изучение воспринимаемых барьеров и ограничений с целью выявления и поощрения осмысленных форм коллективной активности (agency) и гражданского участия. Анализ основан на фокус-групповых интервью, проведенных в 2024 году в Ереване и четырех регионах Армении. В результате анализа выявляются факторы структурного (надындивидуального), группового-общинного и индивидуального уровней, посредством которых участники интерпретируют собственное (не)участие.

---

[25] Տե՛ս **Էմիրբայեր, Մ., Միշե, Ա.** (2024). /**Archer, M. S.** (2013):

[26] Տե՛ս **Shultziner, D**. (2025), Identity, Collective Action and Inaction: The Role of Self-Esteem and Psychological Benefits. J Theory Soc Behav, 55: e12440. DOI:10.1111/jtsb.12440

Эти интерпретации отражают сложность и противоречивость социально-политической реальности для личности, которая, пытаясь её осмыслить, нередко выбирает неучастие. Как участие, так и неучастие интерпретируется нами как проявления субъектности и агентности личности, не ограничиваясь статичными и противопоставляющими друг другу представлениями о гражданской активности и пассивности.

**Ключевые слова:** *гражданское участие, (не)вовлеченность, воспринимаемые границы/ограничения, агентность, коллективная эффективность*

**SONA MANUSYAN, ANI POGHOSYAN, ANI GASPARYAN, NARINE KHACHATRYAN** – ***Why (Not) Engage: Perceived Limits of Civic Agency and Barriers to Participation in Armenia.***– The aim of the article is to discuss, from a socio-psychological perspective, the perceived limits of influencing developments in the country and the barriers to civic engagement among youth in post-revolutionary and post-war Armenia. Both theory and social practice suggest that perceived opportunities of participating in social change and influencing social reality have practical implications for actual (non)participation, which, in turn, feeds back to the construction of that reality. In light of the decline in civic participation within the complex conditions of post-war uncertainty, studying perceived barriers and limits to engagement is key to identifying and fostering meaningful forms of collective agency and civic participation. The analysis is based on focus group interviews conducted in Yerevan and four regions of Armenia in 2024. The findings reveal structural (supra-individual), group (community)-level, and individual-level factors through which participants interpret their own (non)engagement.

These interpretations reflect the complex and contradictory nature of socio-political realities for an individual, who, in an attempt to make sense of them, often chooses non-engagement. We interpret both civic engagement and disengagement as manifestations of human subjectivity and agency, moving beyond static understandings that oppose civic activity (participation) to passivity (apathy).

**Key words:** *civic participation, (dis)engagement, perceived limits/barriers, agency, collective efficacy*

**Գրականության ցանկ / References**

Էմիրբայեր, Մ., Միշե, Ա. (2024). Ի՞նչ է գործակալությունը: Ս. Մանուսյան (կազմ. և խմբ.), *Անհատը և հանրայինը. տեքստեր փոխհարաբերության մասին*: «Սոցիոսկոպ» ՀԿ: էջ 181–229:

Մանուսյան, Ա., Խալաթյան, Մ., Մարտիրոսյան, Ս. (2025, օգոստոսի 13). *Ի՞նչ անել, երբ հին ակտիվիզմը չի աշխատում. ռադիկալացնել ժողովրդավարությունը:* «Սոցիոսկոպ» ՀԿ: https://socioscope.am/archives/4591 (դիտվել է՝ 22.05.2026)

CRRC Հայաստան. (2024). *Բարոմետր 2024. Հասարակական կարծիքի ուսումնասիրություն*. Երևան: https://caucasusbarometer.org/am/cb2024am (հասանելի է 22.05.2026)

IRI (2026). Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն. Երևան:https://www.iri.org/resources/public-opinion-survey-residents-of-armenia-february-2026/ (դիտվել է՝ 22.05.2026)

Archer, M. S. (2013). The Ontological Status of Subjectivity: The Missing Link Between Structure and Agency, in *Contributions to social ontology*, pp. 17–31. Abingdon: Routledge. DOI:10.4324/9780203083107-4

Baiocchi, G., Bennett, E. A., Cordner, A., Klein, P., & Savell, S. (2015). *Civic imagination: Making a difference in American political life.* Routledge.

Bandura, A. (2000). *Exercise of human agency through collective efficacy. Current Directions in Psychological Science, 9*(3), pp. 75–78. DOI:10.1111/1467-8721.00064

Braun, V., & Clarke, V. (2006). Using Thematic Analysis in Psychology. *Qualitative Research in Psychology, 3*(2), pp. 77–101. DOI:10.1191/1478088706qp063oa

Davis, D.W. and Silver, B.D. (2004). Civil Liberties vs. Security: Public Opinion in the Context of the Terrorist Attacks on America. *American Journal of Political Science,* 48, pp. 28-46. DOI:10.1111/j.0092-5853.2004.00054.x

Fritsche, I., Jonas, & E. & Kessler, T. (2011), Collective Reactions to Threat: Implications for Intergroup Conflict and for Solving Societal Crises. *Social Issues and Policy Review, 5,* pp. 101-136. DOI:10.1111/j.1751-2409.2011.01027.x

Fritsche, I., Jonas, E., & Kessler, T. (2011). Collective reactions to threat: Implications for intergroup conflict and for solving societal crises. Social issues and policy review, 5(1), pp. 101-136.

Hayes, A. F., Glynn, C. J., & Shanahan, J. (2005). Willingness to Self-Censor: A Construct and Measurement Tool for Public Opinion Research. *International Journal of Public Opinion Research*, *17*(3), pp. 298-323. DOI:10.1093/ijpor/edh073

Henig, D. & Knight, D.M. (2023), Polycrisis: Prompts for an emerging worldview. *Anthropology Today, 39: pp.* 3-6. DOI:10.1111/1467-8322.12793

Hogg, M. A. (2007). Uncertainty–Identity Theory. *Advances in Experimental Social Psychology, 39*, pp. 69–126. DOI:10.1016/S0065-2601(06)39002-8

Huddy, L., Feldman, S., & Weber, C. (2007). The political consequences of perceived threat and felt insecurity. *The ANNALS of the American Academy of Political and Social Science*, *614*(1), pp. 131-153.

Huysmans, J. (2014). *Security unbound: Enacting democratic limits*. Routledge.

Jäger, F. (2023). Security vs. Civil Liberties: How Citizens Cope with Threat, Restriction, and Ideology. *Frontiers in Political Science*, *4.* DOI:10.3389/fpos.2022.1006711

Kende, A., Lukács, D., Rényi, D., & Lantos, N. A. (2023). Reactions to perceived threats and opportunities in a polarized society: Collective action among progressive movements in Poland. *Current Psychology.* DOI:10.1007/s12144-023-04926-1

Levitsky, S., & Ziblatt, D. (2018). *How Democracies Die*. Crown.

Manusyan, S., Grigoryan, A., Ayanian, A. H., Khachatryan, N., Poghosyan, A., Grigoryan, T. Paremuzyan, N. (2025, June 23). Civic (In)Action, Agency and Identity amid Uncertainty: A Social-Psychological Lens on Post-revolutionary and (Post-)War Armenia DOI:10.17605/OSF.IO/AWP8H

Norris, P. (2011). *Democratic Deficit: Critical Citizens Revisited*. Cambridge University Press.

Polletta, F. (2006). *It was like a fever*: *Storytelling in Protest and Politics.* University of Chicago Press.

Santora, M. (2025, July 22). Wartime Protests in Ukraine Target Zelensky for the First Time. *The New York Times* https://www.nytimes.com/2025/07/22/world/europe/zelensky-protests-corruption.html (դիտվել է 22.05.2026)

Schwartz, S. H. (2012). An Overview of the Schwartz Theory of Basic Values. *Online Readings in Psychology and Culture, 2(1).* DOI:10.9707/2307-0919.1116

Shultziner, D. (2025), Identity, Collective Action and Inaction: The Role of Self-Esteem and Psychological Benefits. J Theory Soc Behav, 55: e12440. DOI:10.1111/jtsb.12440

Stepanenko, V. (2022). Ukrainian Society Under War: An Insider's Sociological Notes. *Przegląd socjologiczny*, *71*(3), pp: 11-26. DOI:10.26485/PS/2022/71.3/1

Tilly, C., & Tarrow, S. (2015). *Contentious Politics* (2nd ed.). Oxford University Press.

Van Bezouw, M. J., Závecz, G., Penna, C., Rijken, A. J., Klandermans, P. G., & Uluğ, Ö. M. (2019). Social Psychological Explanations of Political Inaction: Citizens' Perspectives in Brazil, Hungary, and the Netherlands. *Analyses of Social Issues and Public Policy*, *19*(1), pp. 381-406. DOI:10.1111/asap.12189

van Zomeren, M., Postmes, T., & Spears, R. (2008). Toward an integrative social identity model of collective action. A quantitative research synthesis of three socio-psychological perspectives. *Psychological Bulletin, 134*(4), pp. 504–535. DOI:10.1037/0033-2909.134.4.504

Zhang, S. (2013). Intergroup threat and collective action intention: Dual-pathway model of mass incidents. *Acta Psychologica Sinica.* DOI:10.3724/SP.J.1041.2013.01410

Խմբագրության հասցեն՝ Երևան, Խ. Աբովյան փող., 52ա
Адрес редакции: Ереван, ул. Абовяна 52а
Address: 52a, Kh. Abovyan str., Yerevan

Կայք՝ journals.ysu.am
Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am

| | |
|---|---|
| Հրատարակչական խմբագիր և թողարկման պատասխանատու | Արմեն Հովակիմյան |
| Издательский редактор и ответственный выпуска | Армен Овакимян |
| Publishing Editor and Issued by | Armen Hovakimyan |
| Վերստուգող սրբագրիչ՝ | Գայանե Գրիգորյան |
| Контрольный корректор | Гаяне Григорян |
| Proofreader | Gayane Grigoryan |
| Տեխնիկական խմբագիր՝ | Աննա Մկրտչյան |
| Технический редактор: | Анна Мкртчян |
| Technical Editor: | Anna Mkrtchyan |

Ստորագրված է տպագրության 22. 06. 2026: